

ԱՍ ՊՈՒԾԿԻՆ

ԿԱՊԻՏԱՆԻ
ԱՂԶԻԿԸ

ՊԵՏՅՐԱՏ


1/11	14/11	436
27/11	6/11	461
24/11	28/11	M-22
13/11	24/11	604
9/11 SB	29/11	75
1/11 SB	12/11	59
		611



Bombril - 17

we can

the






1860

Р. БУЧОТНИНЪ
БУЧОТНИНЪ



А. С. Пушкин

Капитанская Дочка



ГОСИЗДАТ АРМ. ССР. 1937

891.71

7-90


Ա.Ս. ՊՈՒՇԿԻՆ

Կապիտալի
Կռակներ


ՍՍՏԿԻՆ 1961 թ.

7034 476

A 22695



ՀԱՅԿԱՅԻՆ ԵՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 1 . 9 . 3 . 7



Պատիվը ջանքերուց պահպանելու
Առած

Գ Լ Ո Ւ Ք Ի

Գ Վ Ա Ր Դ Ի Ա Յ Ի Ս Ե Ր Ժ Ա Ն Տ Ը Է

Վաղն և եթ Կղառնար դվարդիայի կապիտան
— «Հարկավոր էն դա, թող բանակում ծառայի»:
Հրաշալի՜ յե ասված — քաշի թող մի...

Իսկ հայրն ո՞վ և նրա:

Կնյաժնիկ 2

Հայրս՝ Անդրեյ Պետրովիչ Գրինյովը չերիտասարդ ժամանակ ծառայել և Կոմս Մինիխի մոտ և պրեմյեր-մալթրի աստիճանում պաշտինաթող յեղել 17... թվին: Այդ ժամանակից նա ապրում եր Սիմբիրսկի նահանգում գտնվող իր գյուղում, ուր և ամուսնացել եր այնտեղի մի աղքատ ազնվականի աղջկա՝ Ալգոտյա Վասիլենա Յու.~ի հետ: Մենք՝ յերեխաներս իննը հոգի եյինք: Իմ բոլոր յեղբայրներն ու քույրերը մանուկ հասակում են մեռել: Գվարդիայի մայրը՝ մեր մոտիկ ազգական իշխան Բ.~ի վոդորմածությամբ յես գրված եյի Սեմյոնովսկի դնդում վորպես սերժանտ: Մինչև ուսումս ավարտելը համարվում եյի արձակուրդի մեջ: Այն ժամանակ մենք այժմյան պես չեյինք դաստիարակվում: Հինգ տարեկան հասակից ինձ տվել եյին ասպանդակապահ Սավելիչի ձեռքը, վորին, շնորհիվ իր վողջախոհ վարք ու բարքի, նշանակել եյին իմ դաստիարակը: Նրա հակո-

1 Գ Վ ա Ր դ ի ա — սկզբներում նեղ մտքով՝ զորամաս, վորի պարտակա-
նությունն եր պահպանել զորահրամանատարի անձը — թիկնապահ զորք: Հե-
տագայում դվարդիան ստացավ զորքի ընտիր մասի նշանակութուն: Ռուսա-
կան դվարդիան ազնվականներից գումարված հատուկ զորքն եր և ուներ շատ
արտոնություններ: Ս ե Ր Ժ ա ն տ — յենթասպա:

2 Յա. Բ. Կնյաժնիկն (1742—1791) — XVIII դարի ռուս զրամատուրդ:

դուժյան տակ տառներովու տարեկան հառակում ուսուցանեն դը-
րել-կարգալ սովորեցի և կարող էյի բավական առողջ դատել ա-
րագալաղ քերծեյի հատկությունների մասին, Այդ ժամանակ
հայրս ինձ համար վարձեց մի ֆրանսիացի՝ մոսկի Բուրեյին,
վորին Մոսկվայից բերել տվին գինու և պրովանսի ձեթի մի
տարվա պաշարով հանգերձ: Նրա գալը բոլորովին դուր չեկա՞վ
Սովեթին: «Փանոբ ասածո, — փնթփնթում եր նա քթի տակ, —
կարծեմ թե յերեխայի յերեսը մաքուր և, մազերը՝ սանրած,
փորը՝ կուշտ: Ել ինչ կարիք կար ավելորդ փող ծախսել և մու-
սկե վարձել. ինչ և, եստեղ մենք մեր մարդիկը չունիք ինք»:

Բուրեն իր հայրենիքում յեղել եր պարիկմախեր, հետո՝
Պրուսիայում — զինվոր, ապա յեկել եր Ռուսաստան pour être
outchitel¹, այնքան էլ լավ չհասկանալով այդ բառի իմաստը:
Նա խաղաղ բնավորության տեր մարդ եր, սակայն՝ ծայր-սու-
տիճան թեթևամիտ և անառակ: Նրա գլխավոր թուլությունը
գեպի գեղեցիկ սեռն ունեցած մոլությունն եր. հաճախ, ի պա-
տասխան իր քնքռությունների, նա ստանում եր այնպիսի հար-
վածներ, վորոնցից ամբողջ որերով հառաչում եր: Բայց այդ,
նա (ինչպես ինքն եր ասում) թշնամի չեր շշին, այսինքն,
(ուսուցանեմ ասած) սիրում եր չափից ավելի կոնծել: Բայց, քա-
նի վոր մեր տանը գինին միայն ճաշին ելին տալիս, այն էլ մի փոք-
րիկ դավաթով (սլուժեկայով) ըստ վորում դասատուէին սովո-
րաբար աչքաթող էյին անում, ուստի և իմ Բուրեն շատ շուտով
սովորեց ուստական լրմողուն և մինչև անգամ սկսեց գերադա-
սել այն իր հայրենիքի գինիներից՝ վորպես ստամոքսի համար
չափազանց ոգտակար: Մենք իսկուէն բարեկամացանք և թեև
ըստ պայմանի նա պարտավոր եր ինձ սովորեցնել ֆրանսե-
րեն, գերմաներեն և ըստ գիտությունների, բայց
նա գերադասեց կարճ միջոցում ինձնից մի կերպ ուսուցանեմ
կոտրատել սովորիկ և ապա մեղնից չուրաքանչյուրն արդեն իր
գործով եր զբաղվում: Ապրում էյինք մի սիրտ, մի հոգի: Ուրիշ
մենաոր² յես չեյի ել ուզում: Սակայն շուտով բախտը մեզ բա-
ժանեց և ահա թե ինչ դիպվածով:

Լիպցարաբուհի Պալաշկան՝ հաստիկ ու չեչոտ մի աղջիկ և մի
աչքը կուլը կովապահ Ակուլկան ինչպես յեղավ, խոսք մեկ արած,

¹ Ուսուցիչ լինելու համար (outchitel — ուս. учитель բառն է):

² Փոխար. դաստիարակչությունի վորդի Տեղեմաքի դասատուի անունով:

մի որ յեկան, միասին մորս վոտներն ընկան, խոստովանեցին իրենց մեղքը և լաց ու կոծով գանգաւեցին մուսշեյից, վորը դաթակղել եր նրանց անփորձությունը: Մայրս չեր սիրում նման բանը հանաքի տալ, ուստի և գանդատվեց հորս: Նրա դատաստանն ել կարճ եր լինում: Նա խսկույն և եթ իր մոտ պահանջեց սրիկա ֆրանսիացուէն: Ասացին, վոր մուսշեյն ինձ դաս ե տալիս: Հայրս յեկավ իմ սենյակը: Այդ պահին Բոպրեն անմեղության քնով քնած եր մահճակալի վրա: Յես դործով եյի ըզբաղված: Հարկ ե գիտենալ, վոր Մոսկվայից ինձ համար աշխարհապրական քարտեղ ելին բերել տվել: Առանց վորեւ գործածության այդ քարտեղը կախված եր պատից և վաղուց ինձ հրապուրել եր թղթի լայնութեամբ ու լազորակութեամբ: Յես վճռեցի նրանից մի ողապարուկ շինել և, ոգտվելով Բոպրեյի քնից, դործի անցա: Հայրս ներս մտավ հենց այն բոպեյին, չերբ չես ճիւղայից շինած պոչը հարմարեցնում եյի Բարեհուսո հրվանդանին: Տեսնելով իմ վարժությունները աշխարհապրության մեջ, հայրս քաշեց ականջս, ապա մոտ վազեց Բոպրեյին, շատանգգուշ արթնացրեց նրան և սկսեց նախատինք թափել գլխին: Շփոթված Բոպրեն ուզեց վեր կենա, կանգնի և — չկարողացավ. դժբախտ ֆրանսիացին թունդ հարբած եր: Յոթը ցավին՝ մի դարման: Բրանսիացին թունդ հարբած եր, բարձրացրեց մահճակալի վրայից, Հայրս բռնեց նրա ոձիքից, բարձրացրեց մահճակալի վրայից, դռներից դուրս հրեց և՛ ի մեծ ուրախություն Սավելիչի, շուէյն որն և եթ արձակեց պաշտոնից: Դրանով ել ավարտվեց իմ կրթությունը:

Յես ապրում եյի իրրեւ մի թերուս. աղափնին եյի թրոցնում և աթուրմա խաղում բակի չերեխաների հետ: Մինչ այս, մինչ այն՝ տասնվեց տարեկան դարձա: Այդ ժամանակ իմ վիճակը փոխվեց:

Մի անգամ աշնանը մայրս մեղրով մուրաբա յեր յեփում հյուրասենյակում, իսկ յես բերանիս ջուրը կուլ տալով, նայում եյի մուրաբայի չեռացող փրփուրին: Հայրս պատուհանի մոտ նըստած կարգում եր Պալատական որացուցցը¹, վոր ամեն տարի նա ստանում եր: Այդ գիրքը նրա վրա միշտ մեծ ազդեցություն

1 Այս որացուցի մեջ գետեղվում եին ռազմ. և քաղաքացիական բարձր աստիճանավորների ցուցակները, պալատական ընդունելությունները տեղեկատուները և գանադան ուրիշ նման նյութեր ազնվականների և արքունի ազնվատոհմիկների համար:

եր թողնում. նա միշտ առանձին հետաքրքրություններ կարգում այն և ամեն անգամ ընթերցումը նրա մեջ առաջացնում էր մաղձի զարմանալի հուզումն: Մայրս, վոր անգիր գիտեր նրա բոլոր սովորությունները, միշտ աշխատում էր այդ դժբախտ գիրքը վորքան կարելի յե հեռու պահել և այդպիսով Պալատական որացույցը հաճախ ամբողջ ամիսներ նրա աչքին չէր ընկնում: Բայց, չեբո նա պատահաբար գտնում էր, ապա չերբեմն ամբողջ ժամերով այլևս ձեռքից բաց չէր թողնում: Յեւ այդպես, հայրս կարդում էր Պալատական որացույցը, չերբեմնակի ուսերը վեր քաշում և կիսաձայն կրկնում. «Գինեբալ-սյորուէլ¹... Իմ վաշտում նա սերժանտ էր... Ռուսական զույգ որդեհների կալալե²... Իսկ վաղեւց ե, վոր մենք»... Վերջապես հայրս որացույցը շարունակ բազմոցի վրա և խորասուզվեց մտածունքի մեջ, վոր վոչինչ լավ բան չէր գուշակում:

Հանկարծ նա դարձավ մորս. «Այդո՛ւյա Վասիլենա, Պետրուշան քանի տարեկան է»:

— Դեհ ահա տասնյոթի մեջն է, — պատասխանեց մայրս: — Պետրուշան ծնվեց հենց այն տարին, յերբ մեր հորաքույր Նաստասյա Գերասիմովնայի մի աչքը կուրացավ և յերբ դեռ...

«Բարի, ընդհատեց հայրս, — ժամանակն է, վոր նա զինվորական ծառայություն գնա: Հերիք է, ինչքան վաղվեց աղջիկների սենյակներով և մադլեցեց աղամլատների պատերով»:

Ինձնից շուտով բաժանվելու միտքն աչնպես շմեցրեց մորս, վոր նա գդալը ձեռքից բաց թողեց կաթսայի մեջ և արցունքները հոսեցին նրա յերեսով: Ընդհակառակը, դժվար է նկարագրել իմ հիացմունքը: Զինվորական ծառայության գնալու միտքն իմ մեջ խառնվում էր ազատության և Պետերբուրգի կյանքի վայելքների մասին ունեցած մտքերի հետ: Յես ինձ չերեակայում ելի գլխադիպի սպա, վոր, իմ կարծիքով՝ մարդկային ամենամեծ յերջանկությունն էր:

Հայրս չէր սիրում վոչ փոխել իր մտադրությունները, վոչ էլ հետաձգել նրանց կատարումը: Իմ մեկնելու որն արդեն նը-

¹ Ռազմական բարձրագույն աստիճաններից մեկը ռուսական հին բանակում, սկսած XVII դարից:

² Կավալեր (ֆր. - ձիավոր) - առաջ այսպես կոչվում էին ասպետները, հետագայում՝ շքանշան ունեցողները: Այստեղ նշանակում է - պարզեվաթուրված յերկու բարձրագույն շքանշաններով՝ «Անդերյ Պերվոդվանու» և «Ալ-Նևակու»:

շանակված երբ Նախորդակին հալըս հաշտնեց, վոր մտադիր է
ինձ հետ նամակ ուղարկել իմ ապագա պետին և գրիչ ու թուղթ
պահանջեց:

«Չմոռանաս, Անդրեյ Պետրովիչ, — ասաց մայրս, — իմ կող-
մից ել վողջուռնել իշխան Բ.-ին. գրի, թե յես հուսով եմ, վոր
նա Պետրուշային չի թողնի առանց իր շնորհներին»:

— Այ քեզ հիմար բան, — պատասխանեց հայրս հոնքերը
կիռելով: — Ինչո՞ւ համար յես պետք է իշխան Բ.-ին նամակ գր-
բեմ:

«Բայց դու ասացիր, վոր կամենում ես գրել Պետրուշայի
պետին»:

— Ե՛, հետո վոր ի՞նչ:

«Բայց չե՞ վոր Պետրուշայի պետը իշխան Բ.-ն է: Չե՞ վոր
Պետրուշան գրված է Սեմյոնովսկի գնդում»¹:

— Դրված է: Իմ ի՞նչ գործն է, թե գրված է: Պետրուշան
Պետերբուրգ չի գնա: Ի՞նչ պիտի նա սովորի Պետերբուրգում
ծառայելով: Դրամ վատնել և անպիտանություններ անել: Վո՞չ,
թող նա բանակում ծառայի, թող նեղություններ քաշի, թող
վառդի հոտն առնի, թող զինվոր դառնա և վո՞չ թե շամատոն²:
Դրված է գվարդիայում... Վճռեղ է նրա պաշտոնը: Տո՛ւր ինձ:

Մայրս գտավ իմ պատգորտը, վոր պահվում էր նրա փոք-
րիկ արկղիկում, իմ կնուռքի շապիկի հետ և դողդոջուն ձեռքով
տվեց հորս: Հայրս ուշադրությամբ կարդաց այն, դրեց իր առջև
սեղանի վրա և սկսեց իր նամակը:

Հետաքրքրությունն ինձ տանջում էր: Այա ռըր են ուղարկե-
լու ինձ, չեթե վո՞չ Պետերբուրգ: Աչքս չեկի հեռացնում հորս գրչից,
վոր շարժվում էր բավական դանդաղ: Վերջապես նա ավարտեց
նամակը, պատպորտի հետ կնքեց մի ծրարում, ակնոցները հա-

1 Պուշկինի նկարագրած ժամանակաշրջանում աղնվականները վորդի-
ներին դեռելիս մանուկ հասակից գրում էին ռազմական ծառայության մեջ,
վորպես հասարակ զինվորներ: Այս յեղանակով նրանք ձեվականորեն
պահպանում էին 1762 թվի կայսերական հրովարտակի կանոնները, վորոնց
համաձայն սպայական աստիճան ստանալու համար պետք էր 12 տարի շուր-
ջային զինվոր լինել: Փաստորեն, աղնվականները վորդիները վո՞չ մի ռազմա-
կան ծառայության մեջ չլինելով հանդերձ, տանը նստած, նորանոր բարձր
աստիճաններ էին ստանում և չափահաս տարիքում արդեն համարվում էին
սպա:

2 Անդործ մարդ, դատարկապորտ, թեթևակի:

նեց և ինձ իր մոտ կանչելով, ասաց. «Ահա քեզ Անգրեյ կարլովիչ Ռե-ին՝ իմ վաղեմի ընկերոջն ու բարեկամին հանձնելու նամակը: Դու գնում ես Որենբուրգ՝ նրա հրամանատարութեան տակ ծառայելու»:

Յեւ այսպես, իմ բոլոր փայլուն հույսերը խորտակվեցին: Պետերբուրգի ուրախ կյանքի փոխարեն ինձ սպասում էր ծանձրույթը հեռավոր ու խուլ մի վայրում: Զինվորական ծառայութեանը, վորի մասին մի բառ ևս չէի ասած, մտածում էի, այնպիսի հիացմունքով, ինձ թվաց վորպես մի ծանր դժբախտութեան: Բայց հակաճառին անմտութեան եր: Մյուս որն առավոտ տան մուտքի պատշգամբիկին¹ մոտեցավ ճամբորդական կիլիտիկան², մեջը դրին մի չեմոզան, մի արկղ՝ թեյի պարագաներով և կապոցներ՝ մեջը բլիթներ ու կարկանդակներ — տնային փափայկանքի վերջին նշանները: Ծնողներս որհնեցին ինձ: Հայրս ասաց. «Գնաս բարով, Պյոտր: Հավատարիմ ծառայի նըրան, ում յերդում կտաս. մեծերիդ լսիք, նրանց փաղաքշանքների հետեից չընկնես, ծառայութեան մեջ մի քծնի, ծառայութեանից չխուսափես և հիշիր առածը՝ շորդ նորուց պահպանիք, իսկ պատիվդ՝ ջահիրուց»: Մայրս արտասուքն աչքերին ինձ խրատում էր պահպանել առողջութեանս, իսկ Սավելիչին պատվիրեց հոգալ չերեխայի մասին: Նապաստակի մորթուց կարած մի մուշտակ հագցրին ինձ, իսկ վրայից՝ աղվեսենու քուրք: Սավելիչի հետ նստեցի կիլիտկայի մեջ և ճանապարհ ընկա, հորդ արցունքներ թափելով:

Նույն գիշերն և եթ հասա Սիմբիրսկ, ուր պիտի մնայի մի որ՝ անհրաժեշտ իրեր գնելու համար, վոր հանձնարարված էր Սավելիչին: Իջևանեցի պանդոկում: Սավելիչն առավոտից գնաց խանութները: Զանձրանալով պատահանից նայել ցեխոտ փողոցին, քնս գնացի թափառելու պանդոկի բոլոր սենյակներում: Բիլլարդանոց մտնելուս պես տեսա բարձրահասակ մի բարին³ ցերեպունհինգ տարեկան, ցերեպար սև բեղերով, խալաթը հագին, կիյը⁴ ձեռքին և ծխամորճը ատամներով բռնած: Նա խաղում էր մար-

1 Տան մուտքի պատշգամբիկ — այսպես ենք թարգմանում ամեն տեղ առևտրական կրիլ'ցո բառը:

2 Գերեկից քաթանով կամ թաղիքով ծածկված սայլակ:

3 Բարին — տեր, պարոն, աղա:

4 Կիյ — բիլլարդի յերկարավուն ձողը:

կլորել¹ հետ, վորը խաղը տանելու գեպքում մի դավաթ ողի-
յեր խմում, իսկ տարվելու գեպքում պիտք ե չորեքթաթ մտներ
բիլլարդի տակը: Սկսեցի դիտել նրանց խաղը: Վորքան չերկար
եր տևում այն, այնքան չորեքթաթ արվող զրոսանքները հա-
ճախակի ելին դառնում, մինչև վոր վերջապես մարկչորը պառ-
կած քնաց ընկարդի տակ: Բարինը² մի քանի թուռդ խոսքեր
ասաց նրա հասցեյին՝ վորպես դամբանական և ինձ առաջարկեց
հետը մի պարտիա ընկարդ խաղալ: Յես հրաժարվեցի՝ խաղալ
չիմանալու պատճառով: Ըստ յերևվելթին այդ նրան տարորինակ
թվաց: Ասես ցավակցությամբ նա ինձ նայեց, սաղայն՝ խոսակ-
ցության բռնվեցինք: Պարզվեց, վոր նրան կոչում են Իվան Ի-
վանովիչ Զուրին, վոր նա * հուսարական² գնդի ռոտմիստրն³
ե և Սիմբիրսկ ե յեկել ռեկրուտներ⁴ Էնդուսելու գործով, իսկ
իջևանել ե պանդոկում: Զուրինն ինձ հրավիրեց իր հետ ճաշել՝
— աստված ինչ վոր տվել ե, դինվորավայել: Յես հաճույքով
համաձայնվեցի: Սեղան նստեցինք, Զուրինը շատ եր խմում և
ինձ ել հյուրասիրում եր ասելով, վոր պիտք ե սովորել զինվո-
րական ծառայությանը: Նա ինձ պատմում եր բանակային
այնպիսի անեկդոտներ, վոր ծիծաղից թուլացած, քիչ եր մնում
թե վայր ընկնեմ, և մենք սեղանից վեր կացանք վորպես կա-
տարյալ բարեկամներ: Սյն ժամանակ նա առաջարկեց ինձ ըն-
կարդ խաղալ սովորեցնել: «Իա, — ասում եր նա, — անհրաժեշտ
ե մեզ պես ծառայող մարդկանց համար: Արշավանքի ժամանակ,
ասենք թե, հասար մի վորևե հետ ընկած տեղ. ասա խնդրեմ,
ինչո՞վ պիտի զբաղվես: Հո միշտ ջնուգներին չպիտի ծեծես: Ահա-
ճայից կգնաս պանդոկ և կսկսես ընկարդ խաղալ, իսկ դրա համար
պիտք ե խաղալ իմանալ: Յես միանգամայն համոզվեցի և մեծ չե-
ռանդով սկսեցի սովորել: Զուրինը բարձր ձայնով խրախուսում
եր ինձ, զարմանում եր իմ արագ առաջադիմությունների վրա,
և մի քանի դասերից հետո առաջարկեց փողով խաղալ, մի-մի
գրող զնելով, ի՞նչ թե տանելու համար, այլ հենց այնպես, միայն,
վորպիսի դատարկ տեղը չխաղանք, վոր նրա ասելով, ամենա-
վատ սովորությունն ե: Յես դրան ել համաձայնվեցի, իսկ Զու-
րինը հրամայեց պուռնջ տալ մեզ և համոզում եր ինձ փորձել

1 Մարկչոր — ընկարդին սպասարկող, խաղի ժամանակ հաշիվը պահող:

2 Հուսարներ — թեթև հեծելազորի մի տեսակը:

3 Ռոտմիստր — հեծելասպա:

4 Ռեկրուտներ — նորակոչիկներ:

այն, կրկնելով, վոր պետք է վարժվել զինվորական ծառայութեանը, իսկ առանց պոռնի ծառայելն ինչ բան է վոր: Յես լսեցի նրան: Խաղը շարունակվում էր: Ինչքան հաճախ էյի խմում իմ բաժակից, այնքան ավելի համարձակ էյի դառնում: Ինչպարզի գնդերը ամեն ըոպե դուրս ելին թռչում սեղանի վերից, չես տաքացել էյի, հաչոյում էյի մարկյորին, վորը, աստված գիտե, թե ինչպես եր հաշվում, ժամ առ ժամ ավելացնում էյի խաղադուամարը, — մի խոսքով ինձ պահում էյի վորպես կապը կտրած մի տղա: Ժամանակն անցավ աննկատելի: Մեկ ել Զուրինը ժամացույցին նայեց, կէյը ցած դրեց և հայտնեց ինձ, վոր տարվել եմ հարյուր ուուրի: Դա մի փոքր շփոթեցրեց ինձ: Իմ բոլոր դրամը Սավելիչի մոտ եր: Սկսեցի նեղող ղութլուն խնդրել: Զուրինն ընդհատեց ինձ. «Ի սեր աստծո, բնավ մի անհանգստանա: Յես կարող եմ սպասել, իսկ առաջ՝ գնանք Արինուշկայի մոտ»:

Ի՞նչ կհրամայեք: Այդ որը յես վերջացրի նույնքան թեթևամիտ, վորքան և սկսել էյի: Մենք ընթերցելնք Արինուշկայի մոտ: Զուրինն ամեն ըոպե լցնում եր իմ զավաթը, կրկնելով, վոր պետք է վարժվել զինվորական ծառայութեանը: Սեղանից վեր կենալով յես հաղիվ էյի կանգնում վոտքի վրա. կես գիշերին Զուրինը կառքով ինձ տարավ պանդոկ:

Սավելիչը մեզ գիմալորեց տան մուտքի մոտ: Տեսնելով դեպի ծառայութլունն ունեցած իմ ջանասիրութեան աներկբա նշանները, նա ակ քաշեց: «Ես ի՞նչ որի յես, տեր իմ, — ասաց նա խղճալի ձայնով: — Եդ վճռեց ևս եղպես տղկվել: Ա՛խ, աստված իմ, յերբեք ևս տեսակ բան չեր յեղել» — Չայնդ կտրի, քավթառ, — հազիվ կապելով բառերը պատասխանեցի նրան. — յերեկ դու հարբած և, կորիր, գնա քնելու... ինձ ել պառկեցրու:

Մյուս որը չես զարթնեցի գլխացավով. աղոտ հիշում էյի յերեկվա դեպքերը: Իմ խորհրդածութլուններն ընդհատեց Սաւելիչը, վորը մի բաժակ թեյ ձեռքին մտավ սենյակս: «Շճւտ ես սկսում, Պյոտը Անդրեյիչ, — ասաց նա գլուխը ճոճելով, — շուտ ևս սկսում քեֆ անել: Ախր դու ռում ես քափուր Կարժմա թե վոչ հայրդ, վոչ ել պապդ խմողներ չին յեղե՞լ. Դրդ մասին խոսելն անգամ ավելորդ է. նրանք իրենց որում ք յի կվասից ուրիշ խմիչք. չեն բարեհաճել բերաններն առնել, իսկ ռվ ե ևս բոլորի մեղալորը: Անիծյալ մուսկն: Պաս. հում եր, վոր, մեկ ել տեսար վաղեց Անտրպկնայի մոտ. «Մազամ, փե վու պրի,

արադու»¹. Այլ քեզ ժե վու պրի: Ի՞նչ եմ ասել, շնորհք եր սո-
վորեցնում եդ շան վորդին: Ասա, ինչներքա եր պետք բարութե-
մանին² վերակացու վարձել, կասես մեր բարինը իր մարդկը
չուներ»:

Յես ամաչեցի: Յերես շուռ տվի և ասացի. «Դուրս գնա,
Սավելիչ, յես թեյ չեմ ուզում»: Բայց դժվար եր Սավելիչին
լռեցնել, յերբ նա, պատահում եր, վոր սկսում եր իր քարոզը.
«Ա՛յ, տեսնում ես, Պյոտր Անդրեյիչ, ի՞նչ ասել ե կոնծել: Համ
գլուխդ ե ծանրացել, համ ել ուտել չես ուզում: Խմող մարդն
ի՞նչացու յե... Արի դու վարունդի թթվաջուր խմիր մեղրով, իսկ
ամենից լա՞վ ե խումարահան լինելու համար մի կես բաժակ
թրմողի... Չէս հրամայի բերեմ»:

Այդ ժամանակ մի տղա ներս մտավ և ինձ տվեց ի. ի.
Զուբինի տոմսը: Թուղթը բացի և կարդացի հետեւյալ տողերը.

«Սիրելի Պյոտր Անդրեյիչ, խնդրում եմ իմ տղայի հետ
ուղարկես հարյուր ռուբլին, վոր դու յերեկ ինձ տանուլ տվիր:
Դրամի սաստիկ կարիք ունեմ»:

Պատրաստ ծառայելու՝ Իվան Զուբին»:

Ճար չկար: Անվրդով տեսք տալով դեմքիս և դառնալով
Սավելիչին, վորը և՛ դբամի, և՛ սպիտակեղենի, և՛
դորձերի իմ խնամա կալն եր, հրամայեցի հարյուր ռուբլի տալ
այդ տղային: «Ի՞նչպես, ինչո՞ւ համար», — հարցրեց ապշած Սա-
վելիչը: — Պարտք եմ նրան, — պատասխանեցի յես վորքան կա-
րելի յե սառն: «Պարտք եմ, — առարկեց Սավելիչը, վոր քանի
դնում, այնքան ավելի չեր ապշում. — Բայց, տեր իմ, ախր եդ յո՞րր
դու կարողացար նրան պարտք մնալ: Չե, եդտեղ մի ինչ վոր
ին կա: Կամքը քոնն ե, տեր, համա՛ յես վոր տվողը չեմ»:

Յես մտածեցի, վոր յեթե այդ վճարիս բոլորին չկտորեմ
համառ ծերունուն, ապա հետագայում ալլան դժվար կլինի ինձ
դուրս գալ նրա խնամակալութունից, ուստի և հպարտ նայելով
նրան, ասացի. «Յես քո տերն եմ, իսկ դու՝ իմ ծառան: Դրամը
իմն ե: Յես տանուլ եմ տվել այդ գումարը, վորովհետև քեֆս
այգպես ե ուզել, իսկ քեզ խորհուրդ եմ տալիս խելքիդ դու չը-
տաս և անես ալլա: Ի՞նչ հրամայում են քեզ»:

Սավելիչն աշխպես եր ապշել իմ խոսքերից, վոր ձեռքերն

¹ Տիկինները ունենում եմ արադ:

² Բասուլման — աշխարհն՝ վոչ ուղղափառ:

երար զարկեց և քարացաւ: «Դէհ, ի՞նչ ես կանգնել», — գոռացի
յես լարեկացած: Սովեկիչը լացեց: «Տեր իմ, Պյոտր Անդրեւիչիչ, —
արտասանեց նա զոգոջովն ձայնով, — ինձ մի մեռցնի վշտից:
Աչքիս լույսը, լսիք ինձ՝ ծերուկիս. գրիւր եղ ավաղակին,
վոր դու կատակ ես արել, վոր մենք եղ տեսակ զուգարներ խկի
չունենք: Հարցուր ուրիշ: Վոգորմած աստված: Ասն, վոր ծնող-
ներս շատ խիստ պատվիրել են ինձ՝ միայն ընկույզով խաղալ...
— Հերիք և ստեր ասես, — ընդհատեցի յես խտուրթամբ. — դեսը
տուր վողը, թե չե վզակոթիդ տալով կվռնդեմ:

Սովեկիչն ինձ նայեց խորին վշտով և գնաց պարտքս բե-
րելու: Յես մեղքացա խեղճ ծերունուն, սակայն ուզում եի ա-
զատվիլ և ապացուցել, վոր յես այլես յերեխա չեմ: Դրամն ու-
զարկվեց Զուրինին: Սովեկիչը շտապեց ինձ դուրս բերել անի-
ծյալ պանդոկից: Նա լեկավ հայտնելու, թե ձիերը պատրաստ են:
Անհանգիստ խղճով և լուռ զղջումով յես դուրս յեկա Սիմբերս-
կից, առանց հրաժեշտ տալու իմ ուսուցչին և չմտածելով այլևս
յերբեւե տեսնել նրան:

216. 4004

Հնաժամանկ յերգ

— Ե՛հ, տե՛ր իմ, Պյոտր Անդրեյիչ, — պատասխանեց նա հոգոց հանելով — Բարեկանալը վոր ասում ես, ինքս ինձ յեմ բարեկանում. բոլոր մեղքն իմն եւ Աստ թե յես ի՞նչպե՛ս մեհնակ թողի պանդոկում. ինչ պիտի անես, մեղքի մեջ ըն- խեքիս փկեց, ասի՝ գնամ տիրացույի կնոջը՝ սանամորս խեքիս փկեց, ասի՝ սանամորս մոտ մտա, ջուխտ վտարով յեմ: Եղպես ե, հի՛ր, սանամորս մոտ մտա, ջուխտ վտարով ու ընկա: Փորձանք եր, ուրիշ վոչ մի բան. ել ի՞նչ յերեսով ամ իմ տեղերի աչքին: Ի՞նչ կասեն նրանք, յերբ իմանան,

վոր չերեխան խմում և և դումար խաղում:

Խեղճ Սավելիչին մխիթարելու համար յես նրան խոսք տվի առաջիկայում առանց նրա համաձայնութեան վոչ մի կոպեկի ձեռք չտալ: Դիշ-քիչ նա հանդարտվեց, թեև ելի նորից մեկ-մեկ ինքն իրեն փնթիւնթում եր գլուխը ճոճելով. «Հարյուր ուրբլի, հեշտ բան և»:

Յես մոռենում եյի իմ նշանակման վայրին: Շուրջս տաբածվում եյին տխուր տափաստանները, տեղ-տեղ բլուրներով ու ձորերով կտրատված: Ամեն ինչ ձյունով եր ծածկված: Արևը մայր եր մտնում: Կիրիտկան ընթանում եր մի նեղ ճանապարհով, կամ ավելի ճիշտ՝ գեղջկական սահնակներ թողած հետքով: Հանկարծ կառապանս սկսեց մի կողմ նայել. նայեց, նայեց և վերջապես գլխարկը հանելով դարձավ ինձ ու ասաց. «Բարին, արդյոք չե՞ք հրամայի վերադառնալ»:

— Ինչո՞ւ վոր:

«Ժամանակը ձախ և. քամին սկսում և կամաց-կամաց ուժեղանալ. տեսնում ես, թե ինչպես և սրբում ձյունափոշին»:

— Ե՛, մեղ ինչ ֆուտս:

«Բա չե՞ս տեսնում, թե ինչ և ենտեղ» (Կառապանը մտրակը դեպի արևելք ուղղեց):

— Բացի ձերմակ տափաստանից և պարզ չերկնքից ուրիշ վոչինչ չեմ տեսնում:

Ա՛յ, հրեն — հրեն. են փոքրիկ ամպը»:

Իսկապես, յերկնքի չեղրին մի փոքրիկ, սպիտակ ամպ տեսա, վորը սկզբում ինձ թվաց վորպես հեռավոր մի բլրակ: Կառապանը բացատրեց, վոր աչդ ամպը բուք և նախագուշակում:

Յես լսել եյի աչդ կողմերի ձյունախառն բուք բորանների մասին և գիտեյի, վոր գեպքեր են յեղել, յերբ ամբողջ սայլախումբեր թաղվել են ձյան տակ: Սավելիչը, համաձայնվելով կառապանի կարծիքին, խորհուրդ տվեց վերադառնալ: Սակայն քամին ինձ այնքան ել ուժեղ չերևաց, յես հուշս ունեյի ժամ առաջ հասնել հետևյալ կայարան և հրամայեցի ավելի արագ քշել:

Կառապանը քշեց, բայց միշտ դեպի արևելք եր նայում: Ձիերը վազում եյին համընթաց: Այնինչ, քամին ժամ առ ժամ սաստկանում եր: Փոքրիկ ամպիկը դարձավ մի ահագին սպիտակ ամպ, վոր գանդաղ բարձրանալով մեծացավ և աստիճանաբար բռնեց յերկնքի լերեսը: Մանր ձյուն յեկավ և հանկարծ՝ թափվեց առատ-առատ փաթիլներով: Քամին վոռաց, բուքն

սկսվեց: Մի ակնթարթում թուփ յերկինքը խառնվեց ձյան ծովի հետ: Ամեն ինչ կորավ: «Դե, բարին, — դուռաց կառապանը, — բաններս բուրդ ե, բուրդ-բորանն սկսվեց»...

Յես դուրս նայեցի կիրիտկայից — խավար եր և մրրիկ: Քամին վռնում եր այնպիսի կատաղի արտահայտություն, վոր ասես շնչավոր եյակ լիներ. ձյունը ծածկում եր ինձ ու Սավելիչին. ձիերը համբաքալլ առաջ եյին գնում և շուտով կանգ առան: «Ինչո՞ւ չես գնում», — անհամբեր հարցրի յես կառապանին: — Վճնց գնամ, — պատասխանեց նա նստատեղից իջնելով. — առանց են ել հայտնի չե, թե ես ուր յեկանք. ճանապարհ չկա և չորս կողմը մութ մշուշ ե: — Սկսեցի նախատել նրան: Սավելիչը նրա կողմը բռնեց: «Ասա ի՞նչ խելք եր՝ չլսեցիր նրան, — խոսում եր նա բարկացած. — կվերադառնայիր իջևանատուն, թեյ կխմեիր, առոք-փառոք կքնեիր մինչև լույս, բուրդ կխաղաղվեր՝ կշարունակեիրնք ճանապարհը: Յեվ մեր ենք շտապում, են ելի մի բան եր, թե հարսանիք գնայինք»: — Սավելիչն իրավացի եր: Ծար չկար: Ձյունը գալիս եր, հա գալիս: Կիրիտկայի մոտ արդեն ձյան անագին կույտ եր գոյացել: Ձիերը կանգնել եյին գլուխները խոնարհած և յերբին ցնցվում եյին: Կառապանը պտտվում եր շուրջը, պարապությունից լծասարքը կորզի բերելով: Սավելիչը փնթփնթում եր. յես նայում եյի ամեն կողմ՝ հուսալով բնակատեղի կամ ճանապարհի գոնե մի նշան տեսնել, սակայն՝ բացի բուրդի խոլական պտույտներից, վոչինչ չկարողացա դանազանել: Հանկարծ ինչ վոր սե բան տեսա՝ «Ե՛յ, կառապան, — կանչեցի յես. — տես, ի՞նչ ե այնտեղ սեին տալիս»: Կառապանն սկսեց ուշի-ուշով դիտել: — Աստված գիտի, բարին, — ասաց նա իր տեղը նստելով. — բեռ ասեմ՝ բեռ չե, ծառ ասեմ՝ ծառ չե. համա կասես շարժվում ե: Յերեկ — կամ գել ե, կամ՝ մարդ:

Յես հրամայեցի քշել դեպի անծանոթ առարկան, վոր իսկույն և եթ սկսեց դեպի մեզ շարժվել: Յերկու բույեից հետո մենք հավասարվեցինք մի մարդու հետ: «Հէյ, բարի մարդ, — ձայն տվեց նրան կառապանը: — Ասա, չգիտե՞ս ուր ե ճանապարհը»:

— Ծանապարհը հենց ետեղ ե. յես ամուր գետնի վրա յիս կանգնած, — պատասխանեց ճամբորդը, — բայց ի՞նչ ոգուտ:

— Լսիր, շինական, — ասացի յես նրան. — դու այս կողմե-

բի՛ն ծանոթ ես: Կհամաձայնե՞լնս արդո՞ք ինձ մինչև ոթեանը հասցնելու:

— Ես տեղերն ինձ ծանոթ են, — պատասխանեց ճամբորդը. — փառք աստծո, ենքան ենք դես ու դեն գնացել վոր: Համա տեսնում, ես թե ինչ յիղանակ ե. իսկույն կկորցնես ճանապարհը: Լավ ե հստեղ մնանք ու սպասենք: Կաթիլի յե թե բուքը հանդարտի և յերկինքը պարզվի. են ժամանակ ճանապարհը աստղերով կգտնենք:

Նրա սառնարյունությունն ինձ սիրտ տվեց: Յես արդեն՝ վորոշել էյի ինձ աստծու կամքին հանձնելով, գիշերել բաց տափաստանում, չերբ հանկարծ ճամբորդն արագ շարժումով բարձրացավ, նստեց կիրիտկաչի առջևի մասում և ասաց կառապանին. «Ե՛, փառք աստծու, բնակատեղը հեռու չի, ձիերի գլուխն աջ շուռ տուր ու քշիր»: — «Իսկ ինչի՞ աջ քշեմ, — հարցրեց կառապանը դժգոհությամբ: — Եդ վորտեղ ես տեսնում ճանապարհը: Թե, քեղանից լինչ ե գնում» վոչ ձին ե քոնը, վոչ ձիու սարքը. — քշի, հա քշի»: — Ինձ թվաց, վոր կառապանն իրավացի յե: «Իսկապես, — ասացի չես. — ինչո՞ւ չես կարծում, վոր բնակատեղը հեռու չի»: — «Նրա համար, վոր քամին են կողմից փչեց, — պատասխանեց ճամբորդը, — և յես ծխի հոտ առա. ասել ե թե դյուղը մոտիկ ե»: Նրա ուշիմությունն ու նուրը հոտառությունն ինձ ապշեցրեց: Կառապանին հրամայեցի քշել: Խոր ձյան միջով ձիերը դժվարությամբ եյին քայլում: Կիրիտկան հանդարտ առաջ եր գնում մերթ բարձրանալով ձյունակույտերի վրա, մերթ՝ փոսերն ընկնելով և մեկ այս, մեկ այն կողմը շրջվելով: Դա նման եր ալեկոծ ծովում նավի լողալուն: Սավելիչը ախ ու վախ եր քաշում, ամեն բույե իմ կողերին բախվելով: Յես իջեցրի կիբիտկայի խտիրը, փաթաթվեցի քուրքի մեջ և սկսեցի նրհնել՝ բորանի յերգի և դանդաղ յերթի որորով:

Մի յերազ տեսա, վոր հետո չես յերբեք չկարողացա մոռանալ և վորի մեջ մինչև հիմա յեղ ինչ վոր մարդարեական բան եմ տեսնում, չերը նրա հետ համեմատում եմ իմ կյանքի տարորինակ հանգամանքները: Ընթերցողն ինձ կնեռի, քանի վոր հավանորեն ինքն ել փորձով գիտե, վոր մարդ կարող ե անձնատուր լինել սնահավատության, չնայած դեպի նախապաշարուհները տածած ամեն տեսակ արհամարհանքը:

Յես գտնվում եյի զգացմունքների և հոգու ալն վիճակում,

յերբ իրականությունը տեղի տալով ցնորքներին, նրանց հետ ձուլվում ե անուրջների աղոտ տեսիլների մեջ, ինձ թվում եր, վոր բուքը դեռ շարունակվում ե և մենք դեռևս խարխափում ենք ձյունոտ տնապատում... Հանկարծ՝ մի դարպաս տեսա և կիրիտկայով մտա մեր կալվածատիրական տան բակը: Առաջին միտքս այն յերկրողն եր, վոր չլինի՞ թե հայրս բարկանա ինձ վրա՝ հայրենական հարկի տակ իմ ակամա վերադարձիս համար և չլինի՞ թե դա ընդունի վորպես դիտավորյալ անհնազանդություն: Անհանգստությամբ դուրս ցատկեցի կիրիտկայից և տեսնեմ՝ տան մուտքի պատշգամբիկի մոտ ինձ դիմավորում ե մալրբս խորին վշտի արտահայտությամբ: «Մնա կաց, — ասում ե նա ինձ, — հայդդ մահամերձ հիվանդ ե և ցանկանում ե հրաժեշտ տալ քեզ»: Սարսափահար նրա հետևից քայլում եմ դեպի ննջարան: Տեսնեմ՝ սենյակը աղոտ լուսավորված ե, անկողնի մոտ մարդիկ են կանգնած տխուր դեմքերով: Կամացուկ մտնում եմ անկողնուն, մայրս փոքր ինչ բարձրացնում ե ծածկոցը և ասում. «Անդրեյ Պետրովիչ, Պետրուշան չեկա՞վ. լսելով վոր դու հիվանդ ես, նա վերադարձել ե. որհնի՛ր նրան»: Յես ծռեկ չոքեցի և աչքերս սևեռեցի դեպի հիվանդը: Յե՛վ լի՛նչ... Հորս փոխարեն, տեսնեմ՝ անկողնում պառկած ե մի սեամորուք մուժիկ¹ և ուրախ-ուրախ ինձ ե նայում: Տարակուսանքի մեջ դառնում եմ մորս, ասելով նրան. — «Այս լի՛նչ ե նշանակում: Սա հայրիկս չե: Յե՛վ ինչո՞ւ պիտք ե յես մուժիկի որհնությունը խնդրեմ»: — «Միևնույն ե, Պետրուշա, — պատասխանում ե մայրս, — նա քո հարսանհայրն ե, հասրուրի նրա ձեռքը և նա թող որհնի քեզ... Յես չեյի համաձայնվում: Այն ժամանակ մուժիկը վեր թռավ անկողնից, գոտկից դուրս քաշեց կացինը և սկսեց ոգի մեջ այս ու այն կողմը թափահարել: Ուզում եյի փախչել... և՛ չկարողացա, սենյակը լցվեց մեռած մարմիններով. դրանց դիպչելիս յես սայթաքում եյի և վոտքս սահում եր արյան լճակների մեջ: Սարսափելի մուժիկը սիրալիր ինձ իր մոտ եր կանչում, ասելով. «Մի վախի, արի որհնեմ քեզ»... Սոսկումն ու տարակուսանքը պատեցին ինձ... Յե՛վ այդ բոպեյին զարթնեցի. ձիբը կանգնել եյին. Սավելիչը բռնել եր ձեռքս, ասելով. «Դուրս արի, տեր իմ. տեղ հասանք»:

¹ Мужик — գեղջուկ, շինական:

— «Ո՞ւր հասանք», — հարցրի յես աչքերս տրորելով։ — «Իջևանատուն. աստված ողնեց մեզ, յեկանք, հենց ցանկապատին դեմ առանք։ Դուրս արի, տեր իմ, շնտ, և տաքացիր»։

Յես դուրս չեկա կիրիտկայից, Բուքը դեռ շարունակվում էր, թեև՝ ավելի նվազ ուշժով։ Այնպես մութն էր, վոր աչք աչքի չհր տեսնի։ Իջևանատները մեզ դիմավորեց դարպասի մոտ, լապտերը փեշի տակ բռնած և ինձ առաջնորդեց վերնատուն, ուր նեղվածք էր, սակայն՝ բավական մաքուր. մարխի մի ձողիկ լուսավորում էր այն։ Պատից կախված էր մի հրացան և՛ կազակի բարձրադիր գլխարկը։

Իջևանատները՝ ծագումով Յաիցկի կազակ¹, վաթսուն տարեկան մի մղժիկ էր, դեռևս թարմ ու առույգ։ Ինձնից հետո ներս մտավ Սալեիկը, իր հետ քերելով մեք վորքը արկղը. նա կրակի պահակ էր, և քերելիս իր քերակով իր քերակի վրա լուրջ և անհագրան հարկավոր չթվաց ինձ, վորքան այդ պահին։ Իջևանատները գնաց պատրաստություն տեսնելու։

— Իսկ մեր մնաց մեր առաջնորդը, — հարցրի յես Սալեիկին։

«Նստեղ հմ, ձերդ բարեծննդություն», — լսվեց նրա ձայնը վերելից։

Յես նայեցի վերևի թախաին ու տեսա մի սև մորուք և մի դույզ փայլուն աչքեր։ — «Հը, ի՞նչ է, մրսեցի՞ր»։ — «Մարդ ի՞նչ պես չմբսի ես մի մաշված արմատիկ² մեջ, Բուքը ունեյի, համա՛ մեղքս ինչ թաղցնեմ, — քերել իրիկուն ողելահառի մոտ զրավ դրի՝ ասի ցուրտը ենքան ել խիտ չի»։ Այդ բողեյին ներս մըտավ իջևանատները յեռացող ինքնայեռը ձեռքին։ Մի բաժակ թեյ առաջարկեցի մեր առաջնորդին։ մոժիկը ցած իջավ թախտից։ Նրա արտաքինն ուշագրավ յերևաց ինձ, Կլիներ քառասուն տարեկան, միջահասակ էր, նիհարվուն և լայնաթիկունք։ Նրա սև մորուքի մեջ տեղ-տեղ սպիտակ մազեր էյին յերևում։ Մեծ և ժիր աչքերն անընդհատ շարժման մեջ էյին։ Դեմքը բավական հաճելի, սակայն խորամանկ արտահայտություն ուներ։ Մազերը խուզված էյին բոլորակ. հազին մի պատահումով

¹ Յաիցկի կազակները — Յաիկ գետի ափերին ապրող կազակներն էյին վորոնք իրենց հատուկ զորական կազմակերպությունն ունեյին, այսպես կոչված Յալկյան զորքը։ Պուգաչովի ապստամբությունից հետո Յաիկը վերանվանվեց Ուրալ գետի։

² Լայն փեշերով դեղջիական շալի վերնազգեստ։

կար նստարանի վրա: Սավելիչը վորոշեց քաշվել վառարանի վրա, իջևանատեղը պառկեց հատակին: Շուտով ամբողջ խրճիթը խռմիաց և յես մեռածի պես քնեցի:

Առավոտյան բավական ուշ զարթնելով տեսա, վոր բորանը հանդարտվել եւ Արեւը փալլում եր: Անծայրածիր տափաստանի վրա ձյունը փալլում եր շլացնող շղարշով: Ձիերը լծել եյին Յես վճարեցի իջեկանատեղիցը, վորը մեղնից աշնայիսի չափավոր վարձ վերցրեց, վոր մինչև իսկ Սավելիչը չվիճեց նրա հետ և հակառակ իր սովորութեան չսկսեց սակարկել ու նրա յերեկվա կասկածներն իսպառ փարատվեցին: Յես մոտ կանչեցի առաջնորդին, շնորհակալություն հայտնեցի նրա ցույց տված ոգէնութեան համար և Սավելիչին հրամայեցի կես-մանեթ տալ նրան՝ վորպես արաղի փող: Սավելիչը հոնքերը կիտեց: «Կես-մանեթ արաղի համար, — ասաց նա, — եդ ի՞նչ խաբար եւ նրա համար, վոր դու բարեհաճեցիր նրան հետդ մինչև իջեկանատեղն: Դասցնել: Կամքը քոնն եւ տեր իմ, համա մենք ավելորդ կես մանեթանոցներ չունենք: Ամենքին վոր արաղի փող տանք, եդպես ինքներա շուտով սոված կմնանք»: Յես չեյի կարող վիճել Սավելիչի հետ: Համաձայն իմ խոստման, բոլոր դրամը իովին գտնվում եր նրա տնորինութեան տակ: Սակայն յես դժգոհ եյի, վոր չեմ կարողանում յերախտահատուց լինել մի մարդու, վորը ինձ փրկեց յեթե վոչ փորձանքից, համենայն դեպս մի շատ անհաճո դրութիւնից: Լավ, — ասացի յես սառնարյուն. — յեթե չես ուզում կես-մանեթ տալ, ապա հանիր նրա համար իմ շորերից մի վորեւ բան: Նա շատ թեթեւ ե հագնւած: Տո՛ւր նրան իմ նապաստակի մուշտակը:

«Վողորմած տեր, Պյոտր Անդրեյիչ, — ասաց Սավելիչը: — Նրա ինչի՞ն ե պետք քո նապաստակի մուշտակը: Այդ շունը առաջին պատահած կաբակում¹ արաղի կտամ»:

— Ծերսկ, եդ մեկն արդեն քո ցավը չի, — ասաց իմ շըրջմովիկը, — կլամմ թե չես: Նորին բարեծննդութիւնն ինձ նվեր ե տալիս իր հագի մուշտակը, նրա աղայական քեֆն եդպես ե ուզում, իսկ քո ծառայական դործն ե՛ չվիճել և լսել նրան:

«Դու ասածուց չես վախենում, ավագսկ, — պատասխանեց նրան Սավելիչը բարկացած ձայնով: — Տեսնո՞ւմ ես, վոր չերեխի խելքը բան չի կտրում, իսկ դու ոգտովելով նրա միամտութիւնից,

¹ Խմելքների խանութ ցարական Ռուսաստանում, «միկիտան»:

ուրախ ես նրան պլոկելու: Գու ինչի՞ն ե պետք աղայական մուշ-տակը: Դու գոռով ել չես կարա վրա քաշի քո եդ անիծյալ ուսերիդ»:

— Խնդրում եմ խելքիդ դու չտաս, — ասացի յես իմ խնամարկուին, — իսկուհն և եթ մուշտակը բեր եստեղ:

«Տեր իմ աստված, — հառաչեց իմ Սավելիչը: — Նապաստակի մուշտակը համարյա թե բոլորովին նոր ե: Գլուխը քարը, ռւր եր, թե մի լավ մարդու եյինք տվել և վոչ թե ես հարեցող տրել-լորին»:

Այնուամենայնիւ նապաստակի մուշտակը հայտնվեց: Գեղ-ջուկը տեղնուտեղն սկսեց իր վրա չափել աչն: Յեվ իսկապես. մուշտակը, վոր ինձ արդեն փոքր եր գալիս, նրա համար մի քիչ նեղ եր: Սակայն, նա մի կերպ հնար գտավ և հազավ աչն, կարերը տրաքացնելով: Գիշ մնաց, թե Սավելիչը լաց լինել լսելով թե թելերն ինչպես են ճալթում: Շրջմուխիլը չափադանց գոհ եր իմ նվերից: Նա ինձ մինչև երբիտկան ճանապարհ դրեց և խոնարհ գլուխ տալով ասաց. «Շնորհակալ եմ, ձերդ բարեմննդություն: Ձեր լավության համար աստված ձեզ հատուցի: Հավիտյան չեմ մոռանա ձեր շնորհները»: — Նա գնաց իր ճամբով, իսկ չես իմ ուղին շարունակեցի, ուշք չդարձնելով Սավելիչի դայրույթի վրա և շուտով մոռացա թե նախորդ որվա բուքը, թե իմ առաջնորդին և թե նապաստակի մորթուց կարած մուշտակը:

Որենքուրդ հասնելով ուղղակի ներկայացա գեներալին: Յես տեսա բարձրահասակ մի սղամարդ, վորը սակայն ծերությունից կորացած եր: Նրա չերկար մազերը բոլորովին ձերմակ եյին: Հին ու խուճացած համազգեստը հիշեցնում եր Աննա Իոանովնայի¹ ժամանակի ռազմիկներին, իսկ նրա խոսակցական լեզվի մեջ վորոշակի նկատելի յեր գերմանական առողանությունը: Յես նրան հանձնեցի հորս նամակը: Նրա անունը լսելով նա արագ ինձ նայեց, «Ասֆանց իմ, — ասաց նա: — Կասես թե յերեկ եր, վոր Անգրեյ Պետրովիչը գեռ քո տարիքին եր, իսկ հիմա տես, թե ինչ մի կտրիշ տղա ունի: Ա՛խ, շամանակ, շամանակ»: — Նա բացեց նամակը և սկսեց կիսաձայն կարդալ, իր նկատողություններն անելով. «Վողորմած տեր Անգրեյ Կարլովիչ, հուսով եմ, վոր ձերդ գերազանցությունը...» սա ինչ ցեականություն

¹ Ռուս թագուհի, գահակալել և 1730—1740 թ.:

ե: Թ՛հւ, չի յել ամաչում: Իհարկե, դիսցիպլինան առաջին բանն է, բայց միթե այսպես են գրում հին կամոսդին¹... «ձերդ գերազանցությունը չի մոռացել»... հմ... և... յերբ... հանգուցյալ ֆելդմարշալ Մին...² արշավանքի... ինչպես և... Կարոլինկալին... հհ, բրուզեր³. Նա դեռ հիշում է մեր հին չարածը՝ իսկ թշուհն էր: «Հիմա գանք գործին... Ձեզ մոտ իմ փոքր փորդուն»... հմ... «պահեք վոդնու ցեռնոցն երում»⁴... Ի՞նչ ասել է վոդնու ցեռնոցներ: Դա յերեի ռուսական ասացվածք է... Ի՞նչ ասել է «պահել վոդնու ցեռնոցներում» — կրկնեց նա ինձ դառնալով:

— Դա նշանակում է, — պատասխանեցի յես նրան վորքանե կարելի յե անմեղ դեմքով. — հետո սիրալիբ վարվել՝ վոչ այնքան խիստ, վորքան կարելի յե ազատ թողնել ինձ, — այդ և նշանակում պահել վոդնու ձեռնոցներում:

«Հ՛մ, հասկանում եմ... «Ե նրան ազատ չթողնել»... չէ, յերելում ե՛ վոդնու ցեռնոցները ուրիշ բան են նշանակում: «Մրա հետ և... նրա պասպորտը»... Հապա ռւր է պասպորտը: Ահա, սա յե... «տեղեկացնել Սեմյոնովսկի գնդին»... Լավ, Լավ, ամեն ինչ կարվի... Թինձ թույլ կտաս առանց աստիճանի դանադանության գրկել քեզ և... հին ընկերն ու բարեկամը» — ասեց, վերջապես գլխի ընկավ... և այլն, և այլն... — «Ե, սիրելիս, — ասաց նա նամակը կարդալուց հետո և մի կողմ գնելով իմ պասպորտը, — ամեն ինչ կանենք. սպայի աստիճանով դու կըտեղավորվես *** գունդը և վորպիսզի ժամանակ չկորցնես, ապա վաղն և եթ՝ մեկնիր Բելոգորսկի բերդը, ուր դու կլինես կապիտան Միրոնովի՝ մի բարի և ազնիվ մարդու գործախմբում: Այնտեղ դու իսկական ծառայության մեջ կլինես, կվարժվես դիսցիպլինային: Որենքուրդում դու գործ չունես անելու. թրե գալը

¹ Կամոսդ (գերմ.) — ընկեր:

² Մինիխ, Բուրխարդ-Քրիստոֆոր (1683—1767) — պետական գործիչ և զորահրամանատար, վոր մեծ ազդեցութուն ուներ Աննա Իոանովնայի որովհետև Թառնակեցի է մի շարք պալատական հեղաշրջումների: 1741 թվին աքսորված է յեղել Պելլեմ, վորտեղից նրան վերադարձրել է Պյոտր III-ը: Վերջինիս գահընկեցությունից հետո ծառայել է Յեկատերինա II-ի արքունիքում:

³ Բրուզեր (գերմ.) — յեղբայր:

⁴ Պահպանված է բնագրի դարձվածքը՝ «доржать в ежовых рукавицах», վոր նշանակում է — մեկի նկատմամբ խիստ հակոցութուն ունենալ, մեկին իր բռնում պահել:

Ֆլասս ե յերիտասարդ մարդուն: Իսկ այսոր, համեցեք ինձ մոտ ճաշելու»:

«Քանի գնաց ըանս ձախողվեց, — մտածում եյի յես. աչ թե ուր բերեց ինձ աչն, վոր յես համարլա թե մորս արգանդում աբդեն գվարդիայի սերժանտ եյի: Ո՞ւր հասցրեց դա ինձ: *** գունդը և Կիրգիզ-Կայսացիկի¹ տափաստանների սահմանի վրա գտնվող մի խուլ բերդ...» Յես ճաշեցի Անդրեյ Կարլովիչի մոտ յերեքով՝ նրա ձեր աղյուտանտի հետ: Գերմանական խիստ խնայողութունն եր իշխում նրա սեղանի վրա և յես կարծում եմ, վոր ինձ բերդապահ զորքի մեջ շտապ ուղարկելու պատճառը մասամբ և աչն եր, վոր նա վախենում եր յերբեմնակի ավերլորդ հյուր տեսնել իր՝ մեծնակյացի սեղանի շուրջը: Մյուս որը յես հրաժեշտ տվի գեներալին և մեկնեցի իմ նշանակման վայրը:

¹ Կիրգիզ - Կայսացիկ: Խափաստանները — այդպես եյին կոչվում Ուրալ գետից արևելք ընկած հարթավայրերը (այժմյան Կազախստանի տարածքներում):

Մենք ամբողջում ենք ասորում,
 Հաց ենք ուտում, ջուր խմում.
 Հենց վոր դաժան թշնամին
 Գա աչք պի մեր հացին —
 Հյուրին խնջույք կսարքենք՝
 Կարտեչով¹ թոփ կը լցնենք:

Ջինվորենի յերգ

Հնավանդ մարդիկ, հայր իմ:

«Նեղոս»²

Բերդորսկի բերդը դռնվում եր Որենբուրգից քառասուն
 վերստի վրա: Ճանապարհն ընկած եր Յաիկի զառվայր ափով:
 Գետը դեռ ևս չեր սառել և նրա կապարադույն ալիքները տխուր
 սևին ելին տալիս սպիտակ ձյունով պատած միապաղաղ ափե-
 րին: Գետի այն կողմը տարածվում եյին Կիրգիզյան տափաս-
 տանները: Յես խորացա մտքերիս մեջ, մեծ մասամբ՝ տխրալի:
 Կայազորային կյանքը քիչ գրավչություն ուներ ինձ համար:
 Յես ջանում եյի պատկերացնել կապիտան Միրոնովին, իմ ա-
 պագա պետին և տեսնում եյի նրան վորպես խիստ, ցասկոտ մի
 ծերունի, վորը բացի իր ծառայությունից, ուրիշ բան չգիտե և
 պատբաստե ամեն մի չնչին առիթով ինձ կալանքի չենթարկել,
 կապելով լոկ հաց ու ջրի: Մինչ այս, մինչ այն՝ սկսեց մթնել:
 Մենք բավական արագ ելինք ընթանում: «Բերդը հեռու չե, —
 հարցրի յես իմ կառապանին»: — «Մոտիկ ե, — պատասխանեց

¹ Հրետանու ուղիք, մեջը կար դնակներով լցված, վորոնք նույնպես
 կարտեչ են կոչվում:

² «Նեղոս» — կառակերպություն XVIII-րդ դարի նշանավոր ռուս
 դրոշ Դ. Ի. Ֆոնվիդինի (1745 — 1792):

նա: — Հընն, արդեն չերևում է: — Յես նայեցի ամեն կողմ, ակնկալելով տեսնել ահարկու բաստիոններ¹, աշտարակներ ու պարիսպ, բայց վոչինչ չտեսա, բացի մի փոքրիկ գյուղից, վոր շրջապատված եր ցանկապատով: Գյուղի մի ծայրին յերեք թե չորս խոտազեղեր կային, կիսով չափ ձյունով ծածկված, մյուս կողմը՝ մի ծռռված քամաղաց, ծռյլ կախված անշուք թևերով: «Հապա բերդը ուր է», — հարցրի յես զարմանքով: — «Հընն, ելի», — պատասխանեց կառապանը, ցույց տալով գյուղակը, և այդ խոսքերի հետ մենք բերդը մտանք: Բերդի դռները մոտ մի հին, թուջե թնդանոթ տեսա. փողոցները նեղ էին և ծռռումուռ, խրճիթները ցած և մեծ մասամբ հարդով ծածկված: Յես հրամայեցի քշել դեպի բերդապետի տունը և մի բուլեյից հետո մեր կիրքիտկան կանգ առավ փայտե տնակի առաջ, վոր շինված եր բարձր տեղում, իր նման փայտաշեն չեկեղեցու մոտ: Ինձ վոչ վոք չգիտավորեց: Յես գնացի դեպի սրահը (сени) և բաց արի նախասենյակի դուռը: Մի ծեր ինվալիդ, սեղանին նստած, կապույտ կոորից կարկատան եր ձգում իր կանաչ համազգեստի արմուկին: Յես հրամայեցի նրան ղեկուցել իմ մասին: «Մտի՛ր, տեր իմ, — պատասխանեց ինվալիդը, — մերոնք տանն են»: Յես մտա մի մաքուր սենյակ, կահավորված հին յեղանակով: Անկյունում ամանեղենի պահարանն եր. պատից կախած եր սպա-յական դիպլոմը՝ ապակու տակ և շրջանակի մեջ: Նրա մոտ աչքի էլին ընկնում եփանագին նկարներ, վոր պատկերում էին Կիստրինի և Ոչակովի առումը², ինչպես և հարսնացու ընտրելն ու կառվի թաղումը³: Պատուհանի մոտ նստած եր մի պառավ կին՝ հագին քաթիպա, գլխին թաշկինակ կապած: Նա կծկում եր թելը, վոր ձեռքերին ողակած պահում եր սպաչական համա-զգեստ հագած մի աչքը կույր ծերունին: «Ի՞նչ կկամենալիք, չեղբայրս⁴», — հարցրեց պառավը շարունակելով իր գործը: Յես պատասխանեցի, վոր ծառայության եմ չեկել և ըստ իմ պարտավորության ներկայանում եմ իմ պարոն կապիտանին և այդ

¹ Բերդի, ամրոցի բուրդ:

² Կիստրին — Կյուստրին, իր ժամանակ հայտնի բերդ եր Պրուխա-յում: Ոչակովը տաճական բերդ եր Մեծովի ափերին. ֆելդմարշալ Մունիխը այն գրավել եր 1737 թ.:

³ «Մկները թաղում են կատին» — քաղաքական բովանդակութուն ունեցող ամենատարածված նկարներից մեկը. ուղղված եր Պյոտր I-ի դեմ:

⁴ «Չեղբայրս» բառով մենք մի շարք տեղերում թարգմանում ենք ռուսական «բատյուշկա» (братюшка) բառը, վորը թեև նշանակում է «հայր», բայց գործածվում է վորպես դիմում ասեն մի խոսակցի հետ և ունի մոտավորապես «չեղբայրս», «ախպերս» բառերի նշանակությունը:

խոսքերի հետ ալն ե ուզում եյի դիմել միաշնանի ծերուկին, կարծեւով թե բերդապետը նա չե, սակայն տանտիրուհին ընդհատեց իմ անգիր արած ճառը: «Իվան Կուզմիչը տանը չե, — պատասխանեց նա. — հյուր ե գնացել հայր Գերասիմի մոտ. ասենք, միենուզն ե, չեղբայրս, — չեա նրա տիրուհին եմ: Խնդրեմ, բարով չեկար, հազար բարի: Նստիր, չեղբայրս»: Նա ձայն տվեց աղջկան և նրան հրամայեց կանչել ուրյադնիկին: Ծիրուկն իր միտակ աչքով հետաքրքրությամբ դիտում եր ինձ: «Համարձակվում եմ հարցնել, — ասաց նա. — դուք վճիռ գնդում եք հաճել ծառայել»: Յեա բավարարեցի նրա հետաքրքրությունը: «Համարձակվում եմ հարցնել, — շարունակեց նա, — իսկ ինչո՞ւ հաճեցիք գվարդիայից դուրս գալ և մտնել բերդապահ զորքի մեջ»: Յեա պատասխանեցի, վոր սյգպես եր իմ պետի կամքը: «Յերեւիլի թե գվարդիայի սպային անվայել արարմունքների համար», — շարունակեց անխոնջ հարց ու վորձ անողը: — «Հերիք ե դատարկ դուրս տաս, — ասաց նրան կապիտանի կինը. — դու տեսնում ես, վոր չերիտասարդը ճանապարհին հողնել ե, նա գլուխ չուռնի քեզ հետ խոսելու... (ձեռքերդ ուղիղ բռնիր...): Իսկ դու, չեղբայրս, — շարունակեց նա ինձ դառնալով, — մի տխրի, վոր քեզ նետել են մեր այս խուլ տեղերը: Դու վոչ առաջինն ես, վոչ՝ վերջինը նհամբերես, կսիրես: Ծվաբերնը, Ալեքսեյ Իվանիչը ահա հինգ տարի չե, վոր տեղավորված ե մեզ մոտ — մարդասպանության համար: Աստված ե իմանում, թե ինչ մեղք ե նրա միտքը պղղատորել. արի տես, վոր նա քաղաքից դուրս ե գնում մի պորուչիկի հետ. հա, թրերն ել հեռներն են վերցնում ու մեկ ել՝ ըսկըսում են միմյանց ծակոտել, իսկ Ալեքսեյ Իվանիչը թրով սպանում ե պորուչիկին, այն ել՝ յերկու վկաների ներկայությամբ: Ինչ պիտի անես, մարդ մեկ ել տեսնում ե, վոր մեղքի մեջ ե ընկել»:

Այդ բոլորին ներս մտավ ուրյադնիկը՝ յերիտասարդ ու բարեկազմ մի կազակ: Մակսիմիչ, — ասաց նրան կապիտանի կինը: — Պարոն սպային տար բնակարան հատկացրու, միայն թե՛ մաքուրը: — «Լսում եմ, Վասիլիսա Յեգորովնա, — պատասխանեց ուրյադնիկը: — Արդյոք լավ չի՞ լինի նորին բարեօրինակում ե պորուչիկին, այն ել՝ յերկու վկաների ներկայությամբ: Ինչ պիտի անես, մարդ մեկ ել տեսնում ե, վոր մեղքի մեջ ե ընկել»:

հայրանունը, յեղբայրս»։ — «Պյոտր Անդրեյիչ»։ — «Պյոտր Անդրեյիչին տար Սեմյոն Կուզովի մոտ։ Սրբիկան իր ձին իմ բանջարանոցն եր թողել։ Հը, Մակսիմիչ, ամեն ինչ բարեհաջող ե»։

— Ամեն ինչ, փառք աստծո, խաղաղ ե, — պատասխանեց կապակը. — միայն թե կապրալ¹ Պրոխորովը բաղնիքում կռվել և Ուստինյա Նեգուլինայի հետ մի աման տաք ջրի համար։

«Իվան Իգնատիչ, — ասաց կապիտանի կինը մի աչքով կույր ծերուկին։ — Քննիր Պրոխորովի և Ուստինյայի գործը, ով ե արդար, ով՝ մեղավոր և յերկուսին ել պատժիր։ Դեհ, Մակսիմիչ, գնա, աստված քեզ հետ։ — Պյոտր Անդրեյիչ, Մակսիմիչը ձեզ կտանի ձեր բնակարանը»։

Յես հրաժեշտ տվի։ Ուրյազնիկն ինձ տարավ գետի բարձր ափին կանգնած, բերդի հենց ծայրին գտնվող խրճիթը։ Խըրճիթի կեսը բռնել եր Սեմյոն Կուզովի ընտանիքը, մյուս կեսն ինձ հատկացրին։ Դա մի բավական մաքուր սենյակ եր, միջնորմով կիսած։ Սավելիչը սկսեց կարգի բերել մեր իրերը, յես սկսեցի դուրս նայել նեղլիկ պատուհանից։ Իմ առջև ընկած եր տխուր տափաստանը։ Շեղակի կանգնած եյին մի քանի խրճիթներ, փողոցում մի քանի հավիք եյին ման դալիս։ Մի պառավ կին տան առաջ տաշտի մոտ կանգնած, կանչում եր խողերին, վորոնք նրան պատասխանում եյին ուրախ խանչյունով։ Ահա թե ի՞նչ տեղում եյի յես դատապարտված անցկացնել իմ չերիտասարդությունը։ Թախիժը ինձ պատեց. յես հեռացա պատուհանից և առանց ընթրիքի պառկեցի քնելու, ուշադրություն չդարձնելով Սավելիչի հորդոբանքներին, վորը սրտաբեկ ձայնով կրկնում եր. «Տէր իմ աստված. վոչինչ չի ուզում ուտել... Հապա ի՞նչ կասի տիրուհին, յեթե չերեսան հիվանդանա»։

Մյուս ուրը առավոտյան յես նոր եյի սկսել շորերս հագնել, յերբ իմ սենյակը մտավ մի չերիտասարդ սպա, հասակով վոչ բարձր, թուխ և խիստ տգեղ, բայց, չափազանց կենդանի դեմքով։ «Ներեցե՛ք ինձ, — ասաց նա ֆրանսերեն, — վոր յես առանց ձեռնադրության յեկել եմ ձեզ ծանոթանալու։ Յերեկ իմացա ձեր գալը. մարդկային դեմք տեսնելու ցանկությունն ի վերջո այնպես դրավեց ինձ, վոր յես չհամբերեցի։ Այս վիճակը դուք կը հասկանաք, յերբ մի առ ժամանակ կապրեք այստեղ»։ Յես գրկի ընկա, վոր նա մենամարտի հետևանքով գվարդիայից դուրս գրված սպան ե։ Մենք իսկույն և եթ ծանոթացանք։ Շվաբրինը այնքան ել հիմար չեւր, նրա խոսակցությունը սրամիտ եր և

¹ Կրտսեր յենթասպա։

հետաքրքիր: Մեծ աշխուժով նա ինձ նկարագրեց բերդապետի ընտանիքը, հրա շրջապատը և վայրը, ուր ինձ բերել, հասցրիլ եր իմ ճակատագիրը: Յես անկեղծ սրտով ծիծաղում եչի, յերբ ներս մտաւ այն ինվալիդը, վոր բերդապետի նախասենյակում իր համազգեստն եր կարկատում, և Վասիլիսա Յեգորովնայի անունից ինձ ճաշի հրավիրեց նրանց մոտ: Շվարքրինը ցանկութեան հայտնեց ինձ հետ միասին գնալու:

Բերդապետի տանը մոտենալիս փոքրիկ հրապարակի վրա մենք տեսանք քսանի չափ ծեր ինվալիդներ — յերկար ծամերով և յեռանկուռնի գլխարկներ ծածկած: Նրանք ճակատ եչին կազմել: Առջևում կանգնած եր բերդապետը՝ մի առուջգ և բարձրահասակ՝ ծեփունի, գլխին թասակ և հագին դեղնավուն խալաթ: Միզ տեսնելով նա մոտեցաւ, մի քանի սիրալիւր խոսքեր ասաց ինձ և նորից սկսեց հրամաններ տալ: Մենք կանգ առանք, վոր դիտենք վարժութիւնը, սակայն նա խնդրեց մեզ գնալ Վասիլիսա Յեգորովնայի մոտ, խոստանալով մեր հետեից ինքն ել գալ: «Իսկ այստեղ, — ավելացրեց նա, — նաչելու բան չունեք»:

Վասիլիսա Յեգորովնան մեզ ընդունեց պարզ ու սրտաբաց և ինձ հետ վարմեց վորպես վաղեմի ծանոթ: Ինվալիդը և Պալաշկան սեղանն եչին ծածկում: «Այս ի՞նչ ե, Իվան Կուզմիչս այստեղ խելքը ուսումի յե տվել, — ասաց բերդապետի կինը, — Պալաշկա, բարինին ճաշի կանչիր: Իսկ Մաշան հէր ե»: — Այդ ըոպեչին ներս մտաւ տասնութ տարեկան մի աղջիկ, կլոր, կարմիր յերեսով, բացշիկահեր մազերով՝ կոկ սանրված ականջներ յետեւ, վորոնք ասես վառվելիս լինեչին: Առաջին հայացքից նա ինձ աչքան ել դուր չեկաւ: Յես նրան նայում եչի կանխակալ կարծիքով: Մաշային Շվարքրինն ինձ նկարագրել եր վորպես մի կատարյալ հիմար աղջկա: Մարիա Իվանովնան նստեց անկյունում և սկսեց կար անել: Մինչ այս, մինչ այն՝ մեզ ըշխի մատուցին: Վասիլիսա Յեգորովնան ամուսնուն չտեսնելով, Պալաշկային յերկրորդ անգամ ուղարկեց նրա հետեից: «Բարինին կասես, վոր ախր հյուրերը սպասում են, կերակուրը կստոչի փառք ասածո, ուսուցումը ձեռքից չի փախչի. դեռ այնքան գոռա վոր»: — Կապիտանը շուտով հայտնվեց միաշէանի ծերուկի ուղեկցութեամբ: «Սա ի՞նչ բան ե, հերրհնած, — ասաց նրան կինը, — ճաշը վաղուց դրել ենք, համա քեզ կանչել չի վ»:

նում»։ — «Լսե՛մ ես, Վասիլիսա Յեգորովնա, — պատասխանեց Իվան Կուզմիչը, — ծառայութեանով ելի զբաղված, զինվորիկներէս ելի¹ վարժեցնում ։»

«Ե՛ր, հերիք չեղավ, — առարկեց կապիտանի կինը։ — Հենց մի գլուխ ալն եմ լսում, վոր զինվորներին վարժեցնում ես։ Վոչ նրանք ծառայութեան սովորող են, վոչ ել դու մի բան ես հասկանում զբանից։ Լավ եր, թե տանը նստեցիր և աստծուն աղոթք անեցիր, այդպես ավելի լավ կլիներ։ Թանկագին հոգերը, համեցեք նստեք»։

Նստեցինք ճաշի։ Վասիլիսա Յեգորովնան չեր լուծ և վոչ մի բոսի ու հարցերի տարափ տեղաց գլխիս. ովքեր են իմ ծնողները, կենդանի՞ չեն արդոք, վճռեղ են ապրում նրանք և ի՞նչ հարստութեան տեր են։ Լսելով, վոր հայրս յերեք հարյուր գլուղացիներ ունի՝ «միթե հեշտ ե, — ասաց նա. — այ թե հարուստ մարդիկ կան աշխարհում։ Իսկ մենք, լեղբայրս, ունենք չունենք մի հոգի ունենք՝ աղջիկ Պալաշկան, բայց դե փառք աստծու, քիչ-միչ ապրում ենք։ Յաջն ալն ե մենակ՝ Մաշան մարդու տալու յե, իսկ ունեցած ոժիտն ի՞նչ ե — մի խիտ սանր, մի ավել¹ ու մեկ ել մի շահի փող (մեղա՛քեղ աստված) — բաղանիք գնալու համար։ Լավ ե, թե գտնվի մի բարի մարդ, թե չե՝ հավիտյանս տանը կմնա իբրև հարսնացու»։ Յես նայեցի Մարիա Իվանովնային. նա ամբողջովին կարմրեց և մինչև իսկ արցունքներ գլորվեցին նրա ակսեյի մեջ։ Յես խղճացի նրան և շտապեցի խոսակցութեունը փոխել։ «Լսել եմ, — ասացի յես բավական անտեղի, — վոր բաշկիրները պատրաստվում են հարձակում գործել ձեր բերդի վրա»։ — «Այդ հումից ես լսել, հերորհնած», — հարցրեց Իվան Կուզմիչը։ — «Որենքուրդում ինձ այդպես ասացին», — պատասխանեցի յես։ «Դատարկ խոսքեր են, — ասաց բերդապետը։ — Մեղանում վաղուց ե, վոր վոչինչ չի լրսվում։ Բաշկիրները վախկոտ ժողովուրդ են, կիրգիզներին ել լավ դաս ենք տվել։ Հազիվ թե մեզ վրա հարձակվեն։ Իսկ թե հարձակվեցին, մի ալն տեսակ սասան տամ նրանց, վոր տաս տարով խաղաղվեն»։ — «Իսկ դուք չե՞ք վախենում, — շարունակեցի յես, գիմեկով կապիտանի կնոջը, — մնալ այսպիսի վտանգների յեն»։

1 Ռուսները հիմա յեկ բաղանիքներում ոգտվում են ցարասենու (կեչու) բարակ ճյուղերից կաղած տերեխախտ ավելով՝ քրտնասենյակի տախտակամածը բաժրացած, նրանք այդ ավելով հարվածներ են տեղում շոգեպատ մարմիններին։

«Թակա բերդում»։ — «Սովորութունն ե դարձել, յեղբայրս, — պատասխանեց նա։ — Քսան տարի կլինի, վոր մեզ գնդից տեղափոխել են այստեղ և աստված գիտե, թե ինչպես ելի վախենում այդ անիծյալ անհավատներից։ Պատահում եր, հենց վոր տեսնում ելի լուսանի մորթուց կարած նրանց գլխակներն ու լսում էլի նրանց ճղճղոցը, հավատում ես, յեղբայր, սիրտս փորս եր ընկնում։ Բայց հիմա աչնպես եմ սովորել, վոր տեղիցս ել չեմ շարժվի, չեթե գան մեզ ասեն, թե չարագործները վխտում են բերդի մոտերքում»։

«Վասիլիսա Յեգորովնան քաջարի կինն ե, — ծանր ու լուրջ նկատեց Շվարբինը։ — Իվան Կուզմիչը կարող ե հաստատել այդ»։

«Այո, գիտեմ, — ասաց Իվան Կուզմիչը. — իմ կինը վախկոտներից չե»։

«Իսկ Մարիա Իվանովնան, — հարցրի յես. — նա յե՞լ ձեզ նման արի յե»։

«Մաշան արի՞, — պատասխանեց նրա մայրը։ — Վե՛չ, Մաշան վախկոտ ե, մինչև հիմա չե՛լ նա չի կարողանում լսել հրացանի կրակոցը. հենց իսկույն կգողա։ Իսկ չե՛րք յերկու տարի առաջ իմ անվանակոչութան օրը բան հնարեց Իվան Կուզմիչը՝ կրակել մեր թնդանոթից, իմ աղափնյակս քիչ եր մնում վախից աչն աշխարհը գնար։ Այդ օրից ել չենք՝ կրակում անիծյալ թընդանոթը»։

Մենք վեր կացանք։ Կապիտանն ու նրա կինը գնացին քննուր, իսկ յես գնացի Շվարբինի մոտ, վորի հետ և անցկացրի ամբողջ ցերեկոն։

Մ Ե Ն Ա Մ Ա Ր Տ Ը

— Դէհ, խնդրեմ պահիր քո պողիտուրան¹.
Տես՝ ինչպես կծակեմ յես քո ֆիւդուրան:

ԿԱՅԱԺԱՅԻՑ

Անցավ մի քանի շաբաթ և իմ կյանքը Բելոգորսկու բերդում դարձավ վոչ միայն տանելի, այլ նույնիսկ հաճելի: Բերդապետի տանն ինձ ընդունում ելին վորպես հարազատի: Մարդ ու կին ամենահարգելի մարդիկ էլին: Իման Կուզմիչը, վոր հասարակ զինվորի վորդի լինելով սպայութեան աստիճանին եր հասել, մի անուսում ու պարզ մարդ եր, սակայն՝ շատ ազնիւ և բարի: Կինն եր կառավարում նրան, և դա հարմարվում եր նրա անհոգութեան հետ: Վասիլիսա Յեգորովնան ծառայութեան գործերին ել այնպես եր նաչում, ինչպես իր տնտեսութեան գործերին և բերդը կառավարում եր ճիշտ այնպես, ինչպես իր տընակը: Շուտով Մարիա Իվանովնան դադարեց ինձնից քաշվել: Մենք ծանոթացանք: Նա ինձ յերևաց վորպես մի խոհեմ և գլուրազգաց աղջիկ: Աննկատելի կերպով չես կապվեցի այդ բարի ընտանիքի հետ, մինչև իսկ իման Իգնատիչի՝ միաշքանի կայազորային պորուչիկի² հետ, վորի մասին Շվաբրինը հնարել եր, թե իբր նա անթույլատրելի կապ ե ունեցել Վասիլիսա Յեգորովնայի հետ, վոր՝ ճշտութեան սովեր անգամ չունեիր. սակայն — դա Շվաբրինի հոգը չեիր:

Ինձ տվին սպայի աստիճան: Ծառայութեանս ինձ չեիր նեղում: Աստծու պահպանած աչս բերդում վոչ դորատեսեր կային, վոչ՝ վարժութուններ, վոչ ել պահակային հսկողութեան:

¹ Մարմնի զիրքը սուսերամարտի ժամանակ:

² Սպայական կրտսեր աստիճան:

Բերդապետն իր անձնական ցանկությամբ յերբեմն վարժեցնում էր զինվորներին, բաց գեռ չեր կարողացել սովորեցնել, վոր նրանք բոլորն ել իմանային, թե վորն և աջ կողմը, վորը՝ ձախ։ Շվարերին մոտ մի քանի ֆրանսերեն գրքեր կային։ Յես սկսեցի կարդալ և իմ մեջ արթնացավ սեր գեպի գրականութունը։ Առավոտները յես կարդում էյի, վարժվում թարգմանությունների, հաճախ և բանաստեղծություններ եյի շարադրում։ Համարյա միշտ ճաշում եյի բերդապետի մոտ, վորտեղ և անց եյի կացնում որվա մնացորդը և ուր յերեկոները յերբեմն գալիս եր հայր Գերասիմը իր կնոջ՝ Ակուլինա Պամֆիլովնայի հետ, վորը առաջին համբավաբեր կինն էր ամբողջ թաղում։ Հասկանալի չէ, վոր Ալեքսեյ Իվանովիչ Շվարերինի հետ յես տեսնվում եյի ամեն օր, սակայն քանի գնում նրա գրույցն ինձ տհաճ եր պառնում։ Նրա ամենօրյա կատակները բերդապետի ընտանիքի հասցեյին ինձ բոլորովին դուր չէին գալիս, մանավանդ նրա կծու նկատողությունները Մարիա Իվանովնայի մասին։ Բերդում ծանոթների ալ շրջան չկար, բաց յես ուրիշը չէյի և ուզում։

Չնայած նախագուշակումներին, բաշկիրները չեյին հուզվում։ Խաղաղություն եր իշխում մեր բերդի շուրջը։ Մակայն աչք խաղաղությունը խզվեց հանկարծակի յերկպառակությամբ։

Յես արդեն ասացի, վոր պաքսպում եյի գրականությամբ։ Իմ աչս փորձերը աչն ժամանակվա համար նշանակալից եյին և Ալեքսանդր Պետրովիչ Սումարոկովը¹ մի քանի տարի անց դրանք շատ գովեց։ Մի անգամ ինձ հաջողվեց մի փոքրիկ յերգ գրել, վորից գոհ եյի, Հայտնի չէ, վոր գրողները հաճախ խորհուրդներ ունենալու պատրվակով բարեհաճ լսողներ են փնտռում։ Յեվ այդպես, յերգս արտագրելուց հետո յես աչն տարա Շվարերինի մոտ. ամբողջ բերդում միայն նա կարող եր գրնահատել բանաստեղծի գործը։ Կարճ առաջարանից հետո գրպանից յես հանեցի իմ տետրը և կարդացի նրան հետևյալ տողերը.

Սիրո մտքերըս աչրելով
Ջանում եմ քեզ ո՛ր, մոռանալ,
Բաց Մաշայից խուսափելով
Ազատություն չեմ ստանալ։

1 Ա. Պ. Սումարոկով (1718—1777) — բանաստեղծ, առաջին ուսուցիչ և արխատելրատիկ պոեզիայի, այսպես կոչված կլասիցիզմի ամենափայլուն ներկայացուցիչը, վորի ստեղծագործությունները մեծ համբավ են ունեցել մասնավորապես ժամանակի արտոնյալ դասերի մեջ։

Աչքեր պայծառ դիտ գերեցին,
Սիրտս են մաշում ամենայն ժամ.
Նորանք հոգիս խռովեցին,
Խորտակեցին հանդիսս անգամ:

Ձախողությունքս իմանալով
Մաշա, խղճա դու ինձ հիմա,
Դառն վիճակս տեսնելով,
Վոր քեզնով եմ գերված ահա:

— Հավանում ես, — հարցրի յես Շվաբրինին, նրանից գո-
վասանք սպասելով, վորպես մի տուրք, վորն ինձ անալյաման
հասնում ես Սաղայն ի մեծ տհաճութուն իմ, միշտ ներողամիտ
Շվաբրինը վճռականապես հայտնեց, վոր իմ յերգը լավը չէ:

Ինչո՞ւ համար, — հարցրի յես տհաճությունս թագցնելով:

«Նրա համար, — պատասխանեց նա, — վոր այդպիսի բա-
նաստեղծությունները արժանի յեն իմ ուսուցիչ Վասիլի Կիրի-
լիչ Տրետյակովսկուն ¹ և ինձ շատ են հիշեցնում նրա սիրային
կուպլետները»:

Այս ասելով նա ինձնից առավ տետրակը և սկսեց անողոր-
մաբար վերլուծել ամեն մի տունը և ամեն մի բառը, ամենա-
կծու յեղանակով ինձ ծաղրելով: Յես չհամբերեցի, նրա ձեռքից
խլեցի տետրակս և ասացի, վոր այլևս յերբեք նրան ցույց չեմ
տա իմ բանաստեղծությունները: Շվաբրինը ծաղրեց և՛ այդ
սպառնալիքը: — «Տեսնենք, — ասաց նա, — խոսքդ կպահես թե
չե՛ս. բանաստեղծներին ունկնդիր և պետք, ինչպես Իվան Կուզ-
միչին ողու փոքրիկ գրաֆինը՝ ճաշից առաջ: Իսկ ո՞վ և՛ այդ
Մաշան, վորին դու քնքույշ կիրք և սիրային տանջանք ես բա-
ցատրում: Չինի՞ թե Մարիա Իվանովնան ե՞ս»:

— Բո գործը չե՛ս, — ասացի յես հոնքերս կիտելով, — թե ո՞վ
և՛ այդ Մաշան: Յես վո՞չ քո կարծիքն եմ ուզում, վո՞չ ել քո
յենթադրությունները:

«Ոհո՛ւ: Ինքնասեր բանաստեղծ և համեստ սիրեկան, — շա-

¹ Վ. Կ. Տրետյակովսկի (1703—1769) — պոետ, քննադատ և թարգ-
մանիչ, վորը Լոմոնոսովի հետ միասին համարվում է XVIII դարի ռուս
գրականության հիմնադրներից մեկը: Նրա բանաստեղծությունները աչքի
էջին բնկնում ծայրահեղ ծանր ու ճոճով, վորն Տրետյակովսկուն դարձ-
րել և ժամանակակիցների և հետնորդների մշտական ծաղրանքի առարկան:

րունակեց Շվարքինը ինձ ավելի ու ավելի գրգռելով. — բայց լսիր բարեկամական խորհուրդս. յեթե ուզում ես նպատակիդ հասնել, խորհուրդ եմ տալիս գործել վոչ թե չերգելով»:

— Այդ ի՞նչ ե նշանակում, պարոն: Խնդրեմ բացատրու-
թյուն տաս:

«Հաճույքով: Դա նշանակում ե, վոր յեթե դու ուզում ես, վոր Մաշա Միրոնովան մթնով քեզ մոտ գա, ապա քնքույշ գովասանքների փոխարեն նրան մի գույզ զինգեր նվիրի»:

Արյունս չեռաց: «Իսկ ինչո՞ւ համար դու նրա մասին այդ-
պիսի կարծիք ունես»: — հարցրի յես, դժվարությամբ զսպելով
իմ գայրույթը:

«Նրա համար, — պատասխանեց նա դժխալին քմծիծաղով,
— վոր փորձով գիտեմ նրա վարքն ու բարքը»:

— Ստո՛ւմ ես, զարշեյի, — գոռացի յես կատաղած, — դու
ստում ես ամենամանավթ կերպով:

Շվարքինի դեմքն այլալվեց: «Այս մեկը դու չես մարսի,
— ասաց նա թեև սեղմելով: — Դուք ինձ սատիսֆակցիա¹ կը-
տաք»:

— Խնդրեմ, յերբ ուզում ես, — պատասխանեցի յես ուրա-
խացած: Այդ րոպեյին յես պատրաստ եյի հոշոակ նրան:

Յես իսկույն ե եթ գնացի Իվան Իգնատիչի մոտ ե նրան
տեսա թե՛ւասեղը ձեռքին՝ բերդապետի կնոջ հանձնարարու-
թյամբ նա սուեկ եր շարում թելի վրա, ձմեռվա համար չորաց-
նելու նպատակով: «Ա՛, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա ինձ
տեսնելով. — բարով չեկաք: Բարի լինի զաներդ, համարձակվում
եմ հարցնել ի՞նչ գործով»: Յես կարճառոտ պատմեցի նրան, վոր
ընդհարվել եմ Ալեքսեյ Իվանիչի հետ, իոկ նրան՝ Իվան Իգնա-
տիչին խնդրում եմ, վոր իմ սեկունդանտը² լինի: Իվան Իգնա-
տիչը ուշադրությամբ լսեց ինձ, չերևսիս չուելով իր միակ աչքը:
«Դուք հաճեցիք ասել, — դարձավ նա ինձ, — վոր ուզում եք
Ալեքսեյ Իվանիչին սրախողխող անել ե կամենում եք, վոր յես
դրան ներկա լինեմ: Այնպես չէ, համարձակվում եմ հարցնել»:

— Իսկ ե իսկ:

«Ի սեր աստուծո, Պյոտր Անդրեյիչ: Այդ ի՞նչ եք հնարել»:

¹ Սատիսֆակցիա (լատ.) — բավարարում. սատիսֆակցիա պահան-
ջել — ներողություն խնդրել տալ հասցրած վիրավորանքի համար կամ պա-
հանջել, վոր հակառակորդը մենամարտի դուրս գա:

² Մենամարտողներից մեկի մրջնորդը ե վկան:

Դուք և Ալեքսեյ Իվանիչը իրար մի թեթե հայոյեցի եք: Ի՞նչ մեծ բան ե յեղել վոր, հո աշխարհը չքանդվեց: Նա ձեզ հայոյեց, դուք ել նրան մի պիտի ուշուշոյ տվեք. նա ձեր քիթ ու մոռ-թին տվեց, դուք ել նրա ապանջին, մի ուրիշ տեղին տվեք և բաժանվեք, իսկ մենք արդեն ձեզ կհաշտեցնենք: Թե չե, ի՞նչ մի բարի գործ ե իր մերձակից մարդուն սրախողխող անելը, համարձակվում եմ հարցնելու չափ ե, յեթե դուք նրան սրախող-խող անեք, աստված նրա՝ Ալեքսեյ Իվանիչի հետ. յես ել նրան աշնքան չեմ սիրում: Հապա յեթե նա ինքը ձեզ շշտաթի: Ինչի՞ նման կլինի դա: Ո՞վ հիմար կմնա, համարձակվում եմ հարցնել:

Սոհեմ պորուչիկի դատողութուններն ինձ չխրատեցին: Իմ դիտավորութունն անխախտ մնաց: «Ինչպես կուզեք, — ասաց Իվան Իգնատիչը. — արեք այն, ինչ խելքներդ կկտրի: Համա յես ինչու համար պետք ե այնտեղ վկա լինեմ: Ինչի՞ց դըրդ-ված: Մարդիկ կովում են. ի՞նչ մի չտեսնված բան ե վոր, հա-մարձակվում եմ հարցնել: Փնռք աստծո, շվեդները դեմ ել կռիվ եմ գնացել, թուրքերը չեւ. աշնքան բան եմ տեսել, վոր կշտա-ցել եմ նայելուց»:

Յես մի կերպ սկսեցի բացատրել նրան սեկունդանտի պարտականութունը, սակայն Իվան Իգնատիչը ամենեին չը-կարողացավ հասկանալ ինձ: «Ձեր կամքն ե, — ասաց նա. — Յեթե յես պետք ե միջամտեմ այդ գործին, ապա լավ կլինի գնամ Իվան Կուզմիչի մոտ և ըստ որինաց ծառայութեան՝ տե-ղեկացնեմ նրան, վոր ֆորտեցիայի մեջ չարագործութուն ե նյութվում ընդդեմ պետական շահերի. բերդապետն արդյոք չի՞ բարեհաճի պատշաճ միջոցներ ձեռք առնել»...

Յես վախեցա և սկսեցի Իվան Իգնատիչին խնդրել, վոր նա վոչինչ չասի բերդապետին. զոռով համոզեցի նրան. նա ինձ խոսք տվեց և յես վճռեցի ձեռք քաշել նրանից:

Իմ սովորութեան համեմատ յերեկոն չես անցկացրի բեր-դապետի մոտ: Յես ջանում եյի ուրախ և հանդիստ յերևալ. վորպեսզի վոչ մի կասկած չհարուցեմ և խուսափեմ ձանձրա-լի հարցերից, բայց խոստովանում եմ, վոր չուսեցի այն սառ-նասրտութունը, վորով միշտ հպարտանում են նրանք, ովքեր իմ վիճակումն են գտնվել: Այդ յերեկո յես տրամադրված եյի քնքշանքով ու գորովանքով: Մարիա Իվանովնան ինձ դուր եր գալիս սովորականից ավելի: Այն միտքը, վոր մի դուցե նրան

վերջին անգամն եմ տեսնում, նրան իմ աչքերում ինչ վոր հուզիչ պատկեր եր տալիս: Շվարքինն ել յեկավ աշտեղ, Յես նրան մի կողմ տարա և տեղեկացրի իվան Իգնատիչի հետ ունեցած իմ խոսակցության մասին: «Մեր ինչի՞ն են պետք սեկունգանտները, — ասաց նա ինձ սառնությամբ. — առանց նրբանց ել կարող ենք»: Մենք պայմանավորվեցինք մենամարտել ընդդիմոտ գտնվող զեզերի այն կողմում և աշտեղ լինել հաջորդ որը առավոտյան ժամը յոթին: Ըստ յերեկույթին մենք այնքան սիրալիք եյինք խոսում, վոր իվան Իգնատիչն ուրախութունից բերանից թուցրեց. «Ա՛յ, ապրեք, — ասաց նա ինձ գոհունակ գեւորով, — վատ հաշտությունը լավ ե բարի վեճից, թեպետ և անպատիվ ե, բայց՝ վողջ-առողջ կմնաս»:

«Ի՞նչ ի՞նչ, իվան Իգնատիչ, — ասաց բերդապետի կինը, վորը անկյունում նստած խաղաթղթերով ֆալ եր բացում. — յես լավ չլսեցի»:

Իվան Իգնատիչը նկատելով իմ անբավականության նշանները և հիշելով իր խոստումը, շփոթվեց և չգիտեր ինչ պատասխանի: Շվարքինը նրան ոգնության հասավ:

«Իվան Իգնատիչը, — ասաց նա, — գովում ե մեր հաշտվելը»:

— Իսկ այդ հւմ հետ ես դու կովել, չեղբայրս:

«Մենք՝ քիչ մնաց, վոր բավական թունդ կովեյինք Պյոտր Անդրեյիչի հետ»:

— Ինչի համար վոր:

«Մի դատարկ բանի պատճառով. մի չեղդի պատճառով, Վասիլիսա Յեդորովնա»:

— Դուք ել բան եք գտել իրար հետ կովելու: Մի չեղդի համար... Ախր այդ ի՞նչպե՞ս պատահեց:

«Ահա թե ինչպե՞ս. Պյոտր Անդրեյիչը վերջերս մի չեղդ եր հնարել և այսոր յերգեց ինձ, յես ել իմ սիրած յեղանակն սկսեցի»:

Աղջիկ կապիտանի

Յես գիշերին զբոսանք մի՛ անի:

Գժտությունն սկսվեց: Պյոտր Անդրեյիչը քիչ եր մնում բարկանար, բայց հետո միտք արեց, վոր ամեն վոք ազատ ե յերգել աչն, ինչ էր քեֆը տալիս ե: Դրանով ել բանը վերջացավ:

Դիչ մնաց, վոր Շվարքինի անամոթությունն ինձ կատա-
ղեցներ, սակայն բացի ինձանից վոչ վոք չհասկացալ նրա կո-
պիտ ակնարկները, համեմալն դեպս վոչ վոք դրանց վրա ուշա-
դրություն չդարձրեց: Յերգերից ել պրծնելով, խոսակցությունն
անցալ բանաստեղծներին և բերդապետը նկատեց, վոր նրանք
բոլորն ել անառակ ու թունդ հարբեցող մարդիկ են և բարե-
կամարար ինձ խորհուրդ տվեց թողնել վոտանալորներ գրելը,
վորպես ծառայության գործին ընդդեմ և վոչ մի լավ բանի չհաս-
ցընող դրադմունք:

Շվարքինի ներկայությունն ինձ համար անտանելի չեր:
Յես շուտով հրաժեշտ տվի բերդապետին և նրա ընտանիքին:
Տուն գալով յես գննեցի իմ սուսերը, փորձեցի նրա ծայրը և
պառկեցի քնելու, Սավելիչին հրամայելով արթնացնել առավոտ-
յան ժամը վեցն անց:

Մյուս որը նշանակված ժամին յես արդեն կանգնել եչի
դեզերի ալն կողմը, սպասելով իմ հակառակորդին: Շուտով նա
յեկ յերեաց: «Կարող են մեզ տեսնել, — ասաց նա ինձ. — պի-
տ չե շտապել»: Մենք հանեցինք համադրեստները, մնացինք
միայն կամզոլներով¹ և մերկացրինք սուսերները: Այդ բոպեյին
դեզերի յետևից հանկարծ հայտնվեց իվան Իգնատիչը և հինգ
հոգի ինվալիդներ: Նա պահանջեց, վոր գնանք բերդապետի
մոտ: Դժկամությամբ հնազանդվեցինք. զինվորները մեզ շրջա-
պատեցին և մենք դեպի բերդն ուղղվեցինք իվան Իգնատիչի
հետևից, վորը մեզ հանդիսավորությամբ տանում էր, քայլելով
պարմանալի հպարտությամբ:

Մենք մտանք բերդապետի տունը: Իվան Իգնատիչը դուռը
բացեց, հանդիսավոր կերպով հայտարարելով. «Բերեցի»: Մեզ
գիմավորեց Վասիլիսա Տեգորովնան. «Ա՛խ, դուք հերոսհանձներ:
Սա ինչի՞ նման ե, ի՞նչպես, ի՞նչ — մեր բերդում մտրդ սպանել:
Իվան Կուզմիչ, իսկո՛ւյն և եթ սրանց ձերբակալիր: Պյոտր Անդ-
րեյիչ, Ալեքսեյ Իվանիչ, դեսը տվեք ձեր սուսերները. տվեք,
տվեք: Պալմաշկա, այս սուսերները տար նկուղ: Պյոտր Անդրեյ-
իչ, աչպիտի բան յես չեյի սպասում քեզանից: Ամոթ չե՞ քեզ:
Լավ, ասե՛նք թե Ալեքսեյ Իվանիչը մարդասպանության համար
համ գվարդիայից ե դուրս գրված, համ ել նա ասածուն չի հա-
պատում. համա դժև, դու յե՞ր նուջնն ես ուղում անել»:

1 Տղամարդու շոր առանց թևերի (հնում):

Իվան Կուզմիչը միանգամայն համաձայն եր իր կնոջ հետ և մեջ ընդ մեջ խոսում եր, ավելացնելով. «Հա, լսում ես, Վասիլիսա Յեգորովնան ճիշտ և ասում: Մենամարտերը ձեռնադուրսն արդեւի՞լած են զինվորական արտիկուլով¹»: Այդ միջոցին Պալաշկան մեղմից առավ մեր սուսերները և տարավ նկուզ: Յեսնեկարող յեղա ծիծաղա զսպել: Շվարքինը պահեց իր լրջութիւնը: «Ինչպի ձեզ տածած իմ բոլոր հարգանքով հանդերձ, — սառնարյուն կերպով ասաց նա Վասիլիսա Յեգորովնային, — չեմ կարող չնկատել, վոր դուք իդուր եք կամենում անհանգստանալ՝ մեզ ձեր դատաստանին յենթարկելով: Այդ դուք թողեք Իվան Կուզմիչին, դա նրա գործն է»: — Ախ, հերոսհաճ, — առարկեց բերդապետի կինը. — բա միթե մարդ ու կին մի հոգի և մի մարմին չեն: Իվան Կուզմիչ, ի՞նչ ես հորանջում: Իսկույն և եթ սրանց դատ-դատ բանտ նստացրու միայն հաց ու ջուր տալով, վոր խկըները գլուխները դա. մեկ եւ թող հայր Գերասիմը նրանց վրա ապաշխարանք դնի, վոր աստծուց թողութիւն ինդրեն և զղջան մարդկանց առաջ:

Իվան Կուզմիչը չզիտեր, ինչ վճռեք: Մարիա Իվանովնան սաստիկ դռնատ եր: Փոթորիկը մի քիչ հանդարտեց. բերդապետի կինը հանգստացավ և ստիպեց մեզ համբուրել միմյանց: Պալաշկան բերեց մեր սուսերները. բերդապետի տնից մենք դուրս յեկանք ըստ յերեմուշթին հաշտված: Իվան Իգնատիչն ուղեկցում եր մեզ: — Ամոթ չէ՞ր ձեզ, — ասացի յես նրան դայրաացած, — մեր մասին տեղեկացնել բերդապետին այն բանից, վոր այդ մեկը յես չեմ ասել Իվան Կուզմիչին, — պատասխանեց նա. — Վասիլիսա Յեգորովնան ամեն ինչ դուրս քաշեց իմ բերանից: Ամեն բան եւ նա կարգադրեց առանց բերդապետի գիտութեան: Ասենք, վատք աստծո, վոր ամեն ինչ աչսպես վերջացավ: Այդ խոսքերն ասելով նա շրջից դեպի տուն, իսկ Շվարքինը և յես մնացինք մենակ: — Մեր գործը սրանով վերջանալ չի կարող, — ասացի յես նրան: — «Իհարկե, — պատաս-

¹ Ռազմական որենքների ժողովածու, վորով 18-րդ դարի սկզբից մինչև 19-րդ դարի կեսերը կառավարվում եր ռուս միապետական բանակը: Կերպովում եր և՛ քաղաքացիական արդարադատութեան մեջ: «Զինվորական արտիկուլ»-ով «խոսադուրս» արվելով ձեռք մենամարտերը. մասնակցողներին մահապատիժ (կախադան) եր սպանում: Այս սրենքը ձեռնադուրսն պահել եր իր ուշիմ մինչև Պուշկինի ժամանակները, սակայն անհամեմատ մեղմ պատիժներով:

խանեց Շվարբինը. — դուք ձեր արյունով ինձ պատասխան կըտաք ձեր հանդիմութեան համար. բայց, հալանորեն մեզ կսկսեն հետեւել: Մի քանի որ մենք պետք ե ցույց տանք, թե հաշտ ենք: Յետեւութիւնը: — Յեւ մենք բաժանվեցինք, կարծես թե վռչինչ չեր յեղել:

Վերադառնալով բերդապետի տունը յես, ըստ իմ սովորութեան, նստեցի Մարիա Իվանովնայի մօտ: Իվան Կուզմիչը տանը չեր. Վասիլիսա Յեզորովնան տնային գործերով եր զբաղված: Մենք խոսում էյինք կիսաձայն: Մարիա Իվանովնան քնքշութեամբ կշտամբում եր ինձ այն անհանգստութեան համար, վոր պատճառել եր բոլորին իմ վեճը Շվարբինի հետ: «Իմ շունչը կտրվեց, յերբ մեզ ասացին, վոր դուք մտադիր եք սուսերն երկով կովել: Ի՞նչ զարմանալի յեն տղամարդիկ: Մի խոսքի պատճառով, վոր մի շաբաթ հետո անկասկած կմոռանային, նրանք պատրաստ են միմյանց սրահոտոր անել և զոհել վոչ միայն իրենց կյանքը, այլև խիղճն ու բարորութիւնը նրանց, ովքեր... բայց յես հալատացած եմ, վոր վեճը սկսողը դուք չեք: Իրոք մեղավոր ե Ալեքսեյ Իվանիչը»:

— Իսկ ինչո՞ւ յեք դուք այդպես կարծում, Մարիա Իվանովնա:

«Հենց այնպէս... Նա այնտեսակ խեղկատակն ե: Յես չեմ սիրում Ալեքսեյ Իվանիչին, անչափ զգվում եմ նրանից, բայց տարորինակ ե, յեւ վոչ մի դեպքում յես չեյի կամենա, վոր յես ել նրան այդպես դուր չգայի: Դա ինձ սաստիկ անհանգստութիւն կպատճառեր»:

— Իսկ ինչ եք կարծում, Մարիա Իվանովնա. դուք արդէ՞ դո՞ւր եք գալիս նրան, թե վոչ:

Մարիա Իվանովնան կարկամեց ու կարմրեց: «Ինձ թվում ե, — ասաց նա, — յես կարծում եմ, վոր դուք եմ գալիս»:

— Իսկ ինչո՞ւ յես ձեզ այդպես թվում:

«Վորովհետեւ նա խնդրել եր իմ ձեռքը»:

— Խնդրել եր: Նա խնդրել եր ձեր ձեռքը: Այդ յէրբ:

«Անցյալ տարի: Ձեր գալուց յերկու ամիս առաջ»:

— Յեւ Դուք չգնացի՞ք նրան:

«Ինչպէս տեսնում եք: Ալեքսեյ Իվանիչն իհարկե, թե խելոք մարդ ե, թե լավ ընտանիքից ե և թե հարուստ. բայց, յերբ մտածում եմ, թե պետք ե պակի տակ բոլորի ներկայութեամբ նրա հետ համբուրվել... Վոչ մի դեպքում և վոչ մի ցերջանկութեան համար»:

Մարիա Իվանովնայի խոսքերն աչքերս բաց արին և ինձ շատ բան պարզեցին: Յես հասկացա այն համառ չարախոսությունը, վորով Շվարբրինը հետապնդում էր նրան: Հավանորեն նա նկատել էր մեր փոխադարձ մտերմությունը և աշխատում էր մեզ հեռու պահել միմյանցից: Մեր վեճին առիթ տվող խոսքերը հիմա առավել ևս զաղրելի թվացին ինձ, չեբը կոպիտ և անվայել ծաղրանքի փոխարեն դրանց մեջ չես տեսա միտումնավոր բամբասանքը: Հանգուզն չարախոսին պատժելու ցանկությունն իմ մեջ ավելի ուժեղացավ և յես անհամբեր սպասում էյի հարմար առիթի:

Շատ չսպասեցի: Մյուս օրը, յերբ չես դըպրված էյի ելեգիա¹ գրելով և հարմար հանգի սպասելով գրիչս էյի կրծում, Շվարբրինը բաղխեց իմ պատուհանը: Յես գրիչը վայր դրի, սուսերս վերցրի և դուրս յեկա: «Ինչ՞ես հետաձգեմք, — ասաց ինձ Շվարբրինը. — մեզ չեն հետևում: Իջնենք դեպի գետը: Այնտեղ վոչ վոք մեզ չի խանգարի»: Մենք լուռ քայլեցինք: Զառիվայր արահետով իջնելով, հենց դետեղրին կանգ առանք և մերկացրինք մեր սուսերները: Շվարբրինն ինձնից վարպետ էր, սակայն չես՝ ավելի ուժեղ և համարձակ էյի և monsieur² Բոպրեն, վորը յերբեմն գինվոր էր յեղել, ինձ սուսերամարտի մի քանի դաս էր տվել, վորոնցով և չես ոգտվեցի: Շվարբրինը չեւ սպասում հանձինս ինձ գտնել այգեքան վտանգավոր հակառակորդի: Յերկար ժամանակ մենք չեյինք կարողանում միմյանց վորևէ միաս հասցնել, վերջապես, նկատելով, վոր Շվարբրինը թուլանում է, յես սկսեցի յեռանդուն կերպով հարձակվել նրա վրա և համարյա մինչև գիտը քշեցի նրան: Հանկարծ չես լսեցի իմ անունը՝ արտասանված բարձր ձայնով: Յես շրջվեցի և տեսա Սավելիչին, վոր լեռնային արահետով դեպի ինձ էր վազում... Հենց այդ ժամանակ աջ ուսիս ներքև կրծքիս մեջ ուժեղ ծակոց գեղացի. յես ընկա և կորցրի գիտակցությունս:

¹ Ելեգիա (հուն.) — յեղերերդ՝ տխուր, Թախծալի յերգ:

² Monsieur (ֆր.) — պարոն:

Գ Լ Ո Ի Խ Մ

Ս Ե Ր Ը

Ա՛խ, դու աղջիկ, սիրուն աղջիկ,
Ջահել-Ջահել մարդ մի առնի,
Հարցում արա հորից, մորից,
Հորից-մորից, ազդ ու տոհմից,
Խելքըդ գլուխըդ հավաքի,
Խելք հավաքի, նաև ոժիտ:

Ժողովրդական յերգ

Թե վոր ինձնից լավին դանես՝ կմոռնաս ինձ,
Յեթե ինձնից վատը դանես, — կհիշես ինձ:

Ն ու յ յ ւ պ ե ս

Ուշքի գալով յես մի առ ժամանակ չկարողացա սթափվել և չեյի հասկանում, թե ինձ ինչ է պատահել: Ինձ անծանոթ մի վերնատան մեջ յես պառկած եյի թախտի վրա և սաստիկ թուլություն եյի զգում: Իմ առջև կանգնած եր Սավելիչը, մոմը ձեռքին: Մի ինչ վոր մարդ զգուշությամբ քանդում եր վիրակապերը, վորոնցով փաթաթված եյին իմ կուրծքն ու ուսը: Քիչ-քիչ մտքերս պարզվեցին: Յես հիշեցի իմ մենամարտը և գլխի ընկա, վոր վիրավորվել եմ, Այդ բոպեյին դուռը ճոռաց: «Հը՞, ի՛նչպես ե», — շշուկով հարցրեց ձայնը, վորից լես թպրտացի: — Միշտ նույն վիճակումն ե, — պատասխանեց Սավելիչը հոգոց հանելով. — բոլոր ժամանակ ուշքը վրան չե, արդեն հինգ ուր ե: — Յես ուզում եյի շրջվել, բայց չկարողացա: — «Վճռեղ եմ յես, ո՞վ կա այստեղ», — ասացի լես դժվարությամբ: Մարիա Իվանովնան մոտ յեկավ իմ մահճակալին և կռացավ դեպի ինձ: «Ի՞նչ ե, ի՛նչպես եք ձեզ զգում», — ասաց նա: — Փառք աստծո, — պատասխանեցի յես նվաղած ձայնով: — Այդ դճւք եք, Մարիա

Իվանովնա, ասացեք ինձ... — յես այլևս ուժ չունեցա շարունակելու և լռեցի: Սավիլիչը ախ քաշեց: Նրա դեմքին ուրախութուն չերևաց: «Ուշքի՛ յեկավ, ուշքի՛ յեկավ, — կրկնում երեսա՛ — Փառք քեզ տեր, Համա թե վախեցրեր ինձ, աեր իմ, Պյոտր Անդրեյիչ, հեշտ բան ե, եսոր հինգ որ ե...» Մարիա Իվանովնան ընդհատեց նրան: «Շատ մի խոսի նրա հետ, Սավիլիչ, — ասաց: — Նա գեռ թույլ ե»: Մարիա Իվանովնան դուրս յեկավ և կամացուկ ծածկեց դուռը: Մտքերս այնկոծվեցին: Յեվ այսպես, յես բերդապետի տանն եյի, Մարիա Իվանովնան գնում գալիս եր ինձ մոտ: Յես ուզում եյի Սավիլիչին մի քանի հարցեր տալ, սակայն ծերուկը գլուխն որորեց և ականջները խցկեց: Դժկամելով յես աչքերս փակեցի և շուտով խոր քնի մեջ ընկղմվեցի:

Զարթնելով, յես մոտ կանչեցի Սավիլիչին և նրա փոխարեն իմ առջև տեսա Մարիա Իվանովնային. ինձ վողջունեց նրա հրեշտակային ձայնը: Չեմ կարող նկարագրել այն քաղցր զգացումը, վոր պատեց ինձ այդ բոպելին: Յես համիշտակեցի նրա ձեռքը, սեղմեցի շրթունքներին ու խանդաղատանքի արցունքներով թրջեցի այն: Մաշան ձեռքը չեր քաշում... և հանկարծ՝ նրա շրթունքները հպվեցին իմ այտին և յես դգացի նըրանց ջերմ ու թարմ համբույրը: Մարմնովս կրակ անցավ: «Իմ սիրելի, բարբ իմ Մարիա Իվանովնա, — ասացի յես նրան, — յեղիր իմ կինը, ցերջանկայրու ինձ»: — Նա սթափվեց: «Ի սեր ասածո, հանգստացեք, — ասաց նա ձեռքը ինձնից խլելով: — Դուք դեռևս վտանգի մեջ եք, վերքը կարող ե բացվել: Պահպանեցեք ձեզ զոնե ինձ համար»: Այս խոսքերի հետ նա դնաց, թողնելով ինձ հրճվանքի արբեցման մեջ: Յերջանկությունն ինձ հարություն տվեց: Նա իմը կլինի, նա ինձ սիրում ե: Այդ միտքը համակեց իմ վողջ եյությունը:

Այդ բոպելից ժամ առ ժամ դրությունս լավացավ: Ինձ բժշկում եր գնդի վարսավիւրը, քանի վոր բերդում ուրիշ բժիշկար և փառք ասածո՝ նա այնքան ել խելքին չեր զոռում: Յերիտասարդությունս և ինքը բնությունը արագացրին իմ առողջանալը: Բերդապետի ամբողջ ընտանիքը խնամում եր ինձ: Մարիա Իվանովնան ինձնից չեր հեռանում: Հասկանալի յե, վոր առաջին իսկ հարմար առիթով յես վերսկսեցի ընդհատված բացատրությունը և Մարիա Իվանովնան ավելի համբերատար եր լսում ինձ: Առանց վորևե սեթևեթության նա խոստովանեց

իր ունեցած սրտի հակուձը դեպի ինձ և ասաց, վոր իր ծնողները, ի հարկե՛ իր յերջանկութեանն ուրախ կլինեն: «Բայց դու լավ մտածիր, — ավելացրեց նա. — քո ծնողները կողմից արդոյ՞ք չմն լինի արգելքներ»:

Յես մի փոքր մտածեցի: Իմ մոր քնքշութեան մասին յես կասկած չունեյի, բայց իմանալով հորս բնավորութեանն ու մտածելակերպը, յես զգացի, վոր իմ սերը այնքան ել չի հուզի նրան և նա այդ կհամարի վորպէս յերիտասարդ մարդու քմահաճութեան: Յես այդ անկեղծօրէն խոստովանեցի Մարիա Իվանովնային և սակայն վորոշեցի՝ վորքան կարելի յե մի պերճախօս նամակ գրել հորս, խնդրելով նրա ծնողական օրհնութեանը: Նամակը յես ցուց տվի Մարիա Իվանովնային, վորը այնքան համոզիչ և սրտաշարժ գտավ այն, վոր չեր կասկածում նրա հաջողութեանը և յերիտասարդութեանն ու սիրո վողջողութեան համարութեամբ անձնատուր չեղավ իր քնքուշ սրտի զգացմունքներին:

Շվարքիների հետ յես հաշտեցի առողջանալուս առաջին օրերը: Իվան Կուզմիչը հանդիմանելով ինձ մեծամարտի համար, ասաց: «Ե՛հ, Պյոտր Անդրեյիչ, այ թե քեզ բանտարկել եյի. ասենք դու առանց դրան ել պատժված ես: Իսկ Ալեքսեյ Իվանիչը հենց մի գլուխ նստած ե հացատանը, պահակի հակողութեան տակ, իսկ նրա սուսերը կողպեքի տակ և վասիլիսա Յեգորովնայի մոտ: Թող ինքն իրեն խելքի գա ու զղջա»: — Յես չափազանց յերջանիկ եյի, վորպէսզի կարողանայի սրտիս մեջ թշնամական զգացմունք պահել: Յես սկսեցի խնդրել Ծվարքիների մասին և բարի բերդապետը, իր ամուսնու համաձայնութեամբ վճռեց ազատել նրան: Շվարքիներն յեկավ ինձ մօտ. նա խոր ափսոսանք հայտնեց այն մասին, ինչ պատահել եր մեր միջև և խոստովանեց, վոր բոլոր մեղքը իրենն ե և ինձ խնդրեց մոռանալ տեղի ունեցածը: Բնութեանից անհիշաչար լինելով, յես անկեղծութեամբ ներեցի նրան թե մեր վեճը և թե վերքը, վոր յես ստացել եյի նրանից: Նրա զրպարտութեան մեջ յես տեսնում եյի վիրավորված ինքնասիրութեան և մերժված սիրո զայրույթը և մեծահոգաբար ներեցի իմ դժբախտ ախոյա-նին:

Շուտով յես առողջացա և կարողացա տեղափոխվել իմ բնակարանը: Անհամբեր սպասում եյի իմ ուղարկած նամակի պատասխանին, չհամարձակվելով հույս ունենալ և ջանալով իմ

մեջ խլացնել արևուր նախազգացումը: Վասիլիսա Յեզդերոֆնայի
և նրա ամուսնու հետ դեռ չեչի բացատրվել, սակայն իմ առա-
ջարկությունը նրանց չպետք է վարձացնել: Վոչ յես, վոչ ել
Մարիա Իվանովնան չեչինք աշխատում նրանցից թաղցնել մեր
զգացմունքները և մենք առաջուց արդեն հավատացած եյինք,
վոր համաձայն են:

Վերջապես մի անգամ առավոտյան Սավելիչը մտավ իմ
սենյակը, ձեռքին մի նամակ: Դողդողալով խլեցի այն: Հասցեն
հորս ձեռքով եր գրված: Այդ նախապատրաստեց ինձ մի ինչ վոր
կարեւոր բանի, քանի վոր սովորաբար մայրս եր ինձ նամակներ
գրում, իսկ հայրս վերջում ավելացնում եր մի քանի տող: Յեր-
կար ժամանակ յես չեչի բացում ծրարը և նորից ու նորից
կարդում եյի հանդիսավոր մակագրությունը. «Իմ վորդի Պյոտր
Անդրեյիչ Գրինյովին, Որենբուրգի նահանգում, Բելոդոբսկի
բերդում»: Յես ջանք եյի թափում ձեռագրից իմանալ այն հո-
գեկան տրամադրությունը, վորով գրված եր նամակը: Վերջա-
պես վճռեցի բանալ այն և առաջին իսկ տողերից տեսա, վոր
ամեն ինչ խորտակվում ե: Նամակի բովանդակությունը հետե-
լալն եր.

«Վորդի իմ Պյոտր.

Դո նամակը, վորով դու խնդրում ես մեղ տալ մեր ծնողա-
կան որհնությունն ու համաձայնությունը՝ Միբոնովի աղջիկ
Մարիա Իվանովնայի հետ ամուսնանալու համար, մենք ստա-
ցանք սույն ամսի 15-ին և վոչ միայն մտադիր չեմ քեզ տալ
վոչ իմ որհնությունը, վոչ ել իմ համաձայնությունը, այլև
դեռես պատրաստվում եմ գալ այդտեղ և քո այդ արարքների
համար քեզ մի լավ դաս տալ, ինչպես փոքրիկ տղային են խրա-
տում, չնայած քո սպալական աստիճանին, վորովհետեւ դու
ապացուցեցիր, վոր դեռես արժանի չես սուսեր կրելու, վորը
քեզ տրված է հալքենիքը պաշտպանելու և վոչ թե քեզ պես
թոկից փախածների հետ մենամարտելու համար: Անհապաղ
պիտի գրեմ Անդրեյ Կարլովիչին, խնդրելով, վոր նա քեզ Բելո-
դոբսկի բերդից տեղափոխի վորեւ ալ վայր, վորպեսզի այնտեղ
քո հիմարությունն անցնի: Մայրդ, իմանալով քո մենամարտի
մասին և այն, վոր դու վիրավորված ես, վշտից տկարացավ և
հիմա պառկած ե: Արդյոք վերջդ ի՞նչ ե լինելու: Աղթում
եմ աստծուն, վոր դու ուղղվես, թեպետ և չեմ համար-
ձակվում հուսալ նրա մեծ վողորմածությանը:

Հայր քո՝ Ա. Գ.»

Նամակի ընթերցումն իմ մեջ առաջացրեց զանազան ըզ-
գացումներ։ Այն խիստ արտահայտությունները, վոր հայրս
չեւր զլացիւ գործածել, խորապէս վիրավորեցին ինձ։ Արհամար-
հանքը, վորով նա հիշում եր Մարիա Իվանովնայի մասին, ինձ
այնքան անվայել թվաց, վորքան և անիրավացի։ Բեկոգորսկի
ընդդէմ տեղափոխուելու միտքն ինձ սարսափեցրեց, բայց ամե-
նից շատ ինձ վշտացնում եր մորս հիվանդութեան լուրը։ Յես
չարացած եյի Սովետիչի վրա, չկասկածելով, վոր իմ մենամարտը
ծնողներին հայտնի յե յեղել նրա միջոցով։ Հետ ու առաջ քայ-
լելով իմ նեղ սենյակում, չես կանգ առա նրա դիմաց և ասացի,
խստութեամբ նրան նայելով. «Յերեւում ե քեզ համար քիչ ե,
վոր չես քո յերեսից վիրավորուել եմ և մի ամբողջ ամիս վտա-
գերեղմանի դուռն եր. աչժամ ել մօրս ես ուզում մեռցնել։ Սա-
վելիչը ապուշ կտրեց, ասես շանթահարեցին նրան։ «Վողորմի՛ր,
տեր իմ, — ասաց նա և քիչ մնաց հեկեկար, — այդ ի՞նչ հրամա-
յեցիր ասել։ Յեա եմ պատճառը, վոր դու վիրավորուել ես։ Աստ-
ված գիտի, վոր չես վաղեցի իմ կրծքով քեզ պաշտպանելու
Ալեքսեյ Իվանիչի սուսերից։ Անիժյալ ծերությունը խանգարեց
Հապա մալրիկիդ ի՞նչ եմ արել», — «Ինչ ես արել», — պատասխա-
նեցի յես։ — Ո՞վ եր քեզ խնդրում իմ մասին տեղեկություններ
գրես, մի՞թե քեզ լրտեսելու համար ես ուզարկել ինձ հետ»։ —
«Յես քո մասին տեղեկություններ եմ գրել», — պատասխանեց
Սովետիչը արցունքը աչքերին։ — Աստված, յերկնային թագա-
վոր։ Դե, հրամայիր կարդալու, թե բարինն ի՞նչ ե գրում ինձ։
Կտեսնես, թե ինչպես եմ լրտեսել քեզ»։ Այս ասելով նա գրպա-
նից հանեց նամակը և յես կարդացի հետեւյալը։

«Ամոթ քեզ, քաթթառ շուն, վոր դու, չնայած իմ խիստ
հրամաններին, ինձ չես տեղեկացրել իմ վորդու Պյոտր Անդրե-
ւիչի մասին և վոր կողմնակի մարդիկ են հարկադրված հալա-
նել ինձ նրա ստահակությունները։ Այդպէս ես դու կատարում
քո պաշտոնը և տերունական կամքը։ Յես քեզ, քաթթառ շուն,
խող արածացնելու կուղարկեմ, վոր իսկությունը թաղցրել ես
ինձնից և յերես եզ տվել յերիտասարդ տղային. նամակս ստա-
նալուդ պես հրամայում եմ անմիջապես գրել ինձ, թե հիմա
ինչպես ե նրա առողջությունը, վորի մասին ինձ գրում
են, թե լավացել ե, նաև թե վիրտեղից ե վիրավորուել և արդյոք
լավ են բժշկել»։

Ակներև եր, վոր Սովետիչը իմ հանդեպ իրաւ եր և վոր յես

ժողուր վերավորեցի նրան հանդիմանությամբ և կասկածանքով։ Յես ներողություն խնդրեցի նրանից, սակայն ծերունին անմխիթար եր։ «Այ թե ինչ որի հասա յես, — կրկնում եր նա. — այ թե ինչ վողորմությունների արժանացա իմ տերերից։ Յես համ քաֆթառ շուն եմ, համ՝ խողարած, համ ել յևս եմ քո վերքի պատճառը։ Ձե, տեր իմ Պյոտր Անդրեյիչ, վոչ թե յես, այլ անիծյալ մուսյին ե մեղավորը. այդ նա քեզ սովորեցրեց յերկաթե շամփուրներով իրար ծակոտել ու վոտքերով գոլիգոլիլ. կասես՝ այդպիսով չար մարդուց ապահոված կմնաս։ Ինչնեբրհս եր պետք մուսյի վարձել և ավելորդ փող ծախսել»։

Բայց ով եր նեղություն կրել հորս տեղեկացնելու իմ վարքի մասին։ Գեներալը։ Սակայն նա, թվում եր թե իմ մասին այնքան ել հոգ չի տանում. իսկ իվան Կուզմիչը կարևոր չեւ համարել նրան տեղեկացնել մեր մեծամարտի մասին։ Գլուխս կորցրիլ եյի յենթադրություններից։ Կասկածներս ընկան Շըվարբինի վրա։ Միայն նա շահ ուներ տեղեկացնելուց, վորի հետևանքը կարող եր լինել իմ հեռացումը բերդից և անշատումը քերդապետի ընտանիքից։ Յես գնացի այդ բոլորի մասին Մարիա Իվանովնային հայտնելու։ Նա ինձ դիմավորեց տան դռանը։ «Այդ ի՞նչ ե պատահել, — ասաց նա ինձ տեսնելով. — Ի՞նչպես գունատ եք դուք»։ — Ամեն ինչ վերջացած ե, — պատասխանեցի յես և տվի հորս նամակը։ Իր հերթին նա ել գունատվեց։ Նամակը կարդալուց հետո նա այն վերադարձրեց դողացող ձեռքով և ասաց դողողուն ձայնով. «Յերեվում ե՛ յես բախտ չունեմ... Ձեր ծնողները չեն ուզում ինձ իրենց ընտանիքն ընդունել. Թող ամեն բանում տիրոջ կամքը լինի. աստված մեզնից լավ գիտե, թե մեզ ինչ ե պետք։ Ինչ անենք, Պյոտր Անդրեյիչ, գոնե դուք բախտավոր յեղեք...» — «Այդ չի՛ լինի, — գոչեցի յես նրա ձեռքը բռնելով. — դու ինձ սիրում ես, յես պատրաստ եմ ամեն ինչի։ Գնանք, ընկենք քո ծնողների վոտքերը, նրանք պարզ մարդիկ են և վոչ թե խստասիրտ գոռողներ... Նրանք մեզ կորչեն, մենք կպսակվենք, իսկ հետո, կգա ժամանակ, յես հավատացած եմ, վոր կհամոզենք իմ հորը։ Մայրս մեր կողմը կբռնի, նա կների ինձ...» «Կոչ, Պյոտր Անդրեյիչ, — պատասխանեց Մարիա Իվանովնան. — առանց քո ծնողների որհնության յես չեմ աճուսնանա քեզ հետ։ Առանց նրանց որհնության դու բախտ չես ունենա։ Հնազանդվենք ասածու կամքին։ Թե վոր գտնես քեզ վիճակվածին, թե վոր սիրես ուրիշին — աստված քեզ հետ, Պյոտր

Անդրեյիչ, իսկ չես ձեր յերկուսի համար...» Այս խոսքերի հետ նա լացեց և հեռացաւ ինձնից, յես այն ե, ուղում եյի նրա հետեից սենյակ մտնել, սակայն զգացի, վոր ի վիճակի չեմ ինքս ինձ պահել և վերադարձա տուն:

Խորին մտաւտանջության մեջ նստած ելի, յերբ հանկարծ Սաւիւիչն ընդհատեց իմ մտածմունքները: «Ահա, տեր իմ,— ասաց նա, ինձ տալով լրիւ գրված մի թերթ թուղթ.— տես, թե յես արդո՞ք լրտեսություն արե՞մ եմ և մի՞թե յես աշխատում եմ հայր ու վորդի գփտեցնել միմյանց հետ»: Նրա ձեռքից չես վերցրի թուղթը. դա Սաւիւիչի պատասխանն եր իր ստացած նամակին: Ահա նա՛, բառ առ բառ:

«Տեր իմ, Անդրեյ Պետրովիչ, մեր վողորմած հայր.

Ձեր վողորմածիկ գրությունը յես ստացա, վորի մեջ բարեհաճել ես բարկանալ ինձ՝ ձեր ճորտի վրա, վոր իբր ամոթ ե ինձ չկատարել տերունական հրամանները. — իսկ յես քաֆթառ շուն չեմ, այլ ձեր հովատարիմ ծառան, լսում եմ տերունական հրամանները և միշտ ձեզ պարտաճանաչ ծառայել և հասել եմ մինչև որ ծերության: Դե յես Պյոտր Անդրեյիչի վերքի մասին ձեզ վռնինչ չգրեցի, վորպեսզի իդուր չվախեցնեմ ձեզ և հիմա իմանում եմ, վոր տիրուհին, մեր մայր Ավդոտյա Վասիլենան առանց իմ գրելու ել վախից հիվանդացել և յես պետք ե արթթ անեմ նրա առողջության համար: Իսկ Պյոտր Անդրեյիչը վիրավորված եր աջ ուսի տակ՝ կրծքից, վոսկորի հենց տակը, մեկ ու կես վերշոկ խորությամբ և նա պառկած եր բերդապետի տանը, ուր մենք նրան գետափից տարանք և նրան բժշկում եր այստեղի վարսավիր Ստեպան Պարամոնովը, և Պյոտր Անդրեյիչը հիմա, փառք ասածու, առողջ ե և նրա մասին բացի լավից ուրիշ գրելու բան չկա: Մեծավորները, ինչպես իմանում եմ, գոհ են նրանից, իսկ Վասիլիսա Յեզորովնայի տանը նա կասես հարազատ վորդի լինի: Իսկ թե ինչպես յեղավ, վոր այդտեսակ վորձանք պատահեց, ապա յեղածն անցած ե, մեր չերիտասարդը մեղք չունի. ձին վոր ձի յի, չորս վոտքով՝ ելի սայթաքում ե. Յիվ բարեհաճել եք գրել, վոր ինձ կուղարկեք խոզ արածացնելու. այդ ել ձեր ազնվական կամքը գիտի: Յեվ ընդ այսմ վողջունում եմ խոնարհաբար:

Ձեր հովատարիմ ճորտ՝ Արիսիպ Սաւիւիւմ:

Բարի ծերունու գրությունը կարդալիս չես չեցի կարող մի քանի անգամ չփախալ: Յես ի վիճակի չեցի պատասխանել հորս:

ինկ մորս հանգստացնելու համար Ստալինի նամակն ինձ բախ-
րար թվաց։

Այդ ժամանակից սկսած իմ դրուժյունը փոխվեց։ Մարիա
Իվանովնան համարյա թե չեւ խոսում ինձ հետ և ամեն կերպ
աշխատում եր խուսափել ինձնից։ Բերդապետի տունը ինձ հա-
մար պատ դառավ։ Հետզհետե յես սովորեցի տանը մենակ նըս-
տել։ Սկզբում Վասիլիսա Յեզորովնան այդ բանի համար հաճ-
դիմանում եր ինձ, սակայն տեսնելով իմ համառությունը, ինձ
հանդիստ թողեց։ Իվան կուզմիչի հետ հանդիպում ելի միայն
ըստ ծառայության պահանջի։ Շվարքինին հաղվադեսը ելի հան-
դիպում և՛ ականա, քանի վոր նրա մեջ յես նկատում ելի դեպի
ինձ ուղղված թաղուն թշնամանք, վոր և հաստատում եր իմ
կասկածները։ Իմ կյանքն անտանելի դարձավ ինձ համար։
Յես ընկա մռայլ մտածմունքների մեջ, վոր արդյունք եր մե-
նակության և անդործության։ Սերս ըսրբեցվեց առանձնու-
թյան մեջ և քանի գնաց դրուժյունս ծանրացավ։ Յես կուրցի
ընթերցանության և զրականության սերը։ Հոգիս ընկձվեց։ Յես
վախենում ելի, թե կամ կխելադարվեմ, կամ կսկսեմ անառակ
կյանք վարել։ Անակնկալ դեպքերը, վոր կարեւոր ազդեցու-
թյուն ունեցան իմ ամբողջ կյանքի վրա, հանկարծ իմ հոգուն
մի ուժեղ ու բարեբար ցնցում տվին։

Պ ՈՒԳ Ա Չ ՈՎ Շ Չ Ի Ն Ա¹

Դուք, ջահել տղերք, լսեցեք մեզ,
Թե մենք՝ ձերեկս հին ինչ կպտամենք ձեզ:

Յեզ

Նախքան անցնեմ նկարագրելու արտասովոր դեպքերը, **վորոնց ինքս ականատես յեղա**, յես պետք և մի քանի խոսք ասեմ այն դրության մասին, վորի մեջ գտնվում եր Ուկրաինայի նահանգը 1773 թվի վերջին:

Սույն լայնարձակ և հարուստ նահանգում բնակվում էին բազմաթիվ կիսավայրենի ժողովուրդներ, վորոնք միայն վերջերս էին ճանաչել ռուսական թագավորների գերիշխանությունը: Նրանց մշտական խռովությունները, որենքներին և քաղաքացիական կյանքին անսովոր լինելը, թեթևամտությունն ու դաժանությունը անընդհատ հսկողություն էին պահանջում կառավարության կողմից՝ նրանց հնազանդության մեջ պահելու համար: Բերդերը շինված էին հարմար վայրերում և բնակեցված էին մեծ մասամբ կաղակներով՝ Յաիկի ափերի վաղեմի տերերով: Բայց Յաիցկի կաղակները, վորոնք պետք և պահպանելին այս յերկրի անդորրությունն ու անվտանգությունը, մի առժամանակ հետո իրենք դարձան կառավարության համար անհանգիստ ու վտանգավոր հպատակներ: 1772 թվին խռովություն առաջացավ նրանց գլխավոր քաղաքում: Դրա պատճառն այն խիստ միջոցներն էին, վոր **ձեռնարկել էր գեներալ-մայոր Տրաուբենբերգը**, վորպեսզի պատշաճ հնազանդության բերի զոր-

1 Ցարական միապետությունը Պուգաչովի անունից կաղամած այս արգահատելի բառով և վորակել 1773—75 թ.թ. դյուղացիական մեծածավալ հեղափոխական ապստամբությունները Ռուսաստանի մի շարք նահանգներում:

քին: Հետեանքն յեղեկ եր Տրաուբենրերգի բարբարոսական սպանությունը, կառավարման ինքնակամ փոփոխությունը և վերջապես բունտի խաղաղացումը կարտեչով և դաժան պատիժներով:

Այս ամենը պատահել եր իմ¹ Բեռլոդորսկի բերդը գալուց մի քանի ժամանակ առաջ: Ամեն ինչ արդեն հանդադրտ եր կամ թվում եր թե այդպես ե. իշխանությունը չափազանց հեշտ հավատացնեմք խռովարարների կարծեցյալ զղջմանը, վորոնք թագուն դավեր եյին նյութում և հարմար առիթի սպասում² անկարգությունները վերսկսելու համար:

Վերադառնում եմ իմ պատմությանը:

Մի անգամ չերեկոյան (1773 թվի հոկտեմբերի սկզբին եր այդ) լես միայնակ նստած եյի տանը, աշնանալին քամու վունոցը լսելով և պատուհանից դիտելով լուսնի մոտով փախչող ամպերը: Յեկան և ինձ կանչեցին բերդապետի անունից: Յես իսկույն գնացի: Բերդապետի մոտ յես տեսա Շվարբինին, Իվան Իդնատիչին և կազակների ուրյադնիկին¹: Սենյակում չեյին վճշ Վասիլիսա Յեգորովնան, վոչ ել Մարիա Իվանովնան: Բերդապետն ինձ բարեկց մտահոգ դեմքով: Նա դուռը փակեց ընտրին նստեցրեց, բացի ուրյադնիկից, վորը կանգնած եր զըռնների մոտ, — ապա գրպանից մի թուղթ հանեց և ասաց մեզ. «Պարոնայք սպաներ, կարևոր նորություն: Լսեցեք թե ինչ ե գրում գեներալը»: Այդ խոսքերի հետ նա ակնոցները դրեց և կարգաց հետեվյալը.

«Բեռլոդորսկի բերդի պարոն բերդապետ կապլտան Միրոնովին.

Գաղտնի

Այսու հայտնում եմ, վոր պահակային հսկողությունից փախած Դոնի կազակ և հերձվածող Յեմելյան Պուզաշովը անհերելի հանդգնությամբ իր վրա ընդունելով հանգուցյալ արքա Պյոտր III-ի² անունը, չարագործների խումբ ե հավաքել իր շուրջը և խռովություն հարուցել Յաիկի գուղեբում և արդեն գրավել ու ավերել ե մի քանի բերդեր, ամեն տեղ կողոպուտներ և սպանություններ կատարելով: Վասն վորո, սույն գրությունն

¹ Յենթասպա՝ կազակներից կազմված զորամասերում:

² Պյոտր III (1728—1762) — սուսաց կայսր, վորին, մոտ մի տարի թագավորելուց հետո — 1762 թ. դահլեկեց արեց իր կինը՝ հետագայում Յեկատերինա II-ը և կարճ ժամանակից հետո սպանեցին վերջինիս համախոհները:

ստանալով՝ պարոն կապիտան, անհապաղ պետք է պատշաճ միջոցներ ձեռք առնեք հիշյալ չարագործին և ինքնակոչին հետ մղելու, իսկ թե հնարավոր ե՞րբ անհապաղ վոչնչացնելու, յեթե նա կշարժվի դեպի ձեր հողացութեան հանձնված բերդը»:

«Պատշաճ միջոցներ ձեռք առնել, — ասաց բերդապետն ակնոցները հանելով և թուղթը ծալելով, — Լսե՛մ ես, ասե՛ն ե հեշտ: Չարագործը, ինչպես յերևում ե՞րբորեղ ե, իսկ մենք ունենք ընդամենը հարյուր յերեսուն մարդ, չհաշված կազակներին, վորոնց վրա հույս չդնել չի կարելի, խաթրիդ չդիպչի, Մակսիմիչ: (Ուրյադնիկը քմծիծաղ տվեց): Բայց ճար չկա, պարոնս: Ես պահանք: Ժշտապահ չեղեք, պահակներ ու գիշերադեսներ նշանակեք. իսկ հարձակման դեպքում դարպասները ծածկեք և զինվորներին դուրս բերեք: Գնա, Մակսիմիչ, ուշի-ուշով հետևիր քո կազակներին: Թնդանոթը կարգի բերեք ու մի լավ մաքրեք: Իսկ վոր ամենից կարևորն է, այս բոլորը գաղտնի պահեք, վորպեսզի բերդի մեջ վոչ վոք այդ մասին ժամանակից շուտ չիմանա»:

Այս հրամանները տալով Խվան Կուզմիչը մեզ արձակեց: Յես դուրս չեկա Շվարբինի հետ միասին, խոսելով մեր լսածի մասին: — «Խե՛նչ ես կարծում, սա ինչո՞վ կվերջանա», — հարցրի յես նրան: «Աստված գիտե, — պատասխանեց նա. — տեսնե՛ք: Առաջժամ առանձին կարևոր վոչ մի բան չեմ տեսնում: Իսկ յեթե...» Այդ ասելով նա մտածմունքի մեջ ընկավ և անփութ լինելով սկսեց սուլել ֆրանսիական մի արիա¹:

Չնայած մեր բոլոր նախազգուշություններին, Պուգաչովի յերևան գալու լուրը տարածվեց բերդում: Թեպետ և Խվան Կուզմիչը չափազանց հարգում էր իր ամուսնուն, սակայն վոչ մի դեպքում նրան չէր հաղորդի այն գաղտնիքը, վոր իրեն հավատացել էին ըստ ծառայութեան: Գնե՛րալից նամակն ստանալուն պես նա բավական հմուտ ճանապարհ էր դրել Վասիլիսա Յեգորովնային, ասելով նրան, թե իբր հայր Գերասիմը Որենբուրգից ինչ վոր խիստ զարմանալի տեղեկություններ է բերել, վոր պահում է վորպես մեծ գաղտնիք: Վասիլիսա Յեգորովնան իսկույն և եթ ցանկացել էր հյուր գնալ չերեցկնոջ մոտ և Խվան Կուզմիչի խորհրդով իր հետ վերցրել էր Մաշային, վորպեսզի նա միայնակ մնալով չձանձրանա:

¹ Արիա — մեղեդի:

Իվան Կուզմիչը մնալով տան կատարչալ տերը, իսկույն և եթ ուղարկել եր մեր հետևից, իսկ Պալաշկային փակել եր նըկուղում, վորպեսզի նա չկարողանա լսել մեր խոսածը:

Վասիլիսա Յեգորովնան տուն և վերադառնում, չկարողանալով վորեւե բան իմանալ յերեցկնոջից և տեղեկանում ե, վոր իր բացակայութեան ժամանակ Իվան Կուզմիչի մոտ խորհրդակցութուն ե յեղել և վոր Պալաշկայի վրա դուռը կողպել են: Նա գլխի յե ընկնում, վոր ամուսինն իրեն խաբել ե և ըսկըսում ե նրան հարց ու փորձ անել: Բայց Իվան Կուզմիչը պատրաստվել եր հարձակման: Նա բնավ չի շփոթվում և չեռանգուն կերպով պատասխանում ե իր հետաքրքրասեր կենակցին. «Լսում ես այ կին, մեր կնանոց խելքին փչել ե վառարանները հարդով վառել և քանի վոր դրանից կարող ե դժբախտութուն առաջանալ, ուստի յես խիստ հրաման տվի, վոր սրանից հետո կնանիք վառարանները հարդով չվառեն, այլ վառեն ցախ ու խոիլ»: — «Հապա դու ինչո՞ւ համար ես Պալաշկային փակել, — հարցնում ե բերդապետի կինը: — Ինչո՞ւ համար ե խեղճ աղջիկը նկուղում նստել մինչև մեր գալը»: — Իվան Կուզմիչն անպատրաստ ե լինում այդ հարցին. նա կմկմում ե և ինչ վոր անկապ խոսքեր քրթմնջում: Վասիլիսա Յեգորովնան տեսնում ե իր ամուսնու խարդավանքը, սակայն լավ իմանալով, վոր նրանից վոչինչ չի իմանա, ընդհատում ե հարց ու փորձը և խոսք ձգում աղած վարունգների մասին, վոր Ակուլինա Պամֆիլովնան պատրաստել եր միանգամայն առանձնահատուկ յեղանակով: Ամբողջ գիշերը Վասիլիսա Յեգորովնան չի կարողանում քնել և վոչ մի կերպ գլխի չի ընկնում, թե ամուսնու մտքումն ինչ կարող եր լինել, վոր ինքը չպետք ե իմանալ:

Մյուս ուրը, պատարագից վերադառնալիս նա տեսնում ե Իվան Իգնատիչին, վորը թնդանոթի միջից դուրս եր հանում փալասներ, մանրիկ քարեր, տաշեղներ, փայտի կտորներ և ամեն տեսակ աղբ, վոր յերեխաները խցկել եյին թնդանոթի մեջ: «Արդոք ի՞նչ կարող ես նշանակել այս հաղմական նախապատրաստութունները, — մտածում ե բերդապետի կինը. — չլինի՞ հարձակում ե սպասվում կիրգիղների կողմից: Բայց միթե Իվան Կուզմիչն ինձնից կթագցներ այդտեսակ չնչին բաները»: Նա ձայն ե տալիս Իվան Իգնատիչին, հաստատ զիտավորութուն ունենալով նրանից դուրս կորղել այն գաղտնիքը, վոր տանջում եր նրա կանացի հետաքրքրութունը:

Վասիլիսա Յեզորովնան նրան մի քանի նկատողություն և
տնտեսմ տնտեսութեան վերաբերյալ, ինչպես մի դատավոր, վորը
քննությունն սկսում է կողմնակի հարցերով, վորպեսզի նախ
թմրեցնի պատասխանողի զգուշությունը, Հետո, մի քանի րոպե
լռելով, նա խոր հոգոց և հանում և ասում գլուխն որորելով.
«Տեր իմ աստված. ահա թե ի՜նչ նորություններ կան: Սրա վեր-
ջըն ի՜նչ կլինի»:

— Ե՛, մերըս, — պատասխանում է Իվան Իգնատիչը: —
Աստված վորորմած է. բավական զինվորներ ունենք, վառոդը՝
շատ, թնդանովն էլ յևս մաքրեցի: Գուցե թե հաջող զիմադրու-
թյուն ցույց տանք Պուգաչովին: Աստծու պահած դառը գայլը
չի ուտի:

«Իսկ ի՜նչ մարդ է այդ Պուգաչովը», — հարցնում է բեր-
դապետի կինը:

Այդտեղ Իվան Իգնատիչը նկատում է, վոր բերանից խոսք
է թոցրել և կծում է լեզուն: Բայց արդեն ուշ էր: Վասիլիսա
Յեզորովնան նրան հարկադրում է ամեն ինչ խոստովանել,
խոսք տալով վոչ վոքի չպատմել այդ մասին:

Վասիլիսա Յեզորովնան պահում է իր խոստումը և վոչ
վոքի վոչ մի բառ չի ասում, բացի յերեցկնոջից, այն էլ միայն
այն պատճառով, վոր նրա կովը տակավին տափաստան էր գը
նում արածելու և կարող էր ընկնել չարագործների ձեռքը:

Շուտով բոլորը խոսեցին Պուգաչովի մասին: Տարբեր լու-
րեր էյին լսվում: Բերդապետը ուրյադնիկին հանձնարարու-
թյամբ ուղարկեց հարևան գյուղերն ու բերդերը՝ ամեն ինչի
մասին մի լավ հետախուզելու: Ուրյադնիկը վերադարձավ յեր-
կու որից և հայտնեց, վոր բերդից վաթսուն վերստի վրա նա
բազմաթիվ կրակոցներ է տեսել և բաշկիրներից լսել է, վոր
անհայտ ույժ է գալիս: Բայց դրական վոչինչ նա չկարողացավ
հայտնել. վորովհետև վախեցել էր ավելի հեռու գնալ:

Բերդում, կազակների մեջ նկատելի չէր մի անսովոր հու-
զում. բոլոր փողոցներում նրանք խումբ-խումբ հավաքվում
էին, ցած ձայնով խոսում միմյանց հետ և ցրվում — վորեւե
դրագուն էամ կայազորալին զինվոր տեսնելով: Նրանց մոտ լըր-
տեսներ ուղարկվեցին: Յուլայը՝ մկրտված կալմիկը բերդապե-
տին մի կարևոր տեղեկություն հայտնեց: Յուլայի ասելով ուր-
յադնիկի ցուցմունքները սուտ էլին. հետախուզությունից
վերադառնալուն պես նենգամիտ կազակը հայտարարել էր իր

ընկերներին, վոր նա յեղել և խռովարարների մոտ, ներկայացիւր և նրանց ամենագլխավոր առաջնորդին, վորը նրան իր աջն ետովել և յերկար խոսել և նրա հետ: Բերդապետն անմիջապես պահանջներ չսկողութեան տակ դրեց ուրյադնիկին, իսկ Յուլիանն անհապառ յանձնադրեց նրա տեղ: Այս նորութեանը կազակներն ընդունեցին ակնհայտ անբավականութեամբ: Նրանք բարձրագոյ տրտունջներ ելին հայտնում և իվան Իգնատիչը՝ բերդապետի կարգադրութեանը կատարողը, իր ականջով լսել եր, թե ինչպես նրանք ասել են. «Ապասիր, տես թե քեզ ի՞նչ կանենք, բերդի մոտ: Բերդապետն ուզում եր հենց նույն որն և եթ հարցաքննել կալանավորին, սակայն ուրյադնիկը վախել եր պահանջների ձեռքից, — հավանորին իր համախոհների ոգնութեամբ:

Մի նոր հանգամանք ուժեղացրեց բերդապետի անհանգստութեանը. բռնվել եր մի բաշկիր, հետն ել՝ վրդովեցուցիչ թուցիկներով Այս առիթով բերդապետը մտադիր եր նորից հավաքել իր սպաներին և դրա համար ուզում եր մի վորեկ բաբետես պատրվակով նորից հեռացնել Վասիլիսա Յեգորովնային: Բայց քանի վոր իվան Կուզմիչը շատ պարզասիրտ և ճշմարտախոս մի մարդ եր, ուստի այլ չեղանակ չգտավ, քան մի անգամ արդեն գործադրածը:

«Լսում ես, Վասիլիսա Յեգորովնա, — ասաց նա հաղալով: — Ասում են հալը Գերասիմը քաղաքից ստացել ե...» — «Հերիք ե սուտ խոսես, իվան Կուզմիչ, — ընդհատեց բերդապետի կինը. — իմանում եմ, դու ուզում ես խորհրդակցութուն գումարես և առանց ինձ խոսեք Յեմելյան Պուզաչովի մասին, բայց ինձ չես խաբի»: — իվան Կուզմիչը աչքերը չռեց: «Ե՛հ, այ կնիկ, — ասաց նա, — յեթե դու ամեն ինչ արդեն գիտես, ապա լավ ե մնաս. մենք քո ներկայութեամբ ել կխոսենք»: — «Այդպես, — պատասխանեց կինը. — քո ինչ գործն ե խորամանկութուն րանեցնելդեհ, մարդ ուղարկիւր սպաների հետեից»:

Մենք նորից հավաքվեցինք, իվան Կուզմիչը կնոջ ներկայութեամբ կարգաց Պուզաչովի կողմ, գրված մի վորեկ կիսապրագետ կազակի ձեռքով: Ավաղակը հալտաբարում եր իր մտադրութեան մասին՝ անհապաղ հարձակվել մեր բերդի վրա. կազակներին և զինվորներին հրավիրում եր իր հրոսակախմբի մեջ, իսկ հրամանատարներին հորդորում եր չդիմադրել, հակառակ դեպքում՝ մահապատիժ սպառնալով: Կոչը գրված եր կոպիտ, սակայն խիստ արտահայտութուններով և պետք և վտանգավոր

տպավորութիւն թողներ հասարակ մարդկանց մտքերի վրա:

«Տես, ի՞նչ սրիկան ե, — բացականչեց բերդապետի կինը, — ինչեք ե դեռ համարձակվում մեղ առաջարկել: Նրան դիմավորել և նրա վտարելի տակ՝ դնել դրոշակները: Շահն շան վորդի: Ախր միթե նա չգիտի, վոր մենք ահա քառասուն տարի յե ծառայութեան մեջ ենք և փառք ասածո, ամեն ինչ տեսել ենք: Միթե գտնվել են այնպիսի հրամանատարներ, վորոնք լսել են այդ սրիկային»:

— Կարծեմ՝ չպետք ե լինեն, — պատասխանեց իվան Կուզմիչը, — Բայց ասում են չարագործն արդեն շատ բերդեր ե գրավել:

«Յերևում ե, վոր նա իրոք ուժեղ ե», — նկատեց Շվարբի-նը:

— Ա՛յ, հիմա կիմանանք նրա իսկական ուժը, — ասաց բերդապետը: — Վասիլիսո՛ Յեգորովնա, տուր ինձ ամբարի բանալին: Իվան Իգնատիչ, հապա մի այստեղ բեր բաշկիրին, և Յուլային ել հրամայի՛ մտրակներն առնի դա:

«Կանց, իվան Կուզմիչ, — ասաց բերդապետի կինը տեղից վեր կենալով: — Թող յես Մաշային տնից մի տեղ տանեմ. թե չե կլսի աղաղակը և կվախենա: Ասենք յես ել, ճիշտն ասած, գլուխ չունեմ հարցաքննութեան: Բարձր մնաք»:

Տանջելով հարց ու փորձ անելը հնուժն այնպես եր արմատացած դատավարութեան սովորութիւններում, վոր այն վոչընչացնող բարերար հրովարտակը յերկար ժամանակ մնում եր առանց վորևե աղգեցութեան: Կարծում եյին, վոր հանցավորի անձնական խոստովանութիւնն անհրաժեշտ եր նրա մեղքը լիովին ապացուցելու համար, — մի միտք, վոր վոչ միայն անհիմն ե, այլև միանգամայն հակառակ իրավարանական առողջ դատողութեան, քանի վոր չեթե դատապարտյալի ժխտումը չի ընդունվում վորպէս ապացույց նրա անմեղութեան, ապա նրա խոստովանութիւնն առավել ևս չպետք ե ապացույց լինի նրա մեղավորութեան: Մինչև իսկ հիմա յեկ ինձ առիթ ե լինում լսել ծեր դատավորների, վորոնք ափսոսում են բարբարոսական սովորութեան վերացումը: Մեր ժամանակ սակայն, վոչ վոք չեք կասկածում տանջելով հարցաքննելու անհրաժեշտութեան մեջ, վոչ դատավորները, վոչ ել դատապարտյալները: Յե՛վ այդպես, բերդապետի հրամանը մեկնից վոչ վոքի չղարմացրեց և շանհանդըստացրեց: Իվան Իգնատիչը գնաց բաշկիրի հետեից, վորին

ամբարում փակել եր բերդապետի կինը, և մի քանի ռուսկից հետո կալանավորին բերին նախասենյակ: Բերդապետը հրամայեց, վոր նրան ներկայացնեն իրեն:

Բաշկիրը գովարտությամբ քայլեց շիմքից (նրավոտքերը կոճղի մեջ էին) և հանելով իր յերկար գլխարկը, կանգ առավ դռների մոտ: Յես նալիցի նրան և ցնցվիցի: Յերբեք չեմ մոռանա այդ մարդուն: Յոթնասունից անց կլինելու վոչ քիթ ունեք, վոչ՝ ալանջներ: Գլուխն ամրիւած եր. մորուքի փոխարեն ցցված էին մի քանի սպիտակ մազեր. կարճահասակ եր, վտիտ ու կորացած. սակայն նիղլիկ աչքերում դեռես կրակ եր փայլում: «Եհե, — ասաց բերդապետը, արտաքին սոսկալի նշաններից ճանաչելով 1741 թվին պատժված խռովարարներից մեկին¹, — Բանից դուքս ե գալիս, վոր դու՝ հի՛ն գայ, մեր թակարդներում յեղիլ ես արդեն: Ասել ե, թե դու առաջին անգամը չե, վոր ապստամբում ես, քանի վոր աչդտեսակ ունդիլ ես քո գլուխը: Մի մոտ արի տեսնեմ. ասա, ո՞վ ե քեզ ուղարկել այս կողմերը»:

Ծեր բաշկիրը լուռ եր և կատաբյալ անմտությամբ նայում եր բերդապետին: «Ի՞նչ ես լուել, — շարունակեց իվան Կուզմիչը. — չի՛նք թե ուտեքեն վոչ մի խոսք չեա հասկանում: Յուլնյ, հապա մի ձեր լեզվով հարցրու նրան, թե ո՞վ ե նրան ուղարկել մեր բերդը»:

Իվան Կուզմիչի հարցը Յուլայը կրկնեց թաթարների լեզվով, բայց բաշկիրը նրան նայում եր նույն արտահայտությամբ և վոչ մի բառով չպատասխանեց: «Յախշի, — ասաց բերդապետը. — լես քեզ կխոսացնեմ: Տղերք, հապա հանեք սրա գոլավոր խալաթը և մեջքը մի լավ շերտեցեք: Բեզ տեսնեմ, Յուլնյ, նրան մի լնվ...»

Յերկու ինվալիդներ սկսեցին հանել բաշկիրի շորերը: Թըշվառականի դեմքը անհանգստություն եր արտահայտում: Յերե-

¹ Հեղինակը նկատի ունի բաշկիրների ապստամբությունը, վոր տեք 1735 թ. մինչև 1741 թ.: Բաշկիրները IX դարից բնակություն էին հաստատել Մերձուրալյան յերկրամասում և զբաղեցրելով առևտրական գաղութացմանը, մի շարք ապստամբություններ բարձրացրին, վորոնց միշտ ել ճնշվում էին ամենադժոխս յեղանակներով: Մասնավորապես 1740—1741 թ.թ. ապստամբությունը ճնշելու միջոցին հրաճարակ յեղավ 696 գլուղ, մոտ 30 հազար բաշկիրներ մահապատժի յենթարկվեցին և կամ բռնությամբ ստրուկներ դարձան: Սարսափ տարածելու նպատակով առև կառավարությունը կտրելով քարժման ակտիվ մասնակիցների (301 հոգու) քթերն ու ալանջները:

խաների ձեռքն ընկած փոքրիկ գաղանի պես նա իր շուրջն եր-
նայում, իսկ յերբ ինվալիդներից մեկը բռնեց նրա ձեռքերից՝
և մոտեցնելով իր վզին՝ ծերունուն շալակն առավ, իսկ Յուլալը
մտրակը տաքավ-բերեց՝ այն ժամանակ րաշկիրն սկսեց թուլու-
աղերսուռ ձգնով հառաչել և գլուխը շարժելով բացեց բերանը,
ուր լեզվի փոխարեն մսի մի կարճ կտոր եր շարժվում:

Յերբ հիշում եմ՝ վոր այս դեպքը պատահեց իմ կյանքում
և վոր արդ լես յեկել հասել եմ Ալեքսանդր արքայի¹ հեղաբարձ
Թագավորության որերը, չեմ կարող չզարմանալ լուսավորու-
թյան արագ նվաճումների և մարդասիրության կանոնների
տարածման վրա: Յերիտասարդ, յեթե իմ այս գրությունները
կընկնեն քո ձեռքը, հիշիր, վոր լավագույն և ամենահաստատ
փոփոխությունները միայն նրանք են, վորոնք առաջ են գա-
լիս բարքերի բարելավումից, առանց վորևե բռնի ցնցումների:

Բոլորն ապշած մնացին: «Ե՛հ, — ասաց բերդապետը. — յե-
րևում ե, վոր սրանից մենք բան չենք կարող լիմանալ: Յուլայ-
րաշկիրին տար ամբարը: Իսկ մենք, պարոնայք, դեռ խոսելիք
ունենք»:

Մենք սկսեցինք քննության առնել մեր գրությունը, յերբ
հանկարծ Վասիլիսա Յեգորովնան սենյակի մտավ շնչասպառ և
արտակարգ հուզված տեսքով:

«Ե՛հ ի՞նչ ե քեզ պատահել», — հարցրեց ապշած բերդապե-
տը:

— Յեղբայրներս, անբախտություն... — պատասխանեց Վա-
սիլիսա Յեգորովնան: — Նիժնեոգերնի բերդը վերցրել են այսօր
առավոտ: Հայր Գերասիմի գործավորը հենց հիմա վերադարձավ
այնտեղից, նա տեսել ե, թե բերդն ինչպես են վերցրել: Բեր-
դապետին ու բոլոր սպաներին կախել են: Բոլոր զինվորներին
գերի յեն վերցրել: Ուր ե, ուր չե չարագործներն այստեղ ել
կգան:

Անսպասելի լուրն ինձ սաստիկ ցնցեց. Նիժնեոգերնի բեր-
դի պետը, մի խաղաղ ու համեստ յերիտասարդ, ծանոթ եր ինձ.
սրանից յերկու ամիս առաջ նա իր ջահել կոռձ հետ լե-
կավ Որենբուրգից և իջևանեց իման Կուզմիչի տանը: Նիժնեո-
գերնի բերդը գտնվում եր մեզնից քսանհինգ վերստի վրա: Ժամ
առ ժամ մենք պետք ե սպասելինք Պուգաչովի գրոհին: Մարիա

1 Ալեքսանդր I-ը Թագավորել է 1801—1825 թ.:

Իվանովնայի վիճակը վառ կերպով պատկերացավ ինձ և սիրտս աջնալեւս ճմլվեց:

— Լսե՛ք, Իվան Կուզմիչ, — ասացի չես բերդապետին: — Մեր պարտքն ե պաշտպանել բերդը մինչև վերջին շունչը. աչս մասին խոսել անգամ ավելորդ է. Բայց պիտո չե մտածելկանանց անվտանգության մասին: Նրանց Որենբուրգ ուղարկեցե՛ք, յեթե ճանապարհը դեռևս ազատ է, կամ մի հեռավոր, ավելի վտանահիշ բերդ, ուր չարագործները չկարողանային հասնել:

Իվան Կուզմիչը դարձավ իր կնոջն ու ասաց նրան.

«Լսե՛մ ես, ա՛յ կին. իսկապես վոր, ձեզ հեռու չուղարկե՛նք մինչև մենք. խռովարարների հախիցը դանք»:

— Ե՛հ, դատարկ բան է, — ասաց բերդապետի կինը: — Ո՛ւր ե այնտեսակ բերդ, վորտեղ զնդակները չեն հասնում: Բելոգորսկի բերդն ինչո՞վ ե անհուսալի: Փնօք աստծու, ահա քսանչեք-կու տարի չե, վոր ապրում ենք այստեղ: Բաշկիրներին ել ենք տեսել, կիրգիզներին ել. յերևի Պուգաչովից ել կարողանանք պաշտպանվել:

«Լավ, — առարկեց Իվան Կուզմիչը. — հոժար եմ, քանի վոր վտահ ես մեր բերդի վրա: Բայց Մաշային լի՛նչ անենք: Լավ է, յեթե ասենք ղիմացանք կամ զրսից սիկուրս¹ հասավ. իսկ յեթե չարագործները բերդը վերցնե՛ն»:

— Դեհ, այն ժամանակ... — Այդ խոսքերի հետ Վասիլիսա Յեզորովնան կարմրեց և լռեց սաստիկ հուզմունքից:

«Կնչ, Վասիլիսա Յեզորովնա, — շարունակեց բերդապետը, նկատելով, վոր իր խոսքերը թերևս առաջին անգամ նրա կյանքում ազդեցութուն ունեցան կնոջ վրա: — Միտք չունի Մաշային այստեղ թողնել: Յեկ, նրան Որենբուրգ ուղարկենք իր սանամոր մոտ. այնտեղ բավական զսրք ու թնդանոթ կա, ե՛ պարիսպներն ել քարից են: Քեզ ել խորհուրդ կտայի նրա հետ այնտեղ գնալի. շատ ել թե դու պառավ ես, բայց կտեսնես լինչ կլինի քու ուրը, յեթե ֆորտեցիան² հարձակմամբ վերցնեն»:

— Լավ, — ասաց բերդապետի կինը, — թող քո ասածը լի-նի, Մաշային ուղարկենք: Իսկ ինձ՝ մտքովդ անգամ չանցկացնես խնդրելու. չեմ գնա: Հարկ չկա այս հասակիս քեզնից բա-ժանվել և ոտար վալրերում միացնակ գերեզման փնտոել. միա-

¹ Սիկուրս (18-րդ դարի ռազմական տերմին) — ոգնության ուղարկ-վող զորք: Ֆրանսերեն secours — սեկուրս բառի աղճատված ձևն է:

² Ֆորտեցիա — ամրոց, ամրություն:

սին ապրել ենք, միասին ել կմեռնենք:

«Այդ ել խելքի բան ե, — ասաց բերդապետը: — Դեհ, կարիք չկա դանդաղելու: Գնա Մաշային պատրաստիր ճանապարհի համար: Վաղը առավոտ լուսանալու պես նրան կուղարկենք. հետը ուղեկցորդ պահակներ կդնենք, թեպետ և ավելորդ մարդիկ չունենք: Իսկ մեր ե Մաշան»:

— Ակուլինա Պամֆիլովնայի մոտ ե, — պատասխանեց բերդապետի կինը: — Նա իրեն վատ զգաց, հենց վոր իմացավ Նիժնեոդերնի բերդի առումը. վախենամ թե հիվանդանա: Տեր իմ, աստված, ես լինչ որի հասանք:

Վասիլիսա Յեգորովնան գնաց հոգալու աղջկա մեկնումի մասին:

Բերդապետի մոտ խոսակցութունը շարունակվեց, բայց յես այլևս չեյի մասնակցում ե վոչինչ չլսեցի: Մարիա Իվանովնան յերևաց ընթրիքին գունատ՝ ու լացակումած դեմքով: Մենք լուռ ընթրեցինք և սեղանից վեր կացանք սովորականից շուտ. հրաժեշտ տալով ամբողջ ընտանիքին, ամեն մարդ իր տունը գնաց: Բայց յես դիտմամբ մոռացա սուսերս և հետ դարձա այն վերցնելու. յես նախադգում եյի, վոր Մարիա Իվանովնային մենակ կգտնեմ: Իրոք, նա ինձ գիմավորեց դռների մոտ և տվեց սուսերս: «Մնաք բարով, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա արցունքն աչքերին. — ինձ Որենբուրգ են ուղարկում: Վողջ կենաք և բախտավոր լինեք. մի գուցե աստված հաջողի մեզ նորից տեսնել միմյանց, իսկ յեթե վոչ...» Այս ասելով նա հեկեկաց. Յես գրկեցի նրան: «Գնաս բարով, իմ հրեշտակ, — ասացի յես, — գնաս բարով, իմ սիրելի, իմ ցանկալի: Ինչ ել վոր ինձ պատահի, հավատա, վոր իմ վերջին միտքը և վերջին ալոթքը քո մասին կլինի»: Մաշան լաց յելավ, փարվելով իմ կրծքին: Զերմ համբուրեցի նրան և շտապ դուրս յեկա սենյակից:

Հ Ր Ո Ս Ո Ւ Մ Ը

Ա՛խ, գլուխ իմ, գլուխ իմ,
Ծառայողի գլուխ իմ
Ծառայեց գլուխս ուղիղ
Յերեսուն և յերեք տարի
Բայց, ախ, նա չը վաստակեց
Իրեն վոչ խինդ, վոչ ել շահ
Վոչ իր մասին խոսք բարի,
Վոչ ել բարձր աստիճան
Գլուխն իմ խեղճ վաստակեց
Յերկու բարձր սյուններ լուի,
Վրան՝ թղկի միջնափայտ,
Մեկ ել՝ մետաքս մի ողակ:

Ժողովրդական յերգ

Այդ գիշեր յես չքնեցի և չհանվեցի: Յես մտադիր ելի լուսաբացին գնալ բերդի դարպասների մոտ, վորտեղից պետք և ճանապարհվեր Մարիա Իվանովնան, և այնտեղ վերջին անգամ հրաժեշտ տալ նրան: Յես մեծ փոփոխություն եյի զգում իմ մեջ. հոգուս տագնապն ինձ համար ավելի դյուրին եր, քան այն վնասությունը, վորի մեջ յես վերջերս ընկղմած եյի: Բաժանման թախծի հետ իմ մեջ միախառնվում եյին և՛ անողորմ, սակայն քաղցր հույսերը, և՛ վտանգների անհամբեր սպասումը, և՛ աղնիվ պատվասիրության զգացումը: Գիշերն աննկատելի անցավ: Յես այն ե, ուզում եյի դուրս գալ տնից, յերբ իմ դուռը բացվեց և ինձ ներկայացավ կապրալը, տեղեկացնելով, վոր մեր կազակները գիշերը դուրս են լեկել բերդից, իրենց հետ դուռով տանելով Յուլային և վոր բերդի մոտերքն անհայտ ձիավորներ են շրջում: Այն միտքը, վոր Մարիա Իվանովնան չի կարողանա ճանապարհվել, սարսափեցրեց ինձ. հապճեպ մի քա-

նի կարգադրություններ արի կապրալին և իսկույն շտապեցի բերդապետի մոտ:

Արդեն լուսանում եր: Յես սլանում ելի փողոցով, յերբ լսեցի, վոր կանչում են ինձ: Յես կանգ առա: «Ո՞ւր եք գնում, — ասաց իվան Իգնատիչը ինձ հասնելով: — Իվան Կուզմիչը հողապատնեշի վրա յե և ինձ ուղարկեց ձեզ կանչելու: Պուգաչն յեկավ»: — «Մարիա Իվանովնան գնաց», — հարցրի յես սրտատրոփ: — Վոչ, չհասցրեց, — պատասխանեց իվան Իգնատիչը. — Որենքուրդի ճանապարհը կտրված ե, բերդը պաշարված: Բաներս վատ ե, Պյոտր Անդրեյիչ»:

Մենք գնացինք դեպի հողապատնեշը, վոր մի բնական բարձրություն եր, ցանկապատով ամրացված: Այնտեղ արդեն խռնված եյին բերդի բոլոր բնակիչները: Բերդապահ զորքը կանգնած եր հրացաններով: Թնդանութը յերեկվանից այդտեղ եյին բերել: Բերդապետը գնում գալիս եր իր սակավածիվ զորքի առջև: Վտանգի մոտիկությունը ծեր ռազմիկին վոգեվորում եր արտասովոր արիությամբ: Տափաստանի վրա, բերդից վոչ հեռու, քսանի չափ ձիավորներ եյին շրջում: Թվում եր, թե կադախներ են, սակայն նրանց մեջ կալին և բաշկիրներ, վորոնց հեշտ կարելի չեր ճանաչել իրենց լուսանի մորթու գլակներին և կապարձներին: Բերդապետն իր զորքի առաջն անցավ, զինվորներին ասելով. «Դեհ, իմ տղաներ, այսոր պաշտպան կանգնենք մեր մայր թագուհուն և ցույց տանք ամբողջ աշխարհին, վոր մենք տղամարդ ենք և մեր յերդումին հաստատ»: Զինվորները բարձր ձայնով պատրաստակամություն հայտնեցին: Շվաբրինը կանգնել եր ինձ մոտ և սևեռուն աչքերով նայում եր թշնամուն: Տափաստանի վրա դես ու դեն ընթացող ձիավորները բերդի մեջ շարժում նկատելով, խմբվեցին մի տեղ և սկսեցին խորհրդակցել: Բերդապետը իվան Իգնատիչին հրամայեց թնդանութն ուղղել այդ ամբոխի վրա և ինքը դրեց պատրուկը: Ռումբը վզվալով թռավ նրանց վրայով, առանց մի ֆնաս պատճառելու: Զիավորները ցրվելով իսկույն և եթ աչքից կորան ու տափաստանն ամայացավ:

Այդ միջոցին հողապատնեշ բարձրացավ Վասիլիսա Յեգորովնան, նրա հետ և Մաշան, վորը չեր ուզեցել հետ մնալ նրանից: — «Հը՛, վո՞նց ե, — ասաց բերդապետի կինը: — Բատալիան¹

¹ Աղճատված՝ ֆրանսերեն bataille բառից — կռիվ, ճակատամարտ:

խնչպես և գնում: Հապա թշնամին հար ե»: — «Թշնամին հեռու
չէ, — պատասխանեց իվան Կուզմիչը: — Հուլս աստված, ամեն
ինչ լավ կլինի: Ի՞նչ է, Մաշա, վախենում ես»: — «Վնչ, հայրիկ,
— պատասխանեց Մարիա. իվանոֆնան. — տանը մենակ ավելի
յեմ վախենում»: Այդ խոսքերի հետ նա ինձ նայեց և ուշ գործ
դնելով ժպտաց: Յես ակամա սեղմեցի իմ սուսերի դատապանը,
հիշելով, վոր նախորդակին այն ասացել եմ նրա ձեռքից, կար-
ծես թե իմ սիրելուն պաշտպանելու համար, Սիրոս աչքովում եր:
Ինքս ինձ պատկերացրի նրա ասպետը: Յես ծաղավի ելի աղա-
ցուցելու, վոր արժանի ելի նրա վստահությանը և անհամբեր
սկսեցի սպասել վճռական րոպեյին:

Այդ ժամանակ բերդից կես վերստի վրա գտնվող բարձ-
րունքի յետևից ձիավոր նոր խմբեր յերևացին և շուտով տա-
փաստանը ծածկվեց նիդակներով ու նետ-աղեղներով ղինված
բազմաթիվ մարդկանցով: Նրանց մեջ սպիտակ ձի նստած գալիս
էր մի մարդ, կարմիր կափտանը հագին, մերկացրած թուրը
ձեռքին. դա ինքը Պուզաչովն էր: Նա կանգ առավ. նրան շրջա-
պատեցին և ըստ յերեմուշթին նրա հրամանով չորս ձիավորներ
առանձնացան և ամբողջ թափով քշեցին մինչև բերդը: Մենք
ճանաչեցինք նրանց. մեր դավաճաններն էյին: Նրանցից մեկը
գլխարկի վրա բռնած պահում էր մի թերթ թուղթ, մյուսի նի-
զակի ծայրին հագցված էր Յուլայի գլուխը, վոր նա թափ ձգե-
լով դեպի մեզ շարտեց ցանկապատի վրայով: Դժբախտ կալմիկի
գլուխն ընկավ բերդապետի վոտքերի մոտ: Դավաճանները դո-
ռում էյին. «Մի կրակեք, դուքս յեկեք թաղավորի առաջ. թա-
ղավորն այստեղ է»:

«Հիմա յես ձեր... — գոռաց իվան Կուզմիչը: — Տղերք, կրա-
կեցեք»: Մեր զինվորները համազարկ տվին: Նամակը բռնող
կաղակը յերեւաց և ձիուց ընկավ. մյուսները հետ շրջեցին
ձիերի գլուխը: Յես նայեցի Մարիա իվանոֆնային. Յուլայի
արյունաթաթախ գլխի տեսքից ցնցված և համազարկից խլա-
ցած, նա, թվում էր թե ուշաթափ է: Բերդապետը կապրալին
մոտ կանչեց և հրամայեց սպանված կաղակի ձեռքից վերցնել
թուղթը: Կապրալը դաշո գուրս յեկավ և վերադարձավ, իր
հետևից քարշ տալով սպանվածի ձին: Նա բերդապետին հանձ-
նեց նամակը: Իվան Կուզմիչը ինքն իրեն կարգաց այն և
ապա պատառտեց: Այնինչ՝ խոտվարարները, յերևում է, հար-
ձակման ելին պատրաստվում: Շուտով գնդակներն սկսեցին
սլալալ մեր ականջների տակ և մի քանի նետեր խրվեցին մեզ

մոտ՝ գետնի ու ցանկապատի մեջ: «Վասիլիսա Յեզորովնա, — ասաց բերդապետը: — Այստեղ կնկա գործ չկա. Մաշային տար, տեսնում ես աղջիկը վռչ կենդանի յի, վռչ՝ մեռած»:

Գնդակները տարափել տակ խեղճացած Վասիլիսա Յեզորովնան աչք ձգեց տափաստանի վրա, ուր մեծ շարժում եր նրկատվում, հետո դարձավ ամուսնուն և ասաց նրան. «Իվան Կուզմիչ, մեր կյանքն ու մահը աստծու ձեռքն է. որհնիր Մաշային: Մահա, մոտեցիր հայրիկիդ»:

Գուռնատ ու գողգողշուն Մաշան մոտեցավ Իվան Կուզմիչին, ծունկ չողեց և գետին խոնարհվեց նրա առաջ, Ծեր բերդապետը յերեք անգամ խաչակնքեց նրան, հետո բարձրացրեց և համբուրելով, ասաց նրան փոխված ձայնով. «Դեհ, Մաշա. բախտավոր չեղիր. աղոթիր աստծուն, նա քեզ չի լքի: Յեթե մի լավ մարդ պատահի՝ աստված ձեզ սեր ու համաձայնություն տա: Ապրեցեք այնպես, ինչպես մենք ենք ապրել Վասիլիսա Յեզորովնայի հետ: Դեհ, մնաս բարով, Մաշա: Վասիլիսա Յեզորովնա, շուտ արա, տար նրան»: (Մաշան ընկավ նրա վզովը և բարձրաձայն լաց չեղավ): — «Յեկ, մենք ել համբուրվենք, — ասաց բերդապետի կինը արտասվելով: — Մնաս բարով, եմ Իվան Կուզմիչ. թողություն տուր ինձ, յեթե չես վերևի բանով վշտացրել եմ քեզ»: «Դնաս բարով, գնաս բարով, մայր, — ասաց բերդապետը, գրկեց իր պառավ կնոջը: Դեհ, հերիք ե, գնացեք, ասում եմ՝ տուն գնացեք: Հն, յեթե հասցնես, Մաշային սարաֆան¹ հագցրու»: Բերդապետի կինը հեռացավ իր աղջկա հետ: Յես նախում եյի Մարիա Իվանովնայի հետևից. նա յետ նայեց և գլխով արեց ինձ: Այդ բողեյին Իվան Կուզմիչը գեպի մեղ դարձավ և նրա ամբողջ ուշադրությունը կենտրոնացավ թշնամու վրա: Խռովարարները հավաքվեցին իրենց առաջնորդի մոտ և հանկարծ սկսեցին ձերբից իջնել: «Հիմա պինդ կացեք, — ասաց բերդապետը, — հրոտում կլինի...»: Այդ բողեյին սոսկալի ճիչ ու աղաղակ լավեց, խռովարարները թափով վազեցին գեպի բերդը: Մեր թնդանոթը լցված եր կարտեղով: Բերդապետը սպասեց այնքան, մինչև նրանք բոլորովին մոտեցան և հանկարծ նորից կրակեց: Կարտեղը զարկեց ամբոխի հենց մեջտեղը: Խռովարարները յերկու կողմի վրա շրջվեցին և հետ դարձան: Նրանց առաջնորդը մենակ մնաց առջևում... Նա թափահարում եր իր թուրը և կարծես յեռանդուն կերպով հորդորում եր նրանց...

¹ Սարաֆան — ուսանկան կտնայի յերկտը զգեստ

Մի րոպե դադարած ճիչն ու աղաղակն իսկույն նորոգվեց վերստին: «Դեհ, տղերք, — ասաց բերդապետը, — հիմա դարպասները բացեք և թմրուկը դարկեք: Առաջ, տղերք, գրոհի՛ր, իմ հետեից»:

Բերդապետը, իվան Իգնատիչը և յես մի ականթարթում նետվեցինք ամրոցի պատնեշի այն կողմը, սակայն անարեկված կայադորը տեղից չշարժվեց: «Տղերք, ել ինչո՞ւ յեք կանգնել, — բզավեց իվան Կուզմիչը: — Մեռնելու յե՛ մեռնենք, ծառայության գործ ե...»: Այդ րոպեյին խռովարարները վաղեցին մեզ վրա և ներս խռժեցին բերդը: Թմրուկը լռեց, բերդապահ զորքը հրացանները ձգեց. քիչ ֆուսց, վոր ինձ վայր գլորեցին, բայց յես վեր կացա և խռովարարների հետ միասին մտա բերդը: Բերդապետը գլխից վիրավորված կանգնած եր մի խումբ չառադործների մեջ, վորոնք նրանից պահանջում էյին բանալիները: Յես այն ե ուզում ելի նրան ոգնության նետվել, յերը մի քանի ուժեղ կաղակներ բռնեցին և գոտիներով կապեցին ինձ, ասելով. «Ա՛յ թե ձեզ հախ՝ դատաստան կանենք, հա՛, թագավորին անլսուկ հպատակներ»:

Մեզ քաբշ տվին փողոցներով. բնակիչները տներից դուրս էյին գալիս աղ ու հացով: Լավեց դանդահարության ձայնը, Հանկարծ ամրոխի մեջ գոռացին, վոր թագավորը հրապարակի վրա սպասում ե գերիներին և յերդում ե ընդունում: Ժողովուրդը միանգամից շրջվեց դեպի հրապարակը: Մեզ ևս այն կողմը քշեցին:

✓ Պուզաչովը նստել եր բազկաթուղի վրա, բերդապետի տան մուտքի պատշգամբիկում: Նա հագել եր կաղակի գեղեցիկ կաֆտան, շուրջանակի յերիդած: Վոսիկ փնջիկներով սամուրի բարձր գլխարկը թեքված եր նրա փայլատակող աչքերի վրա: Նրա դեմքն ինձ ծանոթ թվաց: Ավագանի կաղակները շրջապատել էյին նրան: Հայր Գերասիմը գունատ և դողդոջուն, լաչը ձեռքին կանգնել եր տան դռանը և կարծես լուռ պաղատում եր նրան՝ առաջիկա դռների համար: Հրապարակի վրա շտապով կախաղան էյին սարքում: Յերը մենք մոտեցանք, բաշկիւրները ցրեցին ամրոխը և մեզ ներկայացրին Պուզաչովին: Զանգակների ձայնը հանդարտեց. տիբեց խորին լուռությու: «Բերդապետը վճրն ե», — հարցրեց ինքնակոչը: Մեր ուրյադնիկը դուրս յեկավ ամրոխից և ցույց տվեց իվան Կուզմիչին: Պուզաչովն ասեղ նայեց ծեղունուն և ասաց նրան. «Դու ի՞նչպես համարձակվեցիր ընդդիմանալ ինձ, քո թագավորին»: Բերդապետը, տանջվելով լերքի ցավից, հավաքեց իր վերջին ուժերը և պա-

տասխանեց հաստատուն ձայնով. «Դու իմ թագավորը չես, դու մի գոյ ես և ինքնակոչ, լսում ես»: Պուգաչովը մռայլ հոնքերը կիտեց և սպիտակ թաշկինակով նշան տրեց: Մի քանի կադակներ բռնեցին ծերունի կապիտանին և քարշ տվին դեպի կախաղանը: Նրա միջնափայտի վրա արդեն նստել եր խեղանդամ բաշկիրը, վորին մենք նախորդական հարցաքննել էինք: Չեռքում նա բռնել եր պաքանը և մի քանի բոպեյից հետո խեղճ իվան Կուզմիշին յես տեսա ոգում վեք քաշած: Այն ժամանակ Պուգաչովի մոտ բերին իվան Իգնատիչին: «Յերդվիր,—ասաց նրան Պուգաչովը,—թագավոր Պյոտր Ֆեոդորովիչին»: «Դու մեր թագավորը չես,—պատասխանեց իվան Իգնատիչը, կրկնելով իր կապիտանի խոսքերը:—Դու, քեռիս, գոյ ես և ինքնակոչի մեկը»: Պուգաչովը նորից նշան արեց թաշկինակով և արիասիրտ պորուշիկը կախվեց իր ծերունի պետի կողքին:

Հերթն իմն եր: Յես համարձակ նայում եյի Պուգաչովին, պատրաստվելով կրկնել իմ վեհանձն ընկերների պատասխանը: Այդ բոպեյին աննկարագրելի զարմանքով խոփարար ավագների մեջ յես տեսա Շվաբրինին, մազերը բոլորակ խուզած, հագին կադակի կափտան: Նա մոտեցավ Պուգաչովին և ականջին մի քանի բառ ասաց: «Կախել դրան»,—ասաց Պուգաչովը արդեն առանց ինձ նայելու: Թոկի ողակը ձգեցին վիզս: Յես սկսեցի ինքս ինձ աղոթք մըմնջալ, անկեղծ զղջում հայտնելով առաստված՝ իմ բոլոր մեղքերի համար, պաղատելով նրան—փրկել իմ սրտի բոլոր մերձավորներին: Ինձ քարշ տվին դեպի կախաղանը: «Մի վախենա, մի վախենա»,—կրկնում եյին ինձ կործանողները, յերևի իսկապես կամենալով խրախուսել ինձ: Հանկարծ յես մի աղաղակ լսեցի. «Կացեք, անիծյալներ, սպասեցե՛ք...» Դահիճները կանգ առան: Տեսնեմ՝ Սավելիչն ընկել և Պուգաչովի վոտները: «Հարազատ հայր,—ասում եր խեղճ դաստիարակս,—խնչ շահ ունես աղալիս յերեխայի մահից: Բա՛ց թող նրան. նրա համար քեզ գլխադին կտան, իսկ ուրիշներին որինակ տալու և վախեցնելու նպատակով հրամայիր թեկուզ ինձ՝ ծերունուս կախն»: Պուգաչովը նշան արեց և ինձ իսկույն և եթ արձակեցին պարանից ու բաց թողին: «Մեր տերը քեզ ներում ե»,—ասացին ինձ: Չեմ կարող ասել, թե այդ բոպեյին յես ուրախացա իմ փրկության համար, սակայն չեմ ել ասի, վոր այդ մասին յես ավսոսացի: Իմ զգացումներն անչափ խառն

եյին: Ինձ նորից տալան ինքնակոչի մոտ և նրա առաջ ծուռնկ
չողացրին: Պուգաչովն ինձ յերկարացրեց իր ջղուտ ձեռքը:
«Համբուրի՛ ձեռքը, համբուրի՛ ձեռքը»,—ասում եյին ականջիս
տակ: Բայց յես ամենազաժան մահը կգերադասեյի նմանանալդ
ստորացման: «Տեր իմ Պյոտր Անդրեյիչ, — շշնջում եր Սավելիչն
իմ յետև կանգնած և հրելով ինձ:—Մի համառի, Ի՞նչ մի գովար
բան ե վոր. թքի՛ր ու համբուրի չարագործ... (Թո՛ւ), համբուրի
նրա ձեռքը»: Յես չեյի շարժում: Պուգաչովը ձեռքը թողեց,
քմծիծաղով ասելով. «Յերեկ թե նորին բարեծննդությունը շմեկ
ե ուրախությունից: Բարձրացրե՛ք սրան»: Ինձ բարձրացրին և
ազատ թողին: Յես սկսեցի դիտել սոսկալի կատակերգության
շարունակությունը:

Բնակիչներն սկսեցին յերգում տալ: Մեկը մյուսի յետևից
նրանք մոտենում եյին, համբուրում խաչելությունը և գլուխ
տալիս ինքնակոչին: Բերդապահ զինվորները կանգնած եյին
հենց այդտեղ: Վաշտի դերձակը, զինված իր բուժ մկրատով,
կտրում եր նրանց ծամերը: Նրանք մազերը թափ տալով մո-
տենում եյին առնելու աջը Պուգաչովի, վորը նրանց ներուճն եր
շնորհում և ընդունում իր հրոսակի մեջ. Այս բոլորը շարունակ-
վեց մոտ չեքեք ժամ: Վերջապես Պուգաչովը վեր կացավ բազ-
կաթուրից և իր ավագանիների հետ վայր իջավ տան մուտքի
պատշգամբիկից: Նրան մոտեցրին մի սպիտակ նժույգ, ճոխ
սարքով վարդարված: Յերկու կազակ մտան նրա թեկը և
նստեցրին թամբի վրա: Նա հայտնեց հայր Գերասիմին, վոր
նրա մոտ և ճաշելու: Այդ բոպեյին կանացի մի ձայն լսվեց: Մի
քանի ավագանիներ դեպի մուտքի պատշգամբիկը դուրս քարշ
տվին գզգզված և բոլորովին մերկ Վասիլիսա Յեզորովնային:
Նրանցից մեկն արդեն զուգվել եր նրա քաթիպալով: Մյուս-
ները դուրս եյին կրում բմբուլե ներքնակները, սնդուկները,
թեյի ամանեղենը, սպիտակեղենը և ամեն տեսակ տնային իրեր:
«Վո՛հ, աստված իմ, — բղավում եր խեղճ պառավը:—Թողե՛ք,
հոգիս ապաշխարեմ: Ձեր վրաքին մեռնեմ, ինձ Իվան Կուզմիչի
մոտ տարեք»: Հանկարծ նա նայեց կախաղանին և ճանաչեց իր
ամուսնուն: «Չարագործներ, — կանչեց նա մոլեգին:—Այդ Խո՛ւ
եք արեկ նրան: Իմ աչքի՛ լույս Իվան Կուզմիչ, դու կարիճ գին-
վորի գլուխ, վո՛չ պրուսական սվինները ձեռք տվին քեզ, վո՛չ
թուրքական գնդակները. ազնիվ կռվում չեմ, վոր դու գոհեցիր

կյանքդ, ալ լընկար փախստական տաժանակրի ձեռքից»։—«Կըտ-
րեցե՛ք եդ պառաւ ջաղուկի ձայնը»,—ասաց Պուգաչովը։ Մի
լերիտասարդ կաղակ սրով խփեց նրա գլխին և նա ընկաւ
պատշգամբիկի աստիճանների վրա։ Պուգաչովը մեկնեց, ժողո-
ւուրդը հետեւեց նրան։

Ա Ն Կ Ո Չ Հ Յ Ո Ւ Ր Ը

Անկող հյուրը թաթարից ել վատթար եւ¹

Առած

Հրապարակը դատարկվեց: Յես դեռ կանգնած եյի մի տեղում և չեյի կարողանում կարգի բերել մտքերս՝ շփոթված այդքան սարսափելի տպավորություններով:

Ամենից շատ ինձ տանջում եր Մարիա Իվանովնայի դրուժյան անորոշութիւնը: Ո՛ւր ե նա, լի՛նչ վիճակի չե, արդէոք կարողացա՞ւ թաղնվել, հուսալի՞ յե նրա թագստոցը... Տաղնապարի մտքերով յես մտա բերդապետի տունը... Ամեն տեղ դատարկութիւնն եր—աթոռները, սեղանները, սնդուկները ջարդ ու փշուր եյին արված, ամանեղները կոտրատված եր, ամեն ինչ կողոպտված: Յես ներս վազեցի փոքրիկ սանդուխքով, վոր դեպի վերնատունն եր տանում և իմ կշանքում առաջին անգամ մտա Մարիա Իվանովնայի սենյակը: Յես տեսա նրա անկողինը, վոր տակն ու վրա ելին արեւ ավազակները, պահարանը ջարդված եր և կողոպտված. կանթեղը դեռես լույս եր տալիս դատարկ տապանակի առջև: Չեւ կոտրված փոքրիկ հայելին, վոր կախված եր միջնապատից: Ո՛ւր եր այդ համեստ, կուսակա՛ն խուցի տիրուհին, Սոսկալի մի միաք՝ անցա՞ւ իմ գլխով, յես նրան պատկերացրի ավազակների ձեռքին... Իմ սիրտը ճմլվեց... Յես դառն լաց յեղա և բարձր ձայնով արտասանեցի իմ սիրելու անունը...

¹ Հավանաբար թաթարական գերելշխանության ժամանակից մնացած առած, վոր հետագայում արտացոլել և ցարիզմի վարած ազդահալած քաղաքականութիւնը, մասնավորապես թաթար ժողովրդի նկատմամբ:

Այդ բոլորներն մի թեթև տղամուկ լավեց և պահարանի հետևից դուրս յեկավ Պալաշան՝ գունատ և դողդոջուն:

«Ա՛խ, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա ձեռքերն իրար զարկելով: — Այս ի՞նչ որ ե, ի՞նչ սարսափներ...»

— Իսկ Մարիա Իվանովնան, — հարցրի չես անհամբեր: — Ի՞նչ յեղավ Մարիա Իվանովնան:

«Որիորդը կենդանի չե, — պատասխանեց Պալաշան: — Նա թաղնված ե Ակուլինա Պամֆիլովնայի տանը»:

— Յերեցկին՝ մոտ, — բղավեցի յես սարսափով: — աստված իմ, է՞ք վոր Պուգաչովն այնտեղ ե...

Յես դուրս նետվեցի սենյակից, մի ակնթարթում ընկա փողոց և գլխապատռ վազեցի դեպի քահանայի տունը, ճանապարհին վոչինչ չտեսնելով և վոչինչ չզգալով: Այնտեղից աղաղակներ ելին լավում, հոհոոց ու յերգեր: Պուգաչովը քեֆ եր առնում իր ընկերներին հետ: Պալաշան իմ հետևից այնտեղ վազեց: Յես նրան ուղաբեցի, վոր կամացուկ կանչի Ակուլինա Պամֆիլովնային: Մի բոլորից յերեցկինը դուրս յեկավ սրահը, դատարկ շտոֆը ձեռքին:

— Ի սեր աստծո, ռւր ե Մարիա Իվանովնան, — հարցրի յես աննկարագրելի հուզմունքով:

«Իմ աղափնյակը պառկած ե մահճակալիս վրա, այնտեղ՝ միջնորմի հետևը, — պատասխանեց յերեցկինը: — Ա՛խ, Պյոտր Անդրեյիչ, քիչ մնաց փորձանք պատահեր, բայց փառք աստծո, ամեն ինչ լավ անցավ: Չարագործը նոր եր նստել ճաշի, յերբ խեղճ աղջիկն ուղքի յեկավ ու հառաչեց... Են ե՛ լեղիս ճաքեց: Նա ձայնն առավ: — «Են ռ՜վ ե քո տանը հառաչում, ան, պառավ»: Յես մինչե գետին գլուխ եմ տալիս ավաղակին. քրոջս աղջիկն ե, տեր իմ. հիվանդացել ե, յերկրորդ շաբաթն ե, ինչ ահա պառկած ե: — «Իսկ քրոջդ աղջիկը ջահել ե»: — Ջահել ե, տեր իմ: — «Հապա մի ցույց տուր ինձ, պառավ, քրոջդ աղջկան»: — Միբոս մի դող ընկավ վոր, բայց թե ճարս ինչ: — Համեցիր, տեր իմ. միայն աղջիկը դեռ չի կարող վեր կենալ և զալ քո վողորմածության մոտ»: — «Վոչինչ, պառավ. յես ինքս կզնամ, կտեսնեմ»: Հապա, անիծյալը գնաց միջնորմի այն կողմը, ինչ ես կարծում, բա, վարագույրը հետ քաշեց, իր բազեյի աչքերով նայեց և՛ վորմ, յարագույրը հետ քաշեց, իր բազեյի աչքերով նայեց և՛ փոքրիկ, պատրաստվել ելինք նահատակի մահով մեռնելու: Բարեբախտաբար, նա՛ իմ աղափնյակը չճանաչեց նրան: Տեր իմ աստված,

յերեւելի ես եւ պիտի տեսնելինք: Եւ ի՞նչ անեմ: Խեղճ Իվան Կուզմիչ, ով կարող եր մտածել... Հապա Վասիլիսա Յեգորովնան, հապա Իվան Իգնատի^ոչը: Ախր նրան ինչո՞ւ համար... Այդ ի՞նչպէս չեղաւ վոր ձեզ խնայեցին: Իսկ, ի՞նչ պտուղն ե Շփարիւնը, Արեքսեյ Իվանիչը: Հապա մի տեսնես, մաղերը բոլորակ խուղել ե ե հիմա աճնտեղ՝ մեր տանը քեֆ ե անուժ նրանց հետ: Ճարակիկ ե, ի՞նչ եմ ասում: Իսկ յերբ յես ասացի իմ հիւանդ քրոջս ջախա մասին, հալատում ես, նա ենպէս մի նայեց ինձ, վոր ասես դանակով ծակեցին. բայց չմտնեց, չնորհակալ եմ դոնե դրա համար»:—Այդ բոպելին լավեցին հարբած հյուրերի աղաղակները ե հայր Գերասիմի ձայնը: Հյուրերը գինի եյին պահանջում, տանտերը կանչում եր կողակցին: Յերեցիկներ ձեռ-վոտի ընկաւ: «Գնացեք տուն, Պյոտր Անդրեյիչ, —ասաց նա.—հիմա ձեզ հարցնողն ով ե. չարադործները քեֆ են անում: Վայ ձեզ յեթե ընկնեք հարբածներ ձեռքը: Մնաք բարով, Պյոտր Անդրեյիչ: Ինչ վոր լինելու յե՛կ լլինի, գուցե աստված մեզ չկորցնի»:

Յերեցիկներ գնաց: Փոքր ինչ հանդստացած, չես ուղղվեցի դեպի իմ բնակարանը: Հրապարակի մոտով անցնելիս, յես տեսա մի քանի բաշկիրներ, վորոնք խռնված եյին կախաղանի մոտ ե կախվածների վոտքերից հանում եյին կոշիկները. չես դժվարությամբ գտալեցի գալբուլի բռնկումը, զգալով միջամտության անողուտ լինելը: Բերդում վխտում եյին ավաղակները, թալանելով սպաների տները: Ամեն տեղ լսվում եյին հարբած խռովարանների ձայները: Յեկա տուն: Սալեիւիչը գիմալորեց ինձ տան շեմքին: «Փնոք ասածո, —կանչեց նա ինձ տեսնելով:—Ասի՛ վայ թե քեզ նորից բռնեցին: Ե՛հ, տեր իմ Պյոտր Անդրեյիչ. հալատում ես, սրիկաները մեր ամեն ինչը թալանեցին. շորերը, սպիտակեղներ, իրերը, ամանեղներ—վոչինչ չթողին: Համա ինչ արած... Ասածուն վառք, վոր քեզ կենդանի բաց են թողել... Իսկ դու, տեր իմ, ճանաչեցի՞ր ասամանին»:

—Ձե, չճանաչեցի. իսկ նա ով ե վոր:

«Ի՞նչպէս թե, տեր իմ: Մի՞թե դու մոռացել ես են հարեցողին, վոր գլուխդ չուղեղով առաւ քո մուշտակը իջնանատան բակում: Նապաստակի մորթուց կարած մուշտակը բոլորովին նոր եր, իսկ նա, են գաղանն իր վրա քաշելիս պատառ-պատառ արեց»:

Յես ապշեցի: Իսկապես, Պուգաչովի նմանութիւնն իմ առաջնորդի հետ ապշեցուցիչ էր: Յես համաստիացա, վոր Պուգաչովը և նա միևնույն անձնավորութիւնն էլին և նոր միայն հասկացա ինձ խնայելու պատճառը: Յես չեյի կարող չղարմանալ հանդամանքները տարբերակ կապակցութեան վրա—շրջմովիկին նմանութեամբ ինձ փրկում և կախաղանի պարանից և իջեվանատներում շրջող հարբեցողը բերդեր և պաշարում ու ցնցում պետութիւններ:

«Ուտել չեմ ուզում,—հարցրեց իր սովորութիւնների մեջ անփոփոխ Մավելիչը:—Տանը վոչինչ չկա, գնամ, փնտռեմ, մի բան պատրաստեմ քեզ համար»:

Մենակ մնալով չես խորասուզվեցի խորհրդածութիւնների մեջ: Ի՞նչ պիտի անեյի յես: Մնալ չարագործի իշխանութեան տակ գտնվող բերդում կամ հետեւել նրա հրոսակին,—անվայել եր սպալի համար: Պարտականութիւնս պահանջում էր, վոր յես ներկայանայի այնտեղ, ուր իմ ծառայութիւնը գեռ կարող եր ոգտակար լինել ներկա զփալարին հանգամանքներում: Մակայն իմ սերը սաստիկ դրդում էր ինձ մնալ Մարիա Իվանովնայի մոտ և լինել նրա պաշտպանն ու հովանավորը: Թեպետ և չես նախատեսում ելի հանգամանքների արագ և աներկբա փոփոխութիւն, բայց և աչնպես չեյի կարող չդողալ, պատկերացնելով նրա գրութեան՝ վտանգավորութիւնը:

Իմ խորհրդածութիւններն ընդհատվեցին կազակներից մեկի գալով, վորը վազելով յեկավ հայտարարելու, «վոր ինքը՝ մեծ թագավորը քեզ իր մոտ և պահանջում»:—«Իսկ վո՞րտեղ և նա»,—հարցրի յես, պատրաստվելով հնազանդվել:

«Բերդապետի տանը,—պատասխանեց կազակը:—Ճաշից հետո մեր տերը բաղանիք գնաց, իսկ հիմա հանգստանում ե: Հա, ձերդ բարեծննդութիւն, ամեն ինչից յերևում և, վոր յերեկ իմարդ ե՛՛ ճաշին բարեհաճեց ուտել յերկու տապակած խոզի ճուտ, իսկ բաղանիքում աչքան տաք ըռդ ե ընդունել,¹ վոր Տաւրաս Կուրդիկինը չեր զիմացել, ամիլը ամիլ եր Ֆոմկա Բիկբայելին իսկ ինքը հաղիվ ուշքի յեկել սառը ջրով: Խոսք չկա, բոլոր շարժուկացը մեծունական ե... Իսկ բաղանիքում, ասում են ցոյց ե տվել իր թագավորական նշանները՝ կրծքի վրա. մի կողմը

¹ Ռուսական բաղանիքներում ընդունված և լողանալուց առաջ առանձին բաժանմունքում ջողի ընդունել և հատուկ ավելներով ծեծկել մարմինը:

յերկզխւանի արծիմն ե հինգ կոպեկանոցի մեծութեամբ, իսկ մյուսը՝ իր պատկերը»:

Յես հարկ չհամարեցի հերքել կաղակի կարծիքը և նրա հետ միասին ուղղվեցի դեպի բերդապետի տունը, նախապես յերևակալելով իմ տեսակցութեանը Պուգաչովի հետ, ջանալով նախագուշակել, թե այն ինչով կվերջանա: Ընթերցողը հեշտ կարող ե պատկերացնել, վոր յես ընտել սառնարյուն չեցի:

Սկսում եր մթնել, յերբ յես չեկա բերդապետի տունը: Կախաղանն իր զոհերով սեին եր տալիս: Խեղճ բերդապետուհու մարմինը դեռևս ընկած ֆնացել եր տան դռների մոտ, ուր յերկու կաղակներ պահապան եյին կանգնած: Ինձ ուղեկցող կաղակը գնաց իմ մասին զեկուցելու և իսկույն և եթ վերադառնալով, ինձ ներս տարաւ այն սենյակը, ուր նախորդակին յես աչնպես քնքուջ հրաժեշտ տվի Մարիա Իվանովնային:

Իմ աչքի առաջ բացվեց արտասովոր մի պատկեր: Սփռուցով ծածկված և վրան շտոֆներ ու բաժակներ դրած սեղանի շուրջը նստած եյին Պուգաչովը և տասի չափ կաղակ ավագներ, գդակները գլխներին և գունագեղ շապիկներ հագած, գինուց տաքացած, կարմրած քիթ ու մոռութով և փայլատակող աչքերով: Նրանց մեջ չկար վոչ Շվաբերինը, վոչ ել մեր ուրյադնիկը՝ նորակուջ դավաճանները: «Ա՛, ձերդ բարեծննդութեան,—ասաց Պուգաչովն ինձ տեսնելով,—Բարով յեկաք, տեղ ու պատիվ ձեզ, համեցեք»: Զրուցակիցներն ինձ տեղ տվին: Յես լուռ նստեցի սեղանի ծայրին: Կողքիս նստած յերիտասարդ կաղակը՝ բարեկաղմ և գեղեցիկ, ինձ համար մի բաժակ հասարակ գինի լցրեց, վորին յես ձեռք չտվի: Հետաքրքրութեամբ սկսեցի դիտել այդ հավաքուլթը: Պուգաչովը նստած եր ամենից վերև, հենված սեղանին, սև մորուքը պահած իր լայն բուռնցքի վրա: Նրա դիմադծերը՝ կանոնավոր և բավական դուրեկան, վոչ մի կատաղի արտահայտութիւն չունեցին: Նա ստեպ-ստեպ դիմում եր հիսուն տարեկան մի մարդու, մերթ գրաֆ անվանելով նրան, մերթ՝ Տիմոֆեյիչ, իսկ յերբեմն ել նրան մեծաբերով վորպես իր քեռուն: Բոլորը միմյանց հետ վարվում եյին ինչպես ընկերներ և առանձնապես վոչ մի գերապատմութիւն չեցին տալիս իրենց առաջնորդին: Սոսակցութիւնը առավոտվա հարձակման, խռովութեան հաջողութեան և առաջիկա գործողութիւնների շուրջն եր: Ամեն մեկը պարծնում եր, առաջարկում իր կարծիքները և համարձակ կերպով առարկում Պուգաչովին: Յեւ հենց այս

արտասովոր ռազմական խորհրդում վորոշիկաց գնալ Որենբուրգի վրա, հանդուգն մի շարժում, վոր քիչ մնաց պսակվեր աղետալի հաջողությամբ։ Արշավանքը հալտարարված եր վաղը։ «Դեհ, յեղբայրներ,—ասաց Պուգաչովը,—չեկեք, քնից առաջ յերգենք իմ սիրելի լերգը։ Չումակով¹, սկսիր»։—Իմ հարեալն բարակ ձայնով սկսեց բուռլակների² մեղամաղձոտ յերգը և բոլորը միասին ձայնակցեցին։

Մի սոսափեր, կանաչ, մայր կաղնու անտառ,
Մի խանգարիւր քաջիս իւր միտքն անելու,
Հարցման պիտ կանգնեմ վաղ առավոտան,
Ահեղ արքայի դատաստանի գեմ։
Տիրակալ արքան ինձ հարցեր կտա—
Ասա՛, գեղջուկի տղա, ա՛յ ջահել.
Ի՞նչպես, ո՞ւմ հետ ես գողություն արել,
Յեկել թալանի քեզ հետ շատ մարդ կար։
Կասեմ քեզ մեր հուշս, արքա ուղղափառ,
Ծշմարտությունը ահա կասեմ քեզ,
Վոր ունեցել եմ լուկ չորս ընկեր յես.
Առաջին ընկերն եր գիշերը մութ,
Յերկրորդը՝ դանակս պողպատեց շինած,
Յերրորդ ընկերն իմ՝ նժույգս եր հմուտ,
Չորրորդ ընկերս՝ աղեղն եր ձգված,
Մունետիկներս՝ նետերը շաչուն։
Խոսեց ապովեն արքան ուղղափառ՝
Պատիվ քեզ, տղա՛, գեղջուկի դավակ,
Վոր իմացել ես գողանալու հետ և պատասխան տալ,
Հենց դրա համար նվեր քեզ, տղա՛,
Դաշտումը փայտակերտ բարձր մի դգյակ,
Վոր ունի զույգ սյուն ու մի միջափայտ։

Անհնար և նկարագրել, թե ինչ ազդեցություն թողեց ինձ վրա կախաղանի մասին հյուսած հասարակ ժողովրդական յերգը, վոր յերգում ելին կախաղանի դատապարտված մարդիկ։ Նրանց

¹ Չումակով, Ֆեդոր—Յախիվի կազակներից, Պուգաչովի բանակի հրե-
աանապետը։ հետագայում դավաճանեց Պուգաչովին և նրան հանձնեց կառավա-
րության ձեռքը։ Վերջինս խոտաացված պարզեների փոխարեն Չումակովին
զրկեց կազակի կոչումից և աքսորեց Ռիգայի նահանգապետի հսկողության
տակ։

² Այսպես ելին կոչվում Վոլգա գետի¹ նրա նավակայաններում աշ-
խատող բանվորները, վորոնք ընդհանուր մի պարանից կամ փոկից լծված
ափով՝ հոսանքն ի վեր քաշում ելին բեռնատար նավերը։

ահավոր դեմքերը, ներդաշնակ ձայները, թախծոտ արտահայտութիւնը, վոր նրանք տալիս եյին առանց աչդ ել արտահայտիչ բառերին—այդ բոլորն ինձ ցնցեցին մի ինչ վոր պիտի քական¹ սարսափով:

Հլուրերն ելի մի-մի բաժակ խմեցին, սեղանից վեր կացան և հրաժեշտ տվին Պուգաչովին: Յես ուզում եյի հետեւ Նրանց, սակայն Պուգաչովն ասաց ինձ. «Նստիր, չես ուզում եմ քեզ հետ մի քիչ խոսել»:—Մենք մնացինք յերես առ յերես:

Մի քանի րոպե տեւց մեր յերկուստեք տիրող լուսթյունը: Պուգաչովն անթարթ ինձ եր նայում, խարերայության և ծաղրանքի զարմանալի արտահայտությամբ, յերբեմն կկոցելով իր ձախ աչքը: Վերջապես նա ծիծաղեց և աչնալիս մի սրտաբուխ խինդով, վոր և յես նրան նայելով սկսեցի ծիծաղել, ինքս ել չիմանալով թե ինչու:

«Ի՜նչ ե. ձերդ բարեծննդություն,—ասաց նա ինձ:—Խոստովանիր, վախեցմբ, չերբ իմ տղերքը թողը վիզդ ձգեցին: Յերեմի՜ վախից լեղիդ պատռւեց... Իսկ միջնափայտի վրա կճոճվելի՜ր, լեթե չլինեք քո ծառան: Յես խկույն և եթ ճանաչեցի ձեր քաֆթառին: Հը, արդոք ձոքովդ կանցնե՜ր, ձերդ բարեծննդություն, վոր քեզ ումեա բերող-հասցնող մարդն ինքը մեծ թագավորն եր: (Այդ խոսքերի հետ նա վեհ և խորհրդավոր տեսք ընդունեց): Դու իմ առաջ շատ մեղավոր ես,—շարունակեց նա,—բայց յես քեզ ներումն շնորհեցի քո բարերարության համար, նրա համար, վոր դու ինձ ոգնություն ցույց տվիր, յերբ յես հարկադրված եյի թաղնւել իմ թշնամիներից: Ե՛, դեռ ինչե՜ր կտեսնես: Դեռ այդպէս կպարգևատրեմ քեզ, չերբ ստանամ իմ թագավորությունը: Խոստանում ես ինձ հովով-սրտով ծառայել»:

Մրիկայի տված հարցը և նրա հանդգնութիւնն ինձ աչնապես զվարճալի թվաց, վոր յես չկարողացա քմծիծաղ չտալ:

«Ինչի՞ վրա ես ծիծաղում,—հարցրեց նա դեմքը խոժոռելով:—Չլինի՞ թե չես հաւատում, վոր յես մեծն թագավորն եմ: Ուղիղն ասա»:

Յես շփոթվեցի: Թագավոր ճանաչել շրջմոլիկին յես անկարող եյի, դա ինձ թվաց աններելի փոքրոգություն: Յերես առ յերես խարերա անվանել նրան—կնշանակել ինձ կործանման

¹ Պիտ, պիտի քական—հունարեն «պոկոս» բառի հնացած ձևն է:

յենթարկելու և այն, ինչին յես պատրաստ եյի կախաղանի տակ
բոլոր ժողովրդի ներկայութեամբ և զպրութի առաջին բռնկ-
ման միջոցին, հիմա ինձ թվում եր անողուտ պարծենկոտու-
թյուն: Յես տատանվում եյի: Պուգաչովը մռայլ սպասում եր
իմ պատասխանին. Վերջապես (դեռ հիմա յեւ ինքնագոհութեամբ
եմ հիշում այդ բոլորն) պարտքի զգացումն իմ մեջ գերազանցեց
մարդկային թուլությունը: Յես պատասխանեցի Պուգաչովին.
«Լսիր, ասեմ քեզ ամբողջ ճշմարտությունը: Դատիր ինքդ, արդ-
յոք յես կարող եմ քեզ թագավոր ճանաչել: Ի՞նչ բանիմաց
մարդ ես. դու ինքդ կահանայիր, վոր յես խորամանկություն եմ
բանացնում»:

«Հապա մի եմ յես քո կարծիքով»:

— Աստված գիտե հիմ ես, բայց ո՞վ եւ վոր լինես, դու վը-
տանդավոր խաղ ես խաղում:

Պուգաչովն արագ ինձ նայեց: «Ասել ե, թե դու չես հալա-
տում—ասաց նա,—վոր յես Պյոտր Ֆյոդորովիչ թագավորն եմ:
Դե, լսի: Իսկ միթե կտրիճի համար հաջողություն չկա: Միթե
հին ժամանակները Գրիշկա Ուրեպյեվը¹ չը թագավորեց: Ինչ
ուզում ես մտածիր իմ մասին, բայց՝ ինձնից մի հեռանա: Դու
լինչ գործն ե, թե այսպես ե, կամ՝ այնպես: Յերկուսն ել մի
հաշիվ ե: Հալատարիմ ու ճշմարտութեամբ ծառայիր ինձ ե՛ր յես
քեզ ֆելդմարշալի ել, իշխանի ել աստիճան կտամ: Խելքդ լինչ
ե կարում»:

— Վոչ,—պատասխանեցի յես հաստատ:—Յես ծագումով
աղնւմական եմ. յես յերդում եմ տվել թագուհի-կայսրուհուն. քեզ
ծառայել չեմ կարող: Թե վոր դու իսկապես լավություն ես կա-
մենում ինձ, ապա թող գնամ Ուրենբուրգ:

¹ Մոսկովյան Ռուսի (Русь) թագավոր 1605—1606 թ.: Հին պատմա-
գրութեան մեջ այսպես կոչված «Պառնակ տարիներին ժամանակաշրջանում»
(«Смута») Գրիշկա Ուրեպյեվը հանդես յեկավ վորպես Իրան Անդլի կրտսեր
վորդի Դմիտրիյ, վորը մինչև այդ իրոք մահացած եր. կամ սպանված գահա-
կալ Բորիս Գոդունովի մարդկանց ձեռքով: Խոշոր աղնւմականությունը և քա-
ղաքային բուրժուազիան «Ինքնակոչ» մականունն են տվել նրան: Պատմական
աշխատություններին մեջ նա կոչվում ե նաև Կեղծ-Դմիտրիյ և նույնացվում
փախտական վանական վոմն Գրիշկա Ուրեպյեվի հետ: Իրականում թե Կեղծ
Դմիտրիյ I-ը և թե II-ը գործիք են յեղել լեհ աղնւմականութեան ձեռքին և
տիրող կարգերից դժգոհ գյուղացիութեան ապստամբությունները փորձել են
ողտագործել հոգուտ իրենց սեակցիոն նպատակներին:

Պուգաչովը միտք արեց: «Իսկ թե վոր թողնեմ,—ասաց նա, —խոսք կտամ իմ դեմ դուրս չգալ»:

— Ի՞նչպես կարող եմ այդպիսի խոստում տալ—պատասխանեցի յես:—Ինքդ գիտես, վոր իմ կամքով չե՛ կհրամայեն քո դեմ դուրս գալ՝ կգամ, ճարս ինչ: Հիմա դու ինքդ ես մեծավոր, ինքդ ես հնազանդութուն պահանջում քո մարդկանցից: Ինչի՞ նման կլինի, յեթե յես ծառայութունից հրաժարվեմ, յերբ իմ ծառայութունը պետք դա: Կյանքս քո ձեռքումն ե. թե բաց կթողնես—շնորհակալ եմ, թե մահապատիժ կտաս—ասոված քեզ դատավոր, իսկ յես քեզ ճշմարիտն ասացի:

Իմ անկեղծութունը ապշեցրեց Պուգաչովին: «Թող այդպես լինի,—ասաց նա ուսիս խփելով:—Մահապատիժն իր տեղը, ներումն իր տեղը: Գնա՛ ուր ուզում ես, արա՛ ինչ քեֆդ տա: Վաղը չեկ ինձ մնաս—բարովի, իսկ հիմա դնա քնելու, իմ քունն ել ե տանում»:

Յես թողի Պուգաչովին և փողոց դուրս չեկա: Խաղաղ և ցուրտ գիշեր եր: Լուսինն ու աստղերը պայծառ փայլում էին, լուսավորելով հրապարակն ու կախաղանը: Բերդում ամեն տեղ հանգիստ եր և մութ: Միայն կաբակում կրակի լույս եր չերեւում և լսվում էին ուշացած զվարճացողների աղաղակները: Յես հալացքս դարձրի քահանայի տան կողմը: Պատուհանի փեղկերն ու դարպասը փակ էին: Թվում եր, թե այնտեղ ամեն ինչ պապանձվել ե:

Յես տուն չեկա և Սավելիչին տեսա իմ բացակայութունը վողբալիս: Նրան անասելի ուրախացրեց իմ աղատության լուրը: «Փառք քեզ, տեր,—ասաց նա չերեսը խաչակնքելով:—Լույսը բացվելուն պես դուրս կգանք բերդից և կգնաք ուր վոր աստված հաջողի: քեզ համար բան ման եմ պատրաստել, անուշ արա, տեր իմ, և մինչև առավոտ քնիր հանգիստ, վոնց վոր Գրիստոսի գողում»:

Յես հետևեցի նրա խորհրդին և մեծ ախորժակով ընթերլով, քնեցի մերկ հատակի վրա, հոգեպես և ֆիզիքապես սաստիկ հոգնած:

ՀՐԱԺԵՇՏ

Ծանոթանալը քաղցը եր շատ,
Գեղեցկունի, ո՛ր, ախպես,
Անջատումը՝ տխուր, վհատ,
Հոգուցս եմ դատվում կարծես:

Խեղճակով ¹

Վաղ առաջնության թմրուկն ինձ արթնացրեց: Գնացի հա-
վաքավարը: Այնտեղ արդեն շաբթի ելին կանգնում Պուգաչովի
հրոսակները կախադանի մոտ, վորից դեռևս կախված էյին յե-
րեկվա դոհերը: Կաղակները ձիավորված էյին, ղինվորները՝ հրա-
ցաններն ուսեջին: Դրոշակները փողփողում էյին: Մի քանի
թնդանոթներ, վորոնց մեջ յես ճանաչեցի և մերը, դրված էյին
ուսղձական հրետասայլերի վրա: Բնակիչները բոլորն ել ալդտեղ
էյին, սպասելով ինքնակոչին: Բերդապետի տան մուտքի պատըշ-
գամրիկի տուփ մի կաղակ բռնած պահում եր կիրդիղական գե-
ղեցիկ, սպիտակ ձիու սանձը: Յես աչքերով վորոնում էյի բեր-
դապետի կնոջ դիակը: Նա փոքր ինչ մի կողմ եր տարված և
ծածկված եր ճիւղպով: Վերջապես Պուգաչովը գուրս յեկավ տան
սրահից: Ժողովուրդը զգականները հանեց, Պուգաչովը կանգ առավ
դռանը և վողջունեց բոլորին: Ավագներից մեկը նրան տվեց մի
պարկ՝ լի պղնձի դրամներով, և նա սկսեց բռով շաղ տալ: Ժո-
ղովուրդն աղաղակներով վրա ընկավ հավաքելու և շատերի կողմ
ու և կուշար ջարդվեց: Պուգաչովին շրջապատեցին նրա համախոհ-
ներից ամենագլխավորները: Նրանց մեջ կանգնել եր և Շվաբ-
րինը: Մեր հայացքները հանդիպեցին, իմ հայացքի մեջ նա կա-
րող եր կարգաւ արհամարհանք. նա չերեսը շուռ տվեց անկեղծ

¹ Մ. Մ. Խ եր ա ս կ ո վ (1733—1807)—XVIII դարի հայտնի պոետ:

զայրուլթի և շինծու հեգնանքի արտահայտությամբ: Ինձ ամ-
բոխի մեջ տեսնելով Պուգաչովը գլխով արեց և մոտ կանչեց:
«Լսի՛ր,—ասաց նա ինձ—Հենց այս ժամին կգնաս Որենբուրգ և
իմ անունից նահանգապետին և բոլոր գեներալներին կհայտա-
բարես, վոր մի շաբաթից հետո ինձ սպասեն: Դու նրանց խոր-
հուրդ տուր մանկական սիրով ու հնազանդությամբ գիմալորել
ինձ, թե չե՛ս ամենազաժան մահապատժից չեն պրծնի: Բարի
ճանապարհ, ձերդ բարեձննդություն»։ Հետո նա ժողովրդին
դարձավ և ասաց, ցույց տալով Շվարբինին. «Ահա ձեզ, զավակ-
ներս, նոր բերդապետ: Ամեն բանում լսեցեք նրան, իսկ նա իմ
առջև պատասխանատու չե ձեզ և բերդի համար»։ Այս խոսքերը
յես սարսափով լսեցի. Շվարբինը դարձավ բերդապետ. Մարիա
Իվանովնան մնում է նրա իշխանության տակ: Աստված իմ, ի՜նչ
Վլինի նրա վիճակը: Պուգաչովը ցած իջավ պատշգամբիկից, Ձին
մոտեցրին նրան: Նա ճարպկությամբ թռավ թամբի վրա, չսպա-
սելով կազակներին, վորոնք այն ե՛ր ուզում էյին նստեցնել
նրան:

Այդ ժամանակ ամբոխի միջից տեսնեմ դուրս լեկավ իմ
Սավելիչը, մոտեցավ Պուգաչովին և նրան տվեց մի թերթ թուղթ:
Խեղճ բան չե՛ր կտրում, թե ինչումն եր բանը: «Այս ի՜նչ ե՛ս,
գոռոզ հարցրեց Պուգաչովը:

— Կարդա և հրամանքդ կիմանա,—պատասխանեց Սավե-
լիչը: Պուգաչովը թուղթը վերցրեց և յերկար նայեց նշանակա-
լից տեսքով: «Ի՞նչ դժար ես գրում,—ասաց նա վերջապես—
Եստեղ մեր պայծառ աչքերը վոչինչ չեն կարում ջոկել: Ո՛ւր ե
իմ ոբեր-քարտուղարը»¹:

Յերիտասարդի մեկը արագ մոտ վազեց Պուգաչովին. Բա՛ր-
ձը՛ր կարդա»,—ասաց ինքնակոչը, թուղթը նրան տալով: Յես
անշափ հետաքրքրվում էյի իմանալու, թե ինչի մասին կարող
ե՛ր իմ դաստիարակի խելքին փչել Պուգաչովին թուղթ գրելու:
Ոբեր-քարտուղարն սկսեց բարձրաձայն, վանկ առ վանկ կար-
դալ հետեւալը.

«Յերկու խալաթ, միտկալի և մետաքսե՛ր գոլավոր—վեց
մանեթ»:

— Սա ի՜նչ ե նշանակում,—ասաց Պուգաչովը հոնքերը կի-
տելով:

¹ Գլխավոր քարտուղար:

«Հրամայիր՝ մնացածը կարդան»,—անվրդով պատասխանեց Սավելիչը:

Որեւ-քարտուղարը շարունակեց.

«Մի մուշկիւր բարակ, կանաչ մահուդից—յոթ մանեթ:

«Մի սպիտակ մահուդի շալվար—հինգ մանեթ:

«Տասներկու հոլանդական քաթանի շալիկներ, մանժետներով—տաս մանեթ:

«Ճանապարհի փոքրիկ մի սնդուկ, թեյամաններով—չեք-կու մանեթ ու կես...»

— Այս ի՞նչ փչոց ես,—ընդհատեց Պուգաչովը:—Յես ի՞նչ գործ ունեմ սնդուկների և մանժետներով շալվարների հետ:

Սավելիչը խեղդված հաղաց և սկսեց բացատրություններ տալ: «Ես վոր գրած ես, հրամանքդ կտեսնի, վոր իմ տիրոջ գույքի ցուցակն ես, չարագործներն են թալանել...»

— Ի՞նչ չարագործներ, —ահեղ հարցրեց Պուգաչովը:

«Ներողություն, բերանիցս թռավ,—պատասխանեց Սավելիչը:—Չարագործները չարագործներ չեն, բայց քո տղերքը մեր տունը մի քիչ քրքրել են ու բան-ման են տարել: Մի զայրանա. ձին վոր ձի չե, չորս վոտքով ելի սայթաքում եւ Հրամայիր, թող կարդա պրծնի»:

— Կարդա, —ասաց Պուգաչովը: Քարտուղարը շարունակեց.

«Մի չիբ վերմակ, մյուսը տափտալից¹, բամբակուն—չորս մանեթ:

«Մի քուրք աղվեսի մորթուց, վրան կարմիր ռատին² քաշած—40 մանեթ:

«Մեկ ել նապաստակի մուշտակը, վոր իմ տերը ձեր վողորմածության բախշեց իջևանատանը—15 մանեթ»:

— Այդ ի՞նչ բան ես,—գոռաց Պուգաչովը հրացայտ աչքերը փայլեցնելով:

Սոստովանում եմ, վոր յես սաստիկ վախեցա իմ խեղճ դաստիարակի համար: Նա այն ե՛ւ ուզում եր նորից բացատրություններ տալ, սակայն Պուգաչովը նրան ընդհատեց. «Ի՞նչպես դու համարձակվեցիր եստեսակ դատարկ բաներով յերեալ իմ

¹ Տ ա ֆ տ ա — պարսկական մետաքսի գործվածք, վոր լայն գործածություն ունեւ հին Ռուսաստանում՝ արտոնյալ դասերի մեջ:

² Ռ ա տ ի ն — յերեսը խոպոտավոր բրդե գործվածք:

աչքին,—գոռաց նա թուղթը քարտուղարի ձեռքից խելով և այն Սավելիչի յերեսին շարտեկով։—Հիմա՛ր ծերուկ։ Նրանց թալա-
նել են— ինչ մի մեծ դժբախտություն և չեղել։ Լավ իմացիր,
քավթառ, վոր դու պետք և հավիտյանս ազովթք անես իմ և իմ
տղաների համար, վոր քեզ և քո բարինին այստեղ չեն կախել
ինձ չհնազանդովոյների հետ միասին... Նապաստակի մուշտակը։
Յես քեզ նապաստակի մուշտակ ցույց կտամ։ Իսկ դու դիտե՛ս,
վոր յես կհրամայեմ կենդանի-կենդանի քո կաշին քերթել
մուշտակի համար»։

— Ինչպես կհրամայես,— պատասխանեց Սավելիչը.— համա-
յես ճորտ մարդ եմ և իմ տիրոջ դույքի համար պետք և պա-
տասխան տամ։

Յերեւում եր, վոր Պուգաչովը մեծահոգության ևր յեկել։
Նա շրջեց ձիու գլուխը և հեռացավ, այլևս վոչ մի խոսք չասե-
լով, Ծվարբինը և ավագանին հետեցին նրան։ Հրոսակը բեր-
դից դուրս յեկավ շարք կանգնած։ Ժողովուրդը դնաց Պուգա-
չովին ճանապարհ դնելու։ Հրապարակի վրա յես մենակ մնացի
Սավելիչի հետ։ Իմ դաստիարակը ձեռքին բռնել ևր իր ցուցակը
և խորին ափսոսանքով դնում ևր այն։

Տեսնելով իմ բարի համաձայնությունը Պուգաչովի հետ, նա
կարծեւ եր, թե կարելի յե դա գործադրել հոգուտ մեզ, բայց
այդ խելոք դիտավորությունը նրան չհաջողվեց։ Յես քիչ եր
մնում՝ նախատելի նրան իր անուշիկ յեռանդի համար և չկարո-
ղացա ծիծաղս պահել։ «Ծիծաղիր, տեր իմ,— պատասխանեց Սա-
վելիչը.— ծիծաղիր... իսկ յերբ ստիպված կլինենք նորից-նոր
ձեռք բերել մեր ամբողջ տնտեսությունը, են ժամանակ կտես-
նենք՝ ծիծաղելի՞ կլինի, թե վոչ»։

Յես շտապեցի քահանայի տունը՝ Մարիա Իվանովնայի հետ
տեսնվելու համար։ Յերեցկիները մեզ դիմավորեց տխուր տեղեկու-
թյամբ։ Գիշերը Մարիա Իվանովնան հիվանդացել ևր սաստիկ
ջերմախտով։ Նա պառկած ևր գիտակցությունը կորցրած և դա-
ռանցանքների մեջ։ Յերեցկիներն ինձ տալով նրա սենյակը։ Յես
զգույշ մոտեցա նրա մահճակալին։ Նրա դեմքի փոփոխությունն
ինձ ապշեցրեց։ Հիվանդն ինձ չճանաչեց։ Յերկար յես կանգնած
եյի նրա առջև, չլսելով վոչ հայր Գերասիմին, վոչ եւ նրա բարի
կնոջը, վորոնք կարծես թե մխիթարում եյին ինձ։ Մոռյլ մըտ-
քերն ալեկոծում եյին ինձ։ Չարաննդ խռովարարների մեջ

մնացած խեղճ, անողնական վորբուհու վիճակը և իմ անձնական անդորությունը սարսափեցնում էյին ինձ: Շվաբրինը, ամենից շատ Շվաբրինն եր այրում իմ յերևակայությունը: Ինքնակոչից իշխանություն ստանալով և ղեկավար լինելով բերդի մեջ, ուր մնացել եր դժբախտ աղջիկը՝ նրա ատելության անմեղ առարկան,—նա ամեն ինչ կարող եր անել: Ի՞նչ պիտի անեյի յես: Ի՞նչպես ոգնություն ցույց տալ նրան: Ի՞նչպես ազատել չարագործի ձեռքից: Մնում եր մի միջոց. վճռեցի հենց նույն ժամին մեկնել Որենբուրգ, վորպեսզի շտապեցնեմ Բեռլորսկի բերդն ազատելը և ըստ հնարավորության աջակցեմ աչդբանին: Յես հրաժեշտ տվի քահանային և Ակուլինա Պամֆիլովնային, թախանձագին հանձնարարելով նրան այն աղջկան, վորին յես արդեն իմ կինն եյի համարում: Յես բռնեցի խեղճ աղջկա ձեռքը և համբուրեցի աչն, արցունքով վողողելով: «Գնա՛ք բարով,—ասում ե յերեցկինը, ինձ ճանապարհելով.—գնա՛ք բարով, Պլոտր Անդրեյիչ: Գուցե ավելի լավ ժամանակ հանդիպենք: Մի մոռանա՛ք մեզ և շուտ-շուտ նամակ գրե՛ք: Խեղճ Մարիա Իվանովնան հիմա ձեզանից բացի վոչ մխիթարող ունի, վոչ հովանավոր»:

Հրապարակ դուրս գալով յես մի բուպե կանգ առա, նայեցի կախաղանին, գլուխ խոնարհեցի նրան, բերդից դուրս յեկա և Որենբուրգի ճանապարհով քայլեցի Սավելիչի ուղեկցությամբ, վորն ինձնից հետ չեր ընկնում:

Մտքերով տարված գնում եյի, յերբ հանկարծ իմ հետևից ձիու դովյուն լսեցի: Հետ նայեցի, տեսնեմ՝ բերդից մի կաղակ ե արշավում բաշկիրական ձին հետևից քարշ տալով և հեռվից ինձ նշաններ անելով: Յես կանգ առա և շուտով ճանաչեցի մեր ուրյադնիկին: Հասնելով մեզ, նա իջավ իր ձիուց և մյուսի սանձն ինձ տալով, ասաց. «Ձերդ բարեծնդություն, մեր տերը ձեզ մի ձի յե ընծայում և իր վրայից հանած մուշտակը (թամբին կապած եր վոչխարի մորթուց կարած մի քուրք): Մեկ ել,—կապ ընկնելով ասաց ուրյադնիկը,—նա ձեզ ընծայում ե... կես մանեթ... բայց յես ճանապարհին կորցրի՛. վեհանձնաբար ներե՛ք ինձ»: Սավելիչը խեթ-խեթ նայեց նրան և մրթմրթաց. «Ճանապարհին կորցրի: Հապա են ի՞նչ ե ծոցիդ մեջ զնգզնգում, անխիղճ»:
—«Ի՞նչ ե զնգզնգում իմ ծոցում,—առարկեց ուրյադնիկը բնավ չշփոթվելով:—Աստված ունես, ծերձեկ, Եդ սանձն ե զընդզընգում, վոչ թե կես-մանեթանոցը»:
—Լավ,—ասացի յես վեճն

ընդհատելով:—Իմ կողմից շնորհակալությունն արա նրան, ով քեզ ուղարկել է. իսկ կորցրած կես-մանեթանոցը հետ դառնալիս աշխատիր գտնել և վերցրու քեզ՝ արադի վտղ: «Շատ շնորհակալ եմ, ձերդ բարեծննդությունն,—պատասխանեց նա, ձիու գլուխը շրջելով.—հավիտյան պետք ես ասածուն աղոթեմ ձեզ համար»: Այս ասելով նա քշեց ձին, մի ձեռքով ծոցը բռնած, և մի ըտպելից կորավ մեր աչքից:

Յիս հագա քուրքը և հեծա ձին, իմ գավաղին նստեցնելով Սավելիչին: «Ա՛յ, տեսնում ես, տեր իմ,—ասաց ծերունին,—իզուր չեմ, վոր յես եդ սրիկային խնդրագիր տվի. գողի լըղձ-մըտանքը բռնել ե, բան. թեև բաշկիրական ցոկցոկ յաբուն ու վոչխարի քուրքը չարժեն կեսը քն բոլորի, ինչ վոր նրանք՝ սրիկաները մեզնից գողացել են և ինչ վոր դու ինքդ բարեհաձեցիր նրան բախշել, համա ելի պետք կգա. քոսոտ շնից մի մալ պոկելն ել բան ե»:

Ք Ա Ղ Ա Ք Ի Պ Ա Շ Ա Ր ՈՒ Մ Ը

Տիրելով մարդ ու լեռներ,
Նա քաղաքին, արծվի պես, բարձրից նետում էր հայացքներ,
Բանակատեղի յետև նա հրամայեց պատվար շինել,
Ուր շանթարկները՝ պահելով, բերել նրանց քաղաքի վրա
մի մութ գիշերով:

Խեղճական

Որենքուրդին մոտենալիս մենք տեսանք կոճղավորները
մի ամբողջ՝ ածիլած գլուխներով, դահճի ունեկներով ալլան-
դակված դեմքերով: Նրանք աշխատում էին ամբողջյունների
մոտ, կայազորի ինվալիդների հսկողության տակ: Վոմանք փոք-
րիկ սայլակներով դուրս էին կրում խրամատը լցված աղբը,
մյուսները բահերով փորում էին հողը, պատնեշի վրա վորմնա-
դիրները աղյուս էին կրում և նորոգում քաղաքի պարիսպը:
Դարպասների մոտ ժամապահները մեզ կանգնեցրին և պահան-
ջեցին մեր անցագրերը: Հենց վոր սերժանտը լսեց, թե յես Բե-
լոգորսկի բերդից եմ գալիս, իսկուհն և եթ ինձ տարավ ուղիղ
գեներալի տունը:

Յես նրան տեսա աջգում: Նա զննում էր աշնան շնչից
մերկացած խնձորենիներն ու ծեր աչքեպանի հետ ըները խնամ-
քով փաթաթում տաք ծղոտով: Նրա դեմքը հանգստություն էր
արտահայտում, առողջություն և բարեհոգություն: Իմ գալուհն
նա ուրախացավ և սկսեց հարց ու փորձ անել սարսափելի անց-
քերի մասին, վորոնց չես ականատես էի յեղել: Յես ամեն
ինչ պատմեցի նրան: Ծերունին ուշադրությամբ լսում էր ինձ
և մերթ ընդ մերթ կտրատում չորացած ձյունները: Խեղճ Միրո-
նով,—ասաց նա, յերբ յես վերջացրի իմ տխուր պատմությունը:

1 Շ ա ն թ ա ը կ ն ե ը (պատկ.)—թնդանութներ:

—Ափսոս, լավ սպա չեր: Տիկին Միրոնովն ել լավ կին եր և ինչպիսի ֆարպետն եր սուենկերը թթու դնելում: Իսկ Մաշան ինչ յեղավ, կապիտանի աղջիկը»: Յես պատասխանեցի, վոր նա մնացել և բերդում, յերեցկնոջ ձեռքին: «Մ.յ, ան, ան, — նկատեց գեներալը:— Դա վատ ե, շատ վատ: Ավաղակների դիտցիպլինալի վրա յերեք չի կարելի վստահանալ: Ի՞նչ կլինի խեղճ աղջկա վիճակը»: Յես պատասխանեցի, վոր Բելոգորսկի բերդը հեռու չե և վոր հավանորեն նորին գերագանցությունը չի հապաղի զորք ուղարկել նրա գծախտ բնակիչներին ազատելու համար: Գեներալը գլուխը ձոճեց անվստահությամբ: «Կտեսնենք, կտեսնենք, — ասաց նա:— Այդ մասին մենք դեռ ժամանակ կունենանք խոսելու: Խնդրեմ՝ ինձ մոտ համեցեք մի բաժակ թեյ խմելու: աչսոր իմ տանը ռազմական խորհուրդ կլինի: Դու կարող ես մեզ ճիշտ տեղեկություններ տալ այդ անպիտան Պուգաչովի և նրա զորքի մասին: Հիմա, առաջժմ դու գնա հանդստացի»:

Յես գնացի ինձ հատկացված բնակարանը, ուր Սավելիչն արդեն տանտերություն եր անում, և անհամբեր սկսեց սպասել նշանակված ժամանակին: Ընթերցողը հեշտ կպատկերացնի, վոր յես փութացի ներկայանալ այդ խորհրդակցությանը, վորն այնպիսի ազդեցություն պիտի ունենար իմ ճակատագրի վրա: Նշանակված ժամին յես արդեն գեներալի մոտ եյի:

Նրա տանը յես տեսա քաղաքացին չինովնիկներեց մեկին, հիշում եմ՝ մաքսատան գլխավորին — մի հաստ ու կարմրերես ծերուկի, գլաղետից¹ կարած կաֆտանը² հագին: Նա սկսեց հարց ու փորձ անել իման Կուզմիչի մասին, վորին սանահայր եր անվանում, և հաճախակի իմ խոսքը կտրում եր լրացուցիչ հարցերով և խրատական նկատողություններով, վորոնք թեպետ և չեյին վկայում, վոր նա ռազմական արվեստին տեղյակ մարդ ե, ապա համենայն դեպս յերևան եյին հանում նրա ուշիմությունն ու բնական խելքը: Մինչ այս, մինչ այն՝ հավաքվեցին և մյուս հրավիրվածները: Յերբ ամենքը նստեցին և բոլորին մի-մի բաժակ թեյ տվին, գեներալը միանգամայն պարզ և մանրամասն բացատրեց բանի ելությունը. «Հիմա, պարոնայք — շարունակեց նա, — պետք և վճռել, թե մենք ինչպես պետք և

¹ Գլ ազեկ — գործվածք, վորի հենքը մետաքս ե, իսկ շարը՝ վոսկու կամ արծաթի թելեր — մեծ մասամբ կեղծ:

² Կաֆտան — տղամարդու վերնաշոր լայն փեշերով:

գործենք խոսովարարներին դեմ՝ հարձակողական թե՛ պաշտպանողական։ Սույն յեղանակներից յուրաքանչյուրն ունի իր ոգոււտն ու ֆնասը։ Հարձակողական գործողութիւնն ավելի հռչակի յե թշնամուն շուտափուլթ վոչնչացնելու համար. պաշտպանողական գործողութիւնն ավելի հաստատ և և անվտանգ... Յեւ պայպես, սկսենք ձայներ հավաքել որինական կարգով, այսինքն՝ սկսած աստիճանով կրտսերներէից։ Պ. պրապորշչիկ¹, — շարունակեց նա ինձ դառնալով։ — Հաճեցեք մեզ պարզել ձեր կարծիքը»։

Յես կանգնեցի և համառոտակի նկարագրելով նախ Պուգաչովին և նրա հրոսակը, հաստատապես ասացի, վոր ինքնակոչը հնար չունի կանոնավոր գորքի դիմադրելու։

Իմ կարծիքը չինովնիկների կողմից ընդունվեց ակնհայտ անբարեհաճութամբ։ Դրանում նրանք տեսնում եյին խուճապայնութիւն և յերիտասարդի հանդգնութիւն։ Լսվեցին տըրտունջի ձայներ և լսեա վորոշակի լսեցի ծծկեր բառը, կիսաձայն արտասանված մեկի կողմից։ Գեներալը ինձ դարձաւ և ժպտով ասաց. «Պ. պրապորշչիկ. ուղմական խորհրդակցութիւնների ժամանակ առաջին ձայները սովորաբար տրվում են հոգուտ հարձակողական շարժումների. որինական կարգն այդ և։ Հիմա ըսկըսենք շարունակել ձայներ հավաքելը։ Պ. կոլեժսկի խորհրդական², ասացեք ձեր կարծիքը»։

Դիպղետի կաֆտան հագած ծերունին շտապով խմեց յերրորդ բաժակ թեւը, վորի մեջ բավականաչափ ում եր խառնած, և պատասխանեց գեներալին. «Յես կարծում եմ, ձերդ գերազանցութիւն, վոր չպետք և գործենք վնչ հարձակողական, վոչ եւ պաշտպանողական»։

«Այդ ի՞նչպես թե, պարոն կոլեժսկի խորհրդական, — զարմացած առարկեց գեներալը։ — Տակտիկան³ ուրիշ լեզանակներ չունի. պաշտպանողական կամ հարձակողական...»

¹ Պրապորշչիկ — ցարական բանակի կրտսեր սպայական աստիճան։

² Կոլեժսկի խորհրդական — քաղաքացիական աստիճաններից մեկը, վոր ցարական Ռուսաստանում կրում եյին պետական բոլոր ծառայողները՝ չինովնիկները (աստիճանավորները)։

³ Տակտիկա (հուն.) — գիտութիւն, վորը ուսումնասիրում և մարտավարութեան հիմունքները, գորաշարժերի կազմակերպումը և զորամասերը դադարեցնելու յեղանակները։

— Ձերդ գերազանցություն, շարժվեցեք կաշառողական:

«Եհնե, ձեր կարծիքը հուշժ վողջամիտ եւ Տակտիկան թույլ եւ տալիս կաշառողական շարժում անել և մենք կողմնակից ձեր խորհրդից: Կարելի կլինի անպիտանի գլխի համար խոստանալ... չոթանասուն կամ մինչև իսկ հարյուր ուսուրի... դադարեց գումարից...»

— Յեվ այն ժամանակ,— ընդհատեց մաքսատան վերատեսուչը,— թող յես կիրգիդական վոչխար լինեմ և վոչ թե կոլեժակի խորհրդական, չեթե այդ գողերը մեզ չհանձնեն իրենց ատամանին¹ վոսք ու ձեռքը շղթայած:

«Այդ մասին մենք դեռ կմտածենք ու կխոսենք,— պատասխանեց գեներալը:— Սակայն համենայն դեպս պետք ե ձեռնարկել նաև ռազմական միջոցներ: Պարոնայք, տվեք ձեր ձայներն ըստ որինական կարգի»:

Բոլոր կարծիքները հակառակ եյին իմին: Զինովիկներն ամենքն ել խոսում եյին զորքի անհուսալիության, հաջողության անվստահելիության, զգուշության և այլ նման բաների մասին: Բոլորն ել այն կարծիքին եյին, վոր ավելի խոհեմ կլինի մնալ թնդանոթների պաշտպանության տակ քարե հաստատունը պարիսպի ներսում, քան թե բաց դաշտում փորձել դենքի բախտը: Վերջապես գեներալը բոլորի կարծիքները լսելուց հետո իր ծխամորճից թափ տվեց ձոխիլը և հետևյալ ճառն արտասանեց.

«Տյարք իմ. յես պետք ե ձեզ հայտարարեմ, վոր յես իմ կողմից միանգամայն համամիտ եմ պարոն պրապորշչիկի կարծիքին, քանի վոր սուչն կարծիքը հիմնված ե առողջ տակտիկայի բոլոր կանոնների վրա, վոր համարյա միշտ գերադասում ե հարձակողական շարժումները պաշտպանողականից»:

Այս խոսքի վրա նա դադար առավ և սկսեց լցնել ծխամորճը: Իմ ինքնասիրությունը ցնծում եր: Յես հպարտությամբ նայեցի չինովիկներին, վորոնք միմյանց հետ փափսում եյին անբավական ու անհանգիստ տեսքով:

«Սակայն, տյարք իմ,— շարունակեց նա խոք հոգոցի հետ ծխի մի թանձր քուլա թողնելով,— յես չեմ համարձակվում այդքան մեծ պատասխանատվություն վերցնել, յերբ հարցը վերա-

¹ Ա տ ա մ ան—այս տիտղոսն եյին կրում կազակների զորապետները. փոխաբերաբար՝ առաջնորդ, հրոսակապետ:

բերում ե նորին արքայական մեծության, իմ ամենավողորմած թագուհու՝ ինձ հավատացած զավառների ապահովությանը: Յեւ այսպես, յես համաձայնվում եմ ձայների մեծամասնության հետ, վորը վճռեց, թե ավելի խոհեմ և անվտանգ կլինի քաղաքի ներսում սպասել պաշարման, իսկ թշնամու հարձակումները հրիտանու ուշժով և (յեթե հնարավոր լինի) արտելքներով հետ մղելը:

Չինովիկներն իրենց հերթին ծաղրանքով նայեցին ինձ: Խորհրդակցությունը վերջացավ: Յես չեյի կարող չափսոսալ թուլությունը հարգելի զորականի, վորը հակառակ սեփական համոզման, վճռեց հետևել անտեղյակ ու անփորձ մարդկանց կարծիքներին:

Այս նշանավոր խորհրդակցությունից մի քանի ուր հետո մենք իմացանք, վոր Պուգաչովը հավատարիմ իր խոստման, մոտենում ե Ուսենբուրգին: Խռովարարների զորքը յես տեսա քաղաքի պարսպի գլխից: Ինձ թվաց, վոր նրանց թիվը տասնապատիկ ավելացել և վերջին հարձակումից հետո, վորին յես ներկա եյի: Նրանք ունեյին նաև հրետանի, վոր Պուգաչովը գրավել եր իր՝ արդեն իսկ նվաճած փոքրիկ բերդերում: Հիշելով խորհրդակցության վորոշումը, յես նախատեսում եյի յերկարատե արգելափակում Ուսենբուրգի պարսպների մեջ և Երանեղումից քիչ մնաց, վոր լաց լինեցի:

Յես չեմ նկարագրի Ուսենբուրգի պաշարումը, վոր պատմությանն ե պատկանում և վ. չ. թե ընտանեկան հուշագրություններին: Կարճ կասեմ, վոր սույն պաշարումը տեղական իշխանության անդգուշության պատճառով կործանարար յեղով բնակիչների համար, վորոնք սով և ամեն տեսակ աղետներ կրեցին: Հեշտ ե պատկերացնել, վոր կյանքը Ուսենբուրգում ամենաանտանելին եր: Ամենքը վհատությամբ եյին սպասում իրենց բախտի վորոշմանը, ամենքն ախ ու վախ ելին քաշում թանգուլի վորոշմանը, ամենքն սոսկալի յեր: Բնակիչները սովորեցին թնդանոթի ոռմբերին, վոր ընկնում եյին նրանց տան բակերը: Մինչև իսկ Պուգաչովի հրոսումները այլևս չեյին զրավում ընդհանուր հետաքրքրություն, Յես մեռնում ելի ձանձրութից: Ժամանակն անցնում եր: Բելոգորսկի բերդից նամակներ չեյի ստանում: Բոլոր ճանապարհները կտրված եյին: Մարիա իվանովնայից հեռու լինելն անտանելի չեր զառնում ինձ համար: Նրա վիճակի անհայտությունն ինձ տանջում եր: Իմ միակ բա-

վականությունը ձի նստելն էր: Պուգաչովի վողորմածությամբ յես մի լավ ձի ունեյի, վորի հետ բաժանում ելի իմ աղքատիկ սնունդը և վորը նստած, ամեն որ դուրս ելի գալիս քաղաքից՝ Պուգաչովի ձիավորների հետ հրացանաձգության բռնվելու համար: Այս հրացանաձգությունների մեջ գերակշռությունը սովորաբար չարագործների կողմն էր, վորոնք կուշտ էյին, քեֆները տեղը և լավ ձիեր նստած: Խաղաքի վտիտ ալրուձին չեր կարողանում հաղթել նրանց: Յերբեմն դաշտ եր դուրս գալիս և մեր սոված հետևակագործը, սակայն ձյան խորությունը նրան խանգարում եր հաջողակ գործել ցաք ու ցրիվ ձիավորների դեմ: Հրետանին ապարդյուն դրդում եր պատենշի վրայից, իսկ դաշտում ձիերի ուժասպառության պատճառով խրվում եր ձյան մեջ ու չեր շարժվում: Այս պատկերն ունեյին մեր ռազմական գործողությունները: Ահա թե Որենբուրգի չինովնիկներն ինչն էյին անվանում զգուշություն և վողմամտություն:

Մի անգամ, յերբ ինչպես յեղավ մեզ հաջողից ցրել ու քշել խռովարարների բավական մի ստվար ամբոխ, յես ձիս քշեցի մի կազակի վրա, վոր հետ եր մնացել իր ընկերներից: Յես արդեն պատրաստ էյի իմ թուրքական թրով հարվածել նրան, յերբ նա հանկարծ գլխարկը հանեց ու բզավեց. «Բարև՝ ձեզ, Պյոտր Անդրեյիչ: Աստծով ի՞նչ հալի յեք»:

Յես նայեցի նրան և ճանաչեցի մեր ուրյադնիկին: Անասելի ուրախացա նրան հանդիպելուս համար: «Բարև, Մակսիմիչ,—ասացի նրան:—Վաղ՞մեջ ե վոր դուրս ես յեկել Բելոգորսկից»:

«Վաղուց չե, տեր իմ Պյոտր Անդրեյիչ. հենց յերեկ եմ վերադարձել այնտեղից: Նամակ ունեմ ձեզ տալու»:

— Ո՞ւր ե,—կանչեցի չես, ամբողջովին կրակ կտրելով:

«Մոտս ե,—պատասխանեց Մակսիմիչը ձեռքը ծոցը դնելով:—Յես խոստացա Պալաշային մի կերպ հնար գտնել նամակը ձեզ հանձնելու»: Այս ասելով նա ինձ հանձնեց ծալծած թղթի մի կտոր ու իսկույն և եթ ձին քշեց հեռացավ: Յես թուղթը բաց արի և արտի թրթռումով կարդացի հետևյալ տողերը.

«Աստծուն հաճելի յեր ինձ հանկարծ գրկել հորից ու մոբից. աշխարհիս յերեսին վոչ հարազատներ ունեմ, վոչ ել հովանավորներ: Դիմում եմ ձեզ, գիտենալով, վոր դուք միշտ ել իմ բարին եք կամեցել և վոր դուք պատրաստ եք ամեն մե-

կին ողնելու: Լեղոթում եմ աստծուն, վոր այս նամակը մի կերպ հասնի ձեր ձեռքը: Մակսիմիչին ինձ խոստացավ այն հասցնել ձեզ: Պալաշան Մակսիմիչից լսել եր նուշնալես, վոր նա հաճախ հեռվից ձեզ տեսնում ե արտելքների ժամանակ և վոր դուք բոլորովին չեք պահպանում ձեզ և չեք մտածում նրանց մասին, վորոնք արտասուքն աչքերին ձեզ համար աղոթք են անում աստծուն: Յերկար ժամանակ յես հիվանդ եյի, իսկ յերբ առողջացա, Ալեքսեյ Իվանովիչը, վորը մեզանում իշխանավոր և դարձել հանգուցյալ հայրիկի փոխարեն, հայր Գերասիմին հազդերեց ինձ իրեն հանձնել, սպառնալով Պուգաչովի անունից: Ապրում եմ մեր տանը, հսկողության տակ: Լէւքսեյ Իվանովիչն ինձ հարկադրում ե իր հետ ամուսնանալ: Նա ասում ե, վոր փրկել ե իմ կյանքը, վորովհետեւ ծածկել ե Ակուլինա Պամֆիլովնայի խաբեբայութունը, վորը չարագործներին ասել ե, թե իբր յես նրա քրոջաղջիկն եմ: Իսկ ինձ համար ավելի հեշտ ե մեռնել, քան թե կին լինել այնպիսի մի մարդու, ինչպիսին Ալեքսեյ Իվանովիչն ե: Նա ինձ հետ շատ դաժան ե վարվում և սպառնում ե, վոր չեթե խեղճս գլուխս չհավաքեմ, և չհամաձայնվեմ, ապա ինձ կտանի բանակատեղ՝ չարագործի մոտ և վորպես թե ինձ հետ ել նուշը կլինի, ինչ յեղավ Լեզավետա Խարլովայի¹ հետ: Կես խնդրեցի Ալեքսեյ Իվանովիչին, վոր ինձ ժամանակ տա մտածելու: Նա համաձայնվեց սպասել նորից յերեք որ, իսկ յեթե յերեք որից հետո յես նրան մարդու չգնամ, այն ժամանակ այլևս վոչ մի փրկություն չի լինի ինձ: Սիրելի Պյոտր Անդրեյիչ. դուք եք իմ միակ հովանավորը, պաշտպանեցեք խեղճիս: Խնդրեցեք գեներալին և բոլոր հրամանատարներին՝ շտապել սիկուրս ուղարկել մեզ, ինքներդ ել յեկեք, յեթե կարող եք: Մնամ խոնարհաբար ձեր խեղճ վորբուհի

Մարիա Միլոնովա»:

Այս նամակը կարդալով քիչ ֆաց, վոր խելքս թռցնեյի: Յես դեպի քաղաք սլացա, անողորմաբար խթանելով իմ խեղճ

¹ Տոտիլյեսկայա² բերդի պարետի աղջիկը, վորը Նիժնե-Ողերնայա կոչված ամբուլթյան պետի կինն եր: Այս բերդերը զբաղվուց հետո Պուգաչովը մահալդ ատժի յեր յենթաբեկել Խարլովայի հորը, մորը և ամուսնուն, իսկ նրան, վորպես զեղատեսիլ կնոջ, դարձրել եր իր հարձը: Մի վորոշ ժամանակ անց այս կինը ևս ողանվեց:

ձիուհն: Ճանապարհին ել ինչ ասես, վոր չեյի ծրագրում դժբախտ աղջկան փրկելու համար և վոչ մի հնար չկարողացա մտածել: Քաղաք հասնելով, չես ուզիդ գենեբալի մոտ գնացի և շտապով ներս վազեցի:

Գենեբալը հետ ու առաջ եր գնում իր սենյակում, ծխելով կոճղափայտից պատրաստած իր ծխամորճը: Ինձ տեսնելով նա կանգ առավ: Հավանորեն իմ տեսքը նրան ապշեցրեց. նա հագատարուծյամբ հարց ու փորձ արեց իմ շտապ դալու պատճառի մասին: «Ձերդ գերադանցություն,—ասացի չես նրան,—գիմում եմ ձեզ ինչպես հարադատ հորս. ի սեր աստծու, մի մերժեք իմ խնդիրը. հարցը իմ ամբողջ կյանքի յերջանկությանն և վերաբերում»:

«Ի՞նչ և պատահել, սիրելիս,—հարցրեց ապշած ծերունին:—Ի՞նչ կարող եմ անել քեզ համար: Ասան»:

— Ձերդ գերադանցություն, հրամայեցեք, վոր ինձ մի վաշտ զինվոր և մի հիսնյակ կազակներ տան և թույլ տվեք Բելոգորսկի բերդը մաքրեմ:

Գենեբալը աչքերը սևեռեց ինձ վրա, չերևի կարծելով, վոր յես գժվել եմ (վորում նա համարյա թե չսխալվեց):

«Այդ ի՞նչպես: Մաքրել Բելոգորսկի բերդը»,—ասաց նա վերջապես:

— Հաջողության համար չերաշխավորում եմ,—յեռանդով պատասխանեցի յես:—Միայն թե՛ ինձ թողեք:

«Վհչ, յերիտասարդ,—ասաց նա գլուխը ճոճելով:—Այդպիսի մեծ տալամոթյան վրա թշնամին ձեզ հեշտությամբ կկտրի գլխավոր ռազմականի կոմունիկացիայից¹ և կատարյալ հաղթություն կտանի ձեր դեմ: Կտրված կոմունիկացիան...»

Յես վախեցա, տեսնելով վոր նա տարվում և ռազմական դատողություններով և շտապեցի ընդհատել նրան. «Կապիտան Միրոնովի աղջիկը,—ասացի յես նրան,—ինձ նամակ և գրել. նա ողնություն և խնդրել. Շվաբերինը նրան հարկադրում և իր հետ ամուսնանալը:

«Մի՞թե: Ո՛ր, այդ Շվաբերինը ամենամեծ Schelm-ն² և յեթե ձեռքս ընկնի, յես կհրամայեմ 24 ժամվա ընթացքում

¹ Կոմունիկացիա (լատ.)—կոմունիկացիոն ուղիները հաղորդակցության այն ճանապարհներն են, վորոնք կապում են բանակի զբաղած վայրը իր մատակարարման հենակետի հետ:

² Schelm—շելմ (գերմ.)—խաբդախ, ստահակ մարդ:

դատել և մենք նրան կգնդահանարենք բերդի պարապետի¹ վրա։
Իսկ առայժմ պիտո չե համբերություն ունենալ...

— Համբերություն ունենալ, — գոռացի յես ինձ կորցրած։
— Իսկ մինչ այդ կամուսնանա՞մ Մարիա Իվանովնայի հետ...

«Ո՛ր, — առարկեց գեներալը։— Դա գեռ դժբախտությունն է, նրա համար ավելի լավ կլինի առայժմ լինել Շվարբրինի կինը. նա հիմա կարող ե հովանավորել այդ աղջկան, իսկ յերբ մենք նրան կգնդահանարենք, այն ժամանակ, աստված վողորմած ե, կգտնվեն և լավ փեսացուներ։ Գեղեցիկ և չերիտասարդ այրի-ները տանը չեն մնում, այսինքն յես ուղղում եյի ասել, վոր յերիտասարդ այրին ավելի շուտ կգտնի իրեն ամուսին, քան թե աղջիկը»։

— Ավելի շուտ կհամաձայնվեմ մեռնել, — ասացի յես կատաղած, — քան թե նրան գիջել Շվարբրինին։

«Բա՛մ, բա՛մ, բա՛մ, բա՛մ, — ասաց ծերունին։— հիմա յես հասկանում եմ, վոր դու սիրահարված ես Մարիա Իվանովնային։ Ո՛ր, դա ուրիշ բան ե Խեղճ տղա։ Բայց այնուամենայնիվ յես չեմ կարող քեզ մի վաշտ գինվոր և մի հիսնյակ կազակ տալ։ Այդ արշավանքն անմիտ բան կլինեք. յես չեմ կարող դա վերցնել իմ պատասխանատվության վրա»։

Յես մնացի գլխիկոր. հուսահատությունն ինձ պատեց։ Հանկարծ մի միտք անցավ իմ գլխով. թե ինչ եր դա, ընթերցողն այն կտեսնի հետևյալ գլխում, ինչպես ասում են հնամենի վիպագիրները։

¹ Պ տ բ ա պ ե տ (Ֆր.) — պարիուզ, պատնեշ, պատվար (մեծ մասամբ բերդի, ամրոցի), հողաթումբ։

Խ Ռ Ռ Վ Ա Ր Ա Ր Ա Վ Ա Ն Ը

Կուշտ եր առյուծն այդ պահին, թեև ի ծնե կատաղի՝
 «Իմ քարանձավը, աստ, ինչո՞ւ չնորհ բերեցիր»—
 Հարցրեց նա սիրալիր։

Ա. Սումարոկով

Յես թողի գեներալին և շտապեցի գեպի իմ բնակարանը։
 Սավելիչն ինձ գիմավորեց իր սովորական հորդորանքով։ «Դու
 յեղ հավաս ունես, տեր իմ, դուռն գնել հարբած ավազակների
 հետ։ Մթթե բոյարինին¹ վայել՞ դործ և դառ Ո՛վ գիտե՞ ինչ
 կգա գլխներիս—ժամանակը չար է. վտաքով-գլխով կկորչես։
 Ե՛ն ել մի բան եր, թե ասենք թուրքերի կամ շվեդների գեմ կովի
 գնալիք։ Թե չե, ասելն ել ամոթ է՝ ախր ո՞ւմ վրա յես քշում»։

Յես նրա խոսքը կտրեցի հարցով. բնդամենն ինչքան
 փող ունեմ։ «Քեզ հերիք կանի,—ստատասխանեց նա ինքնազոհ
 տեսքով։—Սրիկաներն ինչքան ուշադիր տնտղեցին ամեն քունջ
 ու պուճախ, չես ելի կարողացա թագցնել»։ Այդ խոսքերի հետ
 նա գրպանից հանեց մի յերկար, գործված քսակ՝ լի արծաթով։
 «Սավելիչ,—ասացի չես նրան,—տուր ինձ հիմա դրա կեսը, իսկ
 մնացածը վերցրու քեզ։ Յես գնում եմ Բելոգորսկի բերդը»։

«Տեր իմ, Պլոտր Անգրեյիչ,—ասաց բարի դաստիարակս գող-
 դոջուն ձայնով։—Աստծո՞ւց վախեցիր. դու լինչպես պիտի ճա-
 նապարհ բնկնես հիմա, յերբ ավազակների ձեռքից վոչ մի տեղ
 գնալ չի կարելի։ Գոնե ծնողներիդ խղճա, թե վոր ինքդ քեզ
 չես մեղքանում։ Ո՞ւր պիտի գնաս։ Ինչո՞ւ։ Մի քիչ սպասիր,
 դորքերը կգան, բոլոր ավազակներին կբռնտեն, հն ժամանակ
 գնա ուր վոր ուզում ես»։

¹ Боярин—խոշոր ազնվական հին Ռուսաստանում։

Բայց իմ դիտավորութիւնը հաստատ եր: «Այլևս ուշ ե խորհուրդներ տալ,—պատասխանեցի յես ծերունուն:—Յես պետք ե դնամ. յես չեմ կարող չգնալ: Հոգ մի անի, Սավելիչ. աստված վողորմած ե, յերևի կտեսնուինք: Բայց տես՝ չլինի ափսոսաս ու ժլատութիւն անես: Բեզ համար ինչ վոր պետք լինի, կդնես՝ թեկուզ թանդ գնով: Այդ փողերը լես քեզ եմ նվիրում: Յեթե յերեք որից չվերադառնամ...»

«Եդ ի՞նչ ես ասում, տեր իմ,—ընդհատեց ինձ Սավելիչը:— Լինելու բան ե, վոր քեզ մենակ թողնես: Եդ մեկը դու յերազիրդ ել չես կարող ինձնից խնդրել: Համա վոր դու արդեն վճռել ես դնալ, են ժամանակ յես, թեկուզ վոտով, կգամ քո հետեից ե քեզ մենակ չեմ թողնի: Լինելով բան ե, վոր յես առանց քեզ նստեմ պարսպի ներսում: Ի՞նչ ե, դժվել եմ, հա: Դո կամքն ե, տեր իմ, բայց յես քեզնից ձեռք չեմ քաշի»:

Յես գիտեցի, վոր իդուր ե վիճել Սավելիչի հետ ե թուլ տվի նրան ճանապարհի պատրաստութիւն տեսնել: Կես ժամից յես նստեցի իմ լավ նժույգը, իսկ Սավելիչը՝ մի վտիտ ու կաղ ձի, վոր նրան ձրի տվեց քաղաքի բնակիչներէից մեկը, միջոցներ չունենալով կերակրելու նրան: Մենք ուղղվեցինք դեպի քաղաքի դարպասները. պահապանները մեզ բաց թողին. մենք դուրս չեկանք Որենբուրգից:

Սկսում եր մթնել: Ծանապարհս գնում եր Բերգսկի կոչված ավանով, վորը Պուգաչովի հանգրվանն եր: Ուղիղ ճանապարհը ծածկված եր ձյունով, սակայն տափաստանի վրա ամենուր նկատելի եյին ձիավորների ամեն որ նորոգվող հետքերը: Զիս ընթանում եր խոշոր վազքով: Սավելիչը հաղիվ եր կարողանում հեռից հետեւ ե ամեն բոպե ձայն եր տալիս ինձ. «Կամաց, տեր իմ, ի սեր աստծո՝ կամաց. իմ անիծյալ քոստուր հաղիվ ե հասնում քո յերկար-վոտանի դէի հետեից: Ախր հւր ես շտապում: Լավ եր, թե քեֆի եյինք կանչվել, թե չե, արի տես, վոր կորստյան անդունդն եքք քշում... Պյոտր Անդրեյիչ, տեր իմ, Պյոտր Անդրեյիչ... Մի՛ սպանի... Աստված իմ, տիրոջ յերեսին ձեռից գնաց»:

Շուտով առկայծեցին Բերգսկի կրակները: Մենք մոտեցանք խրամանդներին՝ ավանի բնական ամրութիւններին: Սավելիչն ինձնից հետ չեր մնում, չընդհատելով իր աղբրաւից պաղատանքը: Յես հույս ունեյի ավանի կողքովն ապահով

անցնել, յերբ հանկարծ կիսախավարի մեջ, ուղիղ իմ առջև տեսա հինգ գեղջուկներին, մահալներով զինված. դա Պուգաչովի հանգրվանի առաջավոր պահակախումբն էր. Մեզ ձայն տվին: Նշանաբանը չիմանալով, յես ուղուս եյի լռելայն անցնել նրանց մոտով, բայց նրանք իսկույն և եթ շրջապատեցին ինձ և նրանցից մեկը ճանկից ձիուս սանձը: Յես սուրս հանեցի և խփեցի գեղջուկի գլխին. գդակը փրկեց նրան, սակայն նա չերեքաց ու սանձը ձեռքից թողեց: Մյուսները շփոթվեցին և փոքր ինչ հեռու փախան. յես ոգտվեցի այդ բոպեյից, խթանեցի ձիս ու սլացա:

Վերահաս գիշերվա մութը կարող էր ինձ փրկել ամեն տեսակ վտանգից, յերբ հանկարծ, հետ նայելով տեսա, վոր Սավելիչն ինձ հետ չէ: Խեղճ ծերունին իր կաղ ձիով չէր կարողացել պրծնել ավազակների ձեռքից: Ճարս լինչ էր: Մի քանի բոպե նրան սպասելուց հետո և հավաստիանալով, վոր նա ըռնված է, յես շրջեցի ձիուս գլուխը և հետ դարձա նրան ազատելու:

Խրավանդին մոտենալով, հեռվից յես լսեցի աղմուկ, աղաղակներ և իմ Սավելիչի ձայնը: Յես ավելի արագացրի ձիուս ընթացքը և շուտով նորից ընկա պահակող գեղջուկներին մեջ, վորոնք մի քանի բոպե առաջ ինձ կանգնեցրել էին: Սավելիչը նրանց մեջն էր: Նրանք ծերունուն իջեցրել էյին ձիուց և պատրաստվում էյին նրան կապտել: Իմ մոտենալը նրանց ուրախացրեց: Ազաղակներով հարձակվեցին ինձ վրա և մի ակնթարթում քարշ տվին ձիուս վրայից: Նրանցից մեկը, ըստ չերեկոյթին գլխավորը, հայտնեց մեզ, վոր նա իսկույն և եթ մեզ կտանի թաղավորի մոտ: «Իսկ մեր տերը,— ավելացրեց նա,— իրավունք ունի հրամայելու՝ ձեզ հիմա՞ կախն, — թե սպասենք առավոտ լուսին»: Յես չընդդիմացա. Սավելիչը հետևեց իմ որինակին և պահակները հանդիսավոր կերպով մեզ տարան:

Մենք կտրեցինք խրավանդը և մտանք ավանը: Բոլոր խրճիթներում կրակներ էյին վառվում: Աղմուկն ու աղաղակները լսվում էյին ամենուր: Փողոցում յես բազմաթիվ մարդիկ տեսա, բայց մթուժյան մեջ վուչ վոք մեզ չնկատեց և հանձինս ինձ չնկատեց Որենբուրգի սպային: Մեզ ուղիղ տարան յերկու փողոցների խաչաձևման անկյունում գտնվող խրճիթը: Դարպասի մոտ կային զինու մի քանի տակառներ և յերկու թնդանոթ: «Սհա և պալատը,— ասաց գեղջուկներից մեկը,— իսկույն կտեղեկացնենք ձեր մասին»: Նա մտավ խրճիթը: Յես նայեցի Սավելիչին. ծերունին խաչակնքում էր, քթի տակ աղոթք մըմըն-

Ղալով: Յերկար սպասեցի յես. վերջապես գեղջուկը վերադարձավ և ասաց ինձ. «Գնան. մեր տերը հրամայեց ներս թողնել սպային»:

Յես մտա խրճիթը կամ պալատը, ինչպես անվանում եյին գեղջուկները: Ներսը լուսավորված եր յերկու ճարպամոմով, իսկ պատերը պատառեւ եյին վոսկեղոծ թղթով. սակայն, յերկար նստարանները, սեղանը, թոկից կախած լվացարանը, մեխից քարշ յերեսսըրիչը, անկյունում դրված ունեւիին և լայն թարեքը՝ վրան կճուճներ,—ամեն ինչ այնպես եր, ինչպես սովորական խրճիթում: Պուգաչովը նստած եր սրբերի պատկերների տակ, կարմիր կափտանը հագին, յերկարավուն գդակը գլխին և ձեռքերը հանդիսավոր կերպով մեջքին դրած: Շինծու քծնության տեսքով նրա մոտ կանգնած եյին մի քանիսն իր գլխավոր ընկերներից: Յերևում եր, վոր Որենբուրգից սպա գալու լուրը խռովարարների մեջ մեծ հետաքրքրություն եր դարձեցրել և, վոր նրանք պատրաստվել եյին ինձ հանդիսավորությամբ դիմավորելու: Պուգաչովն ինձ ճանաչեց առաջին իսկ հայացքից: Նրա կեղծ հանդիսավորությունը հանկարծ չքացավ: «Ան, ձերդ բարեծննդություն,—ասաց նա ինձ աշխուժությամբ.—ի՞նչպես եք: Բարի լինի. ինչի՞ յեք յեկել»: Յես պատասխանեցի, վոր գնում եյի իմ գործով և վոր նրա մարդիկ ինձ կանգնեցրին: «Իսկ ի՞նչ գործով»,—հարցրեց նա ինձ: Յես չգիտեյի՝ ինչ պատասխանել: Պուգաչովը յենթադրելով, վոր յես չեմ ուզում բացատրություն տալ վկաների ներկայությամբ, դարձավ իր ընկերներին և նրանց հրամայեց դուրս գնալ: Բոլորը հնազանդվեցին, բացի յերկուսից, վորոնք տեղերից չչարժվեցին: «Խոսիր համարձակ,—ասաց ինձ Պուգաչովը.—սրանցից յես վոչինչ չեմ թագցնում»: Յես նայեցի ինքնակոչի մտերիմներին: Նրանցից մեկը՝ վտիտ ու կուզիկ մի ծերուկ—ճերմակ մորուքով, աչքի ընկնող վոչինչ չուներ, բացի կապտադույն ժապավենից, վոր պատել եր ուսովը, գորշ արմյակի վրայից: Բայց յես հավիտլանա չեմ մոռանա նրա ընկերոջը: Նա բարձրահասակ եր, մարմնեղ ու լայնաթիկուճք, և ինձ թվաց մոտ քառասունհինգ տարեկան: Թավ, շեկ մորուքը, գորշ պսպղուն աչքերը, քիթը՝ առանց քթածակների և ճակատի ու այտերի վրայի կարմրավուն բծերը անմեկնելի մի արտահայտություն եյին տալիս նրա չեչոտ, լայն գեմքին: Նա հագին ունեւ կարմիր շապիկ, կիրգիզական խալաթ և կաղակի շալվար: Առաջինը (ինչպես հետո

իմացա) փախստական կապրալ Բելոբորոդովն¹ եւ յերկրորդը՝ Աֆանասիյ Սոկոլովը (Խլուպուշա² կոչեցալ) աքսորական մի հանցավոր, վորը չեքեք անգամ փախել եր Սիբիրի հանձնահորերից: Չնայած այն զգացումներին, վոր սաստիկ հուզում եյին ինձ, իմ յերեւակալությունը խիստ զբաղեցնում եյին այս մարդիկ, վորոնց մեջ աչսպես անսպասելի ընկել ելի յես: Սակայն Պուգաչովն ինձ ուշքի բերեց իր հարցով: «Ասա, ի՞նչ գործով ես դու Որենբուրգից դուրս յեկել»:

Արտասովոր մի միտք ծագեց իմ գլխում: Ինձ թվաց, թե նախախնամությունը, վոր սրանով յերկրորդ անգամ եր ինձ բերում Պուգաչովի մոտ, առիթ եր տալիս իմ դիտավորությունն իրագործելու: Յես վճռեցի ողտվել դրանից և դեռես անելիքս չմտածած, պատասխանեցի Պուգաչովի հարցին.

— Յես գնում եյի Բելոբորսկի բերդը մի վորբուհու փրկելու, վորին աչնտեղ նեղացնում են:

Պուգաչովի աչքերը փայլատակեցին: «Իմ մարդկանցից ով ե համարձակվում վորբուհու նեղացնել,—գոռաց նա:—Յոթ գլուխ ել վոր նա ունենա, իմ դատաստանից չի ազատվի: Ասա, ով ե հանցավորը»:

— Շվարերինն ե հանցավորը, — պատասխանեցի յես:—Նա բանտարկած պահում ե այն աղջկան, վորին դու չեքեցինոջ մոտ հիվանդ տեսար, և դուով ուզում ե հետն ամուսնանալ:

«Յես Շվարերինին խելքի՝ կբերեմ,—ահավոր ձայնով ասաց Պուգաչովը:—Նա կիմանա, թե իմ որոք ի՞նչպես կարելի յե բռնություն բանեցնել և ժողովրդին նեղացնել: Յես կկախեմ նրան»:

«Հրամայիր մի խոսք ասեմ,—ասաց Խլուպուշան խուստ ձայնով:—Դու շտապեցիր Շվարերինին բերդապետ նշանակել, իսկ հիմա ել շտապում ես նրան կախել: Դու կաղակներին արդեն

1 Ի. Ն. Բելոբորոդով—նախկին հրետավոր՝ շարքային հասարակ զինվոր ե յեղել ցարական բանակում, պուգաչովյան շարժման աչքի ընկնող մասնակիցներից, վոր ապստամբեցրեց Պերմի շրջանի գործարաններում աշխատող ճորտ-բանվորներին:

2 Խլուպուշա—զյուղացի, ապստամբության ամենատականավոր զեկավարներից մեկը, վորը Ուրալի գործարաններում ճորտ-բանվոր եր Գործարանից քանիցս կատարած փախուստների համար կառավարությունը խեղանգամ եր դարձրել նրան: Առաջնորդել և Ուրալի ապստամբ բանվորներ զորախմբերը: Գլխավորած ե 1775 թ.:

վիրավորել ես, աղնվականին նրանց պետ նշանակելով. դեհ ել մի վախեցնի աղնվականներին—առաջին չարախոսության հիման վրա նրանց կախաղան հանելով»:

«Զպետք ե նրանց վոչ խղճալ, վոչ ել շնորհ անել,—ասաց կապույտ ժապավենավոր ծերուկը:—Շվարքինին կախելը ցավ չե, համա թե վատ չի լինի և՛ պարոն սպային մի լավ հարցաքննել, թե ինչո՞ւ յե բարեհաճել շնորհ բերել մեզ մոտ: Յեթե նա քեզ թագավոր չի ճանաչում, ապա հարկավոր չի քեզ մոտ դատաստան փնտռել. իսկ թե վոր ճանաչում ե, ինչո՞ւ նա մինչև այսօր նստել ե Որենքուրդում քո թշնամիներին հետ միասին: Արդոք չե՞ս հրամայի դրան դատաստանատուն տանել և աչնտեղ կրակը մի լավ թեփացնել. ինձ այնպես ե յերևում, վոր նորին վողորմածությունը մեզ մոտ ուղարկված ե Որենքուրդի հրամանատարներին կողմից»:

Երբ չարագործի տրամաբանությունն ինձ բավական համոզիչ թվաց: Իմ ամբողջ մաքմնով մի դող անցավ այն մտքից, թե յես ո՞ւմ ձեռքումն եմ: Պուգաչովը նկատեց իմ հուզմունքը: «Հը՞, ձերդ բարեծննդություն, —ասաց նա ինձ աչքով անելով: —Իմ ֆելդմարշալը, կասենաս՝ խելոք բան ե ասում: Բո խելքն ի՞նչ ե կտրում»:

Պուգաչովի ծաղրանքը վերադարձրեց իմ աշխուժությունը: Յես հանգիստ պատասխանեցի, վոր դտնվում եմ նրա իշխանության տակ և վոր նա ազատ ե ինձ հետ վարվելու, ինչպես ինքը կկամենա:

«Բարի,—ասաց Պուգաչովը:—Հիմա ինձ ասա, թե ի՞նչ դրության մեջ ե ձեր քաղաքը»:

— Փառք աստուծո՞ւ,— պատասխանեցի յես.— ամեն ինչ լավ ե:

«Լավ ե,—կրկնեց Պուգաչովը:—Իսկ ժողովուրդը սովից կոտորվում ե»:

Ինքնակոչը ճիշտ եր ասում, բայց յես ըստ յերդման պատահանության սկսեցի հավատացնել, վոր այդ բոլորը դատարկ լուրեր ե և վոր Որենքուրդում ամեն տեսակի բավականաչափ պաշար կա:

«Տեսնո՞ւմ ես,—մեջ ընկավ ծերուկը,—վոր նա քեզ յերես առ յերես խարում ե: Բոլոր փախստականները միաբերան պատմում են, վոր Որենքուրդում սով ու համաճարակ ե, վոր աչնտեղ լեշ են ուտում, այն ել փառք՝ յեթե ճարում են, իսկ նո-

բին վողորձածությունը հավատացնում ե մեզ, վոր ամեն ինչ առատ ե այնտեղ, Յեթե դու ուզում ես Շվաբրինին կախել, ապա լավ կանես նույն այդ կախաղանից կախես և այս կտրիճին, վորպեսզի վոչ վոք չնախանձի»:

Անիծյալ ծերունու խոսքերը կարծես թե տատանեցին Պուգաչովին: Բարեբախտաբար Նլուպուշան սկսեց հակառակել իր ընկերոջը: «Հերիք, Նաոմիչ, — ասաց նա: — Քեզ վոր մնա՞ ամեն ինչ կխեղդես ու կմորթես: Ի՞նչ մի աժդահան ես: Տեսնում եմ, հրեն հողիդ տալիս ես: Մի վտաքդ գերեզմանումն ե, բայց ուրիշները տունն ես քանդում: Դի՛չ արյուն կա խղճիդ վրա»:

— Ի՞նչ ե, դու սուրբ ես, ելի, — առարկեց Բելոբորոդովը: — Եդ վորտեղից դու խղճմտանք ձեռք բերեցիր:

«Իհարկե, — պատասխանեց Նլուպուշան, — յես ել եմ մեղապարտ և այս ձեռքը (այդ խոսքերի հետ նա սեղմեց իր վոսկրոտ բռունցքը և թեքերը հետ ծալելով մերկացրեց մազոտ թևը), այս ձեռքն ել ե մեղավոր թափած քրիստոնեական արջան համար: Բայց յես հակառակորդիս եմ սպանել, և վոչ թե հյուրիս, բնց ճանապարհի վրա և մութ անտառում և վոչ թե տանը, վառարանի վրա վեր ընկած՝ լախտով ու կոթակով, և վոչ թե կնկա չարախոսությամբ»:

Ծերունին յերեսը շուռ տվեց և քթի տակ մըթմըթաց. «Ճոթաժ քթածակեր»...

— Ի՞նչ ես քչիչում, պառավ, — գոռաց Նլուպուշան: — Յես քեզ ցույց կտամ ճոթաժ քթածակեր. սպասիր, քո ժամանակն ել կգա, աստժնով դու յել կառնես քալիաթինների հոտը... Իսկ առայժմ ուշքդ վրադ պահի, քանի չեմ պոկել ցանցառմորուքդ:

«Պարոն յենարալներ, — հանդիսավոր ձայնով խոսեց Պուգաչովը: — Հերիք ե վիճեք: Յով չե, յեթե Որենբուրգի բոլոր շները մի միջնափայտից կախվեյին ու վոտքերը ձգեյին. ցամլե այն կլինի, յերբ մեր շներն իրար գզգզեն: Դե, հաշտվեցեք»:

Նլուպուշան և Բելոբորոդովը վոչ մի բառ չասացին և մռայլ նայեցին իրար: Յես անհրաժեշտ համարեցի խոսակցությունը փոխել, վորն ինձ համար շատ վատ կարող եր վերջանալ, և դառնալով Պուգաչովին, ասացի ուրախ դեմքով. «Ա՛խ, քիչ մնաց մոռանալի քեզ շնորհակալություն հայտնել ձեռ և քուրքի համար: Առանց քեզ յես քաղաք չեյի հասնի և կսառչեյի ճանապարհին»:

Նորամանկությունս անցավ: Պուգաչովի դեմքը բացվեց:

«Պարտքը տալով, մեղքը լալով,—ասաց նա աչքով անելով և կոպերը կկոցելով— Ապա մի պատմի ինձ հիմա թե դու ի՞նչ գործ ունես այն աղջկա հետ, վորին Շվարքինը նեղացնում ե։ Զլինի՝ շահել սրտիդ սիրեկանն և, հը»։

—Նա իմ հարսնացուն ե,—պատասխանեցի չես Պուգաչովին, տեսնելով վոր տրամադրությունը դեպի լավը գնաց և կարիք չկա խելությունը թաղցնելու։

«Բո հարսնացուն,—գուռաց Պուգաչովը։—Ինչո՞ւ դու առաջուց չասացիր։ Դե մենք քեզ կնշանենք և քո հարսանիքին ել քեֆ կանենք»։ Հետո դառնալով Բելոդոբոդովին. «Լսի՛ր, ֆելդ-մարշալ։ Մենք նորին բարեծննդության հետ հին բարեկամներ ենք. նստենք ընթերիք անենք. առավոտվա չարը իրիկվա բուռաց լավ ե։ Վաղը կտեսնենք, թե ինչ կանենք սրա հետ»։

Յես ուրախությամբ կհրաժարվեյի նրա առաջարկած պատովից, բայց ճարս ի՞նչ ել։ Յերկու յերիտասարդ կադակուհիներ՝ խրճիթի տիրոջ աղջիկները, սեղանը ծածկեցին սպիտակ սփռուցով, հաց բերին, ուխա¹ և մի քանի շոռֆ զինի ու գարեջուր, և յես յերկրորդ անգամ սեղան նստեցի Պուգաչովի և նրա սարսափելի ընկերների հետ։

Խրախճանքը, վորին յես ակամա ականատես յեղա, տեքց մինչև խոր գիշեր։ Վերջապես գինովությունն ակսեց պատել դրուցակիցներին։ Պուգաչովը նիրհեց իր տեղում նստած. նրա ընկերները վեր կացան և ինձ նշան արին՝ մենակ թողնել նրան։ Յես դուրս յեկա նրանց հետ միասին։ Խոպուշալի կարգադրությամբ պահակն ինձ տարավ դատական խրճիթը, ուր յես դտա և Սավելիչին՝ այդտեղ ել ինձ նրա հետ թողին, դուռը դրսից կողպելով։ Դաստիարակս այնպիսի ապշության մեջ եր՝ տեսնելով այս բոլորը, վոր ինձ վոչ մի հարց չտվեց։ Նա պառկեց մթան մեջ և յերկար անի ու վախ եր անում. վերջապես նա խռմիաց և չես ընկա խորհրդածություններ ձեռք, վոր ամբողջ գիշեր վոչ մի բոպե ինձ թուլլ չտվին նիրհելու։

Առավոտյան չեկան, Պուգաչովի անունից կանչեցին ինձ։ Յես գնացի նրա մոտ։ Նրա տան դռները առաջ մի կիբիտկա յեր կանգնած, թաթարական յերեք ձի լծած։ Ժողովուրդը խռնվել եր փողոցում, Սրահում յես հանդիպեցի Պուգաչովին. նա ճանապարհի շորեր եր հագել, մուշտակը վրան, կիրգիզական գդակը

¹ Ուխա — ձկնասպան։

գլխին: Յերեզկա խոսակիցները շրջապատեցին նրան, դեմքերին ստորաքարշուքյան արտահայտութիւն տալով, վոր անշափ հակասում եր այն ամենին, ինչին յես ականատես յեղա նախորդակին: Պուգաչովը ուրախ-ուրախ բարեկեց ինձ, և հրամայեց, վոր նրա հետ նստեմ կիրիտկաչի մեջ:

Մենք տեղավորվեցինք: «Բեղդորսկի բերդը»,—ասաց Պուգաչովը լայնաթիկունք թաթարին, վորը կանգնած կառավարում եր լեռնաձի կիրիտկան: Սիրտս սաստիկ խփեց: Ձիերը շարժվեցին, դանգակը կարկաչեց, կիրիտկան սլացաւ...

«Կանց, կանց»,—սլփեց ինձ շատ ծանոթ մի ձայն և յես տեսա Սաւելիչին, վորը մեզ դեմ եր վազում: Պուգաչովը հրամայեց կանգ առնել: «Տեր իմ Պյոտը Անդրեյիչ, —բլավեց դաստիարակաւ—Նա ծեր հասակիս մի ձգիր ինձ սրկեան...»—Ամ, քաւթառ,—ասաց նրան Պուգաչովը:—Աստված տվեց նորից տեսնվեցինք: Արև, նստիր այստեղ՝ առջևում:

«Շնորհակալ եմ, տեր իմ, շնորհակալ եմ, հարազատ հալըս, —ասաց Սաւելիչը իր տեղը նստելով:—Աստված քեզ հարյուր տարի կլանք տա, վոր ինձ ծերունուս մեղքացար և հանգստացրիր: Հավիտյան քեզ համար աղոթք պիտի անեմ ասածուն, իսկ նապաստակի մորթուց կարած ձուշտակի մասին ել ձայն չեմ հանի»:

Այդ նապաստակի մուշտակը վերջապես կարող եր սաստիկ զայրացնել Պուգաչովին: Բարեբախտաբար ինքնակոչը կամ լավ չլսեց, կամ ուշք չդարձրեց այդ անտեղի ակնարկին: Ձիերը վազեցին. փողոցում ժողովուրդը կանգ եր առնում և մարդիկ մինչև գետին խոնարհվելով, վողջունում եյին: Պուգաչովը գլխով եր անում աջ ու ձախ: Մի բոպեյից մենք դուրս յեկանք ավանից և սլացանք հարթ ճանապարհով:

Հեշտ և պատկերացնել, թե յես ինչ զգացի այդ բոպեյին: Մի քանի ժամից յես պետք և տեսնեյի նրան, վորին այլևս կուրած եյի համարում ինձ համար: Յես յերեակայում եյի իմ հանդիպման բոպեն... Նմանապես մտածում եյի և այն մարդու մասին, վորի ձեռքում եր իմ բախտը, և վորը հանգամանքների տարրերնակ դասավորութեամբ խորհրդավոր կերպով կապված եր ինձ հետ: Յես հիշեցի փութկոտ դաժանութիւնն ու արյունոտ սովորութիւններն այն մարդու, վորը պատրաստակամութեւն հայտնեց իմ սիրելի փրկարարը լինելու: Պուգաչովը չգիտեր, վոր նա կապիտան Միրոնովի աղջիկն և. կատաղած Շվարբինը

կարող եր նրան պարզել ամեն ինչ, Պուգաչովը կարող եր ճշմարտությունն իմանալ և՛ այլ կերպ... Ի՞նչ կլինե՞ր այն ժամանակ Մարիա Իվանովնայի վիճակը, Մարմնովս դող եր անցնում և մազերս բիզ-բիզ ելին կանգնում...:

Հանկարծ Պուգաչովը ընդհատեց իմ խորհրդածությունները, դառնալով ինձ ալսողիս հարցով.

«Ձերդ բարեճննդությունն ինչի՞ մասին ե հաճում մտածել»:

— Ի՞նչպես չմտածես, — պատասխանեցի չես նրան: — Յես սպա չեմ և ազնվական. դեռես յերեկ յես կուլում եյի քո դեմ, իսկ այսօր քեզ հետ եմ գնում միևնույն կլերիտկայով և իմ ամբողջ կյանքի յերջանկությունը քեզնից ե կախված:

«Ի՞նչ ե, — հարցրեց Պուգաչովը: — Զլինի՞ վախենում ես»:

Յես պատասխանեցի, վոր արդեն մի անգամ նրանից ներում ստանալով, յես հույս ունեյի, վոր նա վոչ միայն կխնայի ինձ, այլ մինչև իսկ կողնի:

«Յե՛վ դու իրավացի չես, աստված վկա՝ իրավացի յես, — ասաց ինքնակոչը: — Դու տեսա՞ր, վոր իմ տղաները քեզ խեթ-խեթ եյին նայում, իսկ ծերունին դեռ այսօր ել պնդում եր, վոր դու լրտես ես և վոր պիտք ե քեզ տանջել ու կախել, բայց չես չհամաձայնվեցի, — ասվեացրեց նա ձայնն իջեցնելով, վորպեսդի Սավելիչը և թաթարը չկարողանան իրեն լսել, — հիշելով քո մի բաժակ ողին ու նապաստակի մուշտակը: Դու տեսնո՞ւմ ես, վոր յես դեռ այնպիսի արնախումբ չեմ, ինչպես իմ մասին պատմում են ձեր մարդիկ»:

Յես հիշեցի Բելոգորսկի բերդի առումը, բայց հարկ չհամարեցի առարկել նրան և վոչ մի բառով չպատասխանեցի:

«Որենքուրդում ի՞նչ են ասում իմ մասին», — հարցրեց Պուգաչովը քիչ լռելուց հետո:

— Դե ասում են, վոր քեզ հետ դժվար ե գլուխ դնել. խոսք չկա, դու քեզ ցույց տվիր:

Պուգաչովի դեմքին գոհ ինքնասիրություն յերեաց: «Հա, — ասաց նա ուրախ տեսքով. — Թուրս կտրուկ ե, բա՛: Ձեր Որենքուրդում գիտե՞ն արդյոք Յուզեևոյի¹ կովի մասին: Դառասո՞ւն

¹ Յուզեևո — գյուղ, վորի մոտ 1773 թվի նոյեմբերի 9-ին Պուգաչովը գլխովին ջախջախեց կառավարական մի սովոր զորամաս, վոր գեներալ Կառի հրամանատարությամբ ուղարկված եր Որենքուրդի պաշարումը վերացնելու նպատակով:

յենարալ ե սպանված, չորս բանակ ե դերի վերցված: Ի՞նչ ես
կարծում, պրուսական թագավորը կարող ե ինձ հետ չափվել»:

Ավագակի սնապարծությունն ինձ զվարճալի թվաց: Ինքդ
ի՞նչպես ես կարծում,—ասացի յես նրան.—կարող ես Ֆրիդե-
րիկի¹ հախից դաս:

«Ֆյոդոր Ֆյոդորովիչի՛, Ի՞նչպես չես: Ձեր յենարալների հա-
խից հո գալիս եմ, իսկ սրանք քանի անգամ են նրան ջարդել:
Մինչև հիմա թուրս կտրուկ ե յեղել: Ժամանակ տուր, գեռ ին-
չե՛ր կլինի, յերբ կշարժվեմ Մոսկվայի վրա»:

— Իսկ դու միտք ունես Մոսկվայի վրա դնալու:

Ինքնակոչը մի քիչ մտածեց ու կիսաձայն ասաց. «Աստ-
ված գիտե: Տեղս նեղվածք ե. ձեռքս՝ կարճ: Իմ տղերքը խելք-
ներին շատ են դուռ տալիս: Նրանք գողեր են: Յես պետք ե
աղանջս՝ կախ պահեմ. առաջին անհաջողության դեպքում նրանք
իրենց շլինքը կպրծացնեն իմ դլխի գնով»:

— Ա՛յ, տեսնում ես,—ասացի յես Պուգաչովին:— Լավ չի՞
լինի, վոր ինքդ որ առաջ ձեռք քաշես նրանցից ու գիմես թա-
գուհու վողորմածությանը:

Պուգաչովը դառնորեն քմծիծաղ տվեց: «Վո՛չ,—պատասխա-
նեց նա,—այլևս ուշ ե ինձ մեղա գալ: Ինձ համար ներում չի
լինի: Կշարունակեմ, ինչպես սկսել եմ: Ի՞նչ իմանաս: Մի գուցե
ե կհաջողվի: Գրիշկա Ոտրեպլեովը հո թագավորեց Մոսկվա-
յում»:

— Իսկ դու գիտես, թե՛ նա ինչով վերջացրեց: Նրան դուրս
նետեցին պատուհանից, մորթեցին, այրեցին, նրա մոխիրը լեց-
րին թնդանոթի բերանը ե արձակեցին:

«Լսիր,—ասաց Պուգաչովը մի ինչ վոր վայրագ վողեվո-
րությամբ:—Քեզ մի հեքիաթ կասեմ, վոր տղա ժամանակս ինձ
պատմել ե մի ծեր կալմիկուհի: Մի անգամ արծիվը հարցնում
ե ագռավին. առա՛, ագռավ-թռչուն, այդ ինչի՞ցն ե, վոր դու աշ-
խարհքում ապրում ես յերեք հարյուր տարի, իսկ յես՝ ընդամենը
յերեսուն ու յերեք տարի:—Այդ նբանից ե, տեր իմ, պատաս-
խանում ե ագռավը, վոր դու տաք ա բչուն ես խմում, իսկ յես՝
լեշով եմ սնվում: Արծիվը մտածեց. յեկ փորձենք, մենք ել

¹ Ֆրիդերիկ—Ֆյոդոր Ֆյոդորովիչ, ինչպես նրան անվանում ե Պու-
գաչովը—պրուսական թագավոր Ֆրիդրիխ Մեծն ե (1712—1786), վոր նշանա-
վոր զորապետի համբավ ուներ XVIII դարում

գլխանով սնուկներ: Լնվ: Թռան միասին արծիվը ու ագռավը: Ահա նրանք տեսան մի սատկած ձի: Ագռավը սկսեց կտցել ու գովել: Արծիվը կտցեց մի անգամ, կտցեց մեկ ել, թեին դարկեց և ասաց ագռավին՝ վնչ ագռավ յեղբայր, քան թե յերեք հարյուր տարի լեշով սնուկել, ավելի լավ ե մի անգամ տաք արյուն խմել, հետո՝ աստված վողորմած ե:—Վնչ ե կալմիկները: հեքիաթը»:

— Սրամիտ ե,— պատասխանեցի յես նրան:— Բայց սպանությամբ ու կողոպուտով ապրել, իմ խելքով, ասել ե թե՛ լեշ կտցել:

Պուգաչովը նայեց ինձ դարմանքով և վռչինչ չպատասխանեց: Մենք յերկուսս ել լռեցինք, յուրաքանչյուրս իր մտքերի մեջ ընկղմած: Թաթարը մի տխուր յերգ սկսեց: Սավելիչը նիրհելով ճոճվում եր իր տեղում: Կիրիտկան սլանում եր ձմեռային հարթ ճանապարհով... Հանկարծ Յաիկ գետի դարավին յես տեսա մի փոքրիկ գյուղ՝ ցանկապատով և զանգակատնով — և քառորդ ժամից մենք մտանք Բելոգորսկի բերդը:

Վ Ո Ր Բ Ը

Ինչպէս մեր տան խնձորենին,
Վոր վոչ շյուղեր ունի, վոչ՝ դադաթ,
Ենպէս ել մեր իշխանուհիկը,—
Վոչ հայր ունի, վոչ մայր դթառատ:
Ո՛վ կզուքի արդյոք նրան,
Ո՛վ որհնություն կտա նրան:

Հարսանեկան յերգ

Կիրիտկան մոտեցավ բերդապետի տան պատշգամբիկին: Ժողովուրդը ճանաչեց Պուգաչովի զանգակի ձայնը և խռնված վազեց նրա հետևից: Շվարքինն ինքնակոչին դիմաւորեց պատշգամբիկի առաջ: Նա կազակի զգեստ եր հագել և մորուք թողել: Դաւաճանը Պուգաչովին ոգնեց կիրիտկայից դուրս դալ, ստորաքարշ խուքերով իր ուրախությունն ու ջանասիրությունն արտահայտելով: Ինձ տեսնելով նա շփոթվեց, բայց շուտով հավաքեց իրեն, ձեռքը պարզեց, ասելով. «Դու չե՞լ մերն ես: Վաղձուց պետք ե այդպէս անհյիւր»։— Յես յերեսս շուռ տվի նրանից և վռչինչ չպատասխանեցի:

Սիրտս կսկծաց, յերբ մենք մտանք վաղուց ծանոթ սենյակը, ուր պատից դեռ կախված էր հանգուցյալ բերդապետի դիպլոմը, վորպէս անցած ժամանակի տխուր դամբանագիր: Պուգաչովը նստեց այն բազկաթոռի վրա, ուր յերբեմն ներհում էր ի վան Կուզմիշը, իր ամուսնու քրթմնջոցի տակ քուն մտած: Շվարքինն իր ձեռքով նրան ողի մատուցեց: Պուգաչովը խմեց մի գալաթ և ինձ ցույց տալով, ասաց նրան. «Նորին բարե՞ծննդությանն ել հլուրասիրի»: Շվարքինը մոտեցավ ինձ իբձա՝ տուցարանով, բայց յես յերկրորդ անգամ յերեսս շուռ տվի նրանից: Յերևում եր, վոր նա գլուխը կորցրել է: Իբ սովորա-

կան զգաստությամբ նա, իհարկե գլխի ընկալ, վոր Պուգաչովն անբավական ե իրենից: Շվարքինը վախճնում եր նրանից, իսկ ինձ անվստահությամբ եր նայում: Պուգաչովը տեղեկացավ բերդի դրության, թշնամու գործերի վերաբերյալ պտտվող լուրերի և նման բաների մասին, և հանկարծ անսպասելի հարցրեց նրան. «Ասա, յեղբայր, այդ ի՞նչ աղջիկ ե, վորին քեզ մոտ պահում ես հսկողության տակ: Հապա մի ցույց տուր ինձ»:

Շվարքինը մեռելի պես գունատվեց:—Տեր իմ,—ասաց նա դողդոջուն ձայնով...—Տեր իմ, նա հսկողության տակ չե... նա հիվանդ ե... նա վերելի սենյակումն ե պառկած:

«Իե տար ինձ նրա մոտ»,—ասաց ինքնակոչը տեղից վեր կենալով: Հրաժարվել անհնար եր: Շվարքինը Պուգաչովին տալով Մարիա Իվանովնայի սենյակը: Յես հետևեցի նրանց:

Շվարքինը կանգ առավ սանդուխքի վրա: «Տեր իմ,—ասաց նա—Դուք իրավադոր եք ինձնից պահանջելու ամեն բան, ինչ վոր կամենաք, բայց մի հրամայեք կողմնակի մարդուն մտնել ննջարանն, իմ կնոջ մոտ»:

Յես ցնցվեցի: «Ուրեմն դու ամուսնացած ես»,—ասացի յես Շվարքինին, պատրաստվելով պատառոտել նրան:

«Հանգիստ,—ընդհատեց ինձ Պուգաչովը:—Դա իմ գործն ե: Իսկ դու,—շարունակեց նա, Շվարքինին դառնալով,—խելքիդ զուտ մի տա և մի կոտորտվիր. նա քո կինն ե, թե կինդ չե, յես նրա մոտ տանում եմ ում կամենամ: Ձերդ բարեձննդություն, յեկ իմ հետևից»:

Սենյակի դռների մոտ Շվարքինը նորից կանգ առավ և ասաց ընդհատվող ձայնով. «Տեր իմ, նախադգուշացնում եմ ձեզ, վոր նա սաստիկ ջերմի մեջ ե և չերկրորդ որն ե, վոր անդադար զառանցում ե»:

— Բնց,—ասաց Պուգաչովը:

Շվարքինն սկսեց տնտղել իր գրպանները և ասաց, վոր բանալին հետը չի վերցրել: Պուգաչովը վտարով խփեց դռանը, կողպեքը թռավ. դուռը բացվեց և մենք ներս մտանք:

Յես նայեցի և քարացա: Հատակին, գեղջկական պատառոտված զգեստով նստած եր Մարիա Իվանովնան—գունատ, նիհար, զգզված մաղերով: Նրա առաջ գրված եր մի կուժ ջուր, վրան հացի պատառ: Ինձ տեսնելով նա ցնցվեց ու աղաղակեց: Թե ինձ հետ ինչ յեղավ այն ժամանակ՝ չեմ հիշում:

Պուգաչովը նայեց Շվարքինին և ասաց դառն քմծիծաղով.

«Լավ, հիմանդանոց ես ունեցել»։ Հետո, մոտենալով Մարիա Իվանովնային. «Ասա ինձ, աղափնյակս, ինչո՞ւ համար ե քո ամուսինը քեզ պատժում։ Ի՞նչով ես դու մեղավոր նրա առաջ»։

— Իմ ամուսինը,—կրկնեց նա։—Իմ ամուսինը չե՞ նա։ Յես յերբեք նրա կինը չեմ դառնա։ Յես վճռել եմ՝ լավ ե մեռնել և կմեռնեմ, չեթե ինձ չազատեն։

Պուգաչովն ահեղ նայեց Շվաբրինին. «Յեվ դու համարձակվեցիր ինձ խաբե՞լ,—ասաց նա։—Իսկ դու գիտե՞ս, անպիտան, Թե ինչի՞ չես արժանի»։

Շվաբրինը ծռնել չօքեց... Այդ բոլորին աբհամարհանքն իմ մեջ խեղդեց ատելության և դայրույթի ամեն մի զգացում։ Յես նողկանքով եյի նայում աղնվականին, վոր ընկել եր փախըստական կազակի վտոքերը։ Պուգաչովը մեղմացավ։ «Այս անգամ ներում եմ քեզ,—ասաց նա Շվաբրինին.—բայց իմացած լինես, վոր առաջին իսկ հանցանքիդ հետ այս ել կհիշվի»։ Հետո նա զիմեց Մարիա Իվանովնային և սիրալիր ասաց նրան. «Դուրս յեկ, սիրուն, աղջիկ. ազատություն եմ պարգևւմ քեզ։ Յես թագավորն եմ»։

Մարիա Իվանովնան արագ նայեց նրան և գլխի ընկավ, վոր առջև կանգնած ե իր ծնողներին սպանողը։ Նա դեմքը ծածկեց դուշը ձեռքերով և ընկավ ուշադնաց։ Յես վրա հասա. բայց այդ բոլորին շատ համարձակ սենյակ սողոսկեց իմ վաղեմի ծանոթ Պալաշան և սկսեց հոգ տանել իր որրորդի համար։ Պուգաչովը դուրս յեկավ սենյակից, և մենք յերեքս իջանք հյուրասենյակը։

«Հը՞, ձերդ բարեծննդություն,—ծիծաղելով ասաց Պուգաչովը։—Գեղեցկուհուն վրկեցինք։ Ի՞նչ ես կարծում, մարդ չուղարկեմ տերտերի հետևից և չստիպեմ, վոր նա պսակի իր բերկամուհուն։—Յես ել կդառնամ հարսանհայրը, Շվաբրինը՝ խաչիգալը։ Տաւնդուռ ծածկե՞թք, խմենք ու մի լամ զեֆանենք»։

Ինչից յերկյուղ եյի կրում, աչն ել կատարվեց. Շվաբրինը, լսելով Պուգաչովի առաջարկությունը, ինքն իրեն կորցրեց։ «Տե՛ր իմ,—կանչեց նա կատաղած։—Յես մեղավոր եմ, չես խաբեցի ձեզ, բայց Գրինյովն ել ե ձեզ խաբում։ Այս աղջիկը յերեցկնոջ քրոջաղջիկը չե. նա Իվան Միրոնովի աղջիկն ե, բերդապետի, վորին կախեցինք այս բերդը վերցնելիս»։

Պուգաչովը ինձ հառեց իր կրակոտ աչքերը: «Ա՛յս ինչ բան ե» — հարցրեց նա ինձ տարակուսանքով:

— Շվարերինը քեզ ճիշտն ասաց, — պատասխանեցի յես հաստատ:

«Դու ել ճիշտ բանը չես ասել», — նկատեց Պուգաչովը, վորի դեմքը մռայլվեց:

— Ինքդ դատիր, — պատասխանեցի յես նրան, — արդյոք կարելի՞ չեր քո մարդկանց մոտ հայտնել, վոր Միլոնովի աղջիկը կենդանի յի: Ձե՛ վոր նրանք կըզկտեյին աղջկան: Վոչի՛նչ չեր փրկի նրան:

«Այդ ել ճիշտ ե, — ծիծաղելով ասաց Պուգաչովը: — Իմ հարբեցողները չեյին խնայել խեղճ աղջկան: Լավ ե արել սանամերյերեցկինը, վոր խաբել ե նրանց»:

— Լսիր, — շարունակեցի յես, տեսնելով նրա բարյացակամ վերաբերմունքը: — Ի՞նչ անուշով կանչեմ քեզ՝ չգիտեմ ու չեմ ել ուզում իմանալ... Բայց տեսնում ե աստված, վոր լես ուրախ կլինեյի իմ կյանքով յերախտահատույց լինել քեզ աչն ամենի համար, ինչ դու արեցիր ինձ համար: Միայն՝ մի պահանջիր աչն, ինչ հակառակ ե իմ պատվին ու քրիստոնեական խղճին: Դու իմ բարերարն ես: Ավարտիր ինչպես վոր սկսել ես: Բայց թող ինձ խեղճ վորքուհու հետ՝ գնանք, ուր վոր աստված մեզ ճանապարհ ցույց կտա: Իսկ մենք, ուր ել վոր դու լինես, ինչ ել վոր քեզ հետ պատահելու լինի, ամեն ոք աստծուն աղոթք կանենք քո մեղապարտ հոգու համար...

Կարծես թե Պուգաչովի դաժան սիրտը զգացվեց: «Ե՛հ, թող քո ասածը լինի, — ասաց նա: — Մահապատիժս՝ մահապատիժ ե, շնորհս՝ շնորհ: Այդպես ե իմ սովորությունը: Ա՛ն քո գեղեցկուհուն, տար ուր վոր կուզես ե թող աստված ձեզ սեր ու համաձայնություն շնորհի»:

Այդ խոսքերի հետ նա դարձավ Շվարերինին ե հրամայեց, վոր նա անցաթուղթ տա ինձ, իր իշխանության տակ գտնվող բոլոր ուղեփակերով ու բերդերով անցնելու համար: Շվարերինը միանգամայն խորտակված, կանգնել եր ինչպես քարացած: Պուգաչովը գնաց բերդը դիտելու: Շվարերինը նրան ուղեկցում եր, իսկ յես մնացի ճանապարհի պատրաստություններ տեսնելու պատրվակով:

Յես վազեցի դեպի սենյակը: Դռները փակված եյին: Յես բաղխեցի: «Ո՞վ ե», — հարցրեց Պալաշան: Յես ասացի անունս:

Դուների այն կողմից լավեց Մարիա Իվանովնայի անուշ ձայնը։ «Քիչ սպասեցեք, Պյոտր Անդրեյիչ, Յես շորերս եմ փոխում։ Գնացեք Ակուլինա Պամֆիլովնայի մոտ. չես խախտնա այնտեղ կգամ»։

Յես հնազանդվեցի և դնացի հայր Գերասիմի տունը։ Նա ել, յերեցկինն ել դուրս վաղեցին ինձ դիմավորելու։ Մավելիչն արդեն նախագլուշացրել եր նրանց։ «Բարե՛ ձեզ, Պյոտր Անդրեյիչ, — ասաց յերեցկինը։ — Աստված ելի արժանացրեց միմյանց տեսության։ Ի՞նչպես եք, Իսկ մենք, դե հն ե, ամեն ուր հիշում ենք ձեզ։ Բայց Մարիա Իվանովնան՝ իմ աղունակս, ել ի՞նչ ասես, վոր չքաշեց առանց ձեզ... Մի ասացեք տեսնեմ, սիրելիս. դուք ի՞նչպես սարքեցիք գործը Պուգաչովի հետ։ Ի՞նչպես յեղավ, վոր նա ձեր գլուխն ել չկերավ։ Բարի, շնորհակալ ենք չարագործից դոնն դրա համար»։ — Հերիք խոսես, պառավ, — ընդհատեց հայր Գերասիմը։ — Ինչ վոր գիտես՝ դուրս մի տա։ Ձիք փրկություն ի բազում բարբառին։ Տեր իմ, Պյոտր Անդրեյիչ, հաժեցեք ներս, խնդրում ենք։ Վաղճեց, շատ վաղուց ե չենք տեսնվել։

Յերեցկինն սկսեց ինձ հյուրասիրել — աստված ինչ վոր տվել եր և միաժամանակ անդադար խոսում եր։ Նա ինձ պատմեց, թե Շվարբինն ինչպես ե իրենց հարկադրել նրան հանձնել Մարիա Իվանովնային. ինչպես Մարիա Իվանովնան լաց ե յեղել և չի կամեցել նրանցից բաժանվել. ինչպես Մարիա Իվանովնան իր հետ մշտական կապ եր ունեցել Պալաշկայի միջոցով (Ժիրաղջիկ ե, վորը ուրյադնիկին ել հարկադրում ե իր խոսքով շարժվել). ինչպես նա խորհուրդ ե տվել Մարիա Իվանովնային ինձ նամակ գրել և այլն։ Իմ հերթին յես կարճառոտ պատմեցի իմ պատմությունը։ Տերտերն ու յերեցկինը յերեսներին խաչ ելին հանում, լսելով, վոր Պուգաչովին հայտնի չե նրանց խաբեությունը։ «Մեզ հետ ե խաչի գորությունը, — ասում եր Ակուլինա Պամֆիլովնան։ — Տեր աստված, դու փրկես փորձանքից։ Ի՞նչ եմ ասել, Ալեքսեյ Իվանիչը, խոսք չկա, պտուղ ե, հա»։ — Հենց այդ բոպեյին դուռը բացվեց և ներս մտավ Մարիա Իվանովնան՝ Ժպիտը գունատ դեմքին։ Նա հանել եր իր դեղձկան գգեստը և հագնված եր խռաջվա նման՝ պարզ ու գուրեկան։

Յես արագ բռնեցի նրա ձեռքը և յերկար ժամանակ վոչ մի բառ չկարողացա արտասանել։ Մենք չերկուսս ել լուռ եյինք բռնն հուզմունքից։ Մեր հյուրընկալներն զգացին, վոր իրենք

ալիւորդ են և դուրս գնացին: Մնացինք մենակ: Ամեն ինչ մոռացված էր: Մենք զրուցում էինք և չէինք հագնուում խոսելուց: Մարիա Իվանովնան ինձ պատմեց ամեն ինչ, վոր նրան պատահել էր բերդի առման օրից: Նա նկարագրեց իր վիճակի ամբողջ սարսափը, բոլոր այն տանջանքները, վոր ինքը կրել էր զարշելի Շվարբինի կողմից: Մենք հիշեցինք և նախկին յերջանիկ ժամանակը... Յերկուսս ել լաց չեղանք... Վերջապես յես սկսեցի բացատրել նրան իմ դիտավորութունները: Նրա համար այլևս անհնար էր մնալ մի բերդում, վոր գտնվում էր Պուգաչովի իշխանութւան տակ և կառավարվում Շվարբինի ձեռքով: Չէր կարելի մտածել նույնպես և Որենբուրգի մասին, վոր կրում էր պաշարման բոլոր աղետները: Աշխարհում նա չուներ և վոչ մի հարազատ մարդ: Յես նրան անաշարկեցի գնալ գլուղ՝ իմ մի հարազատ մտտ: Սկզբում նա տատանվեց. նրան հայտնի յեր ծնողների մոտ: Սկզբում նա տատանվեց. նրան հայտնի յեր հորս անբարյացակամութունը և դա վախեցնում էր: Յես հանգըստացրի նրան: Յես գիտեյի, վոր հայրս իր համար յերջանկութուն կհամարի և իր պարտականութունը կհաշվի ընդունել հայրենիքի համար ընկած վաստակավոր ռազմիկի աղջկանը: — Միբեւի Մարիա Իվանովնա, — ասացի յես վերջապես: — Յես քեզ իմ կինն եմ համարում: Զարմանալի հանգամանքներն անխղիւ իմ կինն եմ համարում: Զարմանալի հանգամանքներն անխղիւ իմ կերպով կապել են մեզ. աշխարհում վոչ մի բան չի կարող մեզ կենդանի կապել են մեզ. աշխարհում վոչ մի բան չի կարող, առանց անջատելու: — Մարիա Իվանովնան ինձ լսում էր պարզ, առանց անջատելու: — Մարիա Իվանովնա, առանց հնարամիտ առարկումների: Նա չինձու ամոթխածութւան, առանց հնարամիտ առարկումների: Նա զգում էր, վոր իր բախտը կապված է իմի հետ: Սակայն նա կրկնեց, վոր այլ կերպ, քան իմ ծնողների համաձայնությամբ, նա չի լինի իմ կինը: Յես բնավ չառարկեցի նրան: Մենք համաձայնեցինք ջերմ, անկեղծ — և այսպիսով ամեն ինչ մեր մեջ վճռված էր:

Մի ժամից հետո ուրյազնիկն ինձ մի անցաթուղթ բերեց, ստորագրված Պուգաչովի խղբագրով և նրա անունից ինձ նրա մոտ կանչեց: Յես Պուգաչովին տեսա ճանապարհ ընկնելու պատժառ: Չեմ կարող ասել, թե յես ինչ զգացի, յերբ հրաժեշտ տվի այդ սոսկալի մարդուն, վորը հրեշ էր ու չարագործ բոլորի համար, բացի միայն ինձնից: Ինչպէս ճիշտը չասել: Այդ բոլորին մի ուժգին կարեկցութուն ինձ քաջում էր դեպի նա: Յես բուռն կերպով ցանկանում էի նրան դուրս կորզել չարագործների շրջակից, վորոնց նա առաջնորդում էր, և փրկել նրա գլուխը՝ քանի նից, վորոնց նա առաջնորդում էր, և փրկել նրա գլուխը՝ քանի նից, վորոնց նա Շվարբինը և Ժողովուրդը, վորոնք խնամած դեռ ժամանակ կար: Շվարբինը և Ժողովուրդը, վորոնք խնամած

եյնն մեղ մոտ, խանդարեցին ինձ արտահայտել այն ամենը, ինչով լի յեր իմ սիրտը:

Մենք բարեկամաբար բաժանվեցինք: Պուգաչովը ամբողջ մեջ տեսնելով Ակուլինա Պամֆիլովնային, մատով սղառնաց նրան և խորիմաստ կերպով աչքով արեց. հետո նստեց կիբիտկան, հրամայեց քշել դեպի Բերդա և յերբ ձիերը շարվեցին, այն ժամանակ նա մեկ եւ դուրս շրջեց կիրիտկայից և կանչեց ինձ. «Մնաս բարով, ձերք բարեծննդութունս գուցե՝ յերբեքից տեսնուվենք»:— Իրոք մենք տեսնվեցինք, սակայն լ՛իշ պարագաներում...

Պուգաչովը մեկնեց: Յերկար յես նայեցի սպիտակ տափաստանին, վորով ընթանում եր նրա յեռաձի կառքը: Ժողովուրդը ցրվեց: Շվարերնը ծլկվեց: Յես վերադարձա քահանայի տունը: Լմեն ինչ պատրաստ եր մեր ուղեորման համար. յես չեյի ուզում այլևս դանդաղել: Մեր բոլոր ունեցած-չունեցածը տեղավորված եր բերդապետի հին սայլակի վրա: Կառապանները մի ակնթարթում լծեցին ձիերը: Մարիա Իվանովնան զնաց իր ծնողների գերեզմաններին հրաժեշտ տալու. նրանք թաղված եյին յեկեղեցու յետեւ: Յես ուզում եյի ուղեկցել նրան, բայց նա խնդրեց ինձ իրեն մենակ թողնել: Մի քանի րոպեյից նա վերադարձավ, լուռ ու խաղաղ արտասովելով: Սայլակը պատրաստ եր: Հայր Գերասիմը և նրա կինը դուրս յեւան տան պատշգամբիկը: Մենք չեքքով նստեցինք կիրիտկան. Մարիա Իվանովնան Պալաշայի հետ և յես: Սավելիչը բարձրացավ, նստեց կառապանի կողքին: «Գնաք բարով, Մարիա Իվանովնա, աղունակագնաք բարով, Պյոտր Անդրեյիչ, մեր աչքի լույս, — ասում եր բարի յերեցկինը: — Բարի ճանապարհ, աստված ձեզ յերկուսիդ եւ յերջանկութուն տա»: Մենք շարվեցինք: Բերդապետի տան պատուհանի մոտ տեսա կանգնած Շվարերին: Նրա գեմքը մռայլ չարութուն եր արտահայտում: Յես չեյի կամենում ցնձալ ջախջախված թշնամուս հանդեպ և աչքերս ուրիշ կողմ դարձրի: Վերջապես մենք դուրս յեկանք բերդի դարպասներից և հավիտյան թողինք Բելոգորսկի բերդը:

Ձ Ե Ր Բ Ա Կ Ա Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մի դարանաք, տեր իմ, պարտքս ե պահանջում
Ուղարկել ձեզ բանոր, հիմա անմիջապես:
— Խնդրեմ, յես պատրաստ եմ. սակայն հույս ունեմ,
Նախ թույլ կտաք ինձ դործը պարզաբանեմ:

Կնյամենի

Այդպես անակնկալ կապվելով սիրած աղջկա հետ, — վորի մասին դեռևս առավոտյան այնպես ցավագին անհանգիստ եյի, — յես չեյի հավատում ինքս ինձ և կարծում եյի, թե ինձ հետ պատահած ամեն ինչ դատարկ յերազ եր: Մարիա Իվանովնան մտադրազ նայում եր մերթ ինձ, մերթ՝ ճանապարհին և թվում եր, թե դեռ ուշքի չի յեկել ու չի հավաքել իրեն: Մենք լուռ եյինք: Մեր սրտերը չափից դուրս հոգնատանջ եյին: Աննկատելի կերպով մի յերկու ժամից հետո մենք հասանք մերձակա մի բերդ, վոր նույնպես Պուգաչովի իշխանության տակ եր: Այստեղ մենք փոխեցինք ձիերը: Տեսնելով, թե ինչ արագությամբ են լծում ձիերին, թե ինչ փութկոտ պատրաստակամություն ե ցույց տալիս մորուքավոր կազակը, վորին Պուգաչովը պարետ եր կարգել, — յես հասկացա, վոր շնորհիվ մեզ բերող կառապանի շատախոսության, ինձ ընդունում են վորպես բախտի բերմամբ արքունիքում շնորհ գտած մի բարձրաստիճանավորի:

Շարունակեցինք մեր ճանապարհը: Սկսեց մթնել: Մենք մոտենում եյինք մի փոքրիկ քաղաքի, ուր, ճորուքավոր պարետի ասելով մի ուժեղ զորախումբ եր գտնվում, վորը գնում եր ինքնակոչին միանալու: Պահակները մեզ կանգնեցրին: Այն հարցին, թե ով ե գալիս, կառապանը բարձրաձայն պատասխանեց. — «Թագավորի խնամին իր տանտիկնոջ հետ»: Հանկարծ, հուսաբերների բազմությունը մեզ շրջապատեց սարսափելի հայհոյանքով:

«Դուք արի, դեի խնամի, — ասաց ինձ բեխավոր վախժխտորը¹։
— Այ թե բուրդդ բարեբար կհանենք — քոնն ել, քո տանտիկնոջն ել»։

Յես դուքս յեկա կիրիտկայից և պահանջեցի, վոր ինձ տանեն իրենց պետի մոտ։ Տեսնելով, վոր յես սպա յեմ, զին-
վորները դադարեցրին հայոյանքը։ Վախժխտորն ինձ տարավ
մալորի մոտ։ Սավելիչն ինձնից հետ չեւ մնում, քթի տակ
քրթմնջալով. «Ե՛ս ել քու թագավորի խնամին։ Մըից յելանք՝
մըջտուն ընկանք... Տէր աստված, արդյոք ինչո՞վ կվերջանա ես
բոլորը»։ Կիրիտկան դանդաղ հետևում եր մեզ։

Հինգ բոպեյից մենք մոտեցանք պայծառ լուսավորված մի
տնակի։ Վախժխտորն ինձ թողեց պահակի հետ և դնաց իմ մա-
սին հայտնելու։ Նա իսկուչն և եթ վերադարձաւ, հայտարարե-
լով ինձ, վոր նորին բարձր բարեծննդությունը ժամանակ չունի
ինձ ընդունելու և, վոր նա հրամայել է բանտ տանել ինձ, իսկ
տանտիկնոջն իր մոտ բերել։

— Դա ի՞նչ է նշանակում, — բզավեցի յես կատաղած։ —
Մի՞թե նա դժվել է, ի՞նչ է։

«Ձեմ կարող իմանալ, ձերդ բարեծննդություն, — պատաս-
խանեց վախժխտորը։ — Միայն թե նորին բարձր բարեծննդու-
թյունը հրամայեց ձերդ բարեծննդության բանտ տանել, իսկ
նորին բարեծննդությանը՝ տիկնոջը հրամայված է նորին բարձր
բարեծննդության մոտ տանել, ձերդ բարեծննդություն»։

Յես նետվեցի դեպի մուտքը։ Պահակները չփորձեցին ինձ
բռնել և յես ուղղակի ներս ընկա մի սենյակ, ուր հինգ-վեց հո-
դի հուսարական սպաներ բանկ եյին խաղում։ Թուղթ բաժա-
նողը մայորն էր։ Մեծ էր իմ զարմանքը, յերբ նրան նայելուն
պես ճանաչեցի իվան Իվանովիչ Զուրինին, վորը ժամանակով
թղթախաղի մեջ տարավ ինձ Սիմբիրսկի պանդոկում։

— Մի՞թե կարելի բան է, — կանչեցի յես, — իվան Իվանո-
վիչ, արդյոք դժև չես։

«Բա՛, բա՛, բա՛, Պյոտր Անդրեյիչ։ Այս վճիռ քամին բերեց
քեզ։ Վճրտեղից ես դալիս։ Բարև, յեղբայր, բարև։ Ձե՛ս ուզում
արդյոք թուղթ դնել»։

— Շնորհակալ եմ։ Ավելի լավ է հրամայիր, վոր ինձ բնա-
կարան տան։

¹ Վախժխտոր — հեծյալ զորախմբի ավագ։

«Ինչի՞դ ե պետք բնակարանը: Մնա ինձ մոտ»:

— Ձեմ կարող. յես մենակ չեմ:

«Դե ընկերոջդ ել այստեղ բեր»:

— Յես ընկերոջդ հետ չեմ. յես... մի տիկնոջ հետ եմ:

«Տիկին: Այդ վճռակցից ես դու նրան ճանկելու ե՞նք, յեղ-բայը»: (Այս խոսքերի հետ Ձուրինն այնպես նշանակալից սու-լեց, վոր ամենը հրճացին, իսկ յես բոլորովին շփոթվեցի):

«Դե, — շարունակեց Ձուրինը, — թող այդպես լինի: Բնա-կարան կստանաս: Բայց ախո՞ս... Մենք մի լավ քեֆ կանեցինք, ինչպես անցյալ անգամ... Հեյ տղա: Հապա ինչո՞ւ այստեղ չե՞ս բերում Պուգաչովի պատվական սանամորը. չլինի՞ համառո՞ւմ ե: Ասեք նրան, վոր չվախենա, բարինը շատ լավ մարդ ե, վոչնչով չի վերավորի նրան: Ու մի լավ դարկեք շինքին»:

— Ի՞նչ ես անում, — ասացի յես Ձուրինին: — Ի՞նչ Պու-գաչովի սանամայր, ի՞նչ բան: Նա հանգուցյալ կապիտան Մի-րոնովի աղջիկն ե: Յես նրան դուրս եմ բերել գերությունից և հիմա ուղեկցում եմ մինչև հորս դյուղը, ուր և կթողնեմ նրան:

«Ի՞նչպես: Ասել և թե հիմա քո մասի՞ն եր, վոր ինձ գե-կուցեցին: Աստված սիրես, այս ի՞նչ ե նշանակում»:

— Հետո կպատմեմ ամեն ինչ: Իսկ հիմա, ի սեր աստծո, հանգստացրու խեղճ աղջկան, վորին քո հուսարները սրտաճաք արին:

Ձուրինն իսկույն կարգադրություն արեց: Նա ինքը դուրս յեկավ փողոց ներողություն խնդրելու Մարիա Իվանովնայից՝ ակամա թլուրիմացության համար և վախժիստրին հրամայեց քաղաքում ամենալավ բնակարանը նրան հատկացնել: Յես մնացի Ձուրինի մոտ գիշերելու:

Մենք ընթրեցինք և, յերբ չերկուսով մնացինք, յես նրան պատմեցի իմ արկածները: Ձուրինն ինձ լսում եր մեծ հետա-քրքրությամբ: Յերբ յես վերջացրի, նա գլուխը շարժեց և ասաց. «Յեղբայր, այս բոլորը՝ լավ. մի բան ե վատը. վո՞ր սատանան ե դրդում քեզ ամուսնանալու: Յես, վորպես ազնիվ սպա, չեմ ուզում քեզ խաբել. ուրեմն հավատա ինձ, վոր ամուսնությունը խելառություն ե: Ասա, մի՞թե կարող ես դու կնոջ դարդ քաշել և չերեխաներ խնամել: Ե՛հ, թե՛ր եդ բանի վրա: Ինձ լսիր. և յերեխաներ խնամելու աղջկանից: Սիմբիրսկի ճանապարհը ձեռք քաշիր կապիտանի աղջկանից: Վաղն և եթ նրան մենակ ուղար-յես մաքրել եմ և անվտանգ ե: Վաղն և եթ նրան մենակ ուղար-կիր քո ծնողների մոտ, իսկ ինքդ մնա իմ ջոկատում: Կարիք

չկա, վոր դու վերադառնաս Որենքուրդ: Նորից կընկնես խռովարարների ձեռքը և այլևս դժվար թե մեկ ել գլուխդ պրծացնես: Այսպիսով, սիրային հիմարությունն ինքն իրեն կանցնի և ամեն ինչ լավ կլինի»:

Թեպետ յես լիովին համաձայն չեյի նրա հետ, սակայն զգացի, վոր պատվո պարտքս պահանջում և իմ ներկայությունը թագուհու զորքի մեջ: Յես վճեցի հետեւել Զուրինի խորհրդին՝ Մարիա Իվանովնային ուղարկել գյուղ և մնալ նրա ջոկատում:

Սավելիչն յեկավ շորերս հանելու: Յես հայտնեցի նրան, վոր մյուս որն և եթ պատրաստ լինի ճանապարհ ընկնելու Մարիա Իվանովնայի հետ: Նա ուղում եր համառել:

«Ի՞նչ ես ասում, տեր իմ: Յես ինչպես թողնեմ քեզ: Ո՞վ պիտի հոգ տանի քո մասին: Ի՞նչ կասես քո ծնողները»:

Գիտենալով իմ վերակացուի համառությունը, յես մտքումս դրի փաղաքշանքով ու անկեղծությամբ համոզել նրան. — Իմ բարեկամ, Արխիպ Սավելիչ, — ասացի յես: — Մի մերժի, յեղիւր իմ բարեբարը. այստեղ յես ծառայի պետք չեմ ունենա, մինչդեռ հանգիստ չեմ լինի, յեթե Մարիա Իվանովնան ճանապարհ ընկնի առանց քեզ: Ծառայելով նրան, դու և՛ ինձ ես ծառայում, վորովհետեւ հաստատ վորոշել եմ՝ յերբ շուտով հանգամանքներն ինձ թույլ տան, ամուսնանալ նրա հետ:

Այստեղ Սավելիչը ձեռքերն իրար տվեց աննկարագրելի զարմանքով: «Ամուսնանա՛լ, — կրկնեց նա: — Յերեխան ամուսնանա՛լ և ուղում: Հապա ի՞նչ կասի հայրիկդ, իսկ մայրիկդ ի՞նչ կմտածի»:

— Կհամաձայնվեն: Ծիշտ կհամաձայնվեն, — պատասխանեցի յես, — յերբ կճանաչեն Մարիա Իվանովնային: Քեզ վրա յեկ յես հույս ունեմ: Հայրիկս ու մայրիկս քեզ կհավատան. դու մեր միջնորդը կլինես, այնպես չէ:

Ծերունին զգացված եր: «Ո՛հ, տեր իմ Պյոտր Անդրեյիչ, — պատասխանեց նա: — Թեև վաղ ես մտածել ամուսնանալ, բայց դե Մարիա Իվանովնան ենպես ավ աղջիկ և, վոր մեղք ե ևս պատահումը ձեռքից բաց թողնել: Թո՛ղ քո ասածը լինի: Աստուծո հրեշտակի հետ ճանապարհ կընկնեմ և խոնարհարար կասեմ քո ծնողներին, վոր եղ տեսակ հարսնացուն ո՞րտի պետք ել չունի»:

Յես շնորհակալություն հայտնեցի Սավելիչին և պառկեցի քնելու միկնուլն սենյակում Զուրինի հետ: Տաքացած և հուզ-

Վաճ լինելով, յես ամեն ինչ պատմեցի նրան: Զուրինն սկզբում հաճույքով եր զրուցում, բայց կամաց-կամաց նրա բառերը սա-
վալ և անկապ դարձան: Վերջապես, ի պատասխան մի ինչ վոր
իմ հարցի նա խումփացրեց ու քթով սուլեց: Յես լռեցի և շու-
տով հետևեցի նրա որինակին:

Հետևյալ որն առավոտյան յես գնացի Մարիա - Իվանով-
նայի մոտ: Յես նրան հաղորդեցի իմ մտադրությունները: Նա
խելացի գտավ այդ ամենը և իսկուհն համաձայնվեց ինձ հետ:
Զուրինի ջոկատը քաղաքից դուրս պիտի գար հենց նույն օրը:
Չպետք եր դանդաղել: Յես հենց այդտեղ բաժանվեցի Մարիա
Իվանովնայից, նրան Սավելիչին հանձնարարելով և հետը մի
նամակ տալով՝ ուղղված իմ ծնողներին: Մարիա Իվանովնան
լաց յեղավ: «Մնա՛ք բարով, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա կամա-
ցուկ — Կտեսնվինք արդյոք թե վոչ՝ միայն աստված գիտե. բայց
յես հավիտյան չեմ մոռանա ձեզ. մինչև գերեզման իմ սրտում
միայն դու կմնաս»: Յես վոչինչ չկարողացա պատասխանել:
Մարդիկ ըջպատեցին մեզ: Յես չեյի ուզում նրանց մոտ անձ-
նասուր լինել ինձ հուզող զգացմունքներին: Վերջապես նա
մեկնեց: Յես վերադարձա Զուրինի մոտ՝ տխուր ու լուռ: Նա
կամեցավ ինձ ուրախացնել: Յես ուզեցի ցրել մտքերս, այդ օրը
մենք անցկացրինք աղմուկով ու մոլեղին և յերեկոյան ռազմ-
յերթի լեւանք:

Փետրվարի վերջն եր: Ռազմական կարգադրությունները
դժվարացնող ձմեռն անցնում եր և մեր զինեռալները պատրաստ-
վում էին միահամուռ գործակցության: Պուզաչովը դեռևս կանդ-
նած եր Որենբուրգի մոտ: Այնինչ, հետզհետե ջոկատները միա-
նում էին նրա շուրջը և բոլոր կողմերից մոտենում էին չարա-
գործների բույնին: Ապստամբող գյուղերը մեր զորքերը տես-
նելուն պես հնազանդություն էին հայտնում. ալաղակախմբերն
ամենուրեք վախչում էին մեր առջևից և ամեն ինչ նախա-
գուշակում եր արագ և բարեհաջող վախճան:

Շուտով իշխան Գոլիցինը Տատրչևա բերդի մոտ ջարդեց
Պուզաչովին, ցրեց նրա խառնիճաղանձ զորքերը, աղատեց
Որենբուրգը ու թվում եր թե խռովությանը հասցրեց վերջին և
վճռական հարվածը: Այդ ժամանակ Զուրինին ուղարկեցին
խռովարար բաշկիրներին մի հրոսախմբի գեմ, վորոնք ցրվում
էին ավելի շուտ, քան մենք տեսնում էինք նրանց: Գարունը
մեզ կաշկանդեց թաթարական մի գյուղում: Գետակները վարա-

րել ելին և ճանապարհներն անանցանելի դարձել. մեր անգործութեան մեջ մենք մեղ մխիթարում եյինք ավաղակների ու վալրենիների դեմ մղվող ձանձրալի ու չնչին պատերազմի շուտափութ յավարտման մտքով:

Սակայն Պուգաչովը չէր բռնված: Նա հայտնվեց սիրելիքս դործարաններում, այնտեղ նորանոր խմբեր հավաքեց և վերստին սկսեց չարագործություններ անել: Նրա հաջողությունները լուրը նորից տարածվեց: Մենք իմացանք սիրելիքս բերդերի ավերման մասին: Շուտով Ղաղանի դրաման և ինքնակոչի դեպի Մոսկվա արշավելու լուրն անհանգստացրեց զորապետներին, վորոնք անհող քնած ելին, հուլիսը դրած արհամարհելի խռովարարի անգործութեան վրա: Զուրինը հրաման ստացավ անցնել Վոլգան:

Չեմ պատմի մեր արշավանքներն ու պատերազմի վախճանը: Կարճ կասեմ, վոր աղետը ծայրահեղութեան եր հասնում: Ամենուրեք խափանվել եր վարչությունը. կալվածատերերն անտառներում ելին թաղնվում: Ավաղակախմբերը չարագործություններ ելին անում ամեն տեղ: Աւանձին զորամասերի պետերն ինքնակամ կերպով պատժում ելին և ներումն չնորհում: Լայնարձակ յերկրի վիճակը, ուր հրդեհն եր մոլեղնում, սարսափելի չէր: Աստված մի արասցե տեսնել ռուսական բռնութը՝ անմիտ ու անողորմ:

Պուգաչովը փախչում եր Իվան Իվանովիչ Միխեևսոնի՝ զորքերից հետամուտ: Շուտով մենք լսեցինք նրա կատարչալ Վախճանի մասին: Վերջապես Զուրինը տեղեկություն ստացավ, վոր ինքնակոչը բռնված ե, դրա հետ միասին և հրաման՝ վոր կանգ առնենք: Պատերազմն ավարտվեց: Վերջապես յես կարող եյի ճանապարհվել իմ ծնողների մոտ: Այն միտքը, վոր նրանց կգրկեմ, կտեսնեմ Մարիա Իվանովնային, վորից յես վոչ մի լուր չունեյի—վողեւորում եր ինձ ցնծութեամբ: Զուրինը ծիծաղում եր և ուսերը թոթափում: «Չէ, քո բանը պրծած ե: Կամուսանաս—իդու՛ր տեղը կկորչես»:

Բայց և այնպես, տարորինակ մի ղզացում թունավորվում եր իմ ուրախությունը, ակամա միտք ելի անում այնքան անմեղ զոհերի արցունքով թաթախված չարագործի, նրան սպա-

1 Ի. Ի. Միխեևսոն—(1740—1807)—գեներալ, վորը վճռական պարտություն հասցրեց Պուգաչովին:

սող մահապատժի մասին և անհանգստանում էյի. Յեմելյա, Յեմելյա,—մտածում էյի յես սրտնեղված. — Ինչո՞ւ դու օվինի չհանդիպեցիր, կարտեչի տակ չընկար: Դրանից լավ ի՞նչ կարող եր լինեւ քեզ համար: Խո՞նչ կհրամայեք անել՝ նրա մասին ունեցած մտածմունքն իմ մեջ անբաժան եր փրկութեան՝ վոր նա տվեց ինձ իր կյանքի ամենասոսկալի բոպեներից մեկում և իմ հարսնացուն գաղբիլի Շվարերինի ձեռքից ազատելու մտքի հետ:

Զուրինն ինձ արձակուրդ տվեց: Մի քանի որից յես վերստին պետք ե գտնվեյի իմ ընտանիքում, նորից տեսնեյի Մարիա Իվանովնային... Հանկարծ անսպասելի մի փոթորիկ ինձ տապալեց:

Մեկնումի որը, հենց աչն բոպեյին, յերբ յես պատրաստվում էյի ճանապարհ ընկնելու, Զուրինը խրճիթ մտավ՝ ձեռքին մի թուղթ բռնած, արտակարգ մտահոգ դեմքով: Ասես մի բան սիրտս խաչթեց: Յես վախեցա, ինքս եւ չիմանալով թե ինչից: Նա դուրս արեց իմ սպասյակ դինվորին և հայտնեց, վոր հետո գործ ունիւ «Խո՞նչ կա»,—հարցրի յես անհանգստութեամբ:—«Մի փոքրիկ անախորժութիւն,—պատասխանեց նա թուղթը ինձ տալով:—կարգա թե հիմա յես ինչ ստացա»: Յես սկսեցի կարգալ թուղթը, վոր մի գաղտնի հրաման եր, ուղղված բոլոր առանձին զորապետերին՝ ձերբակալել ինձ, ուր եւ վոր նրանց ձեռքն ընկնեմ, և պահակների հսկողութեամբ անհապաղ ուղարկել Լազան—քննիչ հանձնաժողովին, վոր հիմնված եր Պուզաչովի գործով:

Դիչ մնաց, վոր թուղթը ձեռքիցս ընկնելու «Ճար չկա,—ասաց Զուրինը:—Իմ պարտքն ե հնազանդել հրամանին: Հաւանական ե, վոր Պուզաչովի հետ ունեցած քո բարեկամական հարաբերութիւնների լուրը մի վորեւե կերպ հասել ե կառավարութեան: Հոսով եմ, վոր գործը վոչ մի հետեանք չի ունենա և վոր դու կարդարանաս հանձնաժողովի առաջ: Մի ընկճվի և ուղեւորվիր»: Խիղճս հանգիստ եր, դատաստանից յես չեյի վախենում, բայց քաղցր տեսակցութեան բոպեն թերեւ նորից մի քանի ամսով հետաձգելու միտքը սարսափեցնում եր ինձ: Մայլակը պատրաստ եր: Զուրինը մտերմաբար ինձ հրաժեշտ տվեց: Ինձ նստեցրին սայլակը: Հետո նստեցրին չեբկու սուսերաճերկ հուսարներ և յես ուղևորվեցի մեծ ճանապարհով:

Դ Ա Տ Ը

Աշխարհի լուր, ասելիք—
Ծովի բաղմաղան ակիք:

Առած

Յես հաւատացած եյի, վոր ամեն ինչի պատճառն իմ ինքնակամ բացակայությունն եր Որենբուրգից: Յես հեշտությամբ կարող եյի արգարանալ ասպատականությունը վոչ միայն յերբեք չեր արգելված, այլ մինչև իսկ ամեն կերպ խրախուսվում եր: Յես կարող եյի մեղադրվել ավելորդ տաքարչունության և վոչ թե անհնաղանդության մեջ: Սակայն բաղմաթիվ վկաներ կարող եյին ապացուցել Պուգաչովի հետ ունեցած իմ բարեկամական հարաբերությունները, վորոնք համենայն դեպս պետք ե թվային խիստ կասկածելի: Ամբողջ ճանապարհին յես մտածում եյի ինձ սպասող հաբցաքննությունների մասին, կշռում եյի իմ պատասխանները և վճռեցի դատարանի առաջ հայտնել զուտ ճշմարտությունը, արդարացման այս յեղանակը կարծելով վորպես ամենապարզը, միաժամանակ և ամենահուսալին:

Հասա Ղազան. քաղաքն ամայի եր և հրաճարակ: Փողոցներում, տների տեղ ածուխի շեղջեր եյին մնացել և մրոտած պատերը ցցված եյին առանց կտուրի ու պատուհանների: Այգպես եր Պուգաչովի թողած հետքը: Ինձ տարան բերդը, վոր անվթար մնացել եր այրված քաղաքի մեջտեղում: Հուսարներն ինձ հանձնեցին պահակապալին: Նա հրամայեց, վոր դարբնին կանչեն: Վոտքերիս շղթա հաղցրին և պինդ ամբարցրին: Հետո ինձ բանտ տարան և մենակ թողին նեղլիկ ու մուխ սենյակում, վորի պատերը բոլորովին մերկ եյին և մի փոքրիկ պատուհան ունեւր, խափանված յերկաթե վանդակով:

Այսպիսի սկիզբը վռչինչ լավ բան չեր գուշակում ինձ համար: Սակայն յես չեյի կորցնում վոչ արիությունս, վոչ ել հուշս: Յես դիմեցի բոլոր վշտացողների մխիթարության և առաջին տնգամ ճաշակելով հստակ, սակայն խոցողոված սրտից զեղված աղոթքի քաղցրութունը, խաղաղ ննջեցի, չմտածելով այն մասին, թե ինչ ե սպասում ինձ:

Մյուս ուր բանտալին պահապանն արթնացրեց ինձ, հայտնելով, վոր հանձնաժողովն ինձ պահանջում ե: Յերկու զինվորներ բակի միջով ինձ տարան բերդապետի տունը, նախասենյակում իրենք կանգ առան և ինձ մենակ ներս թողին ներքին սենյակները:

Յես մտա բավական ընդարձակ մի դահլիճ: Թղթերով ծածկված սեղանի շուրջը նստած ելին չերկու մարդ՝ հասակավոր գնեհալը, տեսքով խիստ ու սառն, և յերիտասարդ գլարդիական կապիտանը՝ քսանութ տարեկան, շատ հաճելի արտաքինով, շարժումների մեջ ճարպիկ ու ազատ: Պատուհանի մոտ, հատուկ մի սեղանի առջև նստած եր քարտուղարը գրիչն ականջի ցտեղը, թղթի վրա թեքված, պատրաստ՝ իմ ցուցմունքները գրելու: Հարցաքննությունն սկսվեց: Հարցրին անունս և կոչումս: Գեներալը տեղեկացավ, թե Անդրեյ Պետրովիչ Գրինցովի վորդին չեմ արգչոք: Յեով իմ պատասխանին առարկեց խստությամբ. «Ախոս, վոր այդպիսի պատվավոր մարդն այս տեսակ անարժան վորդի ունի»: Յես հանգիստ պատասխանեցի, թե ինչպիսին ել վոր լինի ինձ վրա ծանրացած մեղադրանքը, յես հուշս ունեմ այդ ամենը ցրել, առանց կեղծելու բացատրելով ճշմարտությունը: Իմ ինքնավստահությունը նրան դուր չեկավ: Սուրբ լեզու ունես, մեր տղա,—ասաց նա դեմքը խոժոռելով,—բայց մենք քեզ պեսներին ենք տեսել»:

Այն ժամանակ յերիտասարդը հարցրեց ինձ, թե ինչ առիթով և ի՞նչ ժամանակ եմ յես ծառայության մտել Պուզաշովի մոտ և ի՞նչ հանձնարարություններով ե նա ոգտագործել ինձ:

Յես վրդովմունքով պատասխանեցի, թե յես վորպես սպա և ազնվական, Պուզաշովի մոտ վոչ մի ծառայության մտնել չեյի կարող և վոչ մի հանձնարարություն նրանից ընդունել չեյի կարող:

«Հապա ալդ ի՞նչպես ե,—առարկեց ինձ հարցաքննողը,— վոր մենակ ազնվականն ու սպան ե խնայված ինքնակոչի կողմից, մինչդեռ նրա բոլոր ընկերները չարաչար մահացված են»:

Ինչպէս եւ, վոր այդ սպան ու ազնւականը մտերմարար խնճուկք եւ անուճ խռովարարներէ հետ, գլխավոր չարագործից նվերներ եւ ընդունում՝ մուշտակ, ձի եւ կես մանիթ վորդ: Ինչից եւ առաջացել այդ տեսակ տարրոխնակ բարեկամությունը եւ ինչի՞ վրայ եւ այն հիմնված: յետեւ վորչ դավաճանության, կամ առնվազն՝ զազրելի եւ հանցավոր փոքրոգության վրա»:

Յես խորապէս վերավորված եյի գլխադիական սպայի խոսքերից եւ յեռանդով սկսեցի ինձ արդարացնել: Յես պատմեցի, թե ինչպէս սկսվեց իմ ծանոթությունը Պուգաչովի հետ տափաստանում, բքի ժամանակ, ինչպէս Բելոգորսկի բերդի առման ժամանակ նա ինձ ճանաչեց եւ խնայեց: Ասացի, վոր մուշտակը եւ ձին, ձիշտ եւ, չեմ ամաչել ընդունել ինքնակոչից, բայց թե՛ մինչև վերջին հնարավորություն պաշտպանել եմ Բելոգորսկի բերդը չարագործից: Վերջապէս յես մատնացուցց արի նաեւ իմ գեներալին, վորը կարող եր վկայել իմ ջանքն ու ձիգը Որենբուրգի աղետալի պաշարման միջոցին:

Խրոխտ ծերունին սեղանի վրայից վերցրեց բացած մի նամակ եւ սկսեց բարձր ձայնով կարդալ այն.

«Ձերդ գերագնացության հարցմունքին՝ պրապորշչիկ Գրինյովի վերաբերյալ, վորք իբրեւ թե խառն եւ ներկա խռովության եւ հարաբերության մեջ եւ մտել չարագործի հետ, վորպիսի քայլը հակառակ եւ ծառայության եւ չերդման պարտավորության,— պատիվ ունեմ հայտնելու, վոր հիշյալ պրապորշչիկ Գրինյովը Որենբուրգում ծառայության մեջ գտնվել եւ անցյալ 1773 թվի հոկտեմբերի սկզբից մինչև սույն տարվա փետրվարի 24-ը, յերրեւա քաղաքից բացակայեց եւ այն ժամանակվանից այլեւ չի ներկայացել իմ զորախումբը: Մինչդեռ, մեր կողմն անցած զորականներէ լսել ենք, վոր նա յեղել եւ Պուգաչովի մոտ՝ անվանում եւ նրա հետ միասին գնացել եւ Բելոգորսկի բերդը, վոր տեղ նա առաջ յեղել եւ ծառայության մեջ: Ինչ վերաբերում եւ նրա վարք ու բարքին, ապա յես կարող եմ...» Այդտեղ նա իր ընթերցումն ընդհատեց եւ խտուրթամբ ասաց ինձ. «Հիմա ի՞նչ կ'սես քո արդարացման համար»:

Յես ալն եւ, ուղում ելի շարունակել, ինչպէս սկսել եյի եւ բացատրել իմ կապը Մարիա Իվանովնայի հետ նույնքան անկեղծ, ինչպէս եւ ֆնացած բոլորը, սակայն հանկարծ զգացի մի անհաղթելի նողկանք: Մի միտք անցավ իմ գլխով, վոր յետեւ յես նրա անունը տամ, ապա հանձնաժողովը նրան եւ հարցա-

քըննության կկանչի. և այն միտքը, թե նրա անունը կհյուսեն
չարագործների զազրելի զրպարտություններին և նրան յերես
առ յերես կհանեմ սրանց դեմ—այդ սոսկալի միտքն այնպես
հարվածեց ինձ, վոր լեզուս բռնվեց և յես շփոթվեցի:

Դատաւորներս, վորոնք, թվում եր թե սկսել եյին վորոշ
քարյացակամությամբ լսել իմ պատասխանները, վերստին տրա-
մազրկեցին իմ դեմ՝ տեսնելով իմ շփոթմունքը: Գլարդիական
սպան պահանջեց, վոր ինձ յերես առ յերես կանգնեցնեն գլխա-
վոր տեղեկատույի հետ: Գնեներալը հրամայեց կանչել յե բեկ վա
չաբագործին: Յես արագ շրջվեցի դեպի դռները, սպասելով
ինձ մեղադրողի յերեւալուն: Մի քանի րոպեյից շղթաներն աղ-
մըկեցին, դռները բացվեցին և մտավ—Շվարրինը: Յես զարմացա,
տեսնելով, թե վորքան փոխվել ե: Նա սաստիկ նիհար եր և գու-
նատ: Նրա մաղերը, վոր դեռ վերջերս կուպրի նման սև եյին,
բոլորովին սպիտակել եյին. յերկար մորուքը խճճված եր: Նա
կրկնեց իր մեղադրանքը թույլ, սակայն համարձակ ձայնով:
Նրա ասելով չես՝ վորպես լրտես, Պուգաչովի կողմից ուղարկ-
ված եմ յեղել Որենբուրգ. ամեն ոք հրացանածգութան եմ
դուրս յեկել, վորպեսզի զրավոր տեղեկություններ տամ այն
բոլորի մասին, ինչ կատարվում եր քաղաքում. վոր, վերջապես,
ալեհատանի կերպով հանձնվել եմ ինքնակոչին, նրա հետ միա-
սին բերդից բերդ եմ անցել, աշխատելով ամեն կերպ կործանել
իմ դավաճան-ընկերներին, վորպեսզի զրավեմ նրանց տեղերը
և ուտուեմ ինքնակոչի բախշած պարգևներէ:—Յես լուռ լսեցի
նրան և գոհ եյի մի բանով. զազրելի չարագործը չարտասանեց
Մարիա Իվանովնայի անունը, արդյոք անցն պատճառով, վոր
նրա ինքնասիրությունը խոցվում եր՝ միտք անելով այն աղ-
ջրկա մասին, վորը իրեն արհամարհանքով մերժեց, թե—այն
պատճառով, վոր նրա սրտում մի կայծ եր թագնված նույն այն
զգացմունքից, վոր և ինձ հարկադրեց լուրու,—ինչպես ել վոր
լինեք, հանձնաժողովի ներկայությամբ չարտասանվեց Բելո-
գորսկի բերդապետի դատեր անունը: Յես ել ավելի հաստատ
մնացի իմ գիտավորության մեջ և յերբ դատավորները հարցրին,
թե ինչով կարող եմ հերքել Շվարրինի ցուցմունքները, յես
պատասխանեցի, վոր պնդում եմ իմ առաջին բացատրությունը
և ուրիշ վոչինչ չեմ կարող ասել իմ արդարացման համար:
Գնեներալը հրամայեց, վոր մեզ տանեն: Մենք միասին դուրս
յեկանք: Յես հանգիստ նայեցի Շվարրինին, սակայն վոչ մի

խոսք Հասացի նրան: Նա Հարախինդ քմծիծաղ տվեց և իր շղթաները փոքր ինչ բարձրացնելով առաջ ընկավ ու քալելուն արագացրեց: Ինձ նորից բանտ տարան և այդ ժամանակից այլևս հարցաքննության Հսկահանջեցին:

Յես ներկա չեմ յեղեւ այն ամենին, վորոնց մասին մնում և ինձ տեղեկացնել ընթերցողին. սակայն այնքան հաճախ եմ դրանց մասին պատմություններ լսել, վոր ամենավորքը մանրամասնություններն անգամ մեխվել են իմ հիշողության մեջ և ինձ թվում է, թե յես անտեսանելի կերպով տեղնուտեղը ներկա յեմ յեղել:

Մարիա Իվանովնային իմ ծնողներն ընդունում են այն անկեղծ սիրալիրությամբ, վորով այնպես հայտնի է յին հին դարի մարդիկ: Նրանք ասածո շնորհ են համարել, վոր առիթ են ունեցել պատասպարելու և փախիալելու խեղճ վորքուհուն: Շուտով նրանք սրտանց մտերմանում են նրան, վորովհետև չեք կարելի նրան ճանաչել ու Հսիրել: Հորս այլևս դատարկ քմահաճություն չեք թվում իմ սերը, իսկ մայրիկիս ուղածն էլ հենց աչն եր վոր իր Պետրուշան ամուսնանա կապիտանի գողտրիկ աղջկա հետ:

Իմ ձերբակալման լուրը շմեցնում է մեր ամբողջ ընտանիքին: Մարիա Իվանովնան իմ ծնողներին այնպիսի պարզությամբ և պատմում Պուգաչովի հետ ունեցած իմ ծանոթության մասին, վոր դա վոչ միայն նրանց չի անհանգստացնում, այլև հարկադրում է հաճախ անկեղծ սրտով ծիծաղել: Հայրս չի ուղևորում հավատալ, վոր յես կարող եմ խառն լինել զաղբելի բռնողում հավատալ, վոր յես կարող եմ խառն լինել զաղբելի բռնողում: Նա խիստ հարցաքննության և յենթարկում Սովինչացումը: Նա խիստ հարցաքննության և յենթարկում Սովինչացումը: Դաստիարակս չի թագցնում, վոր բարինը քանիցս հյուր և յեղել Յեմեկ'կա Պուգաչովին և վոր Հարագործը վորպես թե նրան շնորհներ և արել. բայց նա յերգվում է, վոր վոչ մի դավաճանության մասին ինքը չի յել լսել: Ծերերը հանգստանում են և անհամբեր սպասում բարեհաջող լուրերի: Մարիա Իվանովնան սաստիկ տաղնապ և ապրում, սակայն՝ լուռ է, քանի վոր վերին աստիճանի ոժտված եր համեստությամբ ու զգուշությամբ:

Անցնում է մի քանի շաբաթ... Հանկարծ հայրս մի նամակ և ստանում Պետերբուրգից, մեր աղբակն իշխան Բ.-ից: Իշխանն իմ մասին է գրում նրան: Սովորական նախաբանից հետո նա հայտնում է հորս, վոր խռովարարների դիտավորություն-

ների մեջ իմ ունեցած մասնակցութեան մասին յեղած կասկածները դժբախտաբար չափից դուրս հիմնավոր են յեղել, վոր ուրիշներին որինակ հանդիսացող մահապատիժ պետք և իշներ իմ գլխին, սակայն թաղուհին հարգելով հորս արժանիքներն ու տարիքը, վճռել և ներումն շնորհել հանցավոր վորդուն և նրան խայտառակ մահապատժից ազատելով, հրամայել և միայն աքսորել Սիբիրի մի հեռավոր վայր՝ ցմահ բնակութեան:

Այս անսպասելի հարվածը քիչ և մնում հորս սպանի: Նա կորցնում և իր սովորական արիութեանը և նրա վիշտը (սովորաբար՝ համբ) թափվում և դառն տրտունջներով: «Ի՞նչպես,— կրկնում և նա դայրացած:— Վորդիս մասնակցել և Պուգաչովի դիտավորութեաններին: Աստված ճշմարիտ, այս ի՞նչ խայտառակութեան հասա չես: Թագուհին նրան ազատում և մահապատժից: Մի՞թե դա ավելի հեշտ և ինձ համար: Սարսափելին մահապատժի չե՞ իմ մեծ պապի հայրը կառափնատեղումս¹ և մեռել, պաշտպանելով այն, ինչ իր սրտի սրբութեան սրբոցն և համարել: հայրս տուժել և Վոլինսկու և Խրուշչովի² հետ միասին: Բաջ պզնվականը դժի իր յերդմեմը, միանա սվազակների, մարդասպանների, փախստական ճորտերի հետ... Ամսթ և խայտառակութեան մեր տոհմին...» Ահաբեկված նրա հուսահատութեանից, մայրս սիրտ չի անում բա մոտ լաց լինել և աշխատում և վերադարձնել նրա նախկին յեռանդը, ասելով, վոր լուրը սխալ կլինի, մարդկանց կարծիքը՝ խախտու: Հորս մխիթարել չի լինում:

Ամենից շատ տանջվում և Մարիա Իվանովնան: Հավատացած լինելով, վոր չես՝ չերբ ասես կարող եյի արդարանալ, յեթե միայն կամենայի, նա գլխի յե ընկնում, թե ինչումն և ճշմարտութեանը և իրեն համարում և իմ դժբախտութեան պատ-

1 Կ ա ա փ ն ա տ ե դ—«Топкое место» — կտր և հարթ մի քարձրութեան Մոսկովայի կարմիր հրապարակի վրա, վոր, ըստ ավանդութեան, շինված և 16-րդ դարում: Այստեղից եյին հայտարարվում թագավորական ամենակարևոր հրամանները, հաճախ և մահապատիժները: Ղրանից վոչ հեռու կառարվում եյին նշանավոր քաղաքական հանցավորների մահապատիժները:

2 Վ ո լ ի ն ս կ ի—առաջ ազնվատոհմ իշխան 18-րդ դարի կեսերին, վոր մահապատժի յենթարկից թագուհի Աննա Իոանովնայի դեմ դուրս գալու և նրա տեղ Պետրոս I-ի աղջկան՝ Յելիզավետային դառն ստացնելու փոքրձի հանրաժողով:

Խ Ր Ո Ւ Ղ Ն Ո Վ — Վոլինսկու համախոհներից մեկը:

ճառը: Նա ամենից թազցնում ե իր արցունքները և տանջանքները, մինչդեռ անդադար մտածում ե միջոցների մասին, թե ինչ կերպ ինձ փրկի:

Մի անգամ հայրս բազկաթոռի վրա նստած թերթում ե Պալատական որացույցը, բայց նրա մտքերը հեռուն ելին և ընթերցումը նրա վրա չի թողնում իր սովորական ազդեցությունը: Նա սկսում ե սուլել մի հին մարշ: Մայրս լուռ գործում ե բրդե ֆուֆայկան և արտասուքները մեկ-մեկ կաթում են նրա ձեռագործի վրա: Հանկարծ Մարիա Իվանովնան, վոր այդտեղ նստած աշխատելիս ե լինում, հայտնում ե, վոր անհրաժեշտությունը նրան հարկադրում ե գնալ Պետերբուրգ և վոր նա խնդրում ե իրեն մի միջոց տալ մեկնելու: Մայրս սաստիկ տրտմում ե: «Բո ինչի՞ն ե պետք Պետերբուրգը,—ասում ե նա:—Միթե Մարիա Իվանովնա, դու ել ես ուզում մեզ թողնել»: Մարիա Իվանովնան պատասխանում ե, վոր ապագա նրա ամբողջ բախտը կախված ե այդ ճանապարհորդությունից, վոր նա գնում ե փնտռելու հզոր մարդկանց հովանավորությունը, վորպես դուստրը մի մարդու, վոր տուժել ե իր հավատարմություն համար:

Հայրս գլուխը կախում ե իր վորդու կարծեցյալ հանցանքը հիշեցնող ամեն մի խոսք ծանր եր նրա համար և թվում ե սուր կշտամբանք: «Գնա, սիրելիս,—ասում ե նա հառաչելով:—Մենք չենք ուզում արգելք լինել քո բախտին: Աստված տա, վոր քո փեսացուն լինի մի լավ մարդ և վոչթե անարգված դավաճանը»: Նա վեր ե կենում և դուրս գալիս սենյակից:

Մորս հետ մենակ մնալով, Մարիա Իվանովնան մասամբ պարզում ե նրան իր դիտավորությունները: Մայրս արտասուքն աչքերին գրկում ե նրան և աստծուն աղոթում, վոր մտադրված գործը բարեհաջող վերջանա: Մարիա Իվանովնայի համար ճանապարհի պատրաստություն են տեսնում և մի քանի ուրից նա մեկնում ե հավատարիմ Պալաշայի և հավատարիմ Սավելիչի հետ, վորը բռնություն ինձնից բաժանված լինելով, միխթարվելիս ե յեղել գոնե այն մտքով, վոր ծառայում ե իմ հարսնացուին:

Մարիա Իվանովնան բարեհաջող հասնում ե Սոֆիա¹ և

¹ Սոֆիա—նախկին Царское Село-ի (Ցարական Գյուղի) արվարձաններից մեկը:

տեղեկանալով, վոր այդ ժամանակ արքունիքը Յարսկոյե Սելո-յումն ե, վճռում ե իջեանել այդտեղ: Նրան մի անկյուն են հատկացնում միջնորմի մյուս կողմը: Վերակացուի կիներ իսկույն ե եթ խոսքի յե բռնվում նրա հետ, հաղորդում, վոր ինքը պալատական հնոցպանի բարեկամուհին ե ե հալտնում ե նրան պալատական կյանքի բոլոր գաղտնիքները: Նա պատմում ե, թե թագուհին սովորաբար վճը ժամին ե արթնանում, յերբ ե սուրճ խմում, զբոսնում, ինչպիսի ազնվատոհմ իշխաններ են յեղել նրա մոտ այդ ժամանակ, ինչ ե հաճել նա խոսել յերեկ ճաշին, համ ե ընդունել յերեկոյան,—մի խոսքով, Աննա Վլասենայի խոսակցությունն արժեք պատմական հիշատակարանների մի քանի եջը ե թանգարտեք կարող եր լինել հետագա սերնդի համար: Մարիա Իվանովնան ուշադրությամբ լսում ե նրան: Գնում են այգի: Աննա Վլասենան պատմում ե ամեն մի ծառուղու ե ամեն մի կամըջակի պատմությունը ե մի լավ զբոսնելուց հետո նրանք վերադառնում են կայան, անչափ գոհ միմյանցից:

Մյուս օրը վաղ առավոտյան Մարիա Իվանովնան արթնանում ե, հագնվում ե կամացուկ դուրս գալիս այգի: Գեղեցիկ առավոտ եր, արեւ լուսավորում եր լորենիների գազաթները, վոր արդեն դեղնել եյին աշնան զով շնչից: Լայն փոված լիճը անշարժ փայլում եր: Արթնացած կարպիները հանդիսավոր դուրս ելին լողում ամբ ստվերոդ թիկերի տակից: Մարիա Իվանովնան քայլում ե գեղատեսիլ մարգագետնի մոտով, ուր հենց մոտերս մի հուշարձան եր դրված, ի պատիվ գրաֆ Պյոտր Ալեքսանդրովիչ Ռումյանցիվի:¹ Վերջերս տարած հաղթությունների: Հանկարծ, անգլիական ցեղի մի փոքրիկ շնիկ հաջում ե ե վազում նրա դեմ: Մարիա Իվանովնան վախենում ե ե կանգ առնում: Հենց այդ բոպեյին լսվում ե կանացի հաճելի մի ձայն. «Մի վախե՛ք, նա չի կծի»: Յեւ Մարիա Իվանովնան տեսնում ե մի տիկնոջ, վոր նստած եր նստարանի վրա՝ հուշարձանի գլխաց: Մարիա Իվանովնան տեղավորվում ե նստարանի մյուս

1 Պ. Ա. Ռումյանցիվ—(1725—1796)—աչքի ընկնող ուսն ազնվատոհմիկ, վարչական ե ուղղական գործիչ, վորը Յեկատերինա II-ի ժամանակ ջատագով եր ճորտատեր ազնվականների դատային քաղաքականության: 1769—1774 թ. թ. տեղի ունս-տած կական պատերազմին Ռ. նշանակվում ե բանակի գերագույն հրամանատար. նրա ղեկավարությամբ ուսն զորքը տարավ մի շարք հաղթություններ ե կնքեց Քյուչուկ-Կայնարջի հաշտությունը, վորով Սեւ ծովի ափերը միացան Ռուսաստանին:

ծայրին: Տիկինը շեշտակի նայում է նրան, իսկ Մարիա Իվանովնան իր կողմից ձգելով մի քանի շեղակի հայացքներ, կարողանում է նրան դիտել վոտքից գլուխ: Տիկինն առավոտյան ձերմակ շորերով եր, գլշերային գլխանոց դրած, հագին՝ քաթիկա: Կլիններ մոտ քառասուն տարեկան: Նրա լիքը և վարդագույն դեմքը վեհօթյուն և խաղաղություն եր արտահայտում, իսկ կապույտ աչքերն ու թեթև ժպիտը անասելի հրապույժ ունեյին: Տիկինը առաջինն է խոսում լուսթյունը:

«Դուք անշուշտ այստեղացի չեք»,—ասում է նա:

— Ճիշտ այդպես. յես հենց յերեկ եմ յեկել դավառից:

«Դուք ձեր ծնողների հետ եք յեկել»:

— Ամենևին վոչ: Յես մենակ եմ յեկել:

«Մենակ Բայց դուք դեռ այնքան յերիտասարդ եք»:

— Յես վոչ հայր ունեմ, վոչ՝ մայր:

«Դուք, ի հարկե, վորեւ գործով եք այստեղ»:

— Ճիշտ այդպես: Յես յեկել եմ թագուհուն խնդիրք տալու:

«Դուք վորք եք. հավանորեն դանդատվում եք անարդարությունից և վիրավորանքից»:

— Ամենևին վոչ: Յես յեկել եմ վողորմածություն խնդրելու, և վոչ թե արդարադատություն:

«Թույլ տվեք հարցնելու՝ ո՞վ եք դուք»:

— Յես կապիտան Միրոնովի աղջիկն եմ:

«Կապիտան Միրոնովի. նրա, վորը որենքուրդյան բերդերից մեկի պետն եր»:

— Ճիշտ այդպես:

Թվում եր, թե տիկինը զգացված է: «Ներեցեք ինձ,—ասում է նա ավելի փաղաքշական ձայնով,—եթե յես խոսնվում եմ ձեր գործերին. բայց յես լինում եմ արքունիքում. պարդեցեք ինձ, թե ինչու՞նի է ձեր խնդիրը և մի գուցե ինձ կհաջողվի ոգնել ձեզ»:

Մարիա Իվանովնան վեր է կենում տեղից և հարգանքով շնորհակալություն հայտնում: Անհայտ տիկնոջ ամեն ինչը սաստիկ գրավում է աղջկա սիրտը և հավատ ներշնչում նրան: Մարիա Իվանովնան գրպանից հանում է ծալած թուղթը՝ և տալիս իր անծանոթ պաշտպանին, վոր սկսում է ինքն իրեն կարդալ:

Սկզբում նա կարդում է ուշադիր և բարկացական տեսքով,

բայց հանկարծ նրա դեմքը ալլալովում ե,—և Մարիա Իվանով-
նան, վորը աչքերով հետևում էր նրա բոլոր շարժումներին, վա-
խենում ե այդ դեմքի խիստ արտահայտությունից՝ մի րոպե
առաջ աչքան հաճելի ու խաղաղ:

«Դուք խնդրում եք Գրինյովի համար,—ասում ե տիկինը
սառը դեմքով:—Թագուհին չի կարող նրան ներել: Նա միացել
էր ինքնակոչին վոչ թե անգիտությամբ ե գյուրահավատու-
թյամբ, այլ վորպես անբարոյական ու ֆիսասակար մի անպի-
տան»:

— Ա՛խ, սուտ ե,—բացականչում ե Մարիա Իվանովնան:

«Ի՞նչպես թե սուտ ե»,—առարկում ե տիկինը զայրույթից
կրակ կտրած:

— Սուտ ե, աստված վկա, սուտ ե: Յես ամեն ինչ գիտեմ,
յես ամեն ինչ կպատմեմ ձեզ. միմիայն իմ պատճառով ե նա
յենթարկվել այն բոլորին, ինչ յեկավ նրա գլխին: Յեվ յեթե
նա չարդարացավ դատարանի առաջ, ապա միայն նրա համար,
վոր չի ուղեցել ինձ ես խառնել գործին:—Այդ ասելով նա հուզ-
ված պատմում ե աչն բոլորը, ինչ արդեն հայտնի յե իմ ընթեր-
ցողին:

Տիկինը նրան լսում ե ուշադրությամբ: «Դուք ո՞ւր եք
իջևանել,—հարցնում ե նա հետո ե լսելով, վոր՝ Աննա Վլասենայի
մոտ, ասում ե ժպիտով:—Ա՛մ, գիտեմ: Մնաք բարով: Վոչ վոքի
չասեք մեր հանդիպման մասին: Յես հույս ունեմ, վոր դուք
յերկար չեք սպասի ձեր նամակի պատասխանին»:

Այդ խոսքից հետո նա վեր ե կենում ե դուրս գալիս փակ
ծառուղին, իսկ Մարիա Իվանովնան՝ ուրախ հույսերով լի, վերա-
դառնում ե Աննա Վլասենայի մոտ:

Տանտիրուհին հանդիմանում ե նրան՝ վաղ աշնանային զրո-
սանքի համար, վոր, նրա ասելով, ֆիսասակար ե յերիտասարդ
աղջկա առողջությանը: Նա ներս ե բերում ինքնայեռը ե մի
զավաթ թեյի շուրջը հազիվ ինչ սկսում ե անվերջ պատմու-
թյուններ անել արքունիքի մասին, յերբ հանկարծ պալատական
մի կառք կանգ ե առնում տան մուտքի առաջ ե կամեք-լակեցը՝¹
ներս ե մտնում հայտարարելով, վոր թագուհին բարեհաճում ե
իր մոտ հրավիրել օրերդ Մերոնովային:

¹ Կամ եր-լ ա կ ե յ—պալատական սենյակի սպասավոր:

Աննա Վլասենան զարմանում է և իրար անցնում: «Տեր իմ աստված,—կանչում է նա,—Թագուհին ձեզ արքունիք և պահանջում: Այդ ի՞նչպես նա իմացավ ձեր մասին: Հապա, դուք, սիրելիս, ի՞նչպես պիտի ներկայանաք Թագուհուն: Դուք, յես կարծում եմ, վոր չեք ել իմանում պալատում շարժվելու կերպը... Ի՞նչ եք ասում. հետներդ չգամ, հը՞: Ինչ ել վոր լինի, գոնե մի վորեկե բանով յես կարող եմ զգուշացնել ձեզ: Յեվ դուք ի՞նչպես պիտի գնաք ճանապարհի շորերով: Մարդ չուղարկեմ արդյոք տատմոր մոտ, վոր բերի նրա գեղին ոտքերնը՝ 1»։—Կամերլակեյը հայտարարում է, թե Թագուհուն հաճելի յե, վոր Մարիա Իվանովնան մենակ գնա և՛ այն շորերով, ինչ վոր հագին է: Ճար չկար. Մարիա Իվանովնան նստում է կառքը և գնում պալատ, հետը տանելով Աննա Վլասենայի խորհուրդներն ու որհնում թյուկները:

Մարիա Իվանովնան նախազգում է, վոր մոտ է մեր բախտի լուծումը. սաստիկ բաբախում է նրա սիրտը և նվազում: Մի քանի բոպեյից կառքը կանգ և առնում պալատի առջև: Մարիա Իվանովնան սրտի տրոփյունով բարձրանում է սանդուխքը: Դռները լայն բացվում են նրա առջև: Նա անցնում է մի շարք դատարկ և հոյակապ սենյակների միջով. կամերլակեյը ցույց է տալիս ճանապարհը: Վերջապես, մոտենալով վաղ դռներին, նա հայտարարում է, վոր հիմա կգեկուցի նրա մասին, և նրան մենակ է թողնում:

Թագուհուն յերես առ յերես տեսնելու միտքն այնպես և սարսափեցնում նրան, վոր նա դժվարությամբ և կարողանում պահվել վրտի վրա: Մի բոպեյից դռները բացվում են, և նա մտնում է Թագուհու զգեցարանը:

Թագուհին զբաղված էր իրեն հարգարելով: Մի քանի պալատականներ շրջապատել էյին նրան և հարգանքով ճանապարհ են տալիս Մարիա Իվանովնային: Թագուհին սիրալիք նայում է նրան և—Մարիա Իվանովնան ճանաչում է այն տիկնոջը, վորի հետ այնպես անկեղծ նա խոսել էր մի քանի բոպե առաջ: Թագուհին իր մոտ և կանչում նրան և ժպտալով ասում. «Յես տւրախ եմ, վոր կարողացա ձեզ տված խոսքս պահել և կատարել ձեր խնդիրքը. ձեր գործն ավարտված է: Յես համոզված եմ,

1 Ռոբա, ոտքերոն դա (Ֆր.)—հին ձեռի կանացի վերնագգեստ:

վոր ձեք փեսացուն անմեղ ե: Ահա մի նամակ, վոր ինքներդ ներդուծյուն կրեք հանձնելու ձեր ապագա սկեսրայրին»:

Դողդոջուն ձեռքով Մարիա Իվանովնան ընդունում է նամակը և արասովելով ընկնում թագուհու վոտները, վորը նրան բարձրացնում է և համբուրում: Ապա թագուհին զրուցում է նրա հետ. «Գիտեմ, վոր դուք հարուստ չեք,—ասում է նա.—սակայն յես պարտական եմ կապիտան Միրոնովի աղջկան: Ապագայի համար մի անհանգստանաք: Ինձ վրա յեմ վերցնում կարգավորել ձեք վիճակը»:

Փայփայելով խեղճ վորբուհուն, թագուհին նրան արձակում է: Մարիա Իվանովնան վերադառնում է նույն պալատական կառքով: Աննա Վլասենան, վորը անհամբեր սպասում եր նրա վերադարձին, հարցեր է, վոր տեղում է նրա գլխին, վորոնց մի կերպ պատասխանում է Մարիա Իվանովնան: Թեպետ և Աննա Վլասենան անբավական է մնում նրա մոռացկոտությունից, սակայն դա վերագրում է նրա գավառական ամոթխածությանը և մեծահոգաբար ներում: Նույն որն և եթ Մարիա Իվանովնան, չհետաքրքրվելով աչք ձգել Պետերբուրգի վրա, ճանապարհ է ընկնում հետ՝ դեպի գյուղ...

Այստեղ ընդհատվում են Պյոտր Անդրեևիչ Գրինյովի հուշերը: Ընտանեկան ավանդություններից հաջորի չե, վոր նա բանտից ազատվել է 1774 թվի վերջին, բարձրագույն հրամանով, վոր նա ներկա յե յեղել Պուգաչովի մահապատժին. վերջինս ճանաչել է նրան ամբոխի մեջ և գլխով արել, վորը մի բողոքից հետո՝ մեռած և արյունաթաթախ, ցույց ելին տվել ժողովրդին: Ապա շուտով Պյոտր Անդրեևիչն ամուսնանում է Մարիա Իվանովնայի հետ: Նրանց սերունդը չերջանիկ ապրում է Սիմբիրսկի նահանգում:—***-ից յերեսուն վերստի վրա գտնվում է մի գյուղ, վոր պատկանում է տասը կալվածատերերի: Աղայական տան Ֆրիդելներից¹ մեկում կարելի չե տեսնել Յեկատերինա II-ի ինքնածեղացի նամակը՝ շրջանակի մեջ, ապակու

¹ Ֆրիդել (դերմ.)—(բառացի՝ թե)—տան կլց կամ մեծ շենքի բակում առանձնակի կանգնած փոքրիկ տուն:

տակ: Նամակն ուղղված է Պյոտր Անդրեեկիչի հորը և բովանդակում է նրա վորդու արդարացումը և խոստանքներ՝ կապիտան Միրոնովի աղջկա խելքին ու սրտին: Պյոտր Անդրեեկիչ Գրինյովի ձեռագիրը մեզ հասցրեց նրա թոռներից մեկը, վորը լսել էր, թե մենք զբաղված ենք նրա պապի նկարագրած ժամանակի վերաբերյալ աշխատանքով: Մենք վճռեցինք, աղգակիցների թույլտվութամբ, այդ ձեռագիրը հրատարակել առանձին, յուրաքանչյուր գլխի համար վորոնելով վայելուչ եպիգրաֆ¹ և մեզ թույլ տալով փոփոխել վորոշ հատուկ անուշներ:

Հրատարակիչ

19 Հոկտ., 1836 թ.:

¹ Ե պ է գ ր ա ֆ (հուն.)—հատված, ասույթ, վոր զրվում է յերկի կամ նրա առանձին մասերի սկզբում, վորպեսզի ակնարկվի նրա բովանդակությունը, շեղովի հեղինակի հիմնական միտքը:—Իմաստագիր, նշանաբան:

ՀԱՎԵԼՎԱԾ

«Կապիտանի աղջիկը» վիպակի վերջնական խմբագրության ժամանակ այս մասն հանդած է յեղել հեղինակի կողմից: Նրա թղթերի մեջ այն պահ-վում է վորպես սոսկ սեպագրութուն և իր իսկ Պուշկինի ձեռքով խորագրված է—«Բաց բողած գլուխը»: Տասնյակ տարիներ զրոյի թղթերի մեջ մնալուց հետո այս հատվածը առաջին անգամ լույս է տեսնում «Русский архив» պարբերականի յերրորդ դրում, 1880 թվին: Նույն այդ տարում և նա ղետեղվում է Պ. Ա. Յեֆրեմովի խմբագրությամբ լույս տեսնող «Պուշկինի յերկերի ժողովածուի» 4-րդ հատորում:

Այն հարցին, թե ինքը հեղինակը ինչո՞ւ յե դուրս թողել այդ դուռը, պուշկինագետներն այլևայլ մեկնություններ են տվել: Նրանցից վոմանք (այդ թվում և վերևում հիշված Յեֆրեմովը) այս պարտաճառ բացատրել են անցյալ դարի 30-ական թվականների ցենզուրային խիստ պայմաններով և, ինչպես խմբագիր Յեֆրեմովն է արել, նպատակահարմար են գտել այդ հատվածը մտցնել յերկի XIII զլխի վերջին մասում, վորպես թե նույնը կաներ Պուշկինը, յեթե անկաշկանդ գշար իրեն: Ուրիշները սակայն բոլորովին այլ հիմնավորում են տալիս խնդրին: Պորանալով վիպակի մեջ տեղի ունեցող ղեպերի հաջորդականության, ինչպես և դործող անձանց բնութագրերի մեջ, նրանք յեղրակացնում են, վոր այդ դուռը հեղինակը բաց է թողել ավելի առաջ, քան վերջնականապես ավարտել է իր յերկը, ինչու և այն մեղ հասել է համեմատաբար անմշակ վիճակում: Վորպես աղացույց նրանք մատնանշում են մի շարք ակնբախ հակասություններ, վոր կան այդ հատվածում և թե ամբողջ դործի ու նրա այդ մասի համաձայնության մեջ:

Վորքան մեղ հաջողվեց ստուգել, սկսած այդ թվից (1880) հիշյալ գլուռը (մեծ մասամբ վորպես հավելված) տեղ է գտել համարյա բոլոր հրատարակությունների մեջ: Թե պուշկինագետների, թե հրատարակիչների ու բանասերների համար կասկածից դուրս է յեղել, վոր Պուշկինի ստեղծագործության յուրջ ուսումնասիրության տեսակետից այդ հատվածը ինքնին խոշորագույն հեաքըրություն է ներկայացնում վորպես մի աշխատանք, վոր անկախ ղնդհանուր ներդաշնակությունը խախտող վորոշ անհամաձայնություններից, անպայման բացառիկ գրական-ղեղարվեստական արժեքներ ունի: Այս իսկ նկատառումով և ղետեղում ենք XIII զլխից դուրս մնացած հատվածի թարգմանությունը, ղնեղով այն վիպակի վերջում իբրև հավելված,—սկզբունք, վոր ղնդունված է Պուշկինի յերկերի արդի լավագույն հրատարակությունների մեջ:

Անհրաժեշտ է նաև նկատել, վոր նույն այդ սկզբունքով փոփոխել ենք ձեռագրի մեջ հիշող դործող անձանց անունները—Քրինյովը այստեղ (ձեռագրում) հանդես է գալիս Բուլանին աղղանունով, իսկ Ձուրինը՝ Քրինյով, համաձայնեցնելով վիպակի վերջնական (պուշկինյան) խմբագրության հետ:

Ծ ա ն . թ ա ր գ մ .

Բ Ա Յ Թ Ո Ղ Ա Ծ Գ Լ Ո Ւ Խ Ը

Մենք մոտենում եյինք Վոլգայի ափերին. մեր գունդը մտավ
 ** գյուղը և կանգ առավ այնտեղ զիշերելու: Գյուղի ավազն
 ինձ հայտնեց վոր գետի այն կողմի բոլոր գյուղերը ապստամբ-
 վել են, ամեն տեղ շրջում են Պուգաչովի խմբերը: Այս տեղե-
 կությունն ինձ սաստիկ վշտացրեց: Մյուս որն առավոտյան
 մենք պետք է անցնեյինք գետը:

Անհամբերությունն ինձ պատեց և հանգիստ չեր տալիս:
 Հորս գյուղը գտնվում էր յերեսուն վերստի վրա՝ գետի աջ
 կողմը: Յես հարցրի՝ չի՞ կարելի արդյոք գտնել մեկին, վորն
 ինձ անցկացներ գետով: Գյուղացիներ բոլորն ել ձկնորսներ
 եյին. նավակներ շատ կային: Յես գնացի Զուրինի մոտ և հայտ-
 նեցի իմ գիտավորությունը:

— Զգուշ լաց, — ասաց նա ինձ: — Մենակ վտանգավոր է
 գնալ: Մպասիր առավոտվան: Առաջինը մենք կանցնենք գետը և
 քո ծնոդներին հյուր կտանենք համենայն դեպս 50 հուսար:

Յես կանգնեցի իմ ասածին: Նավակը պատրաստ էր: Նըս-
 տեցի յերկու թիավարների հետ: Նրանք նավակը ափից ջուրը
 մղեցին և սկսեցին թիավարել:

Յերկինքը պարզ էր: Լուսինը փայլում էր: Յեղանակը խա-
 դաղ էր: Հարթ ու հանդարտ հոսում էր Վոլգան: Նավակը սա-
 հուն ճոճումով արագ սուրաց մութ ալիքների վրայով: Յես
 խորասուզվեցի յերևակալության ցնորքների մեջ¹ (բնության
 անդորրութունը է քաղաքական սարսափները), սեր etc²: Ան-
 ցավ մոտ կես ժամ: Մենք հասանք գետի մեջտեղը... հանկարծ
 թիավարներն սկսեցին փսփսալ միմյանց հետ:

¹ Միջակետից հետո յեկող բառերը Գրինյովի «ցնորքների» բովանդակու-
 թյան համառոտ նշումներն են, վոր Պուշկինը զրել է իր համար, անշուշտ
 նպատակ ունենալով հետադարձ մշակել զրանք:

² etc — և այլն:

— Ի՞նչ կա, հարցրեցի յես զգաստանալով:

«Ձեռք իմանում, աստված գիտե»,—պատասխանեցին թիա-
վարները նայելով մի կողմ:

Աչքերս նույն այդ ուղղությամբ դարձրի և մթնշաղի
մեջ տեսա մի ինչ վոր բան, վոր լողում եր Վոլգայով ցած:
Անձանութ առարկան մոտենում եր: Յես հրամայեցի թիավար-
ներին կանգնել և սպասել դրան:

Լուսինն անցավ ամպերի յետևը: Լողացող տեսին ավելի
խավարեց: Նա արդեն մոտ եր ինձ և յես զեռ չեյի կարողանում
վորոշել այն:

— Տեսնես՝ ի՞նչ բան ե, — ասացին թիավարները: — Առա-
գաստ ասես՝ առագաստ չի, կայմ ասես՝ կայմ չի...

Հանկարծ ամպերի յետևից յերևաց լուսինը և լուսավորեց
մի սոսկալի պատկեր: Մեր դեմ-հանդիման լողում եր մի կա-
խաղան՝ լաստի վրա հաստատված. — միջնափայտից լերեք մար-
միններ եյին կախված: Հիվանդագիրն հետաքրքրութունն ինձ
պատեց: Յես ցանկացա նախև կախվածների դեմքերին:

Իմ հրամանով թիավարները կեռածոցով ճանկեցին լաստը՝
նավակս դիպավ լողացող կախաղանին: Յես դուրս ցատկեցի և
հայտնվեցի սարսափելի սյուների միջև: Լիալուսինը լուսավորեց
դժբախտների այլանդակված դեմքերը: Նրանցից մեկը մի ձեռ
չուվա՞լ եր, մյուսը — ուռա՞լ՝ գեղջուկ, ուժեղ ու հաղթանալով
մի յերիտասարդ՝ քսան տարեկան: Սակայն, լերբորդի վրա նա-
յելիս, յես սաստիկ զարմացա և չկարողացա պահել իմ աղիո-
ղորմ ճիչը. դա՛ Վան՝ կան եր, իմ խեղճ Վան՝ կան, վոր իր հի-
մարությունից միացել եր ուզաչովին: Նրանց գլխավերևը
խփած եր մի սև տախտակ, վորի վրա սպիտակ խոշոր տառե-
րով գրված եր. Գոդեր և Ըռենտարարներ: Թիավարները
նայում եին անտարբեր և ինձ սպասում, լաստը կեռածոցով պա-
հելով: Յես նորից նստեցի նավակը: Լաստը լողաց դետի հոսան-
քով ցած: Կախաղանը լերկար ժամանակ սևին եր տալիս խա-
վարի մեջ: Վերջապես նա անհետացավ — և իմ նավակը մոտե-
ցավ բարձր ու գահավեժ ափին...

1 Ձեռագրի մեջ այս բառի փոխարեն սկզբում գրված և յեղել «ЗАВОДС-
КНИ» բառը — անկասկած և, վոր հեղինակը կամեցել և շեշտել այն գերը, վոր
պուզաչովյան շարժման մեջ խաղացել են «գործարանական գյուղացիները»,
այսինքն՝ Ուրալի լեռնարդյունաբերության ճորտ-բանվորները:

Յնա առատածեռն վճարեցի թիաւարներին: Նրանցից մեկը ինձ տարաւ գետանցից վոչ հեռու գտնվող գյուղի ավազի մոտ: Յնա նրա հետ խրճիթ մտաւ Ավաղը, Լսելով, վոր չես ձիեր եմ ուղում, սկզբում ինձ բավական կոպիտ ընդունեց, սակայն իմ առաջնորդը կամացուկ նրան մի քանի խոսք ասաց, և նրա կոպտութիւնն իսկույն և եթ փոխվեց փութկոտ պատրաստակամութեան: Մի րոպեյում յեռաձի սայլակը պատրաստ եր: Յնա նստեցի և հրամայեցի ինձ տանել մեր գյուղը:

Յնա արշավում ելի մեծ ճանապարհով, քնած գյուղերի մոտով: Յնա միայն մի բանից ելի վախենում՝ վոր ճանապարհին չկանգնեցնեն: Յեթե Վոլգայի վրա իմ ունեցած հանդիպումը ապացուցում եր խռովարարների ներկայութիւնը, ապա դա նաև ապացույց եր կառավարութեան ուժեղ ընդդիմադրութեան: Համենայն դեպս զբաւանումս յես ունեյի Պուգաչովի ինձ տված անցաթուղթը և գնդապետ Զուրինի հրամանը: Սակայն վոչ վորք չհանդիպեց ինձ և առավոտյան յես նշմարեցի գետը և յեղենու պուրակը, վորի աջն կողմը մեր գյուղն եր: Կառապանը մտրակեց ձիերին և քառորդ ժամից յես մտա**:

Աղայական տունը գտնվում եր գյուղի մյուս ծայրին: Ձիերը սլանում ելին ամբողջ թափով: Հանկարծ՝ փողոցի կիսում— կառապանն սկսեց դապել նրանց:

«Ի՞նչ պատահեց»,—հարցրի յես անհամբերութեամբ:

— Ծանապարհը փակ ե, տեր իմ,—պատասխանեց կառապանը, դժվարութեամբ պահելով իր տաքացած ձիերին:

Իրոք՝ յես տեսա ուղեկապ գերանը և մի պահակ, փայտը ձեռքին: Գեղջուկը մոտեցաւ ինձ, գլխարկը հանեց՝ անցադիր հարցնելով:

«Սա ի՞նչ ե նշանակում,—հարցրի յես նրան,—ինչու յեն այստեղ ուղեկապ գցել: Ո՞ւմն ես հսկում»:

— Բռնտ ենք անում ե, տեր իմ,—պատասխանեց նա գլուխը քորելով:

«Հապա ռւր են ձեր տերերը»,—հարցրի յես նվաղած սրտով...

— Ասում ես ռւր են մեր տերերը,—կրկնեց գեղջուկը:—Մեր տերերը հացի ամբարումն են:

«Ի՞նչպէս թե ամբարում»:

— Իմանում ես, գեմսկի¹ Անդրյուխան նրանց վոտքերը:

¹ Земский—կալվածատան դրագիրը:

Հետ նայեցի և մյուս անկյունում տեսա Մարիա Իվանով-
նալին, նույնպես կապոտած: Յես քաբ կտրեցի...

Մայրս հառաչեց և առատ արցունք թափեց:

Հայրս լուռ ինձ եր նայում, հիամարձակելով հավատաբ-
լինքն իրեն: Ուրախությունը շողում եր նրա դեմքի վրա:

Յես շտապեցի իմ թրով կտրատել նրանց կապանքները:

— Բարե քեզ, բարե, Պետրոսեշա,—ասում եր հայրս, ինձ
իր սրտին սեղմելով,—փառք աստծու, արժանացանք քս տեսու-
թյան...

— Պետրոսեշա, հոգեմկա,—ասում եր մայրս:—Աստված ի՞նչ-
պես հասցրեց քեզ: Արդոք առհղջ ես:

Յես շտապեցի նրանց դուրս բերել կալանքից,—սակայն,
մոտենալով դռանը՝ նորից փակված գտա աչն:

«Անդրյուշկա,—ձայն տվի յես,—բաց արա»:

— Ի՞նչպես չի, կրացեմ,—պատասխանեց դեմսկին դռան
հետից:—Հալա մի դու չե՛լ նստիր եղտեղ, մենք քեզ ցո՛ւց
կտանք աղմկել և թագավորի ծառայողները ոճիքից բռնել ու
քարշ տալ:

Յես սկսեցի տնտղել շտեմարանը, փնտռելով թե չկա՞ ար-
դոք վորեւե հնար այնտեղից դուրս պրծնելու:

— Մի՛ չարչարվի,—ասաց ինձ հայրս,—չես աչնախի տնա-
տեր չեմ, վոր կարելի լինի իմ ամբարները մտնել ու դուրս գալ
դողի սողանքներով:

Մայրս, վոր մի բոպե ուրախացել եր իմ հայտնությամբ,
հուսահատության մեջ ընկավ, տեսնելով, վոր ինձ ել վիճակ-
վեց բաժանել ամբողջ ընտանիքի կործանումը: Բայց չես ավելի
հանգիստ եյի այն ժամանակից, ինչ գտնվում եյի նրանց և
Մարիա Իվանովնայի հետ: Հետս մի դուլդ պիտողեստ կար և
թուրս—չես դեռես կարող եյի գիմանալ պաշարման: Զուրկինը
պետք և վրա հասներ չերեկոյան և աղատեր: Այս բոլորը յես
հայտնեցի իմ ծնողներին և կարողացա հանգստացնել մորս:
Նրանք ամբողջապես անձնատուր յեղան հանդիպման հրճվան-
քին:

— Դե, Պյոտր,—ասաց հայրս.—հերիք ե, ինչքան դու խե-
լառություններ արիր, յես ել՝ կարգին բարկացած եյի քեզ վրա:
Բայց կարիք չկա անցածը մտաբերելու: Հուսով եմ, վոր դու
հիմա ուղղվել ես և խելքդ գլուխդ ես հավաքել: Գիտեմ, վոր դու
ծառայել ես այնպես, ինչպես վայել և ազնիվ սպային: Շնորհա-

կալ եմ, մխիթարեցիր ծերունուն: Յեթե իմ փրկությամբ քեզ պարտական լինեմ, ապա կյանքը կրկնակի քաղցր կլինի ինձ համար:

Յես արտասովելով համբուրեցի նրա ձեռքը և նայեցի Մարիա Իվանովնային, վորն այնպէս եր ուրախացել իմ ներկայությամբ, վոր թվում եր միանգամայն չերջանիկ ու հանգիստ:

Կեսորի մոտ մենք լսեցինք արտասովոր աղմուկ և աղաւաղակներ:

— Այս ի՞նչ բան ե, — ասաց հալրս, — չլինի՞ թե քո գնդաւադ ետը հասավ:

— Անկարելի յե, — պատասխանեցի չես: — Յերեկոցից շուտ նա այստեղ չի լինի:

Աղմուկը սաստկանում եր: Ահաղանգ տվին: Բակի միջով ձիավորներ եյին արշավում: Այդ բոպէյին պատի մեջ կտրած նեղլիկ անցքում յերեաց Սավելիչի ալեհեր գլուխը և խեղճ դաստիարակա աղիողորմ ձայնով արտասանեց.

— Անդրեյ Պետրովիչ, Ավդուտչա Վասիլենա, տեր իմ Պյոտր Անդրեյիչ, աղիղ Մարիա Իվանովնա. բաններս ըմբող ե. անիւրափները գլուղ մտան: Յեւ գիտե՞ս Պյոտր Անդրեյիչ, թե ով բերեց նրանց: Շփարբինը՝ Ալեքսեյ Իվանիչը. գրողը տանի նրան:

Ատելի անունը լսելուն պես Մարիա Իվանովնան ձեռքերն իրար տվեց ու մնաց անշարժ:

Լսիր, — ասացի յես Սավելիչին, — մի ձիավոր ուղարկիր * գետանցի տեղը, հուսարական գնդին ընդառաջ, և հրամայի, վոր գնդապետին հայտնի մեզ սպառնացող վտանգի մասին:

— Ո՞ւմ ուղարկեմ, ե, տեր իմ: Լակոտներն ամենքն ել բռնուտ են արել, իսկ բոլոր ձիերը խլված են: Վա՛հ, նրանք արդեն բակուսն են — արդեն ամբարին են մոտենում:

Այդ ժամանակ դռան առջև լսվեցին մի քանի ձայներ: Յես նշան արի մորս ու Մարիա Իվանովնային, վոր քաշվեն մի անկուռն, սուրս մերկացրի և հենվեցի պատին՝ հենց դռան մոտ: Հայրս վերցրեց պիստոլտները և յերկուսի հրահաններն ել բարձրացրեց ու կանգնեց կողքիս: Կողպեք աղմկեց, դուռը բացվեց և յերեաց զեմակու գլուխը: Յես թրովս հարվածեցի և նա ընկավ, փակելով մուտքը: Հենց նույն բոպէյին հայրս կրակեց պիստոլետը: Մեզ պաշարող ամբոխը հետ փախավ անեծք-

ներ տալով: Վերադարձին շեմքից ներս քաշեցի և դուռը կողպեցի ներսի փականով:

Բակը լի յեր գինված մարդկանցով: Նրանց մեջ չես ճանաչեցի Շվարբինին:

— Մի վախենաք,—ասացի յես կանանց,—Հույս կա: Իսկ դուք, հայրիկ, այլևս չկրակեք: Խնայե՛ք վառոդի վերջին լիցքը:

Մայրս լուռ աղոթում եր ասածուն: Մարիա Իվանովնան կանգնեց ինձ մոտ, հրեշտակային անդորրությամբ սպասելով մեր ճակատագրի լուծման: Դռան այն կողմից սպառնալիքներ ելին լսվում, հայհոյանք և անեծքներ: Յես կանգնած ելի իմ տեղը, պատրաստ կտոր-կտոր անելու առաջին համարձակին: Հանկարծ չարագործները լռեցին: Յես լսեցի Շվարբինի ձայնը, վոր կանչում եր ինձ անունս տալով:

— Յես այստեղ եմ, ի՞նչ ես ուզում:

— Անճատահար յեղիր, Գրինյով. դիմադրելն ապարդյուն ե: Խղճա քո ծնողներին: Համառությամբ քեզ չես փրկի: Իմ ձեռքը կընկնեք դուք...

— Փորձիր, դավաճան:

— Վոչ ինքս կիտրձեմ իդուր տեղը դուխս խոթել, վոչ ել իմ մարդկանց կկորցնեմ, այլ կհրամայեմ ամբարը վառել և այն ժամանակ կտեսնենք, թե դու ի՞նչ կանես, Բեկորոսկի Դոն Բիշոտ¹... Հիմա ճաշի ժամանակ ե: Այժմ նստիր ու մտածիր, քանի դեռ ազատ միջոց կա: Յտեսություն: Մարիա Իվանովնա, ձեզնից ներողություն չեմ խնդրում. դուք, յերեկ, մթան մեջ չեք ձանձրանում ձեր ասպետի հետ:

Շվարբինը հեռացավ, շտեմարանի մոտ պահակներ թողնելով: Մենք լուռ ելինք: Մեզնից յուրաքանչյուրը մտածում եր ինքն իրեն, չհամարձակվելով մյուսին հաղորդել իր մտքերը: Յես պատկերացնում ելի ամեն ինչ, վոր կարող եր անել դադաղած Շվարբինը: Իմ մասին չես համարյա թե չեյի մտածում: Խոստովանե՛մ արդյոք. ծնողներիս վիճակն ել այնքան չեր սարսափեցնում ինձ, վորքան Մարիա Իվանովնայի ճակատագիրը: Յես գիտեյի, վոր գլուղացիները և մեր տան մարդիկ պաշտում են մորս, հորս, չնայելով նրա խստության, նուջնպես սիրում ելին, քանի վոր արդարադատ եր և գիտեիր իրեն յենթակա մարդկանց

¹ Դոն Բիշոտ (Դոն² Կիև ոտ)—խալ հոչ. դրող Միգուել դե Սերվանտես Սաավեզրայի (1547—1613) համանուն յերկի հերոսը: Փոխաբերաբար՝ վեհ ձգտումներով տոգորված, սակայն ցնորամիտ ու յերազող մարդ վորը շատ հաճախ ծիծաղելի պրության մեջ ե ընկնում:

խակական կարիքները։ Նրանց բունտը մոլորություն էր, վալը-
կենական հարբեցություն և վոչ թե նրանց ցասման արտահա-
տություն։ Այնպես վոր հավանական էր, թե նրանց կխնայեն։
Բայց Մարիա Իվանովնան, Նրա համար արդյոք ի՞նչ վիճակ էր
պատրաստել այդ անխիղճ և անբարոյական մարդը։ Յես չէյի
համարձակվում կանգ առնել այդ սոսկալի մտքի վրա և պատ-
րաստվում եյի (մեղմ քեզ, տեր) ավելի շուտ մեռցնել նրան,
քան թե յերկրորդ անգամ տեսնել դատան վոսոխիս ձեռքում։

Նորից անցավ մոտ մի ժամ։ Գլուղում հնչում էյին հար-
բածների յերգերը։ Մեր պահակները նախանձում էյին նրանց
և մեղ վրա զայրանալով, հայհոյում էյին և մեղ վախեցնում
տանջանքներով ու մահով։ Մենք սպասողւմ էյինք Շվարբինի
սպառնալիքների հետեանքին։ Վերջապես, բակում մեծ շարժում
լսեալ և մենք նորից լսեցինք Շվարբինի ձայնը։

— Ի՞նչ մտածեցիք։ Հոժարակամ հանձնվո՞ւմ եք իմ
ձեռքը թե վոչ։

Վոչ վոք Հպատասխանեց նրան։
Քիչ սպասելուց հետո Շվարբինը հրամայեց, վոր հարդ բե-
րեն։ Մի քանի բոլբոլից կրակը բռնկվեց և լուսավորեց խավար
շտեմարանը ու ծուխն սկսեց դուրս գալ շեմքի ճեղքերից։ Այն
ժամանակ Մարիա Իվանովնան մոտեցավ ինձ և կամաց՝ ձեռքս
բռնելով, ասաց։

— Հերիք ե, Պյոտր Անդրեյիչ։ Իմ պատճառով մի կործա-
նեք և՛ ձեզ և՛ ձեր ծնողներին։ Ինձ դուրս թողեք։ Շվարբինն
ինձ կլսի։

— Վոչ մի դեպքում, — բացականչեցի յես սրտիս խորքից։
— Գիտե՞ք արդյոք, թե ձեզ ի՞նչ ե սպասում։

— Անպատվության դեպքում կենդանի չեմ մնա, — պառաս-
խանեց նա հանգիստ։ — Սակայն, կարելի չէ, թե յես փրկեմ իմ
աղատարարին և մի ընտանիք, վոր այնպես մեծահոգի պատըս-
պարել է խեղճ վորբին։ Մնաք բարով, Անդրեյ Պետրովիչ, մնաք
բարով, Ալդոտյա Վասիլևնա։ Դուք ինձ համար բարեբարից ել
ավելին եք յեղել — որհնեցեք ինձ։ Յեզ դուք ներեցեք ինձ, Պյոտր
Անդրեյիչ։ Հավատացած յեղեք, վոր... վոր... — այս խոսքերի
հետ նա լաց յեղավ և յերեսը ծածկեց ձեռքերով... Յես խելա-
գարի պես եյի։ Մայրս լալիս էր։
— Հերիք դուրս տաս, — ասաց հայրս։ — Քեզ մենակ մի կը-

Թողնի ավազակներին մոտ: Նստիւր այստեղ ու լուր: Թե մեռնելու յե՛ միասին կմեռնենք:

— Լսի՛ր, ել ի՞նչ ե՛ն ասում ա՛յնտեղ:

— Անձնատուր լին՞ում եք թե վոչ,— գոռում եր Շվաբրինը: — Ա՛յ, կտեսնեք, հինգ ըսպեյից ձեզ կենդանի-կենդանի կխորո-վեն:

— Անձնատուր չենք լինում, չարագործ,— պատասխանեց նրան հայրս հաստատ ձայնով:

Կնճիռներով ծածկված նրա դեմքը կենդանացել եր մի զարմանալի աշխուժութեամբ, աչքերը փայլատակում եյին ալեհեր հոնքերի տակից: Յեւ դառնալով ինձ՝ ասաց. «Հիմա ժամանակն ե»:

Նա դուռը բացեցի՝ Կրակը ներս խուժեց և գալարապտույտ վեր բարձրացավ չոր մամուռ խծած գերաններով: Հայրս կրակեց պիստոլետը, քայլեց այրվող շեմքով և աղաղակեց. «Բողո՛րդ իմ հետեից»:

Յես բռնեցի մորս և Մարիա Իվանովնայի ձեռքերն ու արագ դուրս բերի նրանց: Շեմքի վրա ընկած եր Շվաբրինը, վիրավորված հորս դառամյալ ձեռքով. ավազակներին բաղմու-թյունը, վորը փախել եր մեր անսպասելի արտելքից, իսկույն սիրտ առավ և սկսեց մեզ շրջապատել: Յես կարողացա նորից մի քանի հարված հասցնել, սակայն հաջող նետած աղյուսը դի-պավ ուղիղ իմ կրծքին: Յես ընկա և մի ըսպե գիտակցութիւնս կորցրի: Ուշքի գալով յես տեսա Շվաբրինին, վոր նստել եր ար-յունոտ խոտերի վրա և նրա առջև՝ մեր ամբողջ ընտանիքը:

Թեև ես ընկած պահում եյին ինձ: Գյուղացիների, կաղակ-ներեի և բաշկիրների բաղմութիւնը շրջապատել եր մեզ: Շվաբ-րինը սոսկալի գունատ եր: Մի ձեռքով նա բռնել եր իր վի-րավոր կողքը: Նրա դեմքը տանջանք ու չարութիւն եր ար-տահայտում: Նա դանդաղ գլուխը բարձրացրեց, նայեց ինձ և արտասանեց թույլ ու հազիւ լսելի ձայնով.

— Կախել սրան... և բոլորին... բացի՛ր սրանից...

Ամբոխն իսկույն և եթ շրջապատեց մեզ և քարշ տվեց դեպի դարպասը: Բայց հանկարծ նրանք մեզ թողին ու փախան զանազան կողմեր՝ դարպասից ձիով ներս մտաւ Զուբինը և նրա հետեից մի ամբողջ հեծելավաշտ՝ թրերը մերկացրած:

Ուռվարարները ցիր ու ցան յեղան: Հուսարները հետա-պնդում եյին նրանց, կոտորում ու գերի բռնում: Զուբինը ցած

թուով ձիուց, վողջուհեց հորս ու մորս և պինդ սեղմեց ձեռքս:

— Այ թե լավ ժամանակին վրա հասա,— ասաց նա մեզ: — Ահա և քս հարսնացուն:

Մարիա Իվանովնան կարմրեց մինչև տկանջները: Հայրս մոտ յեկավ և շնորհակալություն հայտնեց՝ հանդիստ, թեպետ և զգացված տեսքով: Մայրս գրկեց նրան, անվանելով մեր փրկիչ հրեշտակը:

— Շնորհ արեք մեզ մոտ,— ասաց հայրս և նրան մեր տունը տարավ:

Շվաբրերի մոտով անցնելիս Զուբինը կանգ առավ:

— Սա ով է,— հարցրեց նա վիրավորին նայելով:

— Սա ինքը նրանց առաջնորդն է՝ հրոսակապետը,— պատասխանեց հայրս մի ինչ վոր հպարտութամբ, վոր մատնում էր հին ռազմիկին. — աստված ոգնեց իմ թույլ ձեռքով պատժել ցերիտասարդ չարագործին և վրիժառու լինել նրանից՝ վորդուս արյան համար:

— Սա Շվաբրինն է,— ասացի յես Զուբինին:

— Շվաբրինը: Շատ ուրախ եմ: Հուսարներ, վերցրեք սրան: Մեկ ել՝ ասեք բժշկին, վոր կապի նրա վերքը և իր աչքի լույսի պես պահի: Շվաբրինին անպայման պետք է ներկայացնել Ղազանի գաղտնի հանձնաժողովին¹: Նա գլխավոր հանցավորներն է և նրա ցուցմունքները պետք է վոր կարևոր լինեն:

Շվաբրինը բացեց իր մթադնած աչքերը: Նրա դեմքը վռչինչ չեւ արտահայտում, բացի՝ ֆիզիքական տանջանքը: Հուսարները թիկնոցի վրա դրած տարան նրան:

Մենք ներս մտանք սենյակները: Յես հուզմունքով եյի նայում շուրջս, հիշելով իմ մանկական տարիները: Տանը վռչինչ չեւ փոխվել, ամեն ինչ իր նախկին տեղն էր: Շվաբրինը չեւ թուլատրել տունը թալանելու, իր ստորության մեջ իսկ պահելով ակամա մի գարշաճք դեպի անպատիվ շահասիրությունը:

Ծառաները նախասենյակ մտան: Նրանք չեյին մասնակցել բուռն տին և անկեղծ սրտով ուրախ եյին, վոր մենք փրկվել ենք: Սավելիչը ցնծության մեջ էր: Հարկ է իմանալ, վոր ալազակ-

¹ Գաղտնի հանձնաժողովը նշանակված էր Պուգաչովի ապստամբությանը մասնակցողների քննության ու դատի համար:

հերի հարձակումից առաջացած խուճապի ժամանակ նա վազել եր ախոռատուն, վորտեղ կապած եր Շվաբրինի ձին, թամբել եր, կամաց դուրս քաշել և շնորհիվ իրարանցման՝ աննկատելի կերպով արշավել դեպի գետանցը։ Ռադմադնդին նա հանդիպել եր Վոլգայի այս կողմը, հանդատի ժամին։ Զուրինը, նրանից տեղեկանալով մեր վտանգի մասին, պատվիրել եր նստել ձիերը, հրամայել՝ մտնել, մտնել արշավակով և, փառք ասածո՝ ժամանակին վրա հասավ։

Զուրինը պնդեց, վոր զեմակու գլուխը ձողի ծալքին հագրած մի քանի ժամով ի ցույց դրվի կարակի մոտ։

Հուսարները վերադարձան հետապնդումից, մի քանի մարդ գերի բռնած։ Նրանց փակեցին հենց նույն շտեմարանի մեջ, ուր մենք դիմացանք արժանահիշատակ պաշարմանը։

Մենք ցրվեցինք, ամենքն իր սենյակը քաշվելով։ Ծերերին հանդատություն եր պետք։ Ամբողջ գիշերը քնած չլինելով, յես ընկա անկողնիս վրա և խոր քնեցի։ Զուրինը գնաց իր կարգադրություններն անելու։

Յերոկոյան մենք հավաքվեցինք հյուրասենյակում, ինքնայեռի շուրջը, ուրախ-ուրախ խոսելով անցած վտանգի մասին։ Մարիա Իվանովնան թեյ եր լցնում։ յես նստեցի նրա մոտ և բացառապես նրանով եյի զբաղված։ Ծնողներս, թվում եր, թե բարացակամ եյին նայում մեր հարաբերությունների քնքշությանը։ Մինչև որս ել այդ չերեկոն կենդանի չեիմ հիշողության մեջ։ Յես յերջանիկ եյի, կատարյալ յերջանիկ։ Իսկ շատ եր արդյոք նման բույները մարդկային թշվառ կյանքում։

Մյուս որը հորս հայտնեցին, վոր գլուղացիները չեկել են աղալական բակը իրենց մեղայականը հայտնելու։ Հայրս դուրս յեկավ տան շեմքը։ Հենց վոր նա չերևաց, գեղջուկները ծունկ չոքեցին։

— Հը, լ՛հնչ կա, հիմաբներ,—ասաց նա,—խելքներիդ լ՛հնչ եր փչել բունտ անել։

— Մեղավո՞ր եք, մեր տեր,—պատասխանեցին նրանք միարերան։

— Իհարկե վոր մեղավո՞ր եք։ Խելառություն անում են և իրենք ել գոհ չեն։ Ներում եմ ձեզ ի նշան այն ուրախության, վոր աստված արժանացրեց ինձ՝ տեսնվել վորդուս՝ Պյոտր Անդրեյիչի հետ։ Դե, լավ. մեղքը խոստովանողը թողություն կատանա։

— Մեղավոր ենք:

— Իհարկե մեղավոր եք: Աստված պայծառ յեղանակ և տվել մեզ, խոտը հավաքելու ժամանակն եւ իսկ դուք, հիմարներ, ամբողջ յերեք որ ի՞նչ եք արել: Ավագ, բոլորին խոտհարքի կքէս. բայց տես, շեկ սատանա, վոր Հովհաննու որը բոլոր խոտը բարդ բարդած լինի: Կորեք աչքիցս:

Գյուղացիները խոնարհ գլուխ տվին և գնացին կոռը դատելու, ասես լոչինչ չեր յեղել:

Շվաբրինի վերքը մահացու չեր: Պահակների հսկողութեամբ նրան ուղարկեցին Ղազան: Պատուհանից չես տեսա, թե նրան ինչպես են դնում սալակի վրա: Մեր հայացքները հանդիպեցին: Նա գլուխը խոնարհեց և չես շտապով հեռացա պատուհանից: Յես վախենում եյի ցույց տալ, թե ցնծում եմ, տեսներով հակառակորդիս դժբախտությունն ու թշվառությունը:

Զուրինը պետք ե հեռուներն անցներ: Յես վճռեցի հետեւի նրան, չնայած ցանկութեանս՝ դարձյալ մի քանի որ մնալ իմ ընտանիքի հետ: Արշավանքի դուրս գալու նախորդակին չես չեկա իմ ծնողների մոտ և այն ժամանակվա սովորութեան համաձայն, մինչև գետին խոնարհ գլուխ տվի նրանց, խնդրելով նրանց որհնությունը՝ Մարիա Իվանովնայի հետ ամուսնանալու: Մերերն ինձ բարձրացրին և ուրախութեան արցունքով իրենց համաձայնությունը հայտնեցին: Յես նրանց մոտ տարա Մարիա Իվանովնային՝ գունատ ու դողդոջուն: Մեզ որհնեցին...

Թե ի՞նչ զգացի յես, այդ չեմ նկարագրի: Ով յեղել ե իմ վրճակում, նա առանց աչք ել կհասկանա ինձ,—ով չի յեղել, այդ մասին յես միայն ավստոյալ կարող եմ և խորհուրդ տալ՝ քանի դեռ ժամանակը չի անցել, սիրահարվել և ծնողներից ստանալ նրանց որհնությունը:

Մյուս որը գունդը գումարվեց: Զուրինը հրաժեշտ տվեց մեր ընտանիքին: Մենք բոլորս հավատացած եյինք, վոր ռազմական գործողությունները շուտով կդադարեն: Յես հույս ունեցի մի ամսից հետո ամուսին լինել: Մարիա Իվանովնան հրաժեշտ տալով, բոլորի ներկայութեամբ համբուրեց ինձ: Յես նրստեցի ձիս: Սավելիչը նորից հետեւեց ինձ—և գունդը շարժվեց:

Հեռվից չես յերկա՞ր նայեցի մեր գյուղական տանը, վոր նորից թողնում եյի: Մի մռայլ նախազգացում անհանգստացնում եր ինձ: Ասես մեկը շշմում եր, վոր ինձ համար դեռես

չեն անցիլ բոլոր դժբախտութիւնները: Սիրտս նոր վտիտրիկ
եր դուշակում:

Ձեռն նկարագրի մեր արշավանքը—և Պուգաչովի պատերազ-
մի վախճանը: Մենք անցնում եյինք գլուղերի միջով, վոր ա-
վերել եր Պուգաչովը, և ստիպված եյինք խեղճ բնակիչներէց
վերցնել այն, ինչ թողել եյին ավազակները:

Նրանք չգիտեյին, թե ո՛ւմ յենթարկւին: Ամենուրեք դա-
դարել եր վարչական կյանքը: Կարվածատերերը անտառներում
եյին թաղնւում: Ավազակախմբերն ամեն տեղ չարագործութիւն-
ներ եյին անում: Այն ժամանակ արդեն դեպի Աստրախան փախչող
Պուգաչովին բռնելու համար ուղարկված առանձին զորամասերի
պետերն ինքնիշխան պատժում եյին մեղավորներին և անմեղ-
ներին... Սոսկալի յեր վիճակն ամբողջ յերկրի, վորտեղ մոլեգ-
նել եր հրդեհը: Աստված չանի, վոր մարդ տեսնի ռուսական
բունտը—անմիտ ու անողոր: Նրանք, ովքեր մեղանում անկա-
րելի հեղաշրջումներ են նյութում, կամ յերիտասարդ են և չգի-
տեն մեր ժողովրդին, կամ թե չե՝ դաժանասիրտ մարդիկ, վորոնց
համար ուրիշի գլուխը քառորդ կոպեկ արժե, դեհ իրենց վիզն
ել՝ հազիվ մի կոպեկ¹:



¹ Հետո դալիս են այն տողերը, վորոնք կան և՛ Պուգաչովի ձեռքով վերջնապե-
սաբարված բնագրում. «Պուգաչովը փախչում եր Իվան Իվանովիչ Միխե-
սոնի զորքերից հեռամուտ...» Տես եջ 118:

ԲՈՎԱՆԻԿԱՌԹՅՈՒՆ

Եջ

I	ԳՎԱՐԴԻԱՅԻ ՍԵՐԺԱՆՏԸ	7
II	ԱՌԱՋՆՈՐԴԸ	17
III	ԲԵՐԴԸ	28
IV	ՄԵՆԱՄԱՐՏ	35
V	ՍԵՐԸ	45
VI	ՊՈՒԳԱԶՈՎՇՉԻՆԱ	53
VII	ՀՐՈՍՈՒՄ	64
VIII	ԱՆԿՈՉ ՀՅՈՒՐԸ	72
IX	ՀՐԱԺԵՇՏ	81
X	ԲԱՂԱԲԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ	87
XI	ԽՈՌՎԱՐԱՐ ԱՎԱՆԸ	96
XII	ՎՈՐԲԸ	108
XIII	ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ	115
XIV	ԴԱՏԸ	122

ՀԱՎԵԼՎԱԾ

ԲԱՑ ԹՈՂԱԾ ԳԼՈՒԽԸ 137

Թարգմանիչ՝ Ս. Ս ու լ ք ի ա ս յ ա ն
 Պատ. խմբագիր՝ Ս. Վ. ա ռ զ ա ն յ ա ն
 Տեխ. խմբագիր՝ Լ. Ո հ ա ն յ ա ն
 Սրբագրիչ՝ Ա. Ա. ռ զ ա ս ն յ ա ն

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	Տող	Տպված է	Պատք է լինի
7	2 վ.	— «Հարկավոր չե՞ դա, թող բանակում ծառայի»:	— Հարկավոր չե՞ դա, թող բանակում ծառայի:
10	13 վ.	մտածունքի	մտածունքի
20	4 վ.	մտածում, ես	մտածում ես,
22	7 ՎՆ	ամուսնիլը	ամուսնիլը
24	6 վ.	լծե՛լ ե՛յին	լծե՛լ ե՛յին:
24	11 վ.	ող-:	ող-
24	16 վ.	լասցնե՛լ	հասցնե՛լ
24	17 ն.	լիովին	լիովին
26	5 ն.	վորսիսզի	վորսիսզի
30	19 ն.	վերջինը	վերջինը:
34	5 ն.	չենց	չենք
35	2 վ.	նույնիս	նույնիսի
55	9 վ.	հույս չ' դնե՛լ	հույս դնե՛լ
118	6 ն.	ա՛յ աղջիկ	լո՛ւ աղջիկ
122	6 ն.	սպա ագնիակա՛ն	սպա և ագնիակա՛ն

Հրատ. 3933, Գլավ. լիազոր Կ— 4492 Պատվեր 1463, Տիրած 4000

Հանձնված է արտագրության 3 դեկտեմբերի, 1936 թ.

Ստորագրված է տպելու 5 հունվարի, 1937 թ.

Պետհրատի տպարան, Յերևան, II Կնույնյանցի, 4

Пров. 1940 г.

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0004936

ЦЕНА

II

22695